

Տիմոադիր՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

3(103)
2021

Խմբագրական խորհուրդ՝

**Ա. ԴԻԼԻՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ն. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ,
Ն. ՆԱԶԱՐՅԱՆ, Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. ՎԱԴԱՐՇՅԱՆ**

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՄԵՂՔԻ ՍԿՉԲՈՒՆՔԸ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԿՉԲՈՒՆՔԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ - **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ** 8
- ՕՐԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ (EXTRA LEGEM) ԵՎ ՕՐԵՆՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ (CONTRA LEGEM) ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԴՈԿՏՐԻՆԸ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼԻՄ – **Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ** 22
- ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ – **Ի. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ** 47

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

- ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԲՆՈՒԹԱԳՐԻՉ. ԷՆԻԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ – **Պ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ** 62
- ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ – **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** 69

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1606-1611)

- «ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ, «ՉԱՐԹՈՆՔ» ԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 184-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1606, 17 հուլիսի 2021 թվականի) 83
- 1970 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱՐԱԳ ՓԶԱՑՈՂ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԴՊԻՍԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ATP)» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1607, 27 հուլիսի 2021 թվականի) 159
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ 165
- ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ՝ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ

ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
 ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԷՆԵՐԳԱԽԱՆՁ-
 ՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ»
 ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
 «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՈՍՏԻԿԱՆՈՒԹ-
 ՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
 ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
 ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆ-
 ԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
 ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
 «ՁՈՐԱՄԱՍԵՐԻ ԵՎ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
 ՉԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ, «ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ
 ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
 «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ
 ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
 ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ»
 ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ, «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1608, 2 օգոստոսի 2021 թվականի)

- «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1609, 14 սեպտեմբերի 2021 թվականի) 199
- ՉՈՅԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 20.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1610, 23 սեպտեմբերի 2021 թվականի) 215
- «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 317-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ
ԵՎ 337-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1611, 28 սեպտեմբերի 2021 թվականի)239

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՍԱՀՄԱՆԱԴԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ
ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐԻՆ262

**ՍԱՀՄԱՆԱԴԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

- ՍԱՀՄԱՆԱԴԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՌՑԱՆՑ ՆԻՍՏԻՆ263

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՂԵԿԱՎԱՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ԱՅՑ Է ԿԱՏԱՐԵԼ ԼԵՀԱՍԱՆ..... 264
- ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԻԴԵՈՒԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԴԵՍՊՈՆԱՏԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳԻՐԸ..... 265

ՆՈՐ ԳՐՔԵՐ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ
ՄԱՍՆԱԿՑԵԼ Է «ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻՆ267

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ՎԻՐԱԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*ՀՀ դատական ​​​​դեպարտամենտի
գլխավոր մասնագետ,
ՀՀ պետական ​​​​կառավարման
ակադեմիայի ասպիրանտ*

**ՄԵՂՔԻ ՍԿՉԲՈՒՆՔԸ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՄԱԶՎՓՈՒԹՅԱՆ
ՍԿՉԲՈՒՆՔԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ամփոփագիր. Աշխատանքում փորձ է արվել հնարավորինս բացահայտել մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի մեկնաբանման գործընթացում սահմանադրական արդարադատության դերը, ինչպես նաև վերջնարդյունքում դրա ազդեցությունն իրավական համակարգի զարգացման գործում:

Հոդվածում փորձ է արվել նաև հարցը քննարկել եվրոպական մի շարք մարմինների և նրանց կողմից ընդունված իրավական փաստաթղթերի համատեքստում, ինչը թույլ է տալիս ընդգծել Եվրոպական Միության իրավունքի խորքերում ներդրված և Եվրոպական միության մարմինների կողմից ձևավորած հստակ իրավական վերաբերմունքը քննարկվող հարցի կապակցությամբ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ արդյունքում առաջ են քաշվել մեղքի սկզբունքի և պատժի համաչափության սկզբունքի առնչությամբ մի քանի եվրոպական իրավական չափորոշիչներ:

Հիմնաբառեր. Մեղքի սկզբունք, պատժի համաչափության սկզբունք, սահմանադրական արդարադատություն, ինտերպրետացիա, եվրոպական իրավական չափորոշիչներ:

Իրավական սկզբունքների կենսագործման համար նախևառաջ կարևոր նշանակություն ունի դրանց էության և դերի բացահայտումը տե-

սական մակարդակում: Սակայն դա բավարար չէ այս կամ այն իրավական սկզբունքի «արդյունավետության» մակարդակի ամբողջական պատկերը հստակեցնելու համար:

Հարցը հատկապես հետաքրքրական է, երբ իրավական սկզբունքը փոխում է իր տեղը և դերը իրավական համակարգում: Այդպիսով այն ստանում է այլ բնույթ և կոչված է լինում լուծելու իրավական այնպիսի խնդիրներ, որոնք նախնինում դուրս են եղել այդ իրավական սկզբունքի տիրույթից:

Բայցևայնպես իրավական սկզբունքների էության բացահայտման տեսանկյունից դրանց կիրառումն ունի երկակի նշանակություն: Մի կողմից դրանք ի սկզբանե լուծում են որոշակի իրավական խնդիրներ, մյուս կողմից պրակտիկայում գործածվելու արդյունքում կարող են բացահայտվել սրանց մի շարք այնպիսի հատկություններ, որոնք հետագայում կկարողանան լուծել այլ իրավական խնդիրներ ևս:

Այս առումով հատկապես կարևոր է իրավակիրառ պրակտիկայում այդ իրավական սկզբունքների իրավական նշանակության բացահայտումը և դրանց հղում կատարելը: Պայմանավորված իրավահարաբերության տեսակով և բնույթով՝ իրավական սկզբունքները կարող են կիրառվել տարբեր իրավասու մարմինների կողմից՝ Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորություններն իրականացնելիս:

Հատկանշական է, մասնավորապես, Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերն այս հարցում: Ասվածի համատեքստում անհրաժեշտ է ընդգծել Սահմանադրական դատարանի տարբեր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, դրանցում տրված մեկնաբանություններն ու դրանց իրացումը:

Մեկնաբանությունը Սահմանադրության զարգացման կարևորագույն եղանակներից է, և նպատակահարմար է Սահմանադրության տեքստում փոփոխություններ չկատարել այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է վերջինիս զարգացումն ապահովել հիշատակված եղանակի միջոցով¹:

Վերոնշյալից հետևում է, որ մեկնաբանությունը, որպես ինտերպրետացիայի դրսևորում, հանդիսանում է իրավական նորմի բովանդակության բացահայտման առանձնահատուկ միջոց, ինչը գործնականում կարող է տեղի ունենալ քննարկման առարկա սահմանադրական սկզբունքների պարագայում, որն էլ իր հերթին կհանգեցնի նաև Սահմանադրության որոշակի զարգացման:

¹ Տե՛ս Մանայան Ա. «Սահմանադրության զարգացման եղանակների արդյունավետ իրացումը՝ որպես սահմանադրական կայունության կարևորագույն երաշխիք», «Պետություն և իրավունք», թիվ 1 (83) 2019թ., Երևան, էջ 9:

Սահմանադրական դատարանը, իր կողմից կայացվող ակտերում այս կամ այն իրավունքի սկզբունքը մեկնաբանելով, նպաստում է իրավական համակարգում դրանց տեղի և դերի հստակեցմանն ու ողջ ազդեցության բացահայտմանը:

Կարծում ենք՝ այս իմաստով Սահմանադրական դատարանին կարելի է տալ իրավունքի ոլորտի ինտերպրետատորի դեր՝ պայմանավորված իր կողմից իրավունքի որևէ սկզբունքը կամ նորմը մեկնաբանելու լիազորությունով՝ սկսած Սահմանադրության դրույթներից:

Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ հենց ինտերպրետացիայից և դրա արդյունքում արված հետևություններից է կախված նաև իրավունքի կոնկրետ սկզբունքների իրավաընկալումն իրավունքի տարբեր ճյուղերում: Այսինքն, իրավունքի սկզբունքների իրավաընկալումը պայմանավորված է նաև ինտերպրետացիայի արդյունքում վեր հանված իմաստից և նշանակությունից: Բացառություն չեն նաև ուսումնասիրության առարկա հանդիսացող մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքները: Իհարկե, թե՛ տեսական, թե՛ գործնական մակարդակներում նախապատվությունը պետք է տալ պաշտոնական մեկնաբանությանը, այսինքն մեր կողմից, այսպես կոչված, իրավունքի ոլորտի ինտերպրետատորի, այն է՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով տրված պաշտոնական մեկնաբանություններին:

Հատկանշական է նաև եռաստիճան դատարանների կողմից կոնկրետ իրավահարաբերությունների շրջանակներում նորմատիվ իրավական ակտերի տարբեր դրույթների, այդ թվում՝ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների իրավաընկալման հարցը:

Միջազգային փորձի ուսումնասիրության շրջանակում տարբեր երկրներում ընդունված պրակտիկայի համաձայն՝ դատավորը կարող է կասեցնել գործի վարույթը և դիմել սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնին՝ այս կամ այն դրույթի վերաբերյալ այդ մարմնի մեկնաբանությունն ստանալու համար: Իհարկե, այդ գործընթացը տեղի է ունենում տարբեր առանձնահատկություններով՝ կախված տվյալ երկրի օրենսդրությամբ այդ գործընթացի վերաբերյալ առկա կարգավորումներից:

Թերևս, որոշակի իրավադրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դատավորների կասկածների փարատումը սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի կողմից, ինքնին հանդիսանում է դատարանների կողմից դրանց իրավաընկալման վրա էական ազդեցություն ունեցող գործոն: Ընդ որում, դրանք կարող են լինել իրավունքի տարբեր ոլորտներում արդարադատություն իրականացնող դատարաններ:

Օրինակ՝ շատ երկրներում սահմանադրական արդարադատությունը գործում է պատժի համաչափության սկզբունքով, չնայած դա պաշտոնապես չի հիշատակվում Սահմանադրության մեջ կամ համապատասխան պետության որևէ օրենքում:

Սահմանադրական դատարանը՝ իր 2010 թվականի փետրվարի 5-ի թիվ ՄԴՈ-864 որոշմամբ, ի թիվս այլնի, մասնավորապես նշել է, որ իրավակարգավորման բացը պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով, այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը Ազգային ժողովի իրավասության հարցն է: Միաժամանակ, Սահմանադրական դատարանի նույն որոշմամբ արձանագրվել է, որ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է:

Այդ հիմնավորման հիման վրա արձանագրվել է, որ Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: (...)

Կատարված վերլուծությունների հիման վրա Սահմանադրական դատարանը կատարել է հետևյալ արձանագրումը, որ «... ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է լրացնել նշված իրավունքի բացը՝ ապահովելով օրենքի իրացման գործուն կառուցակարգ, վարչական իրավախախտումների համար պաշտոնատար և այլ անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման իրական երաշխիքներ»¹:

Հաշվի առնելով հիշատակված իրավական դիրքորոշման նշանակությունը՝ անհրաժեշտ է նկատել, որ եթե իրավունքի կամ օրենքի բացի լրացման պարտականությունը կրող հիմնական սուբյեկտը երկրի օրենսդիր

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը, Երևան, 2016, Հատ. 1, էջ 719:

մարմինն է, ապա կարծում ենք, որ սահմանադրական սկզբունքները Սահմանադրական դատարանի կողմից ինտերպրետացիայի կամ մեկնաբանման արդյունքում, ինչը մեծապես հանդիսանում է վերջինիս լիազորությունը, կարող են հանդիսանալ արդյունավետ գործիք իրավունքի կամ օրենքի բացի լրացման համար կամ, նվազագույնը, այդ բացի պատճառով առաջացած իրավական, առավել ևս հնարավոր սահմանադրականության խնդրի վերացման համար:

Հետաքրքրական է նաև հարցի քննարկումը միջազգային իրավական ակտերի համատեքստում: Այսպես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի¹, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի², Միջազգային քրեական դատարանի կանոնադրության³ առանձին կարգավորումների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել քրեական իրավունքի համար գերակա նշանակություն ունեցող հետևյալ միջազգային իրավական սկզբունքները՝ ա) օրինականության (Nullum crimen sine lege, Nulla poena sine lege); բ) օրենքի առջև հավասարության, գ) մեղքի՝ որպես պատասխանատվության պայմանի, դ) նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության արգելքի (Non bis in idem), ե) դաժան, անմարդկային և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի և պատժի արգելքի (հումանիզմի սկզբունքը) և այլն:

Ընդ որում, հետազոտման առարկա իրավական սկզբունքների վերաբերյալ միջազգային իրավական սկզբունքների՝ չափորոշիչների բացահայտման համար միանշանակ հարկ է անրադառնալ նաև Եվրոպական միության Հիմնարար իրավունքների մասին խարտիայում⁴ տեղ գտած դրույթներին: Թեև հիշատակված խարտիայի 49-րդ հոդվածն ունի հետևյալ վերտառությունը՝ «Քրեական իրավախախտումների և պատիժների օրինականության և համաչափության սկզբունքները», այնուամենայնիվ կարծում ենք, որ այն վերաբերում է նաև հետազոտման առարկա սկզբունքներին:

¹ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված հիմնարար փաստաթուղթն ընդունվել է Գլխավոր ասամբլեայի երրորդ նստաշրջանի ընթացքում՝ (բանաձևի դասիչը՝ 217 A (III)) 1948 թ. դեկտեմբերի 10-ին, Փարիզի Շայո պալատում:

² ՄԱԿ-ի դաշնագիր՝ հիմնված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի վրա: Ընդունվել է 1966 թվականի դեկտեմբերի 16-ին:

³ Ստորագրվել է 1998 թվականի հուլիսի 17-ին՝ Հռոմում:

⁴ Խարտիան հռչակվել է 2000թ., ուժի մեջ է մտել 2009թ. դեկտեմբերին՝ Լիսաբոնի պայմանագրի հետ միասին:

Մասնավորապես, նույն խարտիայի 49-րդ հոդվածի մեկնաբանությունների 1-ին մասով ընդգծվում է, որ ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որևէ քրեական իրավախախտման համար որևէ արարքի կամ բացթողման պատժառով, որը կատարման պահին ազգային օրենսդրությամբ կամ միջազգային իրավունքով քրեական հանցագործություն չի հանդիսացել: Նաև չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն պատիժը, որը կիրառելի էր քրեական հանցագործության կատարման պահին: Եթե քրեական հանցագործության կատարումից հետո օրենքը նախատեսում է ավելի մեղմ պատիժ, ապա պետք է կիրառվի այդ պատիժը:

Նշվածի առաջին նախադասությամբ հարցը դիտարկվում է քրեաիրավական ասպեկտով, քանի որ այն վերաբերում է քրեական պատասխանատվությանը: Այսինքն, անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, եթե կա որևէ արարք, գործողություն կամ անգործություն, որը համապատասխան իրավական ակտերով նախատեսված է: Այդ իրավական ակտը կարող է լինել թե՛ ազգային օրենսդրության շրջանակում գործող նորմատիվ իրավական ակտ (քննարկվող դեպքում, որպես կանոն՝ քրեական օրենսգիրք), թե՛ միջազգային որևէ պայմանագիր, որն իհարկե անցել է իրավական համապատասխան գործընթաց (վավերացվել է օրենսդիր մարմնի կողմից):

Հատկանշական է արարքի (հանցագործության) կատարման պահը: Նշված մեկնաբանությունում այն հստակ շեշտադրվել է, որից էլ հետևում է, որ արարքը (հանցագործությունը) դրա կատարման պահին պետք է արդեն իսկ նախատեսված լինի ազգային օրենսդրությամբ կամ միջազգային իրավունքով, միջազգային իրավունքի համընդհանուր նորմերով: Այլապես անձին չի կարելի ենթարկել քրեական պատասխանատվության այնպիսի արարքի, գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի համարվել:

Ելնելով վերոշարադրյալի տրամաբանությունից՝ կարծում ենք, որ, ի թիվս այլնի, արարքը չի կարող դրսևորվել մեղքի որևէ ձևով՝ լինի դա դիտավորություն թե անզգուշություն, քանի որ արարքի կատարման պահին մեղքը առհասարակ բացակայել է, և նման պարագայում անձը չի էլ կարող ունենալ օբյեկտիվ հնարավորություն գիտակցելու այդ արարքի հանրային վտանգավորությունը (եթե անգամ ինքնին արարքն այդ պահին իր մեջ պարունակել է որոշակի հանրային վտանգավորություն) կամ առավել ևս կանխատեսելու, որ ապագայում այն կարող է դիտարկվել որպես հանցագործություն:

Վերոնշյալի համատեքստում կարելի է արձանագրել, որ մեղքի սկզբունքի դրսևորումը մեղքի առկայության պահանջն է: Նշված մեկաբանության առաջին մասի բովանդակությունից հետևում է նաև, որ անձի նկատմամբ չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն պատիժը, որը կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին:

Այստեղ ևս կարևորվում է կատարման պահը: Այսինքն, եթե ի տարբերություն վերոշարադրյալ իրավիճակի, արարքի կատարման պահին այն համարվել է քրեական պատասխանատվության ենթակա արարք, հանցանք, սակայն ապագայում՝ պատժի նշանակման պահին, այդ արարքի համար նախատեսված է ավելի ծանր պատիժ, միևնույն է, պետք է նշանակվի այն պատիժը, որը նախատեսված է եղել արարքի կատարման պահին: Մինչդեռ, հակառակ պարագում, եթե արարքի կատարման պահին նախատեսված է եղել ավելի մեղմ պատիժ, քան պատժի նշանակման պահին, ապա պետք է կիրառվի արարքի կատարման պահին նախատեսված ավելի մեղմ պատիժը:

Միաժամանակ, Եվրոպական Միության Հիմնարար իրավունքների մասին խարտիայի 49-րդ հոդվածի մեկնաբանությունների 2-րդ մասում սահմանվում է, որ այդ հոդվածի կարգավորումները չեն խոչընդոտում որևէ անձի դատավարությանը և պատժին ցանկացած արարքի կամ բացթողման համար, որը կատարման պահին հանցագործություն է համարվել՝ համաձայն ազգերի համայնքի կողմից ճանաչված ընդհանուր սկզբունքների: **Այստեղից**, փորձ է արվում շեշտադրել, որ սույն հոդվածի էությունը միտված չէ անձի պատասխանատվությունից խուսափելուն, եթե իհարկե առկա է անձի մեղքը, հատկապես, եթե արարքը կատարման պահին համարվել է հանցագործություն: Իսկ նույն հոդվածի մեկնաբանությունների 3-րդ մասում նշված է, որ տույժերի խստությունը չպետք է անհամաչափ լինի քրեական հանցագործությանը:

Նշվածի համատեքստում կարծում ենք, որ տույժը կարելի է հասկանալ ավելի լայն իմաստով, քան օրենսդրությամբ նախատեսված տույժերը, այսինքն, այն կարելի է ընկալել նաև որպես հարկադրանքի յուրաքանչյուր միջոց, այդ թվում՝ տուգանք, տուժանք, և առավել ևս՝ պատիժ, քանի որ նույն խարտիայի 49-րդ հոդվածի ընդհանուր էությունն ավելի շատ միտված է դեպի հարցի քրեաիրավական տիրույթ: Ավելին, մեկնաբանության նույն նախադասության մեջ նշվում է հենց «քրեական հանցագործություն» բառակապակցությունը:

Հարցն ավելի լայն պրիզմայով դիտարկելիս տույժերի խստություն ասելով, ի թիվս այլնի, կարելի է հասկանալ նաև պատժատեսակ, պատ-

ժաչափ, քանզի դրանք հարկադրանքի միջոցի խստության չափի արտահայտման հիմնական ատրիբուտներից են:

Ակնհայտ է, որ Եվրոպական Միության Հիմնարար իրավունքների մասին խարտիայի 49-րդ հոդվածի մեկնաբանությունների 3-րդ մասում արված պնդումն ուղղակիորեն վերաբերում է պատժի համաչափության սկզբունքին և դրա պահպանմանը, քանի որ դրա բովանդակությունից ենթադրվում է, որ ինչքան բարձր է կատարված քրեական հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, այնքան բարձր պետք է լինի նշանակված պատժի խստության աստիճանը և հակառակը:

Ներկայացված հետազոտության արդյունքների ամփոփմամբ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումը, որ մեղքի և պատժի համաչափության սկզբունքների, նրանց պահպանման, փոխգործակցության, առաջինի բացահայտման արդյունքում երկրորդի սահմանման և այլնի վերջնարդյունքից է նաև կախված ոչ իրավաչափ այս կամ այն արարքն այս կամ այն օրենքով նախատեսելը: Այսինքն, պետությունը, մասնավորապես օրենսդիր մարմինը, օրինակ՝ որոշում է թե որ ոչ իրավաչափ արարքը պետք է սահմանվի քրեական օրենսդրությամբ, որը՝ վարչական, և կարծում ենք, որ այդ գործընթացի ժամանակ պետք է հնարավորինս բացահայտվի այդ ոչ իրավաչափ արարքի հիմքում ընկած մեղքը, դրա բնույթն ու էությունը, ինչից հետո սահմանվի այնպիսի օրենսդրությամբ, որին բնորոշ պատիժների նախատեսումը համահունչ կլինի տվյալ իրավախախտման բնույթին: Իհարկե, արարքը որպես հանցանք կամ վարչական իրավախախտում՝ զանցանք դիտարկելուց հետո օրենսդիրը սահմանում է հստակ սանկցիա, որն էլ պետք է համաչափ լինի կոնկրետ արարքին:

Վերոգրյալի համատեքստում կարծում ենք, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանման շրջանակում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով արտահայտված իրավական դիրքորոշումները ևս հիմնավորում են մեր պնդումների հավաստիությունը:

Այս առումով հատկանշական է «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն արձանագրումը, որ. «Դատարանը նախ և առաջ կրկնում է, որ հարկային վեճերը գտնվում են 6-րդ հոդվածով սահմանված քաղաքացիական իրավունքների և պարտականությունների շրջանակից դուրս, չնայած այն նյութական հետևանքներին, որոնք դրանք անխուսափելիորեն առաջացնում են հարկատուի համար (տե՛ս այլ նախադեպերի շարքում Ֆերացինին ընդդեմ Իտալիայի (Ferrazzini v. Italy) [GC], թիվ 44759/98, պարբ. 29, ECHR

2001-VII): Այնուամենայնիվ, երբ նման դատավարությունը ներառում է տույժերի և տուգանքների նշանակում, այն կարող է որոշակի հանգամանքներում գրավել 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները վերջինիս «քրեական» մասի ներքո (տե՛ս Բենդենունն ընդդեմ Ֆրանսիայի (Bendenoun v. France), 1994թ. փետրվարի 24-ի վճիռը, սերիա Ա թիվ 284, էջ 20, պարբ. 47, Յանոշևիչ ընդդեմ Շվեդիայի (Janosevic v. Sweden), թիվ 34619/97, պարբ. 71, ECHR 2002- VII, Յուսիլան ընդդեմ Ֆինլանդիայի (Jussila v. Finland) [GC], թիվ 73053/01, պարբ. 38, ECHR 2006-...): Մույն գործը վերաբերում է մի դատավարության, որտեղ դիմումատու ընկերությանը պարտավորեցվել է վճարել շահութահարկ, ավելացված արժեքի հարկ և պարզեցված հարկ և դրա հետ մեկտեղ լրացուցիչ տույժեր և տուգանքներ: Հետևաբար մնում է պարզել՝ արդյոք Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի 6-րդ հոդվածը կարող է կիրառելի լինել քննարկվող դատավարության նկատմամբ իր «քրեական» մասի ներքո, թե՛ ոչ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեկ անգամ ևս նշում է, որ «քրեական մեղադրանք» հասկացությունը 6-րդ հոդվածի իմաստով ինքնավար բնույթ ունի (տե՛ս վերը վկայակոչված Յանոշևիչ, պարբ. 65): Որոշելիս թե արդյոք հանցանքը որակվում է «քրեական» երեք չափանիշ պետք է կիրառվեն՝ հանցանքի իրավական դասակարգումը ներպետական օրենսդրությունում, հանցանքի բնույթը և **հնարավոր պատժի խստության աստիճանը** (տե՛ս Էնգելն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների (Engel and others v. the Netherlands), 1976թ. հունիսի 8-ի վճիռը, Սերիա Ա թիվ 22, էջեր 34-35, պարբ. 82, Օզթյուրքն ընդդեմ Գերմանիայի (Öztürk v. Germany), 1984թ. փետրվարի 21-ի վճիռը, Սերիա Ա թիվ 73, էջ 18, պարբ. 50, Էզեհն ու Կոնորգն ընդդեմ Միացյալ Թագավորության (Ezeh and Connors v. the United Kingdom) [GC], թիվ 39665/98 և 40086/98, պարբ. 82, ECHR 2003-X): Երկրորդ և երրորդ չափանիշներն այլընտրանքային են և ոչ անհրաժեշտաբար միասնական. «քրեական մեղադրանք» բառերի միջոցով 6-րդ հոդվածը կիրառելու համար բավարար է, որ տվյալ հանցանքն իր բնույթով լինի «քրեական» Կոնվենցիայի իմաստով կամ համապատասխան անձին դատապարտած լինի պատժի, որն իր բնույթով և խստության աստիճանով ընդհանուր առմամբ պատկանում է «քրեական» ոլորտին (տե՛ս վերը վկայակոչված Յանոշևիչ, պարբ. 67): Հարկային վեճերի կամ այլ դեպքերում պատժի ցածր աստիճանը որոշիչ չէ քրեական բնույթ ունեցող հանցանքը 6-րդ հոդվածի շրջանակից դուրս բերելու համար (տե՛ս վերը վկայակոչված Յուսիլա, պարբ. 35, որտեղ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը

գտել է, որ 6-րդ հոդվածը կիրառելի է նույնիսկ այն դեպքում, երբ նշանակված տույժը հավասար էր հարկային պարտավորության միայն 10 տոկոսին):

Անդրադառնալով առաջին չափանիշին՝ տույժերն ու տուգանքները տվյալ դեպքում նշանակվել են տարբեր հարկային օրենքներին համապատասխան և չեն դասակարգվում որպես քրեական: Այս փաստը սակայն որոշիչ չէ (տե՛ս նույն տեղում, պարբ. 37):

Ինչ վերաբերում է **երկրորդ չափանիշին**, ապա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները կիրառելի են բոլոր անձանց նկատմամբ՝ և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական, որոնք պարտավոր են հարկ վճարել և ուղղված չեն որոշակի խմբին: Բացի այդ, տույժերի ու տուգանքների նպատակը հարկատուի վարքագծի արդյունքում հնարավոր առաջացած ծախսերի նյութական հատուցումը չէ: Այս միջոցառումների նպատակը հարկատուների նկատմամբ ճնշում գործադրելն է, որպեսզի վերջիններս կատարեն իրենց իրավական պարտավորությունները և այդ պարտավորությունները խախտելու համար նրանց պատժելը: Այսպիսով պատժամիջոցները և՛ կանխարգելիչ են, և՛ պատժիչ:

Դատարանը գտնում է, որ վերը նշվածը բավարար է իրավախախտման քրեական բնույթը հաստատելու համար (տե՛ս նույն տեղում, պարբ. 38): Այնուամենայնիվ պետք է նաև նշել, որ տվյալ դեպքում դիմումատու ընկերության նկատմամբ նշանակվել էին բավական զգալի պատժամիջոցներ՝ տուգանքներ 10-ից 50 տոկոսի սահմաններում և տույժեր վճարման ուշացման ժամանակահատվածի համար, ընդհանուր՝ մոտավորապես հարկային պարտավորության գումարի 5-ից 43 տոկոսի չափով:

Վերոգրյալի լույսի ներքո Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացնում է, որ դիմումատուի մասնակցությամբ դատավարությունը կարող է դասակարգվել որպես «քրեական» Կոնվենցիայի իմաստով, հետևաբար 6-րդ հոդվածը կիրառելի է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այնուհետև նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ակնհայտորեն անհիմն չէ: Դատարանը նաև գտնում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Այդ պատճառով այն պետք է հայտարարվի ընդունելի»:

Վերոգրյալից կարելի է արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակում որոշելու համար՝ արդյոք հակաիրավական արարքը, այսպես ասած, քրեական է թե՛ ոչ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն իրավախախտման իրավական դա-

սակարգումը ներպետական օրենսդրությունում, այլ նաև բուն իրավախախտման բնույթը և հնարավոր պատժի խստության աստիճանը: Արդյունքում կարելի է կատարել հետևյալ եզրահանգումը, որ **պատժի համաչափության որոշման գործում կարևոր դերակատարություն պետք է ունենա նաև հակաիրավական արարքի որակումը, բուն էության բացահայտումը և արդյունքում այս կամ այն օրենսդրությամբ նախատեսելը:**

Քննարկվող սկզբունքների դրսևորման և սահմանադրականացման Եվրոպական իրավական չափորոշիչների առավել խորը բացահայտման գործընթացում հարկավոր է անդրադարձ կատարել նաև Եվրոպական իրավունքի և Եվրոպական Միության իրավունքի հիմնարար սկզբունքներին, դրա մարմինների կողմից ընդունված համապատասխան փաստաթղթերին: Դրանց շարքում ուշագրավ է Եվրոպայի նախարարների խորհրդի N R(87)18 հանձնարարականը, որի 2-րդ բաժնի Մանր գործերով պարզեցված ընթացակարգերը՝ ելնելով գործի հանգամանքներից ենթաբաժնի 3-րդ կետը մասնավորապես բովանդակում է, որ քրեական կարգի համաձայն մանր գործերով պատիժները պետք է սահմանափակվեն դրամական պատիժներով և իրավունքների զրկմամբ՝ նույնիսկ բացառելով որևէ բանտային պատիժ: Այսինքն, ըստ էության, փոքր հանրային վտանգավորության աստիճան ունեցող արարքների դեպքում պետք է բացառվի ազատագրկումը՝ որպես պատժի տեսակ:

Վերոնշյալը թերևս արտացոլում է Եվրոպական Միության մարմինների կողմից տարվող քրեաիրավական քաղաքականության ողջ էությունն ու տրամաբանությունը, ինչը միանշանակ միտված է փոքր հանրային վտանգավորություն ունեցող արարքների դեպքում, ազատագրկման ձևով պատժատեսակների բացառմամբ, պատժի համաչափության պահպանմանը և, արդյունքում, մարդու իրավունքների պաշտպանությանը:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին նվիրված հետազոտություններից մեկում արձանագրվել է, որ Սահմանադրությունն առնվազն պետք է ամրագրի այն պահանջները, որոնք համընդհանուր ճանաչում են գտել ժամանակակից սահմանադրական իրավունքում, ինչպես նաև Եվրոպական Միության հիմնական իրավունքների խարտիայի 52-րդ հոդվածի 1-ին մասում¹: Խոսքը, մասնավորապես, իրավունքի էության անխախտելիության և, հատ-

¹ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ փաստաթուղթն ընդունվել է 2000 թվականին Եվրոպական Միության խորհրդի կողմից, պաշտոնական անվանումը՝ Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիա:

կապես, համաչափության սկզբունքի հստակ ամրագրման անհրաժեշտության մասին է:

Նույն՝ Եվրոպական Միության Հիմնարար իրավունքների խարտիայի վերոնշյալ դրույթով մասնավորապես նշվում է հետևյալը. «Մույն Կանոնադրությամբ ճանաչված իրավունքների և ազատությունների իրականացման ցանկացած սահմանափակում պետք է նախատեսվի օրենքով և հարգի այդ իրավունքների և ազատությունների էությունը: Հաշվի առնելով համաչափության սկզբունքը՝ սահմանափակումները կարող են դրվել միայն այն դեպքում, եթե դրանք անհրաժեշտ են և իսկապես համապատասխանում են Եվրոպական Միության կողմից ճանաչված ընդհանուր հետաքրքրության նպատակներին կամ այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու անհրաժեշտությանը»:

Վերոնշյալից ակնհայտ է, որ Եվրոպական Միությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության տեսանկյունից չափազանց կարևորում է դրանց սահմանափակման համաչափությունը: Իհարկե, այստեղ խոսք կարող է լինել համաչափության ընդհանուր սկզբունքի պահպանման մասին, սակայն կարծում ենք, որ քննարկվող պատժի համաչափության սկզբունքի առանցքային բաղադրիչներից մեկը հենց համաչափության գաղափարն է, իսկ պատիժն ինքնին ենթադրում է որոշակի կամ ինչ-որ սահմանափակում: Այսինքն, Եվրոպական Միության նշված դիրքորոշումը կարելի է իմպլեմենտացնել պատժի համաչափության սկզբունքի համատեքստում:

Ուշագրավ է, որ մատնանշված խարտիայի 52-րդ հոդվածի 1-ին մասի վերջում, որպես մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման նախապայման դիտարկվում է այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու անհրաժեշտությունը: Եվ եթե մեղքի և պատժի համաչափության սկզբունքներն ընդհանուր իրավաբանական մարդկային որպես որոշակի հիմքերի պայմաններում մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանափակող կատեգորիա, ապա այն՝ ըստ Եվրոպական միության կողմից դրսևորած տրամաբանության, կարող է և պետք է միտված լինի այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը: Սա, թերևս, ևս մեկ անգամ հիմնավորում է այն փաստարկը, որ մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների իրավափիլիսոփայական տրամաբանությունն ուղղված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման և պահպանության երաշխավորմանը:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ անհրաժեշտ է առանձնացնել մեղքի և պատժի համաչափության սահմանադրական սկզբունքների կիրառման ու նշանակության վերաբերյալ մասնավորապես հետևյալ իրավական չափորոշիչները.

ա) անձին կարելի է քրեական պատասխանատվության ենթարկել միայն արարքը համապատասխան իրավական ակտով նախատեսված լինելու պայմաններում,

բ) մեղքը՝ արարքի կատարման պահով փոխպայմանավորելը,

գ) թույլ տրված հակաիրավական արարքի և պատժի միջև համաչափության ապահովման պարտադիրությունը,

դ) պահպանելով պատժի համաչափությունը՝ հնարավորինս անազատության հետ չկապված պատիժների կիրառմանը ձգտելը,

ե) ի սկզբանե հակաիրավական արարքը դասակարգելիս՝ բուն իրավախախտման բնույթը բացահայտելու և, դրա հիմքով, համապատասխան իրավական ակտով նախատեսելու անհրաժեշտությունը:

ПРИНЦИП ВИНЫ И ПРИНЦИП СОРАЗМЕРНОСТИ НАКАЗАНИЯ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННОГО ПРАВОСУДИЯ И ЕВРОПЕЙСКИХ ПРАВОВЫХ СТАНДАРТОВ

Аннотация

В статье предпринята попытка максимально раскрыть роль конституционного правосудия в процессе интерпретации принципа вины и принципа соразмерности наказания, а также его влияние на развитие правовой системы в итоге.

В статье также делается попытка рассмотреть данный вопрос в контексте ряда органов Европейского союза и принятых ими правовых документов, что позволяет подчеркнуть внедренную в глубины права Союза Европы сформированную его органами четкую правовую позицию относительно рассматриваемого вопроса.

Примечательно, что в результате было выдвинуто несколько европейских правовых стандартов относительно принципа вины и принципа соразмерности наказания.

Ключевые слова: принцип вины, принцип соразмерности наказания, конституционное правосудие, интерпретация, европейские правовые стандарты.

THE PRINCIPLE OF GUILT AND THE PRINCIPLE OF PROPORTIONALITY OF PUNISHMENT IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL JUSTICE AND EUROPEAN LEGAL STANDARDS

Annotation

The paper attempts to reveal as much as possible the role of constitutional justice in the process of interpretation of the principle of guilt and the principle of proportionality of punishment, as well as its impact on the development of the legal system in the end.

The article also attempts to discuss the issue in the context of a number of European Union bodies and the legal documents adopted by them, which allows to emphasize the clear legal position included in the depths of European Union law and formed by the European Union bodies on the issue under discussion.

It is noteworthy that, as a result, several European legal standards have been put forward in relation to the principle of guilt and the principle of proportionality of punishment.

Keywords: the principle of guilt, the principle of proportionality of punishment, constitutional justice, interpretation, European legal standards.



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան*

**ՕՐԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ (EXTRA LEGEM) ԵՎ ՕՐԵՆՔԻՆ
ՀԱԿԱՌԱԿ (CONTRA LEGEM) ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ԴՈԿՏՐԻՆԸ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼԻՍ**

Ամփոփագիր. Սույն հոդվածում վերլուծվում են քրեական դատավարությունում վարույթի ընդդատությունը որոշելու հետ կապված այն հարցերը, որոնք դատավարական օրենսդրությամբ կարգավորված չեն, ընդ որում՝ խնդրո առարկա հարցերի կարգավորված չլինելը մի դեպքում օրենսդրի սխալի, մեկ այլ դեպքում՝ օրենսդրի գիտակցված լռության արդյունքն է: Օրենսդրական նման բացերը գործնականում առաջացնում են այնպիսի բարդություններ, որոնք հրատապ լուծումների կարիք ունեն, ուստի, մինչ օրենսդիրը միջոցներ ձեռնարկի, դրանք պետք է լուծվեն իրավակիրառողների կողմից:

Իրավակիրառ պրակտիկայում այս խնդիրները լուծելու նպատակով հեղինակն առաջարկում է դիմել օրենքից դուրս (extra legem) և օրենքին հակառակ (contra legem) իրավունքի զարգացման դոկտրինին:

Հեղինակը հոդվածում եզրակացնում է, որ հիշյալ առաջարկության գործնական կիրառությունը կախված է, հատկապես, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավասու դատավորների իրավաընկալման խորությունից և մասշտաբայնությունից: Contra legem իրավունքի զարգացման դոկտրինի կիրառությունը հեռանկար չի կարող ունենալ, եթե ընդդատության վեճեր լուծող ՀՀ վճռաբեկ դատարանի իրավասու դատավորի իրավահասկացողությունը պարփակված է բացառապես լեգիզմով: Այդ տեսակի պաշտոնատար անձից իրավաբանությունն ակնկալելն անիրագործելի սպասում է:

Հիմնաբառեր. ընդդատություն, քրեական դատավարություն, իրավունքի զարգացում, օրենքից դուրս, օրենքին հակառակ:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. *Ուսումնասիրության առարկան*: Մույն հոդվածում ընդդատության կանոնները կվերլուծվեն առավելապես 30.06.2021թ.-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.)¹ դրույթների հիման վրա, իսկ երբեմն նաև կվկայակոչվեն 1998թ.-ին ընդունված և այս պահին գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթները (այսուհետ՝ 1998թ.-ին ՀՀ քր. դատ. օր.):

ՀՀ քր. դատ. օր-ում նախատեսված է ընդատության երկու տեսակ՝ ինստանցիոն (260-րդ հոդված) և տարածքային (261-րդ հոդված) ընդդատությունները, ընդ որում՝ ՀՀ քր. դատ. օր-ի 260-րդ հոդվածի վերտառությունն է «Առարկայական ընդդատությունը»: Ընդդատության առարկայական (սեռային) հատկանիշը որոշվում է քրեական վարույթի առարկայով (ներկայացված մեղադրանքի փաստացի բովանդակությամբ), այսինքն՝ արարքին տրված քրեաիրավական որակմամբ: Այս հատկանիշով տարանջատվում են որպես առաջին ատյան հանդես եկող դատարանների տարբեր օղակների ընդդատությունը²: Առարկայական (կամ սեռային) ընդդատությունը սահմանում է, թե դատական համակարգի որ օղակին (որ տեսակի դատարաններին) է վերապահված որպես առաջին ատյանի դատարան վարույթ իրականացնելու իրավասությունը: Մինչդեռ ՀՀ քր. դատ. օր-ի 260-րդ հոդվածը ոչ թե առարկայական ընդդատության մասին է, այլ տարբեր ատյանների իրավասության կամ ատյանային ընդդատության մասին³: Այս հոդվածն ամենայն հավանականությամբ փոխառնված է Լատվիայի քր. դատ. օր-ի 442-րդ հոդվածից, որի վերտառությունն է «Քրեական գործերով վարույթների ատյանները»:

Այսպիսով՝ օրենսդիրը, հոդվածը վերնագրելով որպես առարկայական ընդդատություն, ընդդատության տեսակների տարբերակման պարզ հարցում չի կողմնորոշվել: «Առարկայական ընդդատություն» ձևակերպումը կիրառելի կլիներ, եթե, օրինակ, օրենքով սահմանված լիներ, որ ՀՀ վերաքննիչ դատարանը՝ որպես առաջին ատյանի դատարան, քննում է որոշակի խումբ հանցագործությունների վերաբերյալ մեղադրանքը: Մույն հոդվածում կքննարկվեն վարույթի տարածքային ընդդատության որոշման հետ առնչվող անպարզությունները և խնդրահարուց կարգավորումները:

¹ Ուժի մեջ է մտնելու 01.07.2022թ.-ին:

² **Строгович М. С.** Курс советского уголовного процесса. Том 1. - М.: Изд. "Наука", 1968. - С. 268; **Чельцов М. А.** Уголовный процесс. - М.: Юрид. изд-во МЮ СССР, 1948. - С. 441-442; **Прошляков А. Д., Угренинова А. М.** Подсудность в уголовном процессе. - М.: Юрлитинформ, 2020. - С. 54.

³ Նույնիսկ եթե որևէ դատավարական համակարգում դատական ատյանների իրավասությունը որոշելու համար գործածվում է «ընդդատություն» եզրույթը, ապա այն անվանում են ատյանային (ինստանցիոնալ) ընդդատություն, որը տարբերվում է առարկայական ընդդատությունից: Օրենսդրությամբ «ատյանային ընդդատություն» ձևակերպումն առաջին անգամ օգտագործվել է Ուկրաինայի քր. դատ. օր-ի 33-րդ հոդվածում:

1.2. *Քրեադատավարական ընդդատության ինստիտուտի ընդհանուր բնույթագիրը*: Ընդդատությունն այն կանոններն են (չափանիշները), որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ քրեական գործով (մեղադրանքով) կամ նյութով որ դատարանը պետք է իրականացնի դատական իշխանություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին գերծ պահելու դատական բյուրոկրատական քաշքշուկներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Բեզմյաննայան ընդդեմ Ռուսաստանի (Bezymyannaya v. Russia) վերաբերյալ 22.12.2009թ. գործով նշել է, որ տարբեր դատարանների ընդդատության չափանիշների վերաբերյալ կանոնները մշակված են այնպես, որ ապահովեն արդարադատության պատշաճ իրականացումը: Սակայն քննարկվող կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է սահմանափակեն կողմերի՝ իրավական պաշտպանության միջոցների մատչելիությունը: Տվյալ գործով ներպետական դատարանները սխալ են մեկնաբանել ընդդատության կանոնները, որի հետևանքով դիմողը հայտնվել է փակ շրջանում, այսինքն՝ այնպիսի իրավիճակում, երբ ներպետական դատարանները, վկայակոչելով մեկը մյուսին, հրաժարվել են գործը քննել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը սահմանադրական նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի (օրինական դատարանի) սահմանադրական իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնավոր անձինք պետք է նախապես իմանան, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009թ. ՄԴՌ-787 որոշմամբ նշել է, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը: 2021թ.-ին ընդունված ՀՀ քր. դատ. օր-ի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող գրկվել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննվելու իրավունքից, որոնց ընդդատությանը կամ իրավասությանն այն վերապահված է օրենքով:

Այս իրավունքի ապահովման նպատակով օրենսդիրը պետք է հնարավորինս մանրամասն սահմանի իրավասու դատարանին որոշելու կանոնները: Այնուամենայնիվ, ինչքան էլ որ օրենսդիրը փորձի լավագույնս լուծել այս խնդիրը, միևնույն է՝ հասարակական կյանքի բազմաշերտությունը, զարգացման թափը և իրավիճակների անկանխատեսելիությունն անհնարին են դարձնում լուծել ընդդատության հետ կապված անխտիր բոլոր հարցերը: Այդ իսկ պատճառով, երբեմն իրավակիրառողները, գերակայություն տալով անխտիր բոլոր գործերով արդարադատություն իրականացնելու պահանջին, իրենց կարողություն-

ներով պետք է լուծեն ընդդատությանն առնչվող խնդիրը: Այս իրավիճակներում իրավակիրառողները պետք է դիմեն իրավաբանական դոկտրինում առաջարկվող լուծումներին, որի պարագայում նրանց կայացրած որոշումները կարող են և դուրս լինել օրենքի տիրույթից, սակայն դրանք, անկասկած, իրավունքի տիրույթում են:

1.3. *Օրենքից դուրս (extra legem) և օրենքին հակառակ (contra legem) իրավունքի զարգացման դոկտրինի ընդհանուր բնութագիրը:* Լայն իրավաբանական տիրույթում առանձնացվում են *intra legem* (ըստ օրենքի), *extra legem* (օրենքից դուրս) և *contra legem* (օրենքին հակառակ) իրավունքի զարգացման (իրավակիրառման) տեսակները¹:

Intra legem իրավակիրառումն օրենքի դասական պոզիտիվ-իրավական կիրառումն է, որի դեպքում իրավակիրառողը գործը լուծում է օրենքի հիման վրա, իրավակիրառ ակտերը բխում են օրենքի պահանջներից, օրինակ՝ վարչական մարմինն օրենքով սահմանված հիմքերով և կարգով նշանակում է կենսաթոշակ:

Extra (Praeter) legem իրավակիրառման ժամանակ առկա է օրենքի բաց, որի դեպքում իրավակիրառողը վեճը լուծում է իրավունքի ընդհանուր սկզբունքների հիման վրա (օրենքի բացի լրացումն ըստ իրավունքի անալոգիայի): *Extra legem* իրավակիրառման դեպքում իրավական խնդրի լուծումը, թեև օրենքով ուղղակիորեն կարգավորված չէ, սակայն այն չի հակասում օրենքին (անօրինական չէ), եթե, իհարկե, պահպանվում են օրենքի բացը լրացնելու համար նախատեսված պայմանները:

Contra legem իրավակիրառման դեպքում առկա է օրենքի կարգավորում, սակայն իրավակիրառ մարմինը, ելնելով որոշակի իրավաչափ նպատակներից (օրինակ՝ արդարության կամ իրավունքի այլ սկզբունքների աննահանջ պահանջից), կայացնում է օրենքի կարգավորմանը հակառակ որոշում: Իրավակիրառ մարմինը *Contra legem* ակտով վերացնում կամ փոփոխում է օրենքի կարգավորումները:

Դոկտրինում «*contra legem*» եզրույթն օգտագործվում է տարբեր իրավական հասկացությունների հետ զուգակցված, որից կախված էլ պետք է որոշել, թե այդ ձևակերպումներով բնութագրվում է իրավաչափ, թե՛ ոչ իրավաչափ վարքագիծը: Օրինակ՝ եթե օգտագործվում է *contra legem* իրավակիրառում²,

¹ **Ղամբարյան Ա.** Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համատեսական և մեթոդաբանական հիմնախնդիրներ), Եր., 2013, էջեր 200-203, Պետության և իրավունքի տեսություն: Գիտ. խմբ. **Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան.**, 3-րդ լրամշակված հրատ., Եր., 2018, էջեր 496-499, **Հովհաննիսյան Գ.** Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, Եր., 2020, էջեր 357, 390-392:

² **Федотов А. В.** Возможно ли применение *contra legem* в демократическом правовом государстве? // Журнал российского права. 2002. № 8. - С. 92-99; **Ղամբարյան Ա.** Իրավունքի և օրենքի կոլիզիաները իրավունքի փիլիսոփայությունում // Գիտական Արցախ, 2021, № 1 (8), էջեր 75-76:

contra legem մեկնաբանում¹ կամ contra legem իրավունքի զարգացում² հասկացությունները, ապա խոսքը, անկասկած, իրավաչափ վարքագծի մասին է, ընդ որում «contra legem իրավունքի զարգացում» հասկացությունն ավելի տարրողունակ է, քանզի կարող է ներառել contra legem իրավաստեղծումը, մեկնաբանումը և իրավակիրառումը:

Contra legem և extra legem իրավակիրառումները երբեմն նմանվում են, ուստի դրանց սահմանազատումը հստակեցնելու նպատակով տարբերակում ենք կոշտ և մեղմ contra legem իրավակիրառման տեսակները:

Առաջին՝ կոշտ contra legem իրավակիրառում, երբ օրենքով գրված է, որ իրավակիրառողը պարտավոր է կատարել (կամ չկատարել) A գործողությունը, սակայն իրավակիրառողը, օրենքի անիրավությունից խուսափելու նպատակով, չի կատարում (կամ կատարում է) A գործողությունը: Այս դեպքում contra legem իրավակիրառումը extra legem իրավակիրառումից տարբերակելը բարդ չէ, քանի որ օրենքին հակառակ իրավակիրառումն ակնառու է:

Կոշտ contra legem իրավակիրառման դասական օրինակ է, երբ ՀՀ դատարանները, ի հակառակ դատավարական նորմերն օրենքի անալոգիայով կիրառելու օրենսդրական արգելքի (ՀՀ քաղ. դատ. օր-ի 4-րդ հոդվածի 1-ին մասին), դատավարական նորմերը կիրառում են օրենքի անալոգիայի կարգով³: Այսպես՝ ՀՀ քաղ. դատ. օր-ի 4-րդ հոդվածի 1-ին մասով ուղղակիորեն արգելվում է դատավարական նորմերն օրենքի անալոգիայով կիրառելը, սակայն ՀՀ դատարանները, որոշ գործերի ընդդատության կանոնների բացակայության պայմաններում, ի հակառակ ՀՀ քաղ. դատ. օր. 4-րդ հոդվածի 1-ին մասի, ընդդատության մասին դատավարական առկա նորմերը փաստացի կիրառում են օրենքի անալոգիայի կարգով: Այսպես՝ ՀՀ քաղ. դատ. օր-ի 249-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված է, որ եթե քաղաքացին բուժվում է հոգեբուժական

¹ Общая теория государства и права. Академический курс в 3-х томах. Т. 2. Отв. ред. Марченко М. Н. - М., 1998. - С. 327.

² Հովհաննիսյան Գ. Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, Եր., 2020, էջ 357:

³ Քաղաքացիական գործեր քննելու մասնագիտացում ունեցող դատավորների մոտ անհասկանալիորեն զերակայում է այն մոտեցումը, որ ՀՀ քաղ. դատ. օր-ի 4-րդ հոդվածով նախատեսված դատավարական օրենքի անալոգիայի արգելքը բխում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ի մասի այն կարգավորումից, որ դատավորները՝ որպես պաշտոնատար անձինք, իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ սահմանադրությամբ կամ օրենքներով: Իսկ նրանցից ոմանք նշում են. «Նշված տրամաբանությունը (դատավարական օրենքի արգելքի՝ հեղ.) բավականին պարզ է»: Տե՛ս Թորոյան Գ., Չարգարյան Հ., Շահնազարյան, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակիրառ պրակտիկան: Ընդհանուր մաս: Հայրապետ. 2021, էջ 21: Իրականում ոչ թե դատավարական օրենքի անալոգիայի արգելք նախատեսելու տրամաբանությունն է բավականին պարզ, այլև այդ արգելք նախատեսելը և այն նման կերպ հիմնավորելն է անտրամաբանական: Դատավարական օրենքի անալոգիան ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի հետ որևէ խնդիր չի առաջացնում, ոչ միայն այն պատճառով, որ ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածը չի կարող հետապնդել օրենսդրական բացի պատճառով մարդուն արդարադատությունից կամ իր իրավունքները իրականացնելու հնարավորությունից զրկելու նպատակ, այլ նաև՝ այն պարզ տրամաբանությամբ, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն է լիազորել իրավակիրառողներին համապատասխան արգելքի բացակայության դեպքում դիմել extra legem իրավակիրառման:

կազմակերպությունում, սպա անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է հոգեբուժական կազմակերպության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, սակայն օրենսդիրը չի կարգավորել հակառակ իրավիճակը, այն է՝ անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը կոնկրետ որ դատարան պետք է ներկայացվի: ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ԱԲԴ-1/0235/02/21 գործով փաստացի ՀՀ քաղ. դատ. օր-ի 249-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառել են անալոգիայով:

« (...) օրենսդիրը դատարանին ընձեռել է անգործունակ ճանաչված քաղաքացու դիմումով վերջինիս գործունակ ճանաչելու վերաբերյալ վճիռ կայացնելու հնարավորություն (ՀՀ քաղ. դատ. օր-ի 255-րդ հոդվածի 1-ին կետ), սակայն նման հնարավորություն նախատեսելով՝ միաժամանակ չի կարգավորել այն դեպքը, թե տվյալ դիմումը անգործունակ ճանաչված քաղաքացին որ դատարան պետք է ներկայացնի: Եվ, քանի որ ՀՀ քաղ. դատ. օր-ի 249-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված է, որ անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը, եթե քաղաքացին բուժվում է հոգեբուժական կազմակերպությունում, պետք է ներկայացվի հոգեբուժական կազմակերպության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, ուստի՝ նման պայմաններում, երբ հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անգործունակ ճանաչված քաղաքացին դիմում է ներկայացնում իրեն գործունակ ճանաչելու պահանջով, սպա այն պետք է ներկայացնի հոգեբուժական կազմակերպության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, ինչպես սահմանված է ՀՀ քաղ. դատ. օր-ի 249-րդ հոդվածի 3-րդ կետում: Այսինքն՝ Առաջին ատյանի դատարանը նման պայմաններում պետք է առաջնորդվի քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի ընդդատության կանոնով»:

Այս իրավիճակում անգործունակ ճանաչված անձին օրենքով հնարավորություն է տրվել գործունակ ճանաչելու դիմում ներկայացնել դատարան, սակայն օրենքը չի կարգավորել այս գործերի ընդդատության հարցը: Կասկածից վեր է, որ սուբյեկտիվ իրավունքի իրականացման ընթացակարգի կամ դրա տարրերից որևէ մեկի բացակայությունը որևէ դեպքում չի կարող արգելափակել այդ սուբյեկտիվ իրավունքի իրականացումը, ուստի սույն գործով ՀՀ դատարանները, ելնելով մարդու իրավունքի գերակայության շահից, բնականաբար, դիմել են contra legem իրավակիրաման: Թեև դատավարական օրենսգրքով ուղղակիորեն արգելված է դատավարական նորմերն օրենքի անալոգիայի կիրառելը (ՀՀ քաղ. դատ. օր-ի 4-րդ հոդվածի 1-ին մաս), սակայն ՀՀ դատարանները, ի հակառակ օրենսդրական այդ արգելքի, փաստացի ընդդատության մասին դատավարական նորմն անալոգիայի կարգով կիրառել են նմանատիպ գործով ընդդատությունը որոշելիս, ընդ որում՝ թեև ՀՀ դա-

տարանները էքսպլիցիտ չեն նշել, որ դիմում են օրենքի անալոգիայի, սակայն դրանից հարցի էությանը չի փոխվել, քանի որ ինքնակնհայտ է, որ տվյալ դեպքում դատարանները փաստացի դատավարական նորմը կիրառել են օրենքի անալոգիայի կարգով:

Նկարագրված իրավիճակում որևէ բանական իրավաբան չի կարող կասկածի տակ դնել անիրավ (իրավախախտ) օրենքի («քաղ. դատ. օր-ի 4-րդ հոդվածի 1-ին մասը) *contra legem* իրավակիրառման իրավաչափությունը:

Երկրորդ՝ մեղմ *contra legem* իրավակիրառում՝ երբ օրենքով սահմանված են որոշակի կարգավորումներ, սակայն իրավակիրառողն այն փոփոխում է և ավելացնում է նոր տարրեր: Այս դեպքում է, որ ծագում է *contra legem* և *extra legem* իրավակիրառումների սահմանազատման խնդիր: Օրինակ՝ օրենքով սահմանված է անմիջական բողոքարկման ենթակա դատական ակտերի սպառնիչ (փակ) ցանկ, սակայն «Վերաքննիչ դատարանը կոնկրետ գործով որոշում է, որ բողոքարկված դատական ակտը, թեև ընդգրկված չէ բողոքարկման ենթակա դատական ակտերի՝ օրենքով սահմանված սպառնիչ ցանկում, սակայն այն ենթակա է դատական ստուգման: Հարց է ծագում. այս դեպքում «Վերաքննիչ դատարանը լրացրեց օրենքի բացը, այսինքն՝ դիմեց *extra legem* իրավակիրառման, թե՞ գործեց օրենքին հակառակ, այսինքն՝ դիմեց *contra legem* իրավակիրառման: Այստեղ հնարավոր է երկու տարբերակ.

1) Օրենսդիրը սխալմամբ այդ դատական ակտը չի ներառել բողոքարկվող ակտերի ցանկում (օրենքի բաց), իսկ «Վերաքննիչ դատարանն այդ բացը լրացնելու նպատակով, հիմք ընդունելով իրավական պաշտպանության սկզբունքը, բողոքարկման ենթակա ակտերի ցանկում ավելացնում է նոր դատական ակտ: Այս դեպքում «Վերաքննիչ դատարանի գործողությունը կարելի է որակել որպես *extra legem* իրավակիրառում:

2) Օրենսդիրը, անմիջական բողոքարկման ենթակա դատական ակտերի սպառնիչ ցանկ նախատեսելով, գիտակցաբար չի ցանկացել, որպեսզի այդ ցանկում չընդգրկված դատական ակտերն անմիջականորեն բողոքարկվեն (օրենսդրի որակյալ լուրջում), իսկ «Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով իրավունքը սկզբունքները, այդ ցանկում չընդգրկված դատական ակտի դեմ բերված բողոքը ընդունում է վարույթ և քննում է այն, այսինքն՝ օրենսդրի կողմից սահմանած փակ ցանկում փաստացի ավելացնում է նոր դատական ակտ: Այս դեպքում իրավակիրառողի գործողությունը կարելի է որակել որպես *contra legem* իրավակիրառում (այս մասին հաջորդիվ)¹:

¹ «Վճռաբեկ դատարանը նման իրավիճակներում հիմք է ընդունել մեկնաբանման *expressio unius* կանոնը, համաձայն որի՝ սպառնիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով: Այլ կերպ ասած՝ եթե որևէ տարր փակ թվարկման մեջ ներառված չէ, ապա թվարկում սահմանող նորմը կարելի է մեկնաբանել որպես տվյալ տարրի արգելք ամրագրող: Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Եր., Ատոլիկ, 2011, էջ 22-23:

Contra legem և extra legem իրավակիրառումների սահմանազատման համար կարևոր է նաև իրավական կարգավորման տիպը: Պետական (կամ տեղական ինքնակառավարման) մարմինների (իրավակիրառողների) համար գործում է իրավական կարգավորման «թույլատրվում է այն, ինչ սահմանված է օրենքով» տիպը: ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում ուղղակիորեն սահմանված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Եթե օրենքով նախատեսված չէ ֆունկցիոնալ գործողություն կատարելու մասին պետական մարմնի լիազորություն, ապա նման գործողություն կատարելն արգելվում է: Եթե իրավակիրառողը, իրավաչափ պայմանների առկայության դեպքում (օրինակ՝ առանց այդ լիազորության իրավակիրառող մարմինը գրված է իր գործառույթն իրականացնելու հնարավորությունից, իսկ այդ գործառույթը չիրականացնելը կարող է առաջացնել ողբերգական հետևանքներ), այնուամենայնիվ, կատարում է օրենքով չնախատեսված (հետևապես՝ արգելված), սակայն իր գործառույթներից բխող գործողությունը, ապա այն կհամարվի contra legem իրավաչափ վարքագիծ:

2. Վարույթի ընդդատությունը որոշելը՝ extra legem իրավակիրառմամբ

2.1. *Վարույթի տարածքային ընդդատությունը հանցանքի կատարման վայրի անպարզության դեպքում:* 1998թ.-ի ՀՀ քր. դատ. օր.-ում հանցանքի կատարման վայրն անհայտ լինելու դեպքում վարույթի ընդդատության որոշման հարցը կարգավորված չէր, սակայն կենդանի իրավունքով սահմանվել էր, որ նման պարագայում իրավասու դատարանը որոշվում է նախաքննություն կատարող մարմնի նստավայրով: Այսպես, թիվ ԵԿԴ/0064/01/16 գործով օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարելու հիմքով հետախուզման մեջ գտնվող ՀՀ քաղաքացին հայտնաբերվել էր Երևան քաղաքում, սակայն, ըստ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու վերաբերյալ հանգամանքը որևէ կերպ արձանագրված չէ: Նրան մեղադրանք է առաջադրվել **պետական սահմանն ապօրինի հատելու համար, քանի որ** նա ողջամիտ բացատրություն չի ներկայացրել, թե նախկինում Երևանի «Չվարթնոց» օդանավակայանով Հայաստանի Հանրապետությունից մեկնելուց հետո ինչ կարգով, ինչ փաստաթղթերով և ում տվյալներով է հատել է ՀՀ պահպանվող պետական սահմանը և մուտք գործել Հայաստանի Հանրապետություն: Անհայտ է, թե կոնկրետ որ անցակետով կամ սահմանային տեղամասը շրջանցող ճանապարհով է մուտք գործել Հայաստանի Հանրապետություն: Այլ կերպ ասած՝ այս վարույթով հնարավոր չի եղել պարզել հանցագործության կատարման վայրը:

Ըստ քննչական ենթակայության կանոնների՝ վարույթն իրականացրել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունը: Թեև տվյալ պահին գործող օրենքով նախատեսված չէր հանցանքի կատարման վայրի անհայտ լինելու դեպքում ընդդատությունը որոշելու կանոն, սակայն վարույթն ուղարկվել էր մինչդատական վարույթ իրականացնող մարմնի նստավայրի դատարան՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության (Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների) դատարան:

Նշված գործով պաշտպանները վիճարկել են ընդդատության հարցը, սակայն ՀՀ վերաքննիչ դատարանն ընդունելի է համարել, որ տվյալ քրեական վարույթն ընդդատյա է նախաքննության մարմնի գտնվելու վայրի դատարանին: Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր դիրքորոշումը իրավաբանորեն չէր պատճառաբանել¹: Նման իրավիճակներում դատական ակտը պատճառաբանելիս անհրաժեշտ էր հիմք ընդունել դատավարական իրավունքի extra legem զարգացման դոկտրինը, այսինքն՝ դատավորը պետք է փաստեր օրենսդրական բացի առկայությունը և այն լրացներ դատավարական համանման նորմն անալոգիայով կիրառելու ճանապարհով (տե՛ս ՀՀ քր. դատ. օր-ի 1-ին հոդվածի մեկնաբանությունը):

2021թ.-ի ՀՀ քր. դատ. օր-ում այս բացը լրացվեց: Այսպես՝ նոր ընդունված քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

¹Այս գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը նշել է. «Քրեական գործով ձեռք բերված ապացույցների մեջ չկա որևէ օբյեկտիվ փաստական տվյալ այն մասին, որ ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, վարույթ ընդունելով և ըստ էության քննելով սույն քրեական գործը, թույլ է տվել դատարանի անկախության, անկողմնակալության վերաբերյալ օրենքի պահանջներից շեղումներ, կատարել է այնպիսի գործողություններ կամ ընդունել այնպիսի որոշումներ, որոնք գործի ելքով չսահագործված օբյեկտիվ դիտորդի մոտ կասկածներ կառաջացնեին դատարանի անկախության և անկողմնակալության վերաբերյալ, այդպիսիք չներկայացվեցին նաև Վերաքննիչ դատարանում վերաքննիչ բողոքի քննության ժամանակ: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը քրեական գործով ձեռք բերված ապացույցների վերլուծության և գնահատման արդյունքում գտնում է, որ Առաջին աստանի դատարանի կողմից քրեական գործի ընդդատության վերաբերյալ ՀՀ քրեադատավարական օրենսդրության իրավադրույթների այնպիսի խախտումներ, որոնք կողմին զրկած կլինեին օրենքով երաշխավորված իրավունքներից կամ սահմանափակված կլինեին դրանցում, կամ այլ ճանապարհով խոչընդոտած լինեին գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ ստուգմանը՝ արդյունքում հանգեցրած լինելով դատական սխալի, թույլ չեն տրվել»: Անհասկանալի է, թե այս պատճառաբանությունները ինչ առնչություն ունեն վարույթի ընդդատության հետ: Ընդդատության խախտումը, անկախ դատարանի անկախ և անկողմնակալ լինելու հանգամանքից, ինքնին օրենքի էական խախտում է: ՀՀ վերաքննիչ դատարանը չէր կարող չցիտակցել ընդդատության ինստիտուտի էությունը, չէր կարող չհասկանալ ընդդատության ինստիտուտի և դատարանի անկախության ու անկողմնակալության սկզբունքների ինքնավարությունը: Կարելի է միայն ենթադրել, որ դատավարական օրենքի անալոգիայի հիման վրա պատճառաբանություններ ներկայացնելը ՀՀ վերաքննիչ դատարանի համար եղել է շատ ավելի ռիսկային կամ ոչ ստանդարտ իրավիճակ, քան դատական ակտում ընդդատությանը չվերաբերող պատճառություններ ներկայացնելը:

2.2. ՀՀ դրոշի ներքո գտնվող օդանավում կատարված հանցանքների վերաբերյալ վարույթի ընդդատությունը: ՀՀ քր. դատ. օր-ի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ սահմաններից դուրս՝ ՀՀ դրոշի տակ (ներքո՝ հեղ.) օրինական կարգով գտնվող կամ ՀՀ տարբերանշանը կրող, Հայաստանի Հանրապետության օդանավակայանում կամ նավահանգստում գրանցված օդային, ծովային կամ գետային նավի (այսուհետ՝ օդանավ՝ հեղ.) վրա կատարված ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթն իրականացվում է սույն օրենսգրքի նորմերով:

ՀՀ դատավարական օրենսդրությունը չի նախատեսում՝ օդանավում կատարված հանցանքների վերաբերյալ վարույթը ՀՀ որ դատարանին է ընդդատյալ: Իրավահամեմատական տեսանկյունից օդանավում կատարված հանցանքների վերաբերյալ վարույթների ընդդատությունը որոշվում է մի քանի չափանիշով՝ օդանավի կցագրման օդանավակայանի գտնվելու վայրով (Ուկրաինայի քր. դատ. օր-ի 526-րդ հոդված), կամ (և) այն օդանավակայանի գտնվելու վայրով, որտեղ արարքը կատարելուց հետո օդանավն առաջին վայրէջքն է կատարել (Գերմանիայի քր. դատ. օր-ի 10-րդ պարագրաֆ), Ճապոնիայի քրեական դատավարություն¹, Կորեայի Հանրապետության քրեական դատավարություն²) կամ մեղադրյալի վերջին բնակության վայրով (Մոլդովայի քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 3-րդ մաս):

ՀՀ-ում երկար տարիներ ձևավորված կայուն դատական պրակտիկայի համաձայն՝ օդանավում կատարված ենթադրյալ հանցանքների դեպքով մեղադրանքները (նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ վարույթները) քննում էր Մալաթիա-Սերաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը (թիվ ԵՄԴ/0048/01/17/, ԵՄԴ/0047/01/14, ԵՄԴ/0031/01/14, ԵՄԴ/0042/01/12, ԵՄԴ/0100/01/10, ԵՄԴ/0009/01/09/ գործեր):

1998թ.-ի ՀՀ քր. դատ. օր-ի տեսանկյունից նույնպես հստակ չէր, թե ինչ չափանիշով էր որոշվել, որ օդանավում կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներն ընդդատյալ են Երևան քաղաքի (Մալաթիա-Սերաստիա վարչական շրջանի) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Ամենայն հավանականությամբ գործնականում այս պրակտիկան ձևավորելիս հիմք են ընդունել օդանավի առաջին վայրէջքի օդանավակայանի գտնվելու վայրի չափանիշը: Բանն այն է, որ «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով «Չվարթնոց» օդանավակայանը՝ կից տրանսպորտային, արտադրական և պահեստային տնտեսությունների հողատարածքներով

¹ Волосова Н. Ю., Волосова М. В. Уголовно-процессуальное законодательство Японии: сравнительное исследование. - М.: Юрлитинформ, 2016. - С. 57.

² Сумин А. А., Химичева О. В. Введение в уголовный процесс Корейской Народно-Демократической Республики и Республики Корея: монография. - М.: Юрлитинформ, 2020. - С. 129.

գտնվում է Երևան քաղաքի վարչական տարածքում¹: Սակայն, օրենսդրական հատուկ կարգավորմների բացակայության պայմաններում, «Չվարթնոց» օդանավակայանի՝ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվելու հանգամանքն ինքնին չի կարող նշանակել, որ օդանավում կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներն ընդդատյան են Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանին: Բանն այն է, որ տվյալ պարագայում խոսքը ոչ թե «Չվարթնոց» օդանավակայանի տարածքներում կատարված հանցանքներով վարույթների ընդդատության, այլ օդանավում կատարված հանցանքների վերաբերյալ վարույթի ընդդատությունը որոշելու մասին է:

Այսպիսով՝ օդանավում կատարված ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթները Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանին հանձնելու պրակտիկան չունի դատավարական որևէ հիմնավորում, ուստի օդանավում կատարված հանցանքների վերաբերյալ մեղադրանքները Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանում քննելն «օրինական դատարան» իրավունքի տեսանկյունից խիստ վիճելի է:

Այս վարույթներով ընդդատությունն իրավաբանորեն հիմնավորված ճանապարհով որոշելու համար պետք է նախ՝ փաստել, որ ՀՀ քր. դատ. օր-ը այս հարցը չի կարգավորում, ուստի առկա է օրենսդրական բաց, այնուհետև՝ վարույթի ընդդատությունը որոշել օրենքի համանման նորմն անալոգիայով կիրառելու եղանակով: Օդանավում կատարված հանցանքների վերաբերյալ վարույթի ընդդատության որոշման հարցը նման է այլ պետության տարածքում կատարված հանցանքների վերաբերյալ վարույթի ընդդատությանը (այլ պետության տարածքում և օդանավում կատարված հանցանքների վերաբեր-

¹ Այս գործերով վարույթի ընդդատությունն այս կերպ որոշելու պրակտիկայի վրա կարող է ազդեցություն ունեցած լինի նաև 1999թ. -ին քրեական հետապնդման մարմինների ենթակայության հարցերի գերատեսչական կարգավորումները: Այսպես՝ դատավարագիտության մեջ նախնական բնությունն ըստ հանցագործության վայրի կատարելու օրենսդրական պահանջից որոշակի շեղում կարող է համարվել նաև ՀՀ Գլխավոր դատախազի 01.02.1999թ. թիվ 3 հրամանը, որով հանձնարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Մերաստիա համայնքի դատախազությանը, «Երևան քաղաքում տեղակայված օդանավակայաններում կենտրոնացված դատախազական հսկողության իրականացման ապահովման նպատակով, դատախազական հսկողության աշխատանքները կազմակերպել նաև Շենգակիթ համայնքի վարչական տարածքում գտնվող «Էրեբունի» օդանավակայանում»: Իսկ դա նշանակում է, որ հիշյալ օդանավակայանի տարածքում կատարված հանցագործության փաստով հարուցված քրեական գործերի նախնական բնությունը պետք է կատարվի Մալաթիա-Մերաստիա համայնքի քրեական հետապնդման մարմինների կողմից: Իհարկե, Գլխավոր դատախազի նշված հրամանը պայմանավորված է նրանով, որ Մալաթիա-Մերաստիայի դատախազությունը ՀՀ տրանսպորտային դատախազության վերացումից հետո, սպասարկում է նաև տարածքի մեջ մտնող «Չվարթնոց» օդանավակայանը և օդանավակայաններում միասնական դատախազական հսկողության իրականացման անհրաժեշտություն կա, սակայն, օրենքով սահմանված կարգից, կոնկրետ նպատակահարմարությունից ելնելով, այդ թվում՝ աննշան, ցանկացած շեղում, ընդունելի չէ, ընդ որում՝ 2002թ. -ից «Էրեբունի» օդանավակայանը հանձնվել է ՀՀ Պաշտպանության նախարարությանը, որից հետո այս տարածքում արձանագրված հանցագործությունների նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացվել է ՀՀ զինվորական դատախազության կողմից: Տե՛ս Հովսեփյան Ա., Շահինյան Վ., Ղաճարյան Ա. Միևնույն օդանավում վարույթի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտ. խմբ. Գ.Ս. Ղազինյան, Եր., «ԵՊՀ» հրատ., 2009:

յալ վարույթների ընդդատության նմանության մասին է վկայում այն, որ օրինակ՝ Մոլդովայի քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 3-րդ մասում այլ պետության տարածքում և նավի վրա կատարված հանցանքների վերաբերյալ վարույթների ընդդատությունը որոշվում է մինևույն իրավական ռեժիմով): Իրավիճակների նմանության հանգամանքը փաստելուց հետո, պետք է օդանավում կատարված հանցանքների վերաբերյալ վարույթի ընդդատությունը որոշել ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 4-րդ մասը համանմանությամբ (անալոգիայով) կիրառելու եղանակով: Այսինքն՝ այդ վարույթի ընդդատությունը պետք է որոշել մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրով, իսկ եթե հնարավոր չի եղել այն պարզել, ապա վարույթը պետք է հանձնել այն դատարան, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթը վերջինն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Այսպիսով, քանի դեռ օրենսդիրը հարցին չի տվել այլ կարգավորում, ուստի օդանավում կատարված հանցանքների վերաբերյալ վարույթի ընդդատությունը որոշելու՝ իրավաբանական հիմնավորված ճանապարհն օրենքի անալոգիայի ինստիտուտին դիմելն է (դատավարական իրավունքի *extra legem* զարգացում):

3. Վարույթի ընդդատությունը որոշելը՝ *contra legem* իրավակիրառմամբ

3.1. Վարույթի մասնավոր մասնակիցների անվտանգության սպառնալույսը և ընդդատությունը փոխելու հնարավորությունը

(a) Իրավահամեմատական տեսանկյունը: Մի շարք դատավարական համակարգերում նախատեսված է վարույթի մասնավոր մասնակիցների անվտանգության սպառնվման կամ հասարակական անդորրի պահպանման նկատառումներից ելնելով տարածքային ընդդատությունը փոխելու մասին հատուկ նորմ: Այսպես՝ Գերմանիայի քրեական դատավարությունում սահմանված է, որ եթե իրավասու դատարանում դատաքննությունը կարող է հասարակական անվտանգության սպառնալիք ստեղծել, ապա բարձր ատյանի դատարանը վարույթը փոխանցում է այլ շրջանի նույն ատյանի դատարանին¹: Շվեյցարիայի քրեական դատավարությունում դատախազության մարմինները կարող են միմյանց հետ պայմանավորվել Շվեյցարիայի քր. դատ. օր-ի 31-37-րդ հոդվածով նախատեսված այլ ընդդատության մասին, եթե դա պայմանավորված է մեղադրյալի անձնական հարաբերություններով, ինչպես նաև, եթե առկա են այլ համոզիչ պատճառներ²:

¹ **Бойльке В.** Уголовно-процессуальное право ФРГ. 6-е издание. Пер. с нем. Плошкиной Я. М. – Красноярск, 2004. - С. 54.

² **Трефилов А. А.** Уголовный процесс Швейцарии // Уголовный процесс зарубежных стран. Том 1 (15). - М.: «НИПКЦ Восход-А», 2016. - С. 423.

Լիտվայի քր. դատ. օր-ի 229-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քրեական վարույթը, մինչև դատաքննությունն սկսելը, կարող է փոխանցվել այլ դատարան կամ տրիբունալ՝ ազգային անվտանգության, հասարակական կարգի կամ արդարադատության էական շահերը պաշտպանելու նպատակով¹:

Ճապոնիայի քրեական դատավարությունում ընդդատությունը հնարավոր է փոխել, եթե դատարանի դատական տարածքի բնակչության ընդհանուր տրամադրվածության, գործի հատուկ հասարակական նշանակության կամ այլ հանգամանքների պատճառով հնարավոր չէ ապահովել անաչառ դատաքննություն: Այս հանգամանքների առկայության դեպքում դատախազն ընդդատությունը փոխելու միջնորդությամբ դիմում է բարձր ատյանի դատարանին: Համանման միջնորդությամբ կարող է դիմել նաև մեղադրյալը: Այսպիսի միջնորդությամբ Գերագույն դատարան կարող է դիմել նաև Գլխավոր դատախազը²:

ԱՊՀ երկրների համար Մոդելային քր. դատ. օր-ում (17.02.1996թ.) նույնպես նախատեսված է դրույթ, ըստ որի՝ պաշտպանության կողմի միջնորդությամբ տարածքային ընդդատությունը փոխվում է, եթե իրավասու դատարանի դատական տարածքում ստեղծվել է օբյեկտիվ դատաքննությանը խոչընդոտող իրավիճակ (քր. դատ. օր-ի 81-րդ հոդված):

ՌԴ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված է առանձին հանցատեսակներով, օրինակ՝ բանդիտիզմը, վարույթի մասնակիցների և մերձավոր ազգականների անվտանգության իրական սպառնալիքի դեպքում ՌԴ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի միջնորդությամբ ՌԴ գերագույն դատարանի որոշմամբ վարույթի ընդդատությունը փոխելու հնարավորություն:

Այսպիսով, ժամանակակից քրեական դատավարություններում ընդունված է վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը՝ վարույթի մասնավոր մասնակիցների անվտանգության ապահովման կամ հասարակական անդորրի պահպանման նպատակով:

(b) Վալերի Պերմյակովի գործը: ՀՀ քր. դատ. օր-ում նախատեսված չէ վարույթի մասնավոր մասնակիցների անվտանգությունն ապահովելու կամ հասարակական կարգի պահպանման նպատակով վարույթի ընդդատությունը փոխելու հնարավորություն: Մինչդեռ, գործնականում հանդիպել են դեպքեր, երբ կոնկրետ տարածքի դատարանում կոնկրետ մեղադրանքի քննությունը սպառնացել է հասարակական անվտանգությանը կամ մեղադրյալի կյանքին և

¹Baudžiamojo proceso kodeksas Lietuvos Respublikos// Suvestinė redakcija nuo 2021-07-01, Įstatymas paskelbtas: Žin. 2002, Nr. 37-1341; Žin. 2002, Nr.46-0, i. k. 10210101STA00IX-785 // <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/T.AIS.163482/asr> (04.12.2021).

² **Волосова Н. Ю., Волосова М. В.** Уголовно-процессуальное законодательство Японии: сравнительное исследование. - М.: Юрлитинформ, 2016. - С. 57.

առողջությանը: Նման իրավիճակ ստղծվել էր 2015թ.-ին, երբ Գյումրիում տեղակայված 102-րդ ռուսական ռազմակայանի ժամկետային զինծառայող Վալերի Պերմյակովը սպանեց Ավետիսյանների ընտանիքի բոլոր (7) անդամներին, այդ թվում՝ անչափահաս երեխաներին: Այս դեպքը ցնցել էր հատկապես Գյումրիի բնակչությանը և դրանով պայմանավորված՝ Գյումրիում տեղի էին ունեցել զանգվածային միջոցառումներ: Եթե Պերմյակովի մեղադրանքով դատաքննությունն անցկացվեր Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի շենքում, ապա դա մեղադրյալի անվտանգության ապահովման տեսանկյունից ռիսկային կլիներ: Պատահական չէ, սույն գործով Շիրակի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում էր կայացրել արտագնա դատական նիստ անցկացնել ՌԴ 102-րդ ռազմաբազայի թիվ 04436 գորամասում, որտեղ կողմնակի անձնաց մուտքը սահմանափակված է և վերահսկելի¹:

(c) Հեղինակի նկատառումները: Նկատի ունենալով, որ այսպիսի բացառիկ դեպքերի համար վարույթի ընդդատությունը փոխելու օրենսդրական հնարավորություն նախատեսված չէ, ուստի պետք է քննարկել արտագնա դատական նիստ անցկացնելու հարցը:

ՀՀ քր. դատ. օր-ի 265-րդ հոդվածը, ի տարբերություն նախորդ օրենսգրքի կարգավորումների², սպառնիչ սահմանում է արտագնա դատական նիստ անցկացնելու դեպքերը, որտեղ անձանց անվտանգության ապահովումը նախատեսված չէ: Ստեղծվում է մի իրավիճակ, որ մի կողմից՝ վարույթն այդ դատարանի դատական տարածքում անցկացնելը վարույթի մասնակիցների անվտանգության ապահովման տեսանկյունից խիստ ռիսկային է, մյուս կողմից՝ օրենքով նախատեսված չէ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու կամ արտագնա դատական նիստ անցկացնելու հնարավորություն: Այս փակուղային իրավիճակից դուրս գալու միակ ճանապարհը *contra legem* իրավակիրառման դոկտրինին դիմելն է:

Նկատի ունենալով, որ մարդու կյանքը ու առողջությունը, ինչպես նաև ընդդատության ինստիտուտը սահմանադրական արժեքներ են, ուստի ՀՀ քր. դատ. օր-ի 265-րդ հոդվածին հակառակ արտագնա դատական նիստ անցկացնելը միակ իրավաչափ ճանապարհն է, որը թույլ կտա առանց վարույթի ընդդատությունը փոխելու՝ ապահովելու վարույթի մասնավոր մասնակիցների

¹Թեև դատավոր թիվ ԾԳ/0072/01/15 գործով դատական քննություն նշանակելու որոշման մեջ արտագնա դատական նիստ անցկացնելու մասին որոշումը պատճառաբանել էր ՌԴ կայագորային կալանատանն այլ դեպքով պատիժ կրող ամբաստանյալի դատական նիստերին մասնակցությունն ապահովելու պատճառաբանությամբ, սակայն արտագնա դատական նիստերում դատաքննություն անցկացնելու որոշումն իմպլիցիտ պայմանավորված էր նաև մեղադրյալի անվտանգության ապահովման շարժառիթով:

²1998 թ.-ի ՀՀ քր. դատ. օր-ի 41-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում էր, որ գործը քննող դատավորի որոշմամբ կարող է անցկացվել արտագնա դատական նիստ, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

անվտանգությունը (դատավարական իրավունքի contra legem զարգացումը): Այս իրավիճակում արտագնա դատական նիստ անցկացնելով՝ դատավորը, թեև հակադրվում է ՀՀ քր. դատ. օր-ի 265-րդ հոդվածին (արտագնա դատական նիստ անցկացնելու դեպքերի վերաբերյալ կարգավորումներին), սակայն այն իրավաչափ վարքագիծ է, քանի որ դրանով պահպանվում են սահմանադրական նշանակության երկու արժեք՝ մարդու անվտանգությունը և օրինական դատարանի հիմնական իրավունքը:

3.2. Մեղադրյալ-դատավորի վերաբերյալ վարույթի ընդդատությունը

(a) Իրավահամեմատական տեսանկյունը: Առանձին դատավարական համակարգերում նախատեսված է հատուկ նորմ, որի համաձայն՝ դատավորի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման դեպքում մեղադրանքը չի կարող քննել այն դատարանը, որտեղ դատավորը զբաղեցնում կամ զբաղեցրել է պաշտոն (մեղադրյալ-դատավոր): Նման դեպքերում քրեական վարույթն իրականացնում է այն դատարանը, որն ամենից մոտն է այն դատարանի տարածքին, որտեղ աշխատել կամ աշխատում է մեղադրյալ-դատավորը (Ուկրաինայի քր. դատ. օր-ի 32-րդ հոդվածի 2-րդ մաս, Իտալիայի քր. դատ. օր-ի 11-րդ հոդված): Այս դեպքերում տարածքային ընդդատությունը փոփոխելը պայմանավորված է դատական մարմնի անաչառության ապահովման անհրաժեշտությամբ¹:

Բուլղարիայի քր. դատ. օր-ի 43-րդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկության գերագույն դատարանը (Supreme Court of Cassation) կարող է որոշում կայացնել գործը նույն ստյանի մեկ այլ դատարան հանձնելու մասին, եթե մեղադրյալը կամ տուժողն այդ դատական տարածքում աշխատել են որպես դատավոր, դատախազ կամ քննիչ²:

Էստոնիայի քր. դատ. օր-ի 27-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է մեղադրյալ-դատավորի նկատմամբ օպերատիվ հետախուզական գործողություններ կատարելու միջնորդության ընդդատությունը փոխելու հարցը: Ըստ այս կարգավորման՝ եթե ընդհանուր ընդդատության կանոնի համաձայն այս միջնորդությունների քննությունը վերապահված է այն դատարանին, որտեղ աշխատում է մեղադրյալ-դատավորը, ապա Պետական դատախազության միջնորդությամբ օպերատիվ-հետախուզական գործողության թույլտվության հարցը քննարկում է մեկ այլ շրջանի դատական տարածքի դատարանի նախագահը կամ նրա նշանակված անձը:

Այսպիսով՝ նշված դատավարական համակարգերը, դատական մարմնի անաչառությունն ապահովելու և մեղադրանքի դատական քննությունն արա-

¹ Барабанов П. К. Уголовный процесс Италии. - М.: Изд. «Спутник», 2019. - С. 62.

²Criminal procedure code // Promulgated State Gazette No. 86/28.10.2005, effective 29.04.2006 https://www.imolin.org/doc/amlid/Bulgaria/Bulgaria_Criminal_Procedure_Code_2009.pdf (04.12.2021).

զացնելու նպատակով, նախատեսում են, որ տվյալ դատարանում աշխատող (աշխատած) դատավորի նկատմամբ հարուցված մեղադրանքը չի կարող քննվել նույն դատարանում:

(b) Գատավոր Ա. Պետրոսյանի վերաբերյալ վարույթի ընդդատությունը: ՀՀ դատական պրակտիկայում հանդիպել են դեպքեր, երբ դատավորի նկատմամբ հարուցված քրեական մեղադրանքով վարույթն ընդդատյա է եղել այն դատարանին, որտեղ աշխատել է մեղադրյալը: Այսպես՝ թիվ ԳԴ4/0021/01/17 քրեական գործով մեղադրանք է առաջադրվել Գեղարքունիքի մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Գեղարքունիքի մարզի դատարան) նախագահին՝ Ա. Պետրոսյանին, որի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է Գեղարքունիքի մարզի դատարան, որի երեք դատավորներն ինքնաբացարկ հայտնելու որոշում են կայացրել այն հիմքով, որ մեղադրյալն իրենց մտերիմ ընկերն է, միմյանց ճանաչում են վաղուց՝ երկար տարիներ աշխատել են Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիանի դատարանում՝ դատավորի պաշտոնում:

Այս գործով չորրորդ դատավորը որոշում է կայացրել գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալներին առաջադրված մեղադրանքում նշված արարքների մի մասը կատարվել է Գեղարքունիքի մարզի դատարանի դատական տարածքում, իսկ մի դրվագով՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Այսինքն, տվյալ դեպքում քրեական գործը ընդդատյա է եղել առաջին աստիանի տարբեր դատարաններին, որի դեպքում առկա էր տարածքային ընդդատությունը որոշելու հասուկ կանոն: Այս գործով խնդիրը հանգուցալուծվեց տարածքային ընդդատությունն օրենքով նախատեսված հիմքով փոխելու ճանապարհով, սակայն այն իրավիճակային լուծում էր: Իրավիճակային լուծման մեկ այլ տարբերակ կարող է համարվել այն, որ այդ գործով մեղադրանքի քննությունը մակագրվեր (եթե մակագրման համակարգը նման բան թույլ է տալիս) նույն դատարանի նոր նշանակված այլ դատավորին, ով նախկինում չի աշխատել մեղադրյալի հետ: Բոլոր դեպքերում ասվածը համակարգային առումով խնդրի լուծում չէ:

(c) Գատավոր Գ. Հեբոյանի վերաբերյալ վարույթի ընդդատությունը: Մեղադրյալ-դատավորի վերաբերյալ վարույթը նույն դատարանում քննելու խնդիրն առավել ակնառու դարձավ Կոտայքի մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Կոտայքի մարզի դատարան) դատավոր Գ. Հեբոյանի վերաբերյալ վարույթով: Գ. Հեբոյանի վերաբերյալ թիվ ԿԴ/0013/01/19 քրեական գործն ուղարկվել է Կոտայքի մարզի դատարան, սակայն այդ դատարանի՝ քրեական մեղադրանք քննող բոլոր դատա-

վորները հայտնել են ինքնաբացարկներ: Սույն աշխատանքում կմեջբերենք ինքնաբացարկի պատճառաբանությունները, որի արդյունքում խնդիրն առավել տեսանելի կլինի¹:

Առաջին դատավորն ինքնաբացարկ է հայտնել հետևյալ պատճառաբանությամբ.

«Գ. Հեքոյանի հետ հաճախ գործնական և անձնական բնույթի շփում ենք ունեցել և այդ ընթացքում ձեռք ենք բերել նաև ընկերական հարաբերություններ»:

Երկրորդ դատավորն ինքնաբացարկ է հայտնել հետևյալ պատճառաբանությամբ.

«Աշխատել եմ, որպես գրասենյակի գործավոր, այնուհետև, նույն դատարանում աշխատել եմ, որպես դատավորի օգնական և վերջինիս հետ գտնվել եմ մտերիմ հարաբերությունների մեջ: 2017 թվականի մարտ ամսից նույն դատարանում նշանակվել եմ, որպես քրեական գործերով դատավոր և Գագիկ Հեքոյանի հետ աշխատել ենք հարևանությամբ գտնվող սենյակներում, գրեթե ամեն օր միասին շփվել ենք, քննարկել մեր, թե նեղ անձնական և, թե կենցաղային հարցերը»:

Երրորդ դատավորն ինքնաբացարկ է հայտնել հետևյալ պատճառաբանությամբ.

«Հանախակի ունեցել ենք ինչպես գործնական, այնպես էլ անձնական բնույթի շփումներ, մասնավորապես՝ մասնակցություն ենք ունեցել ինչպես իմ, այնպես էլ նրա կողմից կազմակերպված ընտանեկան միջոցառումներին այդ ընթացքում ձեռք ենք բերել և գտնվում ենք ընկերական հարաբերությունների մեջ»:

Չորրորդ դատավորն ինքնաբացարկ է հայտնել հետևյալ պատճառաբանությամբ.

«2002 թվականից դատավոր Գագիկ Հեքոյանի հետ ունեցել ենք աշխատանքային և անձնական շփումներ, որոնց արդյունքում մեր միջև ձևավորվել են մտերիմ, ընկերական փոխհարաբերություններ, որոնք պահպանվել են նաև ՀՀ դատախազության այլ ստորաբաժանում իմ տեղափոխվելուց հետո»:

Ներկայացված ինքնաբացարկների արդյունքում սպառվեց քրեական մեղադրանքներ քննող դատավորների թիվը, և հարկ առաջացավ Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից մեկին գործուղել Կոտայքի մարզի դատարան: Գործուղված դատավորը նշանակել է արտագնա դատական նիստը՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Կենտրոնի նստավայրում:

Մեղադրյալ-դատավորի վերաբերյալ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու կարգավորման բացակայությունը բացասաբար է ազդում մեղադրանքի արագ քննության պահանջի վրա: Այսպես՝ **դատավոր Ա. Պետրոս-**

¹ Տեղեկությունները վերցված են «datalex.am» դատական տեղեկատվական համակարգից:

յանի վերաբերյալ նյութերը Գեղարքունիքի մարզի դատարան մուտք է եղել 12.09.2017թ.-ին, իսկ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանն այն վարույթ է ընդունել 13.10.2017թ.-ին, այսինքն՝ դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը և նյութերը դատարան հանձնելուց հետո շուրջ մեկ ամիս անց:

Գ. Հեթոյանի վերաբերյալ նյութերը Կոտայքի մարզի դատարան մուտք է եղել 14.05.2021թ.-ին, իսկ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորն այն վարույթ է ընդունել 27.05.2021թ.-ին, այսինքն՝ դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը և նյութերը դատարան հանձնելուց շուրջ 15 օր հետո, ընդ որում՝ տվյալ վարույթով որպես խափանման միջոց կիրառված է եղել կալանքը:

(d) Հեղինակի նկատառումները: Վերոնշյալ երկու դեպքից ակնհայտ է դառնում, որ դատավորին ներկայացված մեղադրանքը նույն դատարանում քննելն ինքնին խնդրահարույց է, իսկ այդ վարույթների ընդդատությունը փոխելու վերաբերյալ օրենսդրի լուծությունը (վարույթի ընդդատությունը փոխելու մասին հատուկ կարգավորումներ չնախատեսելը) ստիպում է իրավակիրառողներին դիմել այնպիսի քայլերի (ինքնաբացարկներ հայտնելը, տարածքային ընդդատությունը վիճելի հիմնավորումներով փոխելը, դատավորների գործուղումը, արտագնա նիստերի նշանակումը), որոնք բացասական են ազդում մեղադրանքի քննության արդյունավետության, մասնավորապես՝ արագության վրա: Առնվազն վերոհիշյալ երկու գործով խնդիրը չլուծեց նաև 1998թ.-ին ՀՀ քր. դատ. օր-ի 90-րդ հոդվածի 8-րդ մասում նախատեսված այն դրույթը, ըստ որի.

«Դատավորը պարտավոր չէ կայացնել ինքնաբացարկն ընդունելու մասին որոշում, եթե դատական ակտ կայացնելու համար չի կարող ստեղծվել արդարադատության մեկ այլ մարմին, կամ գործի լուծման հրատապության առումով անգործությունը կարող է հանգեցնել ծանր հետևանքների»:

Գ. Հեթոյանի մեղադրանքով դատավորների ինքնաբացարկների բովանդակությունը փաստում է հայկական իրականությունում առկա այն ճշմարտությունը, որ տվյալ անձինք ուղղակի չեն կարող իրենց գործընկերոջ վերաբերյալ մեղադրանքով իրականացնել անաչառ արդարադատություն: Սա իրողություն է, որի հետ օրենսդիրը պետք է հաշվի նստեր:

Մինչդեռ 2021թ.-ին ՀՀ քր. դատ. օր-ում օրենսդիրը հետևողականորեն և տեղեկացված կերպով կրկին չցանկացավ նախատեսել դրույթ այն մասին, որ եթե մեղադրանքը վերաբերում է տվյալ դատարանում աշխատող կամ աշխատած մեկ այլ դատավորին, ապա վարույթի ընդդատությունը կարող է փոխվել (օրենսդրի որակյալ լուծություն): Օրենսդրի գիտակցված լուծության մասին է

վկայում այն, որ նախորդ օրենսգրքի գործողության ժամանակ հիշատակված դեպքերում հանրային քննարկման առարկա էր դարձել այն, որ դատավորները, գործնականում ինքնաբացարկի որոշումներ կայացնելով, փաստացի խուսափում են նույն դատարանի մեկ այլ դատավորի մեղադրանքը քննելուց: Ասվածը հիմք է տալիս ենթադրելու, որ օրենսդիրը, այս իրավիճակում ընդդատությունը փոխելու մասին դրույթ չնախատեսելով, թույլ է տվել ոչ թե օրենսդրական սխալ (օրենսդրական բաց), այլ դրսևորել է որակյալ (գիտակցված) լռություն:

Այս պարագայում խնդիրը պետք է լուծել դատավարական իրավունքի *contra legem* զարգացման դոկտրինի հիման վրա: Դա նշանակում է, որ դատավորը, հակադրվելով ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 1-ին մասին, սակայն հիմք ընդունելով «անաչառ դատարանի» սահմանադրաիրավական սկզբունքը, պետք է որոշում կայացնի վարույթի ընդդատությունը փոխելու մասին: Դատավորն այդ որոշման մեջ պետք է մանրամասն ներկայացնի ոչ միայն վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքները, այլև պատճառաբանություններ այն մասին, որ այդ դատարանում տևական ժամանակ աշխատած դատավորի մեղադրանքը նույն դատարանում քննելն ինքնին (*per se*) կհակասի անաչառ դատարանի սահմանադրական սկզբունքին: Այլ կերպ ասած՝ այդ որոշումը պետք է լինի ոչ թե դատավորի ինքնաբացարկի, այլ վարույթի ընդդատությունը փոխելու որոշում: Բացի այդ, դատավորը, հայտնի նպատակներից ելնելով, վարույթը պետք է փոխանցի մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրին առավել մոտ վայրի դատարան:

Դատավարական իրավունքի *contra legem* զարգացման այս մոդելի կիրառման դեպքում վարույթն ըստ ընդդատության ստացած դատարանը, անկասկած, կհամարի, որ այն իրեն ընդդատյա չէ և ընդդատությունը կվիճարկի ՀՀ վճռաբեկ դատարանում: Նկարագրված իրավիճակում դատավորի՝ ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 1-ին հակադրվող վարքագծի իրավաչափության հարցի վերջնական լուծումը կթողնվի ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի իրավաբանությանը: Եթե Պալատի նախագահի իրավաբանական լուծումը թույլ տա առաջին աստիճանի դատարանի դատավորի վարքագիծը դիտարկել դատավարական իրավունքի *contra legem* զարգացման տիրույթում, սպա առաջին աստիճանի դատարանի՝ վարույթի ընդդատությունը փոխելու որոշումը կորակվի որպես իրավաչափ վարքագիծ, որից հետո այն կվերահի նորմատիվ կանոնի:

3.3. *Վարույթի ընդդատությունը փոխելը դատարանի լուծարման կամ դատարանի գործառույթների իրականացման անհնարինության դեպքում:*

(ա) Իրավահամեմատական տեսանկյունը: Չարգացած որոշ դատավարական համակարգերում դատարանի լուծարվելը կամ դատարանի աշխատանքներն օրենքով սահմանված կարգով դադարեցնելը քրեական վարույթի

ընդդատությունը փոխելու ինքնուրույն հիմքեր են: Ավելին, այդ համակարգերում նախատեսված է նաև դատարանի գործառնությունների իրականացման անհնարինության դեպքում (մասնավորապես՝ տեխնաձին կամ բնական բնույթի արտակարգ իրավիճակները, համաճարակները, ռազմական և արտակարգ դրության ռեժիմը, հակահարկերի գործողության անցկացումը) վարույթի ընդդատությունը փոխելու հնարավորություն (Ուկրաինայի քր. դատ. օր-ի 34-րդ հոդված):

Գերմանիայի քրեական դատավարությունում սահմանված է, որ եթե իրավասու դատարանն առանձին գործով փաստական (օրինակ՝ հիվանդությունները) խոչընդոտների պատճառներով ի վիճակի չէ կատարել դատական պարտականությունները, ապա բարձր ատյանի դատարանը պետք է վարույթը փոխանցի այլ շրջանի նույն ատյանի դատարանին¹:

Արդգատանի քրեական դատավարությունում նույնպես գործում է դրույթ այն մասին, որ արտակարգ դրության պայմաններում Գերագույն դատարանն իրավասու է փոխել քաղաքացիական և քրեական գործերի՝ օրենքով սահմանված տարածքային ընդդատությունը («Արտակարգ դրության մասին» Արդգատանի սահմանադրական օրենքի 27-րդ հոդված)²:

ՌԴ սահմանադրական դատարանը 16.03.1998թ. № 9-Պ որոշմամբ նշել է, որ եթե դատարանը, որին ընդդատյա է գործը, այս կամ այն պատճառով չի գործում, վերադաս դատարանի կողմից ընդդատության փոխելը ոչ միայն թույլատրելի է, այլև երբեմն՝ անհրաժեշտ: Այս դիրքորոշումն արտահայտելիս՝ ՌԴ սահմանադրական դատարանը հատուկ նշել է, որ նման հանգամանքները պետք է նախատեսվեն օրենքում: Այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանի քննարկման առարկա չի հանդիսացել այն հարցը, թե դատարանի չգործելու հիմքով ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը ինչպես պետք է բավարարվի, եթե օրենքով նախատեսված չէ ընդդատությունը փոխելու նման հիմք:

1998 թվականի ՀՀ Քաղ. դատ օրենսգրքում (ուժը կորցրել է՝ 09.04.2018 թվականին) սահմանված էր, որ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝ գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպքերում (Քաղ.դատ. օր. 86-րդ հոդվածի 2-րդ մաս):

(b) Վարույթի ընդդատությունը փոխելը դատարանի լուծարման դեպքում: Հայաստանի Հանրապետությունում դատարանների լուծարման դեպքում ընդդատությունը փոխելու կարգավորման հարցում ավանդաբար ձևավորվել է այլ մոտեցում: Օրենսդիրը նման դեպքերում վարույթի ընդ-

¹ **Бойльке В.** Уголовно-процессуальное право ФРГ, 6-е издание. Пер. с нем. Плошкиной Я. М. – Красноярск, 2004. - С. 54.

² **Кулбаев А.К.** Уголовный процесс Кыргызской Республики: Учебник. - Б., 2020. - С. 411.

դատության հարցը կարգավորել է ոչ թե ընդհանուր նորմով (օրենքով նախատեսված չէ վարույթի ընդդատությունը այս հիմքով փոխելու հնարավորություն), այլ՝ յուրաքանչյուր դեպքում օրենքի անցումային դրույթներում սահմանել է լուծարվող դատարանի վարույթների ընդդատությունը փոխելու կոնկրետ կանոններ: ՀՀ-ում հայտնի են քրեական մեղադրանքներ քննող դատարանների լուծարման ստորև նշված դեպքերը:

Առաջին՝ «Դատաիրավական բարեփոխումների անցումային ժամանակաշրջանում Վճռաբեկ դատարանի գործունեության մասին» 02.07.1998թ. ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանվեց ՀՀ գերագույն դատարանի քաղաքացիական, քրեական և զինվորական գործերով կոլեգիաների՝ մինչև տվյալ օրենքի ուժի մեջ մտնելն առաջին աստիճանի կարգով իրենց վարույթ ընդունած գործերի ընդդատությունը փոխելու մասին նորմ, որի համաձայն՝ այդ վարույթները, որոնցով վերջնական դատական ակտ չի կայացվել, ՀՀ գերագույն դատարանի նախագահն ուղարկում է առաջին աստիճանի դատարան:

Երկրորդ՝ 05.02.2009թ.-ին ընդունված ՀՕ-45-Ն օրենքով լուծարվեցին ՀՀ քրեական դատարանները: Օրենքի անցումային դրույթներով սահմանվեց վարույթների ընդդատությունը փոխելու մասին հատուկ նորմ, ըստ որի՝ տվյալ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո Քրեական դատարանների վարույթներում գտնվող, սակայն դատաքննությունը չսկսված գործերը, տարածքային ընդդատությանը համապատասխան, փոխանցվում են առաջին աստիճանի դատարան:

Ինչ վերաբերում է մինչև ՀՕ-45-Ն օրենքի ուժի մեջ մտնելը Քրեական դատարանների կողմից սկսված դատաքննություններին, ապա անցումային դրույթով սահմանվեց ինքնատիպ կարգավորում՝ այդ վարույթներն «ավարտվում են դատավորի (դատավորների) նույն կազմով», իսկ նշված գործերով դատավճիռ կամ այլ վերջնական որոշում կայացվում է այն դատարանի անունից, որին, տվյալ օրենքին համապատասխան, ընդդատյա է քննվող գործը: Այս կարգավորումը նշանակում էր, որ դատական վարույթը պետք է իրականացնեին լուծարված դատարանի այն դատավորները, ովքեր արդեն նշանակվել էին առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ, սակայն նրանք դատական ակտ պետք է կայացնեին այն դատարանի անունից, որին ընդդատյա էր գործը:

Երրորդ՝ 15.01.2018թ. ՀՕ-34-Ն օրենքով դատական օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ, որով Երևան քաղաքի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանները լուծարվեցին և հիմնվեց Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը: Այս օրենքի անցումային դրույթներով սահմանվեց, որ տվյալ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից Երևան քաղաքի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանները շարունակում են գործել որպես Երևան քաղաքի ընդհանուր իրավասության

դատարան, իսկ դատարանների նախագահները և դատավորները շարունակում են պաշտոնավարել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնում և շարունակում են քննել իրենց վարույթներում եղած գործերը:

Փաստորեն, վերոնշյալ օրենքների անցումային դրույթներով նախատեսվեցին ընդդատությունը փոխելու կոնկրետ կանոններ, ընդ որում՝ ի տարբերություն ընդդատությունը փոխելու ընդհանուր կանոնների, որոնք իրացվում են իրավակախրատ ակտի հիման վրա, տվյալ օրինակներում վարույթների ընդդատությունը փոխվել է օրենքի ուժով:

Կոնկրետ իրավիճակներում դատարանի լուծարման դեպքում վարույթի ընդդատությունը կոնկրետ (ad hoc) կանոններով (անցումային դրույթներով) սահմանելու պրակտիկայի սահմանադրականության ախտորոշումն առանձին քննարկման հարց է: Այս փուլում միայն կարելի է նշել՝ եթե պատահի այնպես, որ դատարանը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու դեպքում օրենքի անցումային դրույթներով կարգավորված չլինեն վարույթի ընդդատության հարցերը, ապա ծագելու է փակուղային իրավիճակ, որի պարագայում կարող է կասկածի տակ դրվել արդարադատությունն ավարտելու աքսիոմատիկ պահանջի կատարումը:

Կախված իրավիճակից, նման խնդրի լուծման տարբերակներից մեկը ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումներին հակառակ (contra legem) իրավակիրառումն է, ինչը նշանակում է, որ տվյալ վարույթն իրականացնող ողջամիտ (բանական) դատավորը, մինչև դատարանի լուծարումը, պարտավոր է որոշում կայացնել ընդդատությունը փոխելու մասին: Այս դեպքում, իհարկե, բացակայում են ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ այլ վարույթի ընդդատությունը փոխելու հիմքերը և պայմանները, սակայն բանական դատավորը, հիմք ընդունելով contra legem իրավունքի զարգացման դոկտրինը, կհակադրվի օրենքի կարգավորումներին և որոշում կկայացնի վարույթի ընդդատությունը փոխելու մասին:

Այս իրավիճակում վարույթի ընդդատությունը փոխելու ընդհանուր կամ կոնկրետ նորմերի բացակայության պայմաններում վարույթի ընդդատությունը փոխելու մասին contra legem հրատապ որոշումը պայմանավորված է «արդարադատությունը պետք է ավարտվի արագ և առանց բացառության» աքսիոմայի թելադրանքով:

(c) Վարույթի ընդդատությունը փոխելը դատարանի գործառույթների իրականացման անհնարինության դեպքում: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ վկայում են այն մասին, որ կոնկրետ տարածքի դատարանի գործունեության անհնարինության մասին դատողություններն այլևս չեն կարող գնահատվել

որպես երևակայական պատկերացումների արդյունք: Թեև որոշ դատավարագետներ դեռևս շարունակում են պնդել, որ նույնիսկ բացառիկ իրավիճակները, ծայրահեղ անհրաժեշտությունը քրեադատավարական օրենսդրությունից նահանջելու հիմք չեն կարող համարվել¹, սակայն նրանց մոտեցումներում բացակայում են այնպիսի լուծումներ, որոնք մի կողմից՝ կհամապատասխանեն գործող օրենքի տառին, մյուս կողմից՝ կլուծեն բացառիկ հանգամանքներից ծնված հրատապ հարցերը: Նման կերպ մտածող գիտնականների դիրքորոշումն էֆեկտիվության սկզբունքի համեմատ լեգետիմության սկզբունքին բացարձակ նախապատվություն տալու ծայրահեղ դրսևորումներից է, որը հեռու է իրավիճակի սթափ գիտակցումից:

«Հ տարածքի որևէ դատարանի գործունեությունը կարող է անհնարին լինել տարբեր պատճառներով. այդ տարածքում արտակարգ դրություն սահմանելու, այդ տարածքը թշնամական ուժերի կողմից շրջափակելու և այլ պատճառներով: ՀՀ իրավական համակարգը պետք է պատրաստ լինի նման իրավիճակներում իրավաբանական հիմնավորումներով (չշփոթել լեգիտակական հիմնավորումների հետ) ապահովելու արդարադատությունն առանց բացառության իրականացնելու (ավարտելու) արքիոմատիկ պահանջը: Այս դեպքում նախ՝ պետք է քննարկել ՀՀ քր. դատ. օր-ի 265-րդ հոդվածին հակառակ արտագնա դատական նիստ անցկացնելու հնարավորությունը (տե՛ս 3.1. կետը), իսկ եթե դա հնարավոր չէ, ապա դատավորը, ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի 5-րդ մասին հակառակ, պետք է որոշում կայացնի ընդդատությունը փոխելու վերաբերյալ:

4. Եզրակացություն

Քրեական վարույթի տարածքային ընդդատության կարգավորումների թեությունները և բացերը պետք է լուծել հրատապ, քանզի դրանով էապես վտանգվում է արդարադատության շահը: Իրավակիրառ ոլորտում այս հարցերի հրատապ լուծման եղանակը *extra legem* և *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինն է:

Քրեական վարույթով տարածքային ընդդատությունը *extra legem* և *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա լուծելու առաջարկության գործնական կիրառությունը կախված է, հատկապես, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավասու դատավորների իրավաընկալման խորությունից և մասշտաբայնությունից: *Contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի կիրառությունը հեռանկար չի կարող ունենալ, եթե ընդդատության վեճեր լուծող ՀՀ

¹ **Победкин А. В.** Может ли крайняя необходимость оправдывать нарушение принципов уголовного судопроизводства? (По следам пандемии) // Современные проблемы уголовного процесса: пути решения: Сборник материалов 2-й Международной конференции, Уфа, 08 апреля 2021 года. – Уфимский ЮИ МВД России, 2021. - С. 211-219.

վճարել դատարանի իրավասու դատավորի իրավահասկացողությունը պարփակված է բացառապես լեզիզմով: Այդ տեսակի պաշտոնատար անձից իրավաբանություն ակնկալելն անիրագործելի սպասում է:

Доктрина развития права вне закона (EXTRA LEGEM) и вопреки закону (CONTRA LEGEM) при определении подсудности в уголовном судопроизводстве

Аннотация

В настоящей статье рассмотрены вопросы, связанные с определением подсудности в уголовном судопроизводстве, которые не урегулированы процессуальным законодательством, при этом неурегулированность рассматриваемых вопросов в одном случае является результатом ошибки законодателя, в другом - сознательного молчания законодателя. Подобные законодательные пробелы на практике вызывают такие сложности, которые нуждаются в срочных решениях, поэтому пока законодатель не принял меры, они должны решаться правоприменителями. В правоприменительной практике для решения этих проблем автор предлагает обратиться к доктрине развития права вне закона (extra legem) и вопреки закону (contra legem).

Практическое применение данного предложения зависит, в частности, от глубины и масштабности правопонимания правомочных судей Кассационного суда РА. Особенно применение доктрины развития права contra legem не может иметь перспективы, если правопонимание правомочного судьи Кассационного суда РА, разрешающего споры о подсудности, ограничено исключительно легализмом. Ожидания от такого должностного лица юриспруденции нереальны.

Ключевые слова: подсудность, уголовный процесс, развитие права, вне закона, вопреки закону.

EXTRA LEGEM AND CONTRA LEGEM DEVELOPMENT DOCTRINE IN THE PROCESS OF DETERMINING CRIMINAL JURISDICTION

Annotation

This Article deals with the issues related to the determination of the jurisdiction in criminal proceedings, which are not regulated by procedural legislation, while the failure to settle the issues under consideration is the result of the legislator's mistake on one hand and the conscious silence of the legislator, on the other. In practice, such legislative gaps cause difficulties that need urgent solutions, therefore, they should be resolved by law enforcers while the legislator takes necessary actions. The author proposes to address the *extra legem* and *contra legem* development doctrine for the resolution of the aforementioned issues in law enforcement practice.

The practical application of the given proposal depends, in particular, on the depth and scope of the legal perception of the competent judges of the Cassation Court of the Republic of Armenia. The application of the *contra legem* development doctrine may have no prospects where the legal perception of the competent judge of the Cassation Court of the Republic of Armenia, resolving disputes over jurisdiction, is limited exclusively by legalism. Expecting jurisprudence from such an official is an unrealistic expectation.

Keywords: jurisdiction, criminal process, development of law, *extra legem*, *contra legem*.



ԻԶԱՔԵԼԼԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

*ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ և
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

Ամփոփագիր. Հողվածում ուսումնասիրվում և լուսաբանվում է, թե ինչպես է մեկնաբանվել աշխատանքի իրավունքը, աշխատանքի ազատությունը իրավագիտության մեջ, վեր է հանվում աշխատանքի ընտրություն կատարելու գաղափարը որպես անձի կողմից իր ազատության գործարկման գրավական, և փորձ կատարվում տեսական մակարդակում նշել, թե ինչ տարբերություն կարող է լինել «աշխատանքի ընտրության ազատության» և «աշխատանքի ազատ ընտրության իրավունքի» միջև:

Հիմնաբառեր. աշխատանքի իրավունք, աշխատանքի ազատություն, աշխատանքի ընտրություն:

Նախաբան

Սույն հոդվածում «աշխատանքի ընտրության ազատություն» և «աշխատանքի ազատ ընտրության իրավունք» եզրույթներն առանձին դիտարկելը պայմանավորված է ՀՀ սահմանադրությամբ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը «աշխատանքի ընտրության ազատություն» վերնագրով 57-րդ հոդվածում ներառելու և պարտադիր ու հարկադիր աշխատանքի արգելքն աշխատանքի ազատ ընտրության իրավունքից փաստացի առանձնացնելու հանգամանքով: Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի և ընտրության ազատության միջև հայրենական իրավագիտության մեջ տարբերակում չի կատարվում: Առհասարակ «գործելու ազատություն» և «ազատ գործելու իրավունք» ձևաչափով երևույթը ներկայացնելու օրինակները շատ են (ինչպես, օրինակ՝ աշխատանքի ընտրության ազատություն և աշխատանքի ազատ ընտրության իրավունք կամ հավաքների ազատություն և հավաքներին ազատորեն մասնակցելու իրավունք կամ խոսքի ազատություն և խոսքի ազատության իրավունք, և այլն): Հնարավոր տարբերությունները տեսական մակարդա-

կում լուսաբանելու համար անդրադարձ կկատարվի աշխատանքի իրավունքին, ապա աշխատանքի ազատությանը, «իրավունք» և «ազատություն» տեսական քննարկումներին, ապա կներկայացվի աշխատանքի ընտրության իմաստը և կկատարվեն եզրահանգումներ:

Աշխատանքի իրավունք

Աշխատանքի նշանակության մասին բարոյափիլիսոփայական պատկերացումները որոշակիորեն պայմանավորում են աշխատանքի իրավունքի բովանդակությունը: Այսպես, ոմանք կարծում են, որ աշխատանքի իրավունքն ապահովում է ինքնառեալիզացում¹, կատարելություն, սոցիալական ներառում, ինքնավարություն², տնտեսական բարեկեցություն:³ Սովետական սոցիալիստական գաղափարախոսության մեջ աշխատանքը, հանդիսանալով շահագործմանը վերջ տալու գրավական, մարդկության զարգացման որոշիչ գործոն, իրական ազատության և աշխատանքի համընդհանրությանը հասնելու միջոց էր⁴:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ճանաչելով յուրաքանչյուրի աշխատանքի, դրա ազատ ընտրության, աշխատանքի արդար ու բարենպաստ պայմանների և գործազրկությունից պաշտպանվելու իրավունքները, չի հստակեցրել այդ իրավունքների բովանդակությունը: Պատերազմական շրջանից հետո Եվրոպայում առաջացած տնտեսական անկումից հետո աշխատանքի իրավունքը կարևորվել է ոչ միայն տնտեսական պատճառներով, այլ նաև քաղաքական խաղաղության և ժողովրդավարության նկատառումներով: Այն ընկալվել է որպես անձի արժանապատվության և ապրուստի պատշաճ մակարդակի գրավական, թեպետ և չի դիտարկվել աշխատանքով ապահովելու պետության պարտավորություն: Հռչակագրի նախագծողները հստակ պատկերացրել են, որ գործազրկությունից պաշտպանվելու իրավունքի նպատակն է եղել հարկադիր գործազրկությունից պաշտպանությունը, այլ ոչ թե սոցիալական նպաստի տրամադրումն աշխատանք չունեցողներին, որպեսզի վերջիններս չեզոքացնեն իրենց առջև ծառայած գործազրկության բացասական հետևանքները⁵:

¹ Collins H. Is there a human right to work? / Virginia Mantouvalou, The Right to Work, Legal and philosophical perspectives, Oxford and Portland, Oregon, Hart publishing, 2015, էջեր 31-56:

² Tasioulas J. Human Rights, Universality and the Values of Personhood: Retracing Griffin's Steps' (2002), 10, European Journal of Philosophy, էջ 79:

³ Sarkin J., Koenig M. Developing the Right to Work, Intersecting and Dialoging Human Rights and Economic Policy, Human Rights Quarterly, volume 33, No 1, February, 2011, էջ 9:

⁴ Уржицкий К. П. Гарантии права на труд. – Москва: Юридическая литература, 1984. - էջ 3:

⁵ Harvey P. Human rights and Economic policy discourse: Taking economic and social rights seriously, olumbia Human Rights Law Review, 33(2), 2002, էջ 365:

Ամրագրվելով մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում՝ աշխատանքի իրավունքն ստացել է ծավալուն բովանդակություն: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 16.12.1966թ. միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածով ճանաչվել է յուրաքանչյուրի աշխատանքի իրավունքը, որն իր մեջ ներառում է յուրաքանչյուր մարդու իրավունքն իր ապրուստի համար աշխատանքով վաստակելու հնարավորություն ստանալը, որը նա ազատորեն ընտրում կամ որին նա ազատորեն համաձայնում է: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների սահանումը ՄԱԿ-ի կոմիտեի կողմից, որը Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 16.12.1966թ. միջազգային դաշնագրով սահմանված դրույթների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինն է, 2006թ. փետրվարի 6-ին ընդունված թիվ 18 Ընդհանուր մեկնաբանությամբ մատնանշել է, որ աշխատանքի իրավունքի ընդհանուր բնույթը տրված է Դաշնագրի 6-րդ հոդվածում: Դրա մասնավոր բնույթը հստակ կերպով զարգացվում է Դաշնագրի 7-րդ հոդվածով առ այն, որ յուրաքանչյուր ոք ունի արդար և նպաստավոր աշխատանքային պայմանների, մասնավորապես, անվտանգ աշխատանքային պայմանների իրավունք, իսկ կոլեկտիվ բնույթը հաստատվում է 8-րդ հոդվածում նշված՝ արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքով և դրանց ազատ գործելու սկզբունքով: Կոմիտեն նաև առանձնացրել է աշխատանքի իրավունքի հետևյալ տարրերը՝ աշխատանքի հնարավորություն, հասանելիություն և ընդունելի ու որակյալ աշխատանք:

Եվրոպական սոցիալական խարտիայով որպես ամենակարևոր և հիմնարար իրավունք աշխատանքի իրավունքն ամրագրվել է Խարտիայի 1-ին հոդվածում, որով մասնակից պետության համար սահմանվել են իրավունքի իրացման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ աշխատանքի հնարավորինս բարձր և կայուն աստիճանի նվաճումն ու պահպանումը որպես պետության հիմնական նպատակ ու պարտականություն, աշխատանքի ազատ տեղավորման ծառայությունների ստեղծումը, պահպանումը և այլն: Խարտիայի նկատմամբ վերահսկողություն իրականացնող Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն տարբեր պետություններում կատարված ուսումնասիրությունների արդյունքում իր եզրակացություններով մեկնաբանել է աշխատանքի իրավունքը՝ ըստ էության նշելով դրա իրագործման համար պետության որոշ պարտավորություններ, որոնցից էլ կարելի է վեր հանել աշխատանքի իրավունքի բաղկացուցիչները.

1. աշխատանք փնտրելու և/կամ աշխատանքի համար որակավորում ստանալու իրավունքը,

2. իր ապրուստի համար ազատ ընտրված/ընդունված աշխատանքով վաստակելու իրավունքը,

3. անվճար աշխատանքի տեղավորման ծառայությունների իրավունքը. մասնագիտական ուղղվածության, շարունակական մասնագիտական վերապատրաստման իրավունք աշխատողների և աշխատանք չունեցողների համար և հատուկ ուղղորդում ու ուսուցում հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Ընդ որում, ապրուստի համար ազատ ընտրված/ընդունված աշխատանքով վաստակելու իրավունքի պաշտպանության միջոցներն են աշխատանքում խտրականության բոլոր ձևերի արգելքը, հարկադիր կամ պարտադիր աշխատանքի արգելքը, ցանկացած այլ պրակտիկա, որը կարող է միջամտել ապրուստն ազատ ընտրվող աշխատանքով վաստակելու իրավունքին¹ :

Աշխատանքի իրավունքը հաճախ տարանաջատվում է մի քանի հստակ, բայց փոխկապակցված իրավունքների: Տարբեր տեսաբաններ այս բաժանումները տարբեր կերպ են կատարել: Առավել պարզեցված տարբերակ է երկու հիմնական բաղադրիչների տարանջատումը որակականի և քանակականի: Քանակական տեսանկյունից աշխատանքի իրավունքը կարող է նշանակել, որ շուկայում կա բավականաչափ աշխատանք բոլոր աշխատանք փնտրող մարդկանց աշխատանքով ապահովելու համար: Որակական բաղադրիչը վերաբերում է արժանապատիվ աշխատանքին, որն իր հերթին ներառում է, օրինակ, արդար վարձատրություն, ողջամիտ աշխատանքային ժամեր, աշխատանքի անվտանգ պայմաններ սահմանող իրավունքներ²: Որոշ տեսաբաններ աշխատանքի իրավունքին հաղորդել են առավել բարդ կառուցվածք՝ բաղկացած երեք տարրից: Դրանք են՝ աշխատանքի ազատության իրավունքը /ազատությանը, որը բոլոր աշխատողները պետք է ունենան իրենց աշխատանքի կամ զբաղմունքի ընտրություն կատարելիս/, անհատների աշխատելու իրավունքը / աշխատել ցանկացող յուրաքանչյուր ոք պետք է ունենա աշխատանք ձեռք բերելու հնարավորություն/ և արժանապատիվ աշխատանք ունենալու իրավունքը /վերաբերում է աշխատանքային պայմաններին, օրինակ՝ աշխատանքի արդար վարձատրություն կամ պատշաճ աշխատանքային պայմաններ³ :

¹ Digest of the Case Law of the European Committee on Social Rights, September 1, 2008, Council of Europe, էջեր 19-25:

² Branco M. C. The Right to Work and the Political Economy of Human Rights, Universidade de Evora, Departamento de Economia, Working Paper Series, No. 2006/08, էջ 5:

³ Sarkin J., Koenig M. Developing the Right to Work, Intersecting and Dialoging Human Rights and Economic Policy, Human Rights Quarterly, Volume 33, No 1, February, 2011, 1-42, էջ 9:

Աշխատանքի ազատություն

Աշխատանքի ազատությունը նույնպես լայն հասկացություն է, և դրա մասին քննարկումներ կարելի է գտնել քաղաքագիտության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության և իրավագիտության ոլորտներում: Իրավական տեսանկյունից աշխատանքի ազատությունն ունի տարբեր բաղկացուցիչներ՝ ազատ ընտրվող աշխատանք, ազատություն աշխատանքից և ազատություն աշխատանքում: Այս բազմազանության հետ մեկտեղ թերևս աշխատանքի ազատությունն անձին չի ազատում իր անձնական կարիքերը հոգալու, ընտանիքի կամ հասարակության առջև բարոյական պարտականությունները կատարելու հետ կապված աշխատանքային անհրաժեշտությունից: Սովետական սոցիալիստական իրավունքում, օրինակ, աշխատանքի ազատությունը երբեք չի հանդիսացել ազատություն աշխատանքից. անհատը չէր կարող ընտրություն կատարել աշխատելու կամ չաշխատելու միջև, քանի որ չաշխատելը հակասում էր սոցիալիստական բարքերին, որտեղ մարդկության գոյությունը պայմանավորվում էր աշխատելով¹: Աշխատանքի ազատությունը սոցիալիստական հասարակությունում եղել է համընդհանուր նպատակների համար աշխատելը, այլ ոչ թե չաշխատելը:

Լ. Բուզրովը գտնում էր, որ աշխատանքի ազատությունն ունի փիլիսոփայական, սոցիալ-տնտեսական և իրավական կողմեր: Ազատության փիլիսոփայական կողմն աշխատանքի գիտակցված անհրաժեշտությունն է, իսկ սոցիալ-տնտեսական կողմն արտահայտվում է նրանում, որ աշխատանքի ազատությունը հռչակվում է իրավունքով, հանդիսանում է իրավունքի ֆորմալ աղբյուր, սահմանադրությամբ ամրագրվում են աշխատանքի ազատության տնտեսական, քաղաքական, գաղափարական երաշխիքները, իրավական նորմերով ամրագրվում են աշխատանքի հանրային կազմակերպման ձևերն ու սկզբունքները, որոնք համապատասխանում և զարգացնում են աշխատանքի ազատության սոցիալ-տնտեսական հիմքը (աշխատելու հնարավորությունը կարելի է գործարկել՝ օգտագործելով ծառայողի, աշխատողի, կոլտնտեսության անդամի, քաղաքացիա-իրավական հարաբերությունների սուբյեկտի կարգավիճակները), ինչպես նաև իրավունքը բովանդակվում է աշխատանքի ազատության իրավական երաշխիքները: Աշխատանքի ազատության իրավական կողմը կայանում է նրանում, որ իրավունքով կարգավորվում են հանրային հարաբերությունները, որոնցում իրականացվում է աշխատանքի ազատությունը: Բուզրովը, տարանջատելով «աշխատանքի ազատությունը» «աշխատանքում ազատությունից», նշում էր, որ առաջինը կարող է գործածվել

¹ Сорочан О. П. Труд и всестороннее развитие личности // труд и его проблемы на современном этапе развития социалистического общества. Вопросы политической экономии. Межвузовский сборник. – Кишинев, 1986. – էջ 14:

իրավական առումով և սոցիալ-տնտեսական տեսանկյունից ենթադրում է անհատական և կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում աշխատանքի սուբյեկտների ազատություն, իսկ աշխատանքում ազատությունը հանդիսանում է ողջամիտ գործունեության ծավալում¹:

Աշխատանքի ազատությունը համարվում է նաև աշխատանքային հարաբերությունների կարգավորման սկզբունք: Օրինակ, Յու. Դմիտրիևան համարում է, որ աշխատանքի ազատության բովանդակությունը կազմում են իր կարողություններն ազատ տնօրինելու միջոցով աշխատանք ընտրելու, մասնագիտություն ընտրելու և զբաղմունքի տեսակ ընտրելու իրավունքները և հարկադիր աշխատանքի արգելքը: Մասնագիտությունը, զբաղմունքի տեսակը և աշխատանք ընտրելու իրավունքները երաշխավորվում են մասնավոր սեփականության իրավունքով, տնտեսական և ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու ազատությամբ, պետական ծառայության անցնելու հավասար հասանելիության և այլ իրավունքներով, որոնք և ապահովում են, որպեսզի յուրաքանչյուրն իր զբաղմունքն ընտրի իր կարիքներին և հետաքրքրություններին համապատասխան²: Ե. Վոլկը, Կ. Կոստեխիչը և այլոք աշխատանքի ազատությունը նույնպես համարում են սկզբունք, որի հիման վրա անձը կարողանում է իրագործել աշխատանքի իր սուբյեկտիվ իրավունքը, իսկ աշխատանքում ազատությունը համարում են աշխատելու ընթացքում աշխատողի ունեցած սուբյեկտիվ իրավունքներն իրագործելու ազատություն³:

Աշխատանքի ազատության բաղադրիչը շատ հաճախ ձևակերպվում է որպես ընտրություն՝ հատկապես մասնագիտական զբաղմունքի: Անձի համար կյանքում զբաղմունք ընտրելու հնարավորությունը իր անհատականությունը ձևավորելու և արտահայտելու կենսական նշանակություն ունեցող առանցքներից է: Ակնհայտորեն այս մոտեցումն ընդգծում է աշխատանքի ազատության դրական և ոչ թե արգելքների բացակայությամբ բնորոշվող կողմերը: Աշխատանքի ազատության նման ընկալումը համահունչ է Թ.Ն. Գրինի պնդմանը, որ ազատությունը չի սահմանափակվում իրավական սահմանափակումների բացակայությամբ, այլ նաև ինչ-որ բան անելու կամ վայելելու պոզիտիվ իրավասությունն ու հնարավորությունն է⁴: Ըստ էության, մասնագիտությունը, զբաղմունքի տեսակը, վայրը և այլ պայմաններն ընտրելն այն ազատություններն են, որոնք ավելին են արտահայտում, քան անձի աշխատելու կամ չաշխատելու ցանկությունը, և, հենց այս տիրույթում է, որ աշխա-

¹ Бугров Л. Ю. Проблемы свободы труда в трудовом праве России. – Пермь: Изд-во Перм. унив-та, 1992. – էջեր 21-38:

² Дмитриева Ю. Конституция Российской Федерации: доктринальный комментарий (постатейный).- "Деловой двор", 2009 г., <https://constitution.garant.ru/science-work/comment/5697462/>

³ Волк Е. А. и др. Идея свободы в трудовом праве. – Минск: «Амалфея», 2015. – էջ 54:

⁴ Green T. H. Lecture on Liberal Legislation and Freedom of Contract/ R. Nettleship, Works of Thomas Hill Green, Cambridge Library Collection–Philosophy, 2011, էջ 384:

տանքի ազատությունը հնարավոր է լինում տարանջատել աշխատանքի ընտրության ազատությունից և այն ընկալել ոչ միայն պարտադրված աշխատանքի արգելք, այլ նաև աշխատանքում անձի անհատականությունն ու ազատությունն իրացնելու միջոց: Չբաղվածության, աշխատանքի, այդ թվում նաև դրանց իրականացման վայրի ընտրության ազատությունները սովորաբար ընդգրկվում են մեկ գաղափարի՝ աշխատանքի ընտրության ազատության մեջ¹:

Աշխատելու և չաշխատելու ազատությունն ենթադրում է առհասարակ աշխատելու, թե չաշխատելու անձի կամքը և որոշումը, ինչպես նաև ընտրել, թե ինչպիսի պայմաններով աշխատել և/կամ ում հետ աշխատել, կամ հնարավորություն ունենալ հրաժարվելու աշխատանքը կատարելուց: Աշխատանքի ընտրության ազատությունը, ի սկզբանե ի հայտ գալով միջազգային փաստաթղթերում, որպես պարտադիր աշխատանքը զսպելու միջոց², նշանակում է ոչ միայն աշխատանքային գործունեության տեսակի ընտրություն կամ իր ունակությունները գործածելու կազմակերպչաիրավական ձևի կամ աշխատավայրի ընտրություն, այլ նաև աշխատանք կատարելուց հրաժարվելու հնարավորություն: Այսինքն, չաշխատելու ազատությունն աշխատելու ազատության տրամաբանական շարունակությունն է: Աշխատանքից հրաժարվելը չպետք է անձի համար առաջացնի բացասական հետևանքներ, ինչպես հարկադիր աշխատանքի դեպքում: Աշխատանքի ազատությունն արդիական է նաև արդեն իսկ աշխատանքային հարաբերություններում գտնվող աշխատողների դեպքում, երբ վերջիններս ցանկանում են սեփական նախաձեռնությամբ դադարեցնել աշխատանքային հարաբերությունները: Ըստ էության անձը կարող է կամովին հրաժարվել որոշակի աշխատանք կատարելուց, առանց դրա բացասական հետևանքները կրելու: Օրինակ՝ գործատուներն աշխատողի հետ կնքվող պայմանագրերում ներառում են հակամրցակցային դրույթներ, որոնց համաձայն աշխատողը տվյալ աշխատանքից ազատվելուց հետո դեռ որոշ ժամանակով չի կարող աշխատել մրցակից գործատուի մոտ, այլապես պետք է գործատուին վճարի տուգանք: Այս առումով հակամրցակցային դրույթները կարող են ունենալ էական ազդեցություն աշխատանքի ընտրության ազատության վրա:

Մասնագիտություն, զբաղմունքի (գործունեության) տեսակ ընտրելու ազատության այս տարրը ենթադրում է, որ անձն ինքն է որոշում իր նախասիրություններին, ունակություններին և հակումներին համապատասխան

¹ **Էյդն Ա., Կրասուզե Կ., Ռոզա Ա.** Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դասագիրք, Երևան, Տիգրան Մեծ, 2009, էջ 330, Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ/ Գ. Հարությունյանի խմբագրությամբ, Երևան, Իրավունք, 2010, էջեր 398-402:

² **Denters E.** Reflections on International Law from the Low Countries: In Honour of Paul DE Vaart, Developments in International Law, Martinus Nijhof publishers, 1998, էջ 193:

կրթվել, մասնագիտանալ որևէ ոլորտում, ընտրել իր զբաղմունքի տեսակը և այլն: Գործունեության տեսակի ընտրությունը սովորաբար պայմանավորված է նրանով, թե անձն ինչ մասնագիտություն է ժամանակին ընտրել և, համապատասխանաբար, ինչ կրթություն է ստացել: Սակայն դա չի նշանակում, որ անձը չի կարող իր մասնագիտացումից տարբերվող գործունեության տեսակ ընտրել: Եթե մասնագիտության ընտրությունն ուղիղ կապ ունի անձնական նախասիրությունների, խառնվածքի, մասնագիտության հարգված լինելու հետ, ապա գործունեության տեսակի ընտրությունը շատ հաճախ թելադրվում է տնտեսական պայմաններով, և արդեն ազատությունը կարող է կրել հոչակագրային բնույթ, այլ ոչ թե իրենից ներկայացնել խոչընդոտների բացակայություն¹: Այս առումով աշխատանքի ընտրության ազատությունն ապահովելու նպատակով պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի յուրաքանչյուր ոք ընտրի գործունեության տեսակը, այլ ոչ թե ֆինանսական վատ պայմաններից ելնելով՝ ստիպված համաձայնի որևէ գործունեությամբ զբաղվելուն: Այսինքն անձը պետք է կարողանա ընտրել իրեն հարմար աշխատանք և չպետք է անհարմար աշխատանքը մերժելու պատճառով գրկվի գործազրկության դեպքում պետության կողմից առաջարկվող աջակցությունից, այդ թվում՝ նպաստներից²:

Անձի կողմից իր աշխատուժը սեփական հայեցողությամբ տնօրինելու ազատությունը սերտորեն կապված է վերը նշված երկու տարրերի հետ: Այն ենթադրում է, որ անձն իր հայեցողությամբ տնօրինում է իր ժամանակը և այլ սեփական ռեսուրսները, ինքն է որոշում ինչով զբաղվել և ինչպես զբաղվել՝ իր նախասիրություններին համապատասխան: Խոսքը չի վերաբերում այն անձանց, ովքեր արդեն գտնվում են աշխատանքային հարաբերություններում, քանի որ վերջիններս աշխատանքային պայմանագրի ուժով արդեն իսկ պետք է կատարեն որոշակի աշխատանք կամ մասնակցեն իրենց գիտելիքները բարելավելու և որակավորումը բարձրացնելու համար անհրաժեշտ դասընթացներին, ինչպես նաև իրենց աշխատուժը տնօրինեն գործատուի կողմից սահմանված պայմաններին համապատասխան:

Աշխատանքի իրավունքի և աշխատանքի ազատության հարաբերակցությունը

Գիտնականների մի մասը կարծում են, որ աշխատանքի իրավունքը ենթադրում է իր աշխատանքային ռեսուրսներն օգտագործելու երաշխավորված հնարավորություն, իսկ աշխատանքի ազատությունը պետությանն ազատում է իր քաղաքացիներին աշխատանքով ապահովելու պարտավորություն-

¹ Анишина В. И., Попонов Ю. Г. Свобода труда или право на труд // Журнал российского права, 2007, N4. - էջ 92:

² Arita K. The Development of Right to Work Theories of Labour Law in Japan: A Comparative Perspective/The Right to Work, Legal and philosophical perspectives, Oxford and Portland, Oregon, Hart publishing, 2015, էջ 256:

նից¹: Այլոք կարծում են, որ աշխատանքի ազատությունը հանդիսանում է աշխատանքից ազատություն, այսինքն, երբ չկա աշխատելու պարտավորություն, անձն ունի աշխատելու իրավունք և միևնույն ժամանակ ազատ է չաշխատելու հարցում²:

Որոշ տեսաբաններ համարում են, որ աշխատանքի ազատությունը սահմանադրական կարգավորման սկզբունքներից է, իսկ աշխատանքի իրավունքն անձի կարգավիճակը բնութագրող սուբյեկտիվ իրավունքներից է, ինչպես նաև այն, որ աշխատանքի ազատությունն ավելի լայն հասկացություն է³: Իրավաբանական գիտության մեջ առկա են նաև վերջին տեսակետին հակառակ պատկերացումներ առ այն, որ աշխատանքի ազատությունը հանդիսանում է աշխատանքի իրավունքի մի մասը և իրենից ներկայացնում է աշխատանք/գրադավաճություն ընտրելու ազատություն և ըստ էության ապահովվում է պարտադիր կամ հարկադիր աշխատանքի, ստրկության արգելքի մասին երաշխիքներով⁴, կամ այն, որ աշխատանքի ազատությունը աշխատանքի իրավունքի մաս է կազմում և ներառում է հավասարության պայմաններում մասնագիտական որակավորում ստանալու իրավունքը⁵, կամ աշխատանքի ազատությունը (ազատ ընտրությունը) աշխատանքի իրավունքի եռակազմ բաղադրիչներից է և դրա իրագործման պարտադիր նախապայմաններն աշխատանքով երաշխավորված ապահովվածությունն ու աշխատանքի արդար վարձատրությունն են⁶: Տոմաշևսկու կարծիքով, աշխատանքի իրավունքը և աշխատանքի ազատությունը փոխկապակցված են, և աշխատանքի բնագավառում համընդհանուր ազատության միևնույն իրավական գաղափարի տարբեր արտահայտություններն են⁷: Այս տեսակետին համակարծիք են նաև Ե.Վոլկը, Կ. Կոստևիչը և այլոք, ովքեր միևնույն ժամանակ գտնում են, որ աշխատանքի իրավունքը և աշխատանքի ազատությունը նույնական չեն⁸: Ս. Պոպովը և ստարանջատում է աշխատանքի իրավունքն աշխատանքի ազատությունից, նշելով, որ ազատությունը կապ ունի անձի ինքնավարության հետ և

¹ Анишина В. И., Попов Ю. Г. Свобода труда или право на труд? // Журнал российского права, 2007, N4. - էջեր 94-95:

² Малышок И. Г. Право на труд и свобода труда в историко-правовом аспекте // Вестник Амурского государственного университета. Гуманитарные науки, 2013, N60, էջ 77// <http://docplayer.ru/47667839-I-g-malyshok-pravo-na-trud-i-svoboda-truda-v-istoriko-pravovom-aspekte.html>, Kuznetsova T., Kremyanskaya E., Rakitskaya I. Russian Constitutional Law, Cambridge Scholars Publishing, 2014, էջ 53:

³ Анишина В. И., Попов Ю. Г. Свобода труда или право на труд? // Журнал российского права, 2007, N4. - էջեր 94-95:

⁴ Mundlak G. The Right to work: Linking Human Rights to Employment Policy, International Labour Review, Vol. 146, 2007, No. 3-4, էջեր 192-193:

⁵ Stú Resolution adopted by the Human Rights Council on 22 March 2018, 37/16. Right to work <https://digitallibrary.un.org/record/1487294>

⁶ Иванов С. А., Лившиц Р. З. Личность в советском трудовом праве. – Москва: "Наука", 1982. - էջ 66:

⁷ Томашевский К. Л. Очерки трудового права. История, философия, проблемы систем и источников: монография. – Минск: Изд. центр БГУ, 2009. - էջ 251:

⁸ Волк Е. А. и др. Идея свободы в трудовом праве. – Минск: «Амалфея», 2015. - էջ 83:

պաշտպանում է անձնական կյանքը միջամտություններից, մինչդեռ աշխատանքի իրավունքն առավելապես ենթադրում է պետության կողմից պոզիտիվ գործողություններ¹:

Աշխատանքի ընտրություն. Իրավունք կամ ազատություն

Առանձին սահմանադրագետներ «իրավունք» և «ազատություն» հասկացությունների վերաբերյալ ունեն տարբեր մոտեցումներ: Ոմանք այդ հասկացությունների բովանդակությունը նմանեցնում են և համարում յուրաքանչյուր անձին իրավաբանորեն ամրագրված վարվելակերպի հնարավորություն²: Մ. Ստրոգովիչը, օրինակ, նշում է, որ ազատությունն իրավունքի հատուկ տեսակի ֆունկցիոնալ առանձնահատկությունն է, այն նաև իրավունք է, այն է՝ որոշակի գործողություններ կատարելու իրավունք, սեփական աձը և սեփական գործողություններն ազատորեն տնօրինելու իրավունք, իսկ Լ. Յավիչը նշում է, որ ցանկացած սուբյեկտիվ իրավունքում իրավական հնարավորությունն իրավատիրոջ գործողությունների ազատությունն է, որի ծավալն ու տեսակն արդյունքում թելադրվում է հասարակության սոցիալական առաջընթացով, պաշտոնապես ընդունվում և պահպանվում է պետության կողմից³: Իրավունքի և ազատության միջև տարբերությունը որոշ սահմանադրագետներ ներկայացնում են հետևյալ կերպ. ազատությունն ավելի շատ կապված է անձի այնպիսի իրավական հնարավորությունների հետ, որոնք ուրվագծում են նրա ինքնավարությունը, պաշտպանում են անձի ներքին աշխարհը միջամտություններից, մինչդեռ իրավունք հասկացությունն ավելի շատ ենթադրում է որոշակի գործողություններ, ծառայություններ, պետության կողմից անձին տրամադրված իրավական հնարավորություններ՝ մասնակցելու հանրային, քաղաքական, տնտեսական կառույցների գործունեությանը⁴:

Առհասարակ, ազատությունը լայն իմաստով անձի բնական վիճակն է, որը բնութագրվում է նրանով, որ անձը կարող է գործել իր հայեցողությամբ: Ազատությունն ավելի նեղ իմաստով նշանակում է անձի՝ իրեն վերապահված սահմանադրական իրավունքներն ու ազատություններն իրականացնելու համար որոշակի գործողություններ կատարելու կամ չկատարելու անձի սուբյեկտիվ հնարավորություն⁵: Հունգարացի սահմանադրագետ Ա. Բրագովան կարծում է, որ ազատությունն իրավունք կամ պահանջ չէ, այն անձի բացարձակ թույլատրված դիրք է, որը պետք է հարգեն բոլորը, այն ընդհանուր թույլ-

¹ Попов С. В. Формы реализации права на труд: проблемы теории и практики // Волк Е. А. и др. Идея свободы в трудовом праве. - Минск: «Амалфея», 2015. - էջ 66:
² Алексеев С. С., Архипов С. И. и др. Теория государства и права. – Москва: «Норма», 2005. - էջ 420:
³ Строгович М. С. Проблемы теории права // Избр. тр.: в 3 т. Т. 1. – Москва: «Наука», 1990. - էջ 224;
 Явич Л. С. Общая теория права. - Л., 1976. - էջ 179:
⁴ Козлова Е. И., Кутафин О. Е. Конституционное право России. – Москва: «Юристь», 1999. - էջ 124:
⁵ Баглай М. В. Конституционное право зарубежных стран. – Москва: «Норма», 2004. - էջ 84:

ՍԱՀՄԱՆԱԿՐԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3(103)2021

տվություն է, մինչդեռ իրավունքը միշտ ենթադրում է այլ անձանց պարտականություններ¹: Իրավունքի մասին նման կարծիք ունի նաև Ջ. Ռազը: Նա իրավունքը սահմանում է որպես այլ անձանց պարտականությունների հիմք և եթե անհատն ունի իրավունք, ուրեմն նա կարող է այլ անձի նկատմամբ ներկայացնել որոշակի պահանջ, այսինքն անհատի բարօրությունն այլ անձի մոտ առաջացնում է պարտավորություն: Թե ինչպիսի պարտավորություններ է առաջացնում իրավունքը, որոշ չափով կախված է այդ իրավունքի էությունից և դրա գոյությունն արդարացնող նկատառումներից²: Ներկայացնելով իրավունքի էությունը որպես այլոց պարտավորությունների հիմք՝ հարկ ենք համարում ընդգծել, որ այլոց պարտավորությունները պարտադիր կերպով չեն հանդիսանում կոնկրետ անձի որոշակի պարտավորություն: Ինչպես նշում է Ջ. Ռազը, իրավունքները «բավարար պատճառ» են հանդիսանում հիմնավորելու և արդարացնելու անձի վրա պարտականություն դնելը: Ինչ վերաբերում է ազատությանը, ապա այն նաև ենթադրում է պարտավորություններ այլ անձանց համար (օրինակ՝ չմիջամտել, չխանգարել), սակայն իրավունքից բխող պարտավորություններից դրանք տարբերվում են նրանով, որ չեն կրում անձի ազատությունն իրագործելու ակտիվ գործողություններ:

Իրավունքների և ազատությունների մասին տեսական մոտեցումները ներկայացնելիս՝ առանձնակի պետք է նշել Ի. Բեռլինի առաջ քաշած երկու տեսակի ազատությունների տեսությունը: «Ո՛վ է ինձ կառավարում» հարցը տարբեր է «Ի՞նչ չափով է կարող պետությունը միջամտել իմ գործերին» հարցից: Այս երկու հարցերի միջոցով էլ Բեռլինը տարանջատում է նեգատիվ /նեգատիվ է կոչում, քանի որ ազատության գոյությունը պայմանավորվում է խոչընդոտների բացակայությամբ/ և պոզիտիվ ազատությունները, համարելով, որ նեգատիվ ազատությունն ընդամենը խոչընդոտների բացակայությունն է, իսկ պոզիտիվ ազատության դեպքում անձն իր նպատակներին հասնելու համար ընտրում է տարբեր հնարավոր տարբերակներից իր համար ընդունելին, ինքն է որոշում իր գործողությունները³: Ի տարբերություն նեգատիվ ազատության՝ պոզիտիվ ազատության գաղափարում առաջ է քաշվում նաև ընտրություն կատարելու համատեքստը⁴:

Եթե վերլուծենք իրավունքների և ազատությունների վերաբերյալ վերոնշյալ կարծիքները, ապա կարող ենք ընդունել, որ ազատություններն ու իրավունքները վերջիվերջո այլոց նկատմամբ որոշակի վարվելակերպի պա-

¹ **Bragyova A.** Freedom and Permission: The Constitutional Concepts of the Freedom of the Individual // Archives for Philosophy of Law and Social Philosophy, 2005, Vol. 91, No 3, էջ 382:

² **Raz J.** The Morality of Freedom, Clarendon Press, Oxford, 1986, էջ 183:

³ **Berlin I.** Four Essays on Liberty, Oxford University Press, 1969, էջեր 119-132:

⁴ **Chambers C., Parvin P.** Political Philosophy: A Complete Introduction: Teach Yourself, London, John Murray Press, 2012, էջ 25:

հանջներ են: Այդուհանդերձ, պահանջների բովանդակությունը կամ տեսակն արդեն կախված է լինում տվյալ ազատության կամ իրավունքի ներքին յուրահատկություններից: Նշված տրամաբանության կառուցվածքն աշխատանքի ազատ ընտրության իրավունքի և աշխատանքի ընտրության ազատության վրա տարածելիս անհրաժեշտ է պատասխանել, թե ինչ է աշխատանքի ընտրությունը, քանի որ երկուսի (աշխատանքի ազատ ընտրության իրավունքի և աշխատանքն ազատ ընտրելու իրավունքի) համար էլ ընդհանուր մասը կազմում է աշխատանքի ընտրությունը և ընտրության «ազատ» լինելը:

Աշխատանքի ազատության վերաբերյալ քննարկումներում ներկայացվեց, որ ընտրություն կատարելն աշխատանքի ազատության դրսևորման հիմնական միջոցն է, և սա պատահական չէ, քանի որ ազատությունն առհասարակ անձի կամահայտնությունն է, միևնույն ժամանակ նույն կամահայտնությունն իր հերթին պետք է լինի չկաշկանդված, չպարտադրված և այլն, որպեսզի համարենք, որ գործ ունենք ազատ կամահայտնության, ասել է թե՛ իրական ազատության հետ: Այս առումով կարող ենք փաստել, որ աշխատանքի ընտրության ազատությունը, աշխատանքի ազատության բաղկացուցիչներից է, իսկ աշխատանքի ազատությունը՝ անհատի համընդհանուր ազատության գրավականներից:

Ներկայացված տրամաբանական շղթայում աշխատանքի ազատ ընտրությունը կամ ընտրության ազատությունը բանավեճից դուրս է մղում աշխատանքն ազատ ընտրելու իրավունքը, որովհետև, եթե աշխատանքի ազատությունն անհրաժեշտ է համընդհանուր ազատություն ունենալու համար, իսկ աշխատանքի ազատ ընտրությունը՝ աշխատանքի ազատության, ապա ազատ ընտրելու իրավունքն ինքնաբերաբար ենթադրվում և ներառվում է աշխատանքի ազատություն բաղադրիչում: Սակայն, հարկ է վերադառնալ անձի համընդհանուր ազատությանը, որի համար անձը պետք է ունենա աշխատանք, աշխատելու հնարավորություն, կարողություն՝ ըստ էության աշխատանքի իրավունք: Աշխատանքի ազատության մասին քննարկումները հուշում են, որ ապրուստի միջոցների բացակայությունը և աշխատանքի արդյունքները տնօրինելու արգելքներն են, որ մարդկանց զրկել կամ սահմանափակել են իրենց ազատության մեջ¹: Միևնույն ժամանակ աշխատանքի իրավունքը պետք է զուգորդվի տարբեր ազատություններով և իրավունքներով՝ աշխատելու նշված հնարավորություններին ու կարողություններին բովանդակություն հաղորդելու նպատակով: Այդ իսկ պատճառով աշխատանքի իրավունքն իրականացնելու համար անձի կողմից իր ապրուստի համար վաստակ ապահովող աշխատանքն ազատ/ազատորեն ընտրելը՝ որպես ձև,

¹ Տե՛ս ազատ աշխատանքի վերաբերյալ տեսական վերլուծությունների հավաքածուն **Engerman S.** Terms of Labor: Slavery, Serfdom and Free Labour. Stanford University Press, Standford, 1999.

անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ: Աշխատանքն ազատ ընտրելն աշխատանքի իրավունքից զատ դիտարկելու պարագայում, աշխատանքի ընտրությունը ծառայում է աշխատանքի ազատությանը, ներկայանում որպես աշխատանքի ընտրության ազատություն, ինչն իր գոյության իմաստը կորցնում է, եթե չկա աշխատանք: Այդ պարագայում ազատ ընտրությունը հանդիսանում է անձի սեփական հայեցողությամբ և կամքով գործելու ազատություն՝ ազատական ազատություն (libertarian) իմաստով:

Աշխատանքն ազատ ընտրելն ինքնանպատակ չէ և վերջիվերջո ծառայում է ապրուստի միջոց վաստակելուն կամ աշխատանքի իրավունքի հիմքում ընկած այլ նպատակների (ինքնազարգացում, ինքնաիրացում և այլն) իրականացմանը: Հենց այս հարթությունում է աշխատանքի ազատ ընտրության «իրավունք» բաղկացուցիչը տեսանելի դառնում: Ինչևէ, կարելի է հակադարձել այն փաստարկով, որ ազատությունների և իրավունքների միջև չկա տարբերություն, դրանք նույնն են, ուստի աշխատանքի ընտրության ազատությունն ու աշխատանքի ազատ ընտրության իրավունքը նույնպես նույնն են, սակայն նման եզրահանգում կարող ենք թույլ տալ, եթե աշխատանքի իրավունքն ու աշխատանքի ազատությունը նույնացնենք: Վերևում արդեն նշվեց, որ աշխատանքի ազատությունն աշխատանքի իրավունքի մի մասն է և առանց աշխատանքի իրավունքի չկա առանձին աշխատանքի ազատություն:

Հանդիսանալով աշխատանքի իրավունքի մի մասը՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքն ավելի «նեղ» բովանդակություն ունի: Պետք է նաև փաստել, որ «աշխատանքն ազատ ընտրելու իրավունքը» ոչ թե նշանակում է, որ պետությունը պետք է ապահովի ճիշտ այն աշխատանքը, որը ցանկանում է անհատը, այլ անձին ընձեռի իր ունակություններին համարժեք աշխատելու հնարավորության ապահովում: Հնարավորությունների սահմաններն ակնհայտորեն կարող են սահմանափակվել՝ կախված երկրի սոցիալ-տնտեսական զարգացումներից: Դրա հետ մեկտեղ պետության հնարավորությունների պատճառով չպետք է սահմանափակվեն անձի արժանապատվության հետ անմիջական կապ ունեցող իրավական երաշխիքները, ինչպիսիք են աշխատանքի հասանելիությունը կամ ունեցած աշխատանքում խտրականության բացառումը: Աշխատանքի ազատ ընտրության իրավունքը լոկ հարկադրանքից կամ պարտադրանքից զերծ աշխատանք ունենալու հնարավորությունը չէ, այլ առհասարակ աշխատանք ունենալու նպատակով աշխատաշուկայում առկա աշխատանքային հնարավորություններից օգտվելու բովանդակային հնարավորությունն է:

Եզրահանգումներ

Այսպիսով, համադրելով և վերլուծելով աշխատանքի իրավունքի, ազատության մասին տեսական քննարկումները և ներկայացնելով աշխատանքի ընտրության էությունը՝ կարելի է ամփոփել, որ

1. աշխատանքի իրավունքը լայն հասկացություն է, ներառում է աշխատելու և չաշխատելու ազատությունները, իրավունքներ մինչև աշխատանքի անցնելը, աշխատանքային իրավունքներ աշխատելու ընթացքում, այնպես էլ աշխատանքից զրկվելու կամ ազատվելու դեպքում սոցիալական ապահովության երաշխիքներ:
2. Աշխատանք լինելը կամ չլինելը, աշխատելը կամ չաշխատելը, աշխատելու և չաշխատելու ձևը, պայմանները որոշելը և որոշումներ կայացնելիս ազատ լինելը և աշխատանքում ինքնաիրացվելը բնութագրում են աշխատանքի ազատությունը: Աշխատանքի ազատությունը ենթադրում է սկզբունքորեն ընտրություն կատարել աշխատելու կամ չաշխատելու միջև: Ստրկությունը, հարկադիր կամ պարտադիր աշխատանքը հանդիսանում են աշխատանքի ազատության հիմքում ընկած արգելքները: Աշխատանքի ազատության հիմքում է ընկած նաև անձի՝ ապրուստը վաստակելու համար աշխատանքը կամ զբաղմունքն իր նախասիրություններին համապատասխան ձեռք բերելը:
3. Աշխատանքի ընտրությունը անխզելի է աշխատանքի իրավունքից: Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի և աշխատանքի ընտրության ազատության տարբերությունները հնարավոր է վերհանել միայն, եթե դրանք դիտարկվեն որպես աշխատանքի իրավունքի և աշխատանքի ազատության մասեր: Աշխատանքի ընտրության ազատությունն ունի նեգատիվ բնույթ՝ ազատություն հարկադրանքից, պարտադրանքից, աշխատելու կամ չաշխատելու վերաբերյալ ընտրություն, և հենց սա է աշխատանքի ընտրության ազատության բուն և տարբերակիչ իմաստը, իսկ աշխատանքի ազատ ընտրության իրավունքն ունի պոզիտիվ բնույթ առ այն, որ անձն ունենա իրեն համապատասխանող աշխատանքի հնարավորություն, ձեռք բերի աշխատանքի անցնելու համար անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ կամ մասնագիտացում, ինչպես նաև ունենա աշխատանք/զբաղմունք փնտրելու հնարավորություն, աշխատանքից կամայականորեն չզրկվի, զործազրկության դեպքում ունենա սոցիալական պաշտպանություն:

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ВЫБОРА ТРУДА В КОНТЕКСТЕ ПРАВА НА ТРУД И СВОБОДЫ ТРУДА

Аннотация

В статье исследуется и освещается толкование права на труд и свободы труда в юриспруденции, выдвигается идея о том, что выбор труда является залогом реализации лицом своей свободы, и делается попытка на теоретическом уровне установить, чем могут отличаться "свобода выбора труда" и "право на свободный выбор труда".

Ключевые слова: право на труд, свобода труда, выбор труда.

SOME REFLECTIONS ON THE CHOICE OF EMPLOYMENT IN THE CONTEXT OF THE RIGHT TO EMPLOYMENT AND FREEDOM TO CHOOSE EMPLOYMENT

Annotation

The interpretation in labor jurisprudence of the right to employment and freedom to choose employment are examined and covered in this Article, as well as the idea of choosing employment as a guarantee of a person's exercise of his freedom are revealed. This Article attempts to state at a theoretical level the difference that may be indicated between the “freedom to choose employment” and the “right to freedom to choose employment”.

Keywords: right to employment, freedom to choose employment, choice of employment.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ



ՊԱՅԾԱՌ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

*«Նախագահի աշխատակազմի
ռազմավարական նախաձեռնությունների
և վերլուծությունների բաժնի փորձագետ,
«ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ»*

**ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԲՆՈՒԹԱԳՐԻԶ,
ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ամփոփագիր. Մույն հոդվածում անդրադարձ է կատարվել պետական ինքնիշխանության էությանը՝ ընդգծելով վերջինիս նշանակությունը որպես պետության գլխավոր բնութագրիչ: Աշխատանքում հեղինակի կողմից փորձ է արվել ուսումնասիրել փիլիսոփաների և իրավաբանների կողմից առաջ քաշված ինքնիշխանության սահմանումները: Մույն հոդվածի շրջանակում հեղինակը հանգում է այն եզրահանգման, որ ժամանակի ընթացքում տրվել են ինքնիշխանության տարբեր սահմանումներ, սակայն մինչ օրս ժամանակակից իրավագիտության մեջ չկա մեկ ընդհանուր սահմանում, որն ամբողջությամբ վեր կհանի ինքնիշխանության էությունը: Այնուհանդերձ, ուսումնասիրելով ինքնիշխանությանն առնչվող տարբեր տեսակետներ՝ կարելի է հստակ արձանագրել, որ այն համարվում է յուրաքանչյուր պետության անբաժանելի և անքակտելի հատկանիշը:

Հիմնաբառեր. պետական ինքնիշխանություն, պետականություն, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, միջազգային իրավունք, Վեստֆալյան հաշտության պայմանագիր:

Դարեր շարունակ ինքնիշխանությունը գտնվել է իրավաբանների և քաղաքագետների ուշադրության կենտրոնում՝ դառնալով շարունակական հակասությունների և բանավեճերի առարկա:

Ժամանակակից սահամանադրություն ունեցող պետությունների համար ինքնիշխանությունը դիտարկվում է որպես պետության հիմնական

բնութագրիչներից մեկը և կազմում է սահմանադրական իրավունքի բաղկացուցիչ մասը¹:

Միջազգային իրավական համակարգում ինքնիշխանությունը կազմում է պետության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը: Միջազգային նորմերը հիմնված են անկախ պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքի վրա: Այսպիսով, միջազգային իրավունքը բացառում է արտաքին ուժերի կողմից պետության ներքին գործերին միջամտելը և սահմանում է համընդհանուր կանոններ²:

Միջազգային իրավունքի տեսության մեջ գերակշիռ դեր ունի նեոլիբերալների տեսակետը, որոնք ինքնիշխանության վերաբերյալ ունեն հետևյալ մոտեցումները.

- 1) ինքնիշխանությունը բնութագրական է միայն պետականությանը, որը վերջինիս առանձնացնում է հասարակական այլ իրողություններից,
- 2) ինքնիշխանությունը փոխկապակցված է ժողովրդի կամքի հետ,
- 3) ինքնիշխանությունն օբյեկտիվ իրականություն է, որը չի պահանջում ինչ-որ մեկի հաստատումը, և այն պետք է ընկած լինի պետաիրավական այլ իրողությունների հիմքում³:

Միավորված ազգերի կազմակերպության 1970 թվականի Միջազգային իրավունքի սկզբունքերի մասին հռչակագրում սահմանվում է ինքնիշխանության սկզբունքի բովանդակությունը կազմող հետևյալ տարրերը.

- ա) բոլոր պետությունների իրավահավասարությունը,
- բ) յուրաքանչյուր պետության ինքնիշխանության անձեռնմխելի իրավունքը,
- գ) յուրաքանչյուր պետության իրավունքը ազատորեն ընտրելու և զարգացնելու իր քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգը⁴:

Առանձնացվում է պետության ներքին և արտաքին ինքնիշխանություն: Պետության ներքին ինքնիշխանությունը բնութագրվում է որպես ազգային սահմաններում պետության գործառնություն իրականացնելու և ներքին գործերն ազատորեն կարգավորելու իրավասությունը: Արտաքին ինքնիշխանությունը ընկալվում է որպես իրավական անկախություն բոլոր

¹ Տե՛ս **Խաչատրյան Ա.Հ., Խաչատրյան Ա.Ա.** Պետության ինքնիշխանության ձևերը Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգավորումների արդիականացման շրջանակում, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական հոդվածների ժողովածու, 2017, էջ 90-97:

² Տե՛ս “What is sovereignty?” by Alan de Benoist, Telos Summer 1999 vol. 1999 no. 116 99-118:

³ Տե՛ս **Jackson R.** Sovereignty in World Politics: A Glance at the Conceptual and Historical Landscape. Political Studies. 1999;47(3):431-456:

⁴ Տե՛ս ՄԱԿ-ի 1970թ. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը, 1970թ.:

արտաքին տերություններից՝ այդպիսով պաշտպանելով պետության տարածքը արտաքին միջամտություններից:

Պետության ինքնիշխանությանն առնչվող հարցերը դեռևս վաղ ժամանակներից եղել են քաղաքագետների և փիլիսոփաների ուշադրության կենտրոնում: Տասնվեցերորդ դարից սկսած վերջիններս սկսում են առաջ քաշել պետությունների ինքնիշխանության տարբեր հայեցակարգեր և սկզբունքներ:

Ինքնիշխանությունը՝ որպես անկախության և գերագույն իշխանության ավանդական ընկալում, վերագրվում է ֆրանսիացի հայտնի փիլիսոփա Ժան Բոդենին (1530-1596): Վերջինս իր «Վեց գիրք պետության մասին» աշխատության մեջ ինքնիշխանությունը սահմանում է որպես պետական իշխանության քաղաքական գերակայություն տվյալ պետության տարածքի սահմաններում: Բոդենն ինքնիշխանությունը համարում էր յուրաքանչյուր պետության գերագույն և բացարձակ ուժը: Ըստ Բոդենի ինքնիշխանությունն իրենից ենթադրում է պետության տարածքային սահմաններում օրենքի կայացման բացարձակ իրավասություն: Նա անդում էր, որ ինքնիշխանությունը՝ որպես պետության ներսում գործող գերագույն ուժ, չի կարող սահմանափակվել՝ բացառությամբ Աստծո օրենքների¹:

Անգլիացի փիլիսոփա Թոմաս Հոբսը (1588-1679) առանձնացրեց պետական ինքնիշխանության գաղափարը կրոնականից: Ըստ Հոբսի՝ իշխանությունը պետք է կենտրոնացված լինի միապետի ձեռքում: Վերջինս համարում էր, որ պետության ինքնիշխանությունը պետք է լինի բացարձակ և ասոցացվի ղեկավարի ինքնիշխանության հետ:

XVIII դարում սկսվում է ձևավորվել ինքնիշխանության սահմանադրական դոկտրինան: Անգլիացի փիլիսոփա Ջոն Լոքն (1632-1704) առաջինն էր, ով համարվեց սահմանադրական դոկտրինայի հիմնադիրը: Վերջինս նախապատվությունը տվեց օրենքի գերակայությանը, որին պետք է ենթարկվեին բոլորը՝ այդ թվում միապետը: Լոքը նշում էր, որ իշխանությունը պատկանում է մեծամասնությանը, այսինքն՝ ժողովրդին, և այն չի կարող լինել բացարձակ²:

Չարզացնելով Ջոն Լոքի տեսությունը՝ հայտնի ֆրանսիացի փիլիսոփա Ժան Ժակ Ռուսսոն (1712-1778) իր «Հասարակական դաշինքի մասին» աշխատությունում առաջ քաշեց ժողովրդական ինքնիշխանության

¹ Տե՛ս **Ferreira-Snyman M.P.** A Journal of Legal History – The Evolution of state sovereignty: a historical overview, Volume 12 Number 2, Jan 2006, p. 1-28:

² Տե՛ս **Монсеев А. А.** «Суверенитет государства в международном праве», Дипломатическая академия МИД России, 2009:

տեսությունը: Ռուստոն համոզված էր, որ ինքնիշխանությունը ժողովրդի անբաժանելի, անկախ և անքակտելի մասնիկն է, որի միակ կրողը հենց ինքը ժողովուրդն է¹:

Ռուստոյի տեսակետին հակադրվեց Իմանուիլ Կանտը, ով պնդում էր, որ ինքնիշխանության կրող միակ սուբյեկտ կարող է համարվել պետությունը:

Ըստ բազմաթիվ իրավաբանների և միջազգայնագետների՝ դասական միջազգային իրավունքի հիմքը հանդիսանում է 1648թ. Վեստֆալյան հաշտության պայմանագիրը: Հենց Վեստֆալյան համակարգի շրջանակներում առաջին անգամ պրակտիկորեն առաջ քաշվեց պետական ինքնիշխանության հասկացությունը և էականորեն իր ազդեցությունն ունեցավ վերջինիս ընկալման վրա: Համաշխարհային նոր հասարակությունը, որն ստեղծվեց Վեստֆալիայի խաղաղությունից հետո, հիմնված էր նրա կազմի մեջ մտնող անդամների բացարձակ ինքնիշխանության վրա:

XX դարից սկսած, մի շարք արտաքին հանգամանքներ, ինչպիսիք են՝ գլոբալիզացման գործընթացները, միջազգային կազմակերպությունների ստեղծումը և այլն, ինչպես նաև որոշ ներքին գործոններ, ինչպես օրինակ՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտի զարգացումը, դաշնային պետությունների ավելացումը, ինքնիշխանությանն առնչվող սահմանափակման և մերժման խնդիրները մղում են դեպի գիտական հետազոտության նոր մակարդակ: Այսպիսով, ժամանակակից իրավագիտության մեջ նույնպես, ինքնիշխանության վերաբերյալ կա տարակարծիք մոտեցում:

Այսպես, առանձին հեղինակներ պնդում են, որ ինքնիշխանությունը պետական իշխանության այնպիսի հատկանիշ է, որով պետությունն ապահովում է իր ներքին և արտաքին քաղաքականությունն ազատ և ինքնուրույն իրականացնելու հնարավորություն²:

Միևնույն ժամանակ, գերմանացի պրոֆեսոր Ռայներ Առնոլդն այն կարծիքին էր, որ ինքնիշխանությունը դասական իմաստով վաղուց անհետացել է և եվրոպական ինտեգրման գործընթացների պրակտիկան ի հայտ է բերել նոր ձևի՝ «համատեղ ինքնիշխանության» շրջամանը և կիրառմանը³:

¹ Տե՛ս **Jean Jacques Rousseau**, “The Social Contract or Principles of Political Right”, 1762, Translated by G.D.H. Cole, public domain:

² Տե՛ս **Խաչատրյան Ա.Ա.** Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրները, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն, 2016թ., էջ 18:

³ Տե՛ս **Arnold R.** Seminar on “The Implications of the New Century and Striving to Join European Structures for Constitutional Courts”(17-18 November, Tartu, Estonia) organized within the framework of the Joint Programme between the European Commission and the Venice Commission of the Council of Europe:

Այնուամենայնիվ, որոշ գիտական աղբյուրներ կասկածի տակ են դնում այն փաստը, որ ինքնիշխանությունը յուրաքանչյուր պետության պարտադիր հատկանիշն է: Այսպիսով, օրինակ, Լ.Վ. Ֆրունզան կատարում է հետևյալ հարցադրումը. «Քանի որ ինքնիշխանության վերջնական հայեցակարգը սահմանելու բոլոր փորձերն անարդյունք են, գուցե արժե՞ վերանայել ինքնիշխանության հայեցակարգի նկատմամբ վերաբերմունքը. Պարզել՝ արդյո՞ք դա իսկապես պետությանն անհրաժեշտ հատկություն է»:

Ֆրանսիացի մտածող Ժակ Մարիտենն իր հերթին համոզված էր, որ հարկավոր է հրաժարվել ինքնիշխանության հայեցակարգից, և ոչ միայն այն պատճառով, որ վերջինս տեսականորեն մի շարք դժվարություններ է ստեղծում միջազգային իրավունքի համար, այլև այդ հայեցակարգը շարունակվում է օգտագործվել չափազանց լայնորեն, որն էլ իր հերթին հանգեցնում է վերջինիս կիրառմանը տարբեր կեղծ ենթատեքստերում¹:

Մի շարք հեղինակներ մատնանշում են, որ պետության ինքնիշխանության սահմանափակումը պայմանավորված է նաև գլոբալիզացիոն գործընթացներով: Ըստ Ս.Վ. Չերնիշենկոյի բացարձակ իշխանություն գոյություն չունի, քանի որ բոլոր պետությունները փոխկապված են, իսկ ժամանակակից աշխարհում այդ փոխկապվածությունը կրում է շարունակական կատարելագործման բնույթ²:

Չնայած ինքնիշխանության մասին նշված բոլոր կարծիքներն էլ իրավունք ունեն քննարկվելու և հաշվի առնվելու, այնուամենայնիվ, դրանք ինքնիշխանության բնույթը ամբողջությամբ վեր չեն հանում: Պետության այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են տարածքը, բնակչությունը, հանրային ուժը, ունեն նյութական բնույթ, կարող են ենթարկվել որակական և քանակական վերլուծության, մինչդեռ ինքնիշխանությունը գտնվում է էմպիրիկ մտածողությունից դուրս: Այսինքն՝ երբ մենք խոսում ենք պետության տարածքային ամբողջականությունից, ապա պատկերացում ենք պետության սահմանները, կարող ենք չափել տարածքի մեծությունը, բնակչությունը, պատկերացում ենք, թե որքան մարդ է ապրում տվյալ տարածքում, իսկ հանրային իրավունքը հանդես է գալիս պետական մարմինների տեսքով: Ինքնիշխանությունն իր հերթին հնարավոր չէ ներկայացնել այդպես սխեմատիկ և հեշտացված, այն հնարավոր չէ չափել և որոշել դրա սահմանները:

¹ Տե՛ս **Бредихин А. Л.** Суверенитет как политико-правовой феномен: Монография. - М.: «ИНФРА-М», 2012:

² Տե՛ս **Международное право / Под ред. А. А. Ковалева, С. В. Черниченко.** - М., 2008. - Էջ 151:

Այնուամենայնիվ, ինքնիշխանությունը պետության անբաժանելի հատկանիշն է¹:

Ընդհանրացնելով՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) **ինքնիշխանությունն ընկալվում է որպես պետության հնարավորություն՝ ինքնուրույնաբար որոշելու իր ներքին և արտաքին քաղաքականությունը՝ առանց արտաքին միջամտության,**

2) **ինքնիշխանությունը կարելի է դիտարկել որպես ձգտում պետության լիարժեք անկախության, ինքնուրույնության և գերակայության հասնելու համար,**

3) **որպես իրավական ինստիտուտ ինքնիշխանությունն արտահայտվում է իրավունքների, երաշխիքների և հնարավորությունների ամբողջականությամբ և վերջիններիս շնորհիվ պետությանն օժտում է ինչպես գերակայությամբ, այնպես էլ անկախությամբ:**

¹ Ст'ю Бредихин А. Л. Суверенитет как политико-правовой феномен: Монография. - М.: "ИНФРА-М", 2012. - էջ. 15:

ГОСУДАРСТВЕННЫЙ СУВЕРЕНИТЕТ КАК ГЛАВНАЯ ХАРАКТЕРИСТИКА ГОСУДАРСТВА. СУТЬ И ЗНАЧЕНИЕ

Аннотация

Статья затрагивает сущность государственного суверенитета, подчеркивая его важность как основной характеристики государства. В статье автор исследует определения государственного суверенитета, данные разными философами и юристами. В контексте статьи он приходит к выводу, что в разные времена государственному суверенитету давалось множество определений, однако на сегодняшний день в современной юриспруденции нет единого общего определения, полностью отражающего сущность суверенитета. Тем не менее, анализируя различные взгляды на государственный суверенитет, можно четко констатировать, что он считается неотъемлемым признаком каждого государства.

Ключевые слова: государственный суверенитет, государственность, Хартия Организации Объединенных Наций, международное право, Вестфальский договор.

STATE SOVEREIGNTY AS THE MAIN CHARACTERISTIC OF THE STATE: ESSENCE AND SIGNIFICANCE

Annotation

The following article touches upon the essence of a state sovereignty, emphasizing its importance as the main characteristic of the state. In the article, the author tries to examine definitions of a state sovereignty given by different philosophers and lawyers. In the context of the following article, the author comes to the conclusion that numerous definitions have been given to state sovereignty over time, however to date there is no single common definition in modern jurisprudence that fully addresses the essence of the sovereignty. Nonetheless, examining various views on state sovereignty it can be clearly stated that it is considered an inseparable feature of each state.

Keywords: State Sovereignty, Statehood, Charter of the United Nations, International Law, Treaty of Westphalia.



ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ՀՀ սահմանադրական դատարանի
դատավորի օգնական,
Եվրոպական համալսարանի
իրավագիտության ամբիոնի հայցորդ*

**ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Ամփոփողիր. Սույն հոդվածը նվիրված է իրավաբանական գիտության մեջ կանխավարկածների, և հատկապես իրավական կանխավարկածների էության և բովանդակության բացահայտմանը: Հոդվածի շրջանակներում փորձ է արվել վեր հանել կանխավարկածների վերաբերյալ գիտության մեջ առկա հասկացությունները, առանձնացնել դրանց տեսակները, առավել մանրամասն ուսումնասիրել իրավական կանխավարկածները՝ որպես կանխավարկածի տարատեսակ: Փորձ է արվել նաև բացահայտել իրավական կանխավարկածների տեղը և դերը իրավական համակարգում:

Հիմնաբառեր. կանխավարկած, իրավական կանխավարկած, ապացուցողական կանխավարկած, իրավական կանխավարկածի հասկացություն, կանխավարկածների տեսակներ:

«Իրավական կանխավարկած» հասկացության էության և բովանդակության բացահայտումը ունի թե՛ տեսական, և թե՛ գործնական կարևոր նշանակություն: Դա պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ ներկայումս իրավունքի բոլոր ճյուղերում նկատվում է իրավական կանխավարկածների քանակի ավելացման միտում: Բացի այդ, չնայած վաղ ծագմանը՝ («կանխավարկած» կատեգորիայի ծագումը կապում են հռոմեական իրավունքի հետ) մինչ այժմ չկա «կանխավարկած» հասկացության, դրա իրավական հատկությունների և կանխավարկածների համակարգի բովանդակության մասին միասնական պատկերացում:

Կանխավարկած եզրույթն ունի հունական ծագում (առաջացել է հունարեն **praesumptio** բառից), որը թարգմանաբար նշանակում է ենթադրություն, ակնկալիք:

«Praesumptio» տերմինը հիշատակվում է Հուստինիանոսի «Դիգեստներում» (մոտ 30 համատեքստում): Այս իրավական աղբյուրի XXII գրքի III

վերնագիրն ուղղակիորեն նվիրված է ապացույցների և կանխավարկածների ուսումնասիրությանը de probationibus et presumptionibus (ապացույցների և ենթադրությունների վերաբերյալ)¹:

Ժամանակակից իրավաբանները կանխավարկածներ համարում են միայն օրենքով նախատեսված պարտադիր այն ենթադրությունները, որոնք թույլատրում են հակառակի ապացուցումը, կամ պարտադիր են դատավորի համար միայն այն դեպքում, եթե այդպիսի ապացույցը չի հետևում (այսինքն՝ իրավական ենթադրությունները՝ praesumptiones juris tantum) որոնք, ըստ Է.Բ. Տեմնովի, հերքելի տիպի կանխավարկածներ են, այլ կերպ ասած՝ «առաջին տպավորությունից բխող» ենթադրություն²:

Կանխավարկածները հաստատում են որոշակի փաստերի կամ իրադարձությունների առկայությունը դրանց գոյության ամբողջական ապացույցի բացակայության պայմաններում:

Ավելի պարզ բնորոշման դեպքում, կանխավարկածը կարող է սահմանվել որպես «ենթադրություն, որը հիմնված է հավանականության վրա, ակնկալիք³»: Մասնագիտական գրականության մեջ կանխավարկածի վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ: Այսպես, պրոֆեսոր Ա.Ռ. Բելկինի կարծիքով կանխավարկածը փաստերի, երևույթների, իրադարձությունների միջև կայուն ու բազմիցս կրկնվող կապն արտահայտող ընդհանուր կանոն է⁴:

Այնուհետև, անհրաժեշտ է կարևորել պրոֆեսոր Վ.Կ. Բաբաևի բնութագրումը, ըստ որի՝ կանխավարկածը բնորոշվում է որպես իրավաբանական փաստերի, երևույթների առկայության կամ բացակայության մասին ենթադրություն, որը հիմնված է այդ փաստերի և առկա փաստերի և նախորդող փորձով հաստատված կապի վրա⁵: Կ.Բ. Կալինովսկին և Ա.Վ. Սմիրնովը կարծում են, որ «ցանկացած ենթադրություն իրավական նորմ է,

¹ Տե՛ս Կոֆանո Ջ. Լ. Дигесты Юстиниана. - М., 2002–2006. Т. I–VIII. Цит. по: Придворов Н.А.; Трофимов В. В. Презумпции в римском и современном праве: историко-теоретический аспект // Юридическая техника. Ежегодник. Первые Бабаевские чтения: «Правовые презумпции: теория, практика, техника» / гл. ред. В. М. Баранов. - Н. Новгород, 2010. № 4. - էջ 465:

² Տե՛ս Թեմով Է. Ի. Латинские юридические изречения. - М.: «Юрист», 1996. - էջ 316; տես նաև՝ Թաганцев Н. С. Русское уголовное право. Лекции. Часть общая: В 2 т. Т. 1. - М.: «Наука», 1994. - էջ 239:

³ Տե՛ս Կучинский В. А. Юридические презумпции и фикции (общие черты и различия) // Юридическая техника. Ежегодник. Первые Бабаевские чтения: «Правовые презумпции: теория, практика, техника» / гл. ред. В. М. Баранов. - Н. Новгород, 2010. № 4. - էջ 302.

⁴ Տե՛ս Բելկին Ա. Ք. Теория доказывания. - Москва, 1999. - էջ 294:

⁵ Տե՛ս Բաբաև Վ. Կ. Презумпции в российском праве и юридической практике: Обзор материалов научно-методического семинара // Государство и право. 2000. №12. - էջ 85:

որի ուժով մեկ իրավական փաստի առկայության դեպքում գոյություն ունի մեկ այլ իրավական փաստ, քանի դեռ հակառակն ապացուցված չէ»¹:

Վերոգրյալ տեսակետների համակարգային վերլուծությունից անհրաժեշտ է ընդհանրացնել հետևյալը, որ՝ **կանխավարկածը բնորոշվում է որպես ցանկացած փաստի, իրադարձության, հանգամանքի առկայություն, քանի դեռ չի բացահայտվել կամ հայտնաբերվել դրա հակառակի առկայությունը:**

Կանխավարկածի կիրառումը կայանում է նրանում, որ մեկ փաստի առկայության դեպքում արվում է հետևություն մեկ այլ փաստի գոյության մասին, այսինքն՝ վերջինս բխեցվում է կանխավարկածից²:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումը, որ կանխավարկածը տրամաբանական շղթա է, որը կարելի է ներկայացնել «եթե, ապա» շաղկապներով, այսինքն՝ եթե հաստատվել է Ա-ն, ապա ենթադրվում է Բ-ի գոյությունը, եթե այլ բան ապացուցված չէ:

Անդրադառնալով կանխավարկածների տեսակներին՝ հարկ է նկատել, որ իր բովանդակության բնույթով կարելի է առանձնացնել, այսպես կոչված, փաստական (praesumptiones fantasea hominus) և իրավաբանական կամ իրավական (praesumptiones juris) կանխավարկածները: Ընդ որում, իրավական կանխավարկածի էությունը բացահայտելու առավել հեշտ տարբերակը փաստական կանխավարկածի հետ համեմատությունն է: Իրավականն իր հերթին օրենքով նախատեսվում է ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն, փաստական կանխավարկածը նշվում է որպես օրենքով չնախատեսված, այն ներկայացնում է դատական և քննչական պրակտիկայից ընդհանրացում:

Յու. Ա. Սերիկովը գտնում է, որ, տերմինների սահմանման տեսանկյունից ավելի ճիշտ կլինի փաստական կանխավարկածն անվանել ընդհանուր ենթադրություն իրավունքի ոլորտում: Առանց խիստ իմաստով նորմատիվ ամրագրման այն չի կարելի անվանել կանխավարկած: Սակայն, քանի որ «փաստական կանխավարկած» տերմինը գիտության մեջ հնուց եկած ավանդույթ է, նա հնարավոր է համարում այն օգտագործել՝ միաժամանակ նշելով, որ «փաստական կանխավարկած» և «ընդհանուր ենթադրություն»

¹ St' u Калиновский К. Б., Смирнов А. В. Презумпции в уголовном процессе // Российское правосудие. 2008. № 4. - էջ 68-74:

² St' u Жогин Н. В. Теория доказательств в советском уголовном процессе. - М., 1973. - էջ 343:

տերմինները իրավունքի ոլորտում համարժեք են և չեն ընգրկվում իրավական կանխավարկածի հայեցակարգում¹:

Կարծում ենք, որ փաստական կանխավարկածներն ունեն ավելի նվազ կարևորություն, քանի որ դրանք ամրագրված չեն իրավական նորմերում և հետևաբար չունեն նաև որևէ իրավական նշանակություն:

Փաստական կանխավարկածի արժանահավատությունը ակնկալվում է ողջախոհությամբ և գործնական փորձով: Նման ենթադրությունը իրավական նշանակություն չունի և օգտագործվում է որպես իրավական նորմի համախմբման, ինչպես նաև իրավական ակտի տրամաբանական հիմնավորման դրդապատճառ կամ հիմք²:

Ըստ էության անհրաժեշտ է նշել, որ ցանկացած կանխավարկած իրավունքի սուբյեկտների առջև դնում է ենթադրյալ փաստը ճանաչելու պարտականություն, սակայն իրավական կանխավարկածի դեպքում ենթադրյալ փաստի ճանաչումն ապահովվում է պարտադիր բնույթ ունեցող իրավական ակտերում ամրագրվածությամբ, իսկ փաստականի դեպքում այն պայմանավորված է իրավասու սուբյեկտի ողջախոհությամբ և մասնագիտական փորձով: Փաստական կանխավարկածը պարտադիր է իրավապահ մարմնի համար, քանի որ վերջինս իր պարտավորությունը ճանաչում է «խղճի համոզմամբ»³:

Երբեմն, որպես փաստական կանխավարկածներ իրավաբանական գրականության մեջ նշվում են հետևյալները. մարդիկ կարողանում են տեսնել, լսել, խոսել (ունակության կանխավարկած), ջուրը հոսում է ներքև, երբ անձրև է գալիս, ճանապարհը թաց է և այլն⁴: Ընդ որում, «երբ անձրև է գալիս, ճանապարհը թաց է» բանաձևը ոչ թե ենթադրություն է, այլ հայտնի փաստ: Կանխավարկած կլինի այս հարաբերությունների վրա հիմնված ենթադրությունը՝ «երբ անձրև է գալիս, ճանապարհը ենթադրվում է թաց, եթե այլ բան չի հաստատվում»: Փաստական կանխավարկածի ևս մեկ օրինակ. «ոստիկանության համազգեստ կրող և ոստիկանության վկայական ներկայացնող անձը ճանաչվում է որպես ոստիկան, քանի դեռ այլ բան չի հաստատվել»:

¹ St' u Сериков Ю. А. Презумпции в гражданском судопроизводстве. - М.: «Волтерс Клувер», 2008. - էջ 15:

² St' u Давыдова М. Л. Правовые презумпции в системе средств юридической техники // Юридическая техника. 2010. № 4. - էջ 160:

³ St' u Энциклопедический словарь. / Под ред. Ю. С. Гомбарова, В.Я. Железнова, М. М. Ковалевского. - էջ 33:

⁴ St' u Пеков А. А. Доказательства и доказывание по делам об административных правонарушениях. Дис. ... канд. юрид. Наук. - Волгоград, 2000. - էջ 185:

Փաստական կանխավարկածի ծագումը կապված է նյութական աշխարհի առարկաների և երևույթների միջև հարաբերությունների «սովորական» կարգի հետ: Ի տարբերություն իրավական կանխավարկածի, որի ստեղծումը և բովանդակությունը մեծապես կախված են օրենսդրի կամքից, փաստական կանխավարկածը գոյություն ունի միայն այն դեպքում, երբ այն եզրակացություն է ինդուկտիվ ընդհանրացումից: Այդ իսկ պատճառով փաստական կանխավարկածները, ի տարբերություն իրավականի, իրավական հատուկ ամրագրման կարիք չունեն, քանի որ դրանք գործնական գործունեության արդյունք են, նորմալ մարդու կենսափորձ:

Հետևաբար իրավական կանխավարկածների առանձնահատկությունն այն է, որ դրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլվում են նորմատիվ ակտերում, պայմանավորված են սոցիալական հարաբերությունների իրավական միջնորդության կարիքներով և գործում են միայն իրավական ոլորտում:

Հեղինակների մի մասն իրավական կանխավարկածը բնորոշում է որպես «իրավական նորմում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամրագրված որոշակի ենթադրություն, ըստ որի սոցիալական հարաբերությունների ոլորտում իրերի որոշակի կարգը ճանաչվում է որպես սովորական և կարիք չկա ապացուցելու»¹:

Ըստ էության իրավական կանխավարկածը կարելի է բնորոշել հետևյալ կերպ. Իրավական կանխավարկածը օրենսդրական մակարդակում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամրագրված ենթադրություն է իրավական փաստերի առկայության կամ բացակայության մասին, որոնք պարտադիր են դատարանների համար, քանի դեռ չի հերքվել դրանց ճշմարտացիությունը:

Տեսության մեջ առկա է իրավական կանխավարկածի սահմանման երկու մոտեցում. **Առաջինը** ձևավորվել է պատմականորեն և ինքնաբուխ: Դրա կողմնակիցները սովորաբար կոնկրետ չեն դիտարկում այս հարցը, բայց ունեն բավական հստակ դիրքորոշում՝ կանխավարկածն անվանելով «իրավական ենթադրություն»², «իրավական տերմին»³ և այլն: Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ կանխավարկածը իրավական կատե-

¹ Տե՛ս **Арзамасов Ю. Г.** О понятии презумпций и их месте в системе средств юридической техники // Юридическая техника. 2010. - էջ 72:

² Տե՛ս **Боннер А.** Установление обстоятельств гражданского дела на основе юридических предположений. – Москва. - էջ 5:

³ Տե՛ս **Черниловский З. М.** Презумпции и фикции в истории права // Сов. гос-во и право. 1984. № 1. - էջ 98:

գորիա է, իսկ իրավական կանխավարկածը տարբերվում է նրանով, որ իր ամրագրումն է ստացել իրավական նորմերում:

Երկրորդ՝ համեմատաբար նոր և առավել պաշտոնապես սահմանված մոտեցումը կապված է ենթադրությունների շրջանակի լայն սահմանման հետ: Դրա ներկայացուցիչները (Վ.Կ. Բաբաև, Վ.Ի.Կամինսկայա և ուրիշներ) կանխավարկածը համարում են համընդհանուր կատեգորիա, որն օգտագործվում է մարդկային գործունեության տարբեր ոլորտներում: Այս մոտեցմամբ իրավական կանխավարկածը կանխավարկածի մասնավոր տեսակ է, որը բնութագրվում է իրավունքի ոլորտում իր գործողությամբ, իրավական կարգավորման խնդիրների կանխորոշմամբ, իրավունքի նորմերում ուղղակի կամ անուղղակի ամրագրմամբ¹:

Լիովին կիսելով երկրորդ տեսակետը՝ կարծում ենք, որ կանխավարկածը համընդհանուր կատեգորիա է, որը կիրառվում է տարբեր ոլորտներում և որի կիրառումը կապված չէ իրավագիտության հետ, իսկ իրավական կանխավարկածը դրա առանձին տեսակ է, որն օգտագործվում է իրավագիտության մեջ: Ներկայացնենք մարդու առօրյա կյանքից կանխավարկած, որն իրավական բնույթ չունի և առաջանում է մարդկային գործունեության արդյունքում: Ենթադրենք Ա անձը ճանապարհից շեղվել է և, տեսնելով Բ անձին, հարցնում է՝ ինչպես գնալ կոնկրետ ինչ-որ տեղ: Բ անձը բացատրում է ցանկալի վայրին հասնելու ճանապարհը: Այստեղ գործում է այն կանխավարկածը, որ Բ-ն ճիշտ ճանապարհով է ուղղորդել Ա-ին, քանի դեռ հակառակն ապացուցված չէ: Ուստիև, կիսում ենք այն կարծիքը, որ կանխավարկածները իրավական կատեգորիա չեն, և կարող են առաջանալ մարդկային հարաբերությունների ցանկացած ոլորտում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակում ձևավորվել է կայուն մոտեցում, ըստ որի՝ բոլոր իրավական համակարգերում կանխավարկածների ճանաչումն անխուսափելի է: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան թեև սկզբունքորեն չի բացառում դրանք, սակայն պետություններին պարտավորեցնում է չզերազանցել այդ կապակցությամբ որոշակի բանական շեմը: Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի, Ֆամ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի և Իքսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոնվեն-

¹ Տե՛ս Բաբաև В. К. Презумпции в советском праве. - Горький, 1974. - էջ 13:

ցիայի խախտում չի արձանագրել օրենքի կամ փաստի վրա հիմնված կանխավարկածով փաստերի հաստատման դեպքերում¹:

Այնուհետև, անդրադառնալով իրավական կանխավարկածների տեսակների բնութագրմանը՝ անհրաժեշտ է նշել, որ դրանք բաժանվում են երկու հիմնական տեսակի.

ա) հերքելի կանխավարկածներ (*presumptiones juris tantum*), որոնք թույլատրում են հակառակի ապացուցումը,

բ) անհերքելի կանխավարկածներ (*presumptiones juris et de jure*), որոնք չեն թույլատրում հակառակի ապացուցումը, և հենց այս տեսքով, իրենց գործողությամբ նրանք հավասարեցվում են սովորական իրավաբանական ֆիկցիաների հետ, իսկ ըստ էության՝ իրավունքի պարզ իմպերատիվ նորմեր են: Օրինակ՝ անձին անհայտ կորած կամ մահացած ճանաչելը:

Անհերքելի կանխավարկածների մասին խոսելիս հարկ է նշել, որ դրանց պարագայում իսպառ բացառվում է ապացուցման գործընթացը:

Ընդ որում, կարծում ենք, որ այդ կանխավարկածները անհերքելի են դե-յուրե, սակայն դե-ֆակտո դրանք կարող են հերքվել: Անհերքելի են համարվում այն պատճառով, որ օրենքը դրանք հերքելու հնարավորություն չի նախատեսում, հետևաբար՝ գործնականում օբյեկտիվորեն դրանց հերքումը որևէ իրավական հետևանք չի կարող ունենալ: Այսպես, օրինակ՝ անհերքելի կանխավարկածների շարքին կարելի է դասել օրենքի իմացության կանխավարկածը, դե-ֆակտո այն կարող է հերքվել, սակայն այդ հերքումը որևէ իրավական հետևանք չի կարող ունենալ:

Վերը նշվածի հաշվառմամբ, անհրաժեշտ է ընդգծել, որ կանխավարկածի տեսակները հիմք են դրել իրավական կանխավարկածի մի ամբողջ համակարգի, որոնց մեջ կարելի է առանձնացնել հինգ հիմնական տեսակ:

Առաջինը **համոզիչ կանխավարկածն է**, այսինքն՝ Ա փաստն ապացուցելու համար դատարանը ենթադրում է, որ Բ փաստը գոյություն ունի: Սա հերքելի կանխավարկածների տեսակներից մեկն է: Նման կանխավարկածը հերքող կողմը կրում է հակառակն ապացուցելու իրավական բեռը:

Երկրորդ տեսակն **ապացուցողական կանխավարկածներն** են: Տվյալ դեպքում դատարանը եզրակացնում է, որ Բ փաստը գոյություն ունի, քանի որ ապացուցված է Ա փաստը: Սա նույնպես հերքելի կանխավարկած է: Այն հերքելու համար բավական է ապացուցել, որ Բ փաստը կարելի է համարել

¹ Տե՛ս **Քաղաքայան Գ.** Ամենդրության կանխավարկածը որպես ապացույցների բավարարության չափանիշ, ԵՊՀ իրավաբանների միություն, Պետություն և իրավունք, գլխավոր խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան, էջ 8-9:

ինչպես առկա, այնպես էլ գոյություն չունեցող: Այս ենթադրությունը կողմի վրա դնում է ապացուցողական բեռ այն հերքելու համար: Հենց այս տեսակի կանխավարկածների մեջ էլ ներառվում է անմեղության կանխավարկածը, քանի որ այն, արտահայտելով անձի անմեղության ենթադրությունը, նախաքննության մարմիններին պարտադրում է հակառակն ապացուցել, այն է՝ հերքել այդ ենթադրությունը՝ տրամադրելով անձի մեղավորության սպառնիչ ապացույցներ:

Ժամանակակից իրավագիտության մեջ բացակայում է ապացուցողական կանխավարկածների տեղի և նշանակության միատեսակ և բավականաչափ հետևողական սահմանում: Մասնավորապես, պրոֆեսոր Մ.Կ. Տրեուշնիկովը կարծում է, որ ապացուցողական կանխավարկածը փաստի առկայության կամ դրա բացակայության ենթադրություն է, քանի դեռ հակառակն ապացուցված չէ¹: Պրոֆեսոր Ա.Կ. Սերգունը գտնում է, որ ապացուցողական կանխավարկածը օրենքով սահմանված ենթադրություն է, որ որոշակի փաստ գոյություն ունի, եթե ապացուցված են որոշ այլ առնչվող փաստեր²:

Իսկ պրոֆեսոր Ա.Ղամբարյանի կարծիքով իրավական կանխավարկածներն ինքնին ենթակա չեն ապացուցման, սակայն նրանց որոշ մասը կազմում է ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանք, կամ էլ դրա միջոցով կարելի է հիմնավորել ապացուցման առարկայի մեջ մտնող այլ հանգամանքներ³:

Մեկ այլ իրավագետ Յու.Կ. Օսիպովը պնդում է, որ. «ցանկացած կանխավարկած եզրակացություն է, որն արվում է ուրիշների հավանական գոյության մասին որոշ հայտնի փաստերի հիման վրա⁴»:

Միաժամանակ, հարկ է նշել, որ վերոգրյալ սահմանումները ամբողջությամբ և ճշգրիտ չեն բնութագրում այնպիսի բարդ երևույթը, ինչպիսին ապացուցողական կանխավարկածներն են:

Երրորդ տեսակն՝ *անհերքելի* իրավական կանխավարկածներն են, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլվում են նորմատիվ իրավական ակտերում (օրինակ՝ օրենքներում, ստատուտներում, որտեղ նշվում է դրանց իմպերատիվ բնույթը):

¹ Տե՛ս Մ. Կ. Թրեուշնիկով / М. К. Треушников. Судебные доказательства: монография / М. К. Треушников. - М., 2004. - էջ 64:

² Տե՛ս Гражданский процесс / Под ред. М. С. Шакарян. - М., 1993. - էջ 187:

³ Ղամբարյան Ա. Իրավական կանխավարկածները ՀՀ քրեական դատավարությունում. - Եր., 2019. - էջ 3-4:

⁴ Տե՛ս Гражданский процесс / Отв. ред. проф. Ю. К. Осипов. - М., 1996. - էջ 173:

Չորրորդ տեսակը *թույլատրելի* իրավական կանխավարկածներն են: Ա փաստը ապացուցելը դատարանին թույլ է տալիս, որպեսզի Բ փաստը ևս համարվի ապացուցված: Այս, ինչպես նաև անհերքելի կանխավարկածները արտացոլված են նորմատիվ իրավական ակտերում:

Հինգերորդ տեսակը *փաստի* կանխավարկածն է, որը հիմնված է առօրյա փորձի վրա: Սա նշանակում է, որ նույն նախնական փաստերից դատարանները կանեն նույն եզրակացությունները¹: Այս տեսակի կանխավարկածի օրինակ է կյանքի տևողության կանխավարկածը, որը ենթադրում է, որ մարդիկ ողջամիտ ժամանակ են ապրում: Օրինակ, Chard V. Chard-ի գործով (1956 թ.), մի տղամարդ ամուսնացել է 1909 թվականին, և կնոջից վերջին տեղեկությունը ստացել է 1917 թվականին, իսկ ավելի ուշ՝ 1933 թվականին, նա նորից ամուսնացել է: Այս առումով հարց է ծագել երկրորդ ամուսնության օրինականության մասին: Դատարանը որոշեց, որ եթե 1917 թ. առաջին կինը 28 տարեկան էր, ապա 1933-ին նա պետք է լինի ընդամենը 44 տարեկան, իսկ առողջ ցանկացած մարդ, ինչպես պարզվեց այս կինը ևս, ապրում է մինչև 44 տարի²:

Վերլուծելով հետազոտության առարկա ոլորտը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև նորմերից բխեցվող կանխավարկածները՝ կարելի է դրանք դասակարգել նաև ըստ գործողության ոլորտի՝

1) ընդհանուր՝ օրենքի իմացության, հետադարձ ուժի բացակայության³, պետական մարմնի բարեխղճության⁴,

2) միջնյուղային՝ դատավորի անաչառության⁵, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավաչափության⁶, վարչական ակտի իրավաչափության⁷,

3) ճյուղային՝ փոխկապակցված կանխավարկած⁸, համատեղ սեփականության մասնակիցների բաժինների հավասարության⁹:

¹ St' u **Bojczuk W.** Evidence. Textbook. 5-th ed. L., 1993. էջ 81-82.:

² St' u **Cross R., Wilkins N.** Outline of the Law of Evidence. London, 1996, էջ 27:

³ St' u ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՍԳՌ-1000 որոշման 6-րդ կետ:

⁴ St' u Case of Rasul Jafarov v. Azerbaijan, զանգառ թիվ 69981/14, §153:

⁵ St' u ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի մարտի 13-ի թիվ ԵԱԳԳ/1137/02/08 գործով որոշում:

⁶ St' u ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի ապրիլի 30-ի թիվ ԵԿԳ/1791/02/11 գործով որոշում:

⁷ St' u ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ՍԳՌ-1007 որոշման 6-րդ կետ:

⁸ St' u ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՍԳՌ-917 որոշման 7-րդ կետ:

⁹ St' u ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի մայիսի 19-ի թիվ ՍԳՌ-1205 որոշման 5-րդ կետ:

Իրավական կանխավարկածների սոցիալական նշանակությունը հաշվի առնելով՝ կարելի է այդ կանխավարկածները դասակարգել դրական և բացասականի: Մասնավորապես՝ դրական կանխավարկածները ներառում են այնպիսի կանխավարկածներ, որոնք պարունակում են ենթադրություն տարբեր իրավական ակտերի և իրավունքի կոնկրետ սուբյեկտների պահանջների օրինականության վերաբերյալ: Անմեղության կանխավարկածը պատկանում է դրական իրավական կանխավարկածների շարքին:

Բացասական կանխավարկածները, ընդհակառակը, ենթադրում են այս կամ այն սուբյեկտի մեղքը՝ որպես կոնկրետ պարտավորություն կրողի: Օրինակ՝ որևէ համաձայնագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ենթադրվում է, որ նման իրավիճակ ստեղծողը գործել է մեղավորությամբ:

Բացի ողջ վերոգրյալ դասակարգումներից, իրավական գիտությանը հայտնի են կանխավարկածների մի շարք այլ դասակարգումներ ևս: Որպես օրինակ նշենք կանխավարկածների դասակարգումը նյութականի և դատավարականի: Նյութական կանխավարկած կարող է լինել, օրինակ, անձին մահացած ճանաչելը, իսկ դատավարական՝ անմեղության կանխավարկածը:

Այժմ անդրադառնանք մի քանի առավել հայտնի կանխավարկածների:

Իրավական կանխավարկածներից ամենատարածվածն **անմեղության կանխավարկածն է**: Այն միջազգայնորեն ճանաչված կանխավարկած է: Առաջին հերթին իր ամրագրումն է ստացել միջազգային-իրավական մի շարք ակտերում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում և մի շարք այլ միջազգային փաստաթղթերում:

Հայաստանի Հանրապետությունում անմեղության կանխավարկածն իր ամրագրումն է ստացել առաջին հերթին Սահմանադրությամբ, բացի այդ, այն իր ամրագրումն է ստացել նաև քրեադատավարական օրենսդրությամբ, որպես քրեադատավարական սկզբունք: Դրա էությունը կայանում է նրանում, որ անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ընդ որում այս կանխավարկածը պատկանում է հերքելի կանխավարկածների շարքին, որը հերքելու պարտականությունը դրված է մեղադրանքի կողմի վրա: Անձը պարտավոր չէ ապացուցել իր ան-

մեղությունը, քանի որ ըստ կանխավարկածի նա անմեղ է, քանի դեռ չի ապացուցվել հակառակը:

Հաջորդն *օրենքի իմացության կանխավարկածն է*, ըստ որի՝ այդ կանխավարկածի դեպքում ենթադրություն կա, որ յուրաքանչյուրը պետք է իմանա իր երկրի օրենսդրությունը, իսկ օրենքների չիմացությունը, եթե անձը ապօրինի գործողություն է կատարում, նրան չի ազատում անբարենպաստ հետևանքներին դիմանալու պարտականությունից:

Այնուհետև՝ *օրենքի արդարության կանխավարկածը*, ըստ որի՝ այդ կանխավարկածի դեպքում ենթադրվում է, որ օրենքը և այլ կարգավորող իրավական ակտերը, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերն արդար են:

Անհրաժեշտ է կարևորել նաև *բարեխղճության կանխավարկածը*, որով ենթադրվում է, որ յուրաքանչյուրը գործում է բարեխիղճ և օրենքին համապատասխան, լավ և օրինապաշտ քաղաքացի է:

Կարելի է նաև ներկայացնել այլ կանխավարկածներ, ինչպիսիք են՝ անձին անհայտ կորած ճանաչելը, անձին մահացած ճանաչելը, օրինական ամուսնության կանխավարկածը, կյանքի շարունակական բնույթի կանխավարկածը և այլն:

Արձանագրենք, որ թե՛ մասնագիտական գրականության մեջ, թե՛ առավել ևս օրենսդրական ակտերում առկա չէ իրավական կանխավարկածների սպառիչ ցանկ, ինչի կապակցությամբ արդարացի է մեջբերել պրոֆեսոր Չ.Մ. Չեռնիլովսկու այն իրավացի կարծիքը, որ գոյություն չունի երկու գիրք անգամ կանխավարկածների միևնույն ցուցակով¹:

Դրա հետ մեկտեղ բավական հետաքրքիր է ամերիկացի և անգլիացի գիտնականների փորձը, որոնք կանխավարկածի մեջ առանձնացնում են փաստի երկու բաղադրիչ՝ հիմնական և կանխավարկած: Ընդ որում, առաջինի դեպքում կանխավարկածը հաստատվում է դատավարության շրջանակներում, երկրորդի գոյությունը պայմանավորված է պատճառի սովորական կանոնների առկայությամբ: Այսինքն՝ դատարանը կարող է ենթադրել երկրորդ փաստի առկայությունը, եթե առաջինը պատշաճ կերպով հաստատված է:

Հետազոտության առարկա հարցերի շրջանակում անհրաժեշտ է նշել, որ ԱՄՆ-ում կանխավարկածների անունները կապված են այն գիտնականների անունների հետ, որոնք զբաղվում են ապացուցման իրավունքով:

¹ St' u Черниловский З. М. Презумпции и фикции в истории права // Советское государство и право. - М., 1984, № 1. - էջ 102:

Այսպես, ամերիկացի իրավագետ Թայերի դիրքորոշումը կանխավարկածների վերաբերյալ կոչվում էր «պայթող փուչիկի» տեսություն, ըստ որի կանխավարկածի «փուչիկը» պայթում է, իսկ կանխավարկածը «անհետանում է»: Սա այն դեպքն է, երբ հակառակ կողմը ներկայացնում է այնպիսի ապացույց, որը հակասում է կանխավարկածի գոյությանը և բավարար է հերքելու հիմնական փաստի ճշմարտացիությունը:

Համաձայն այս հայեցակարգի, կանխավարկածները միայն աջակցում են ապացույցների ներկայացման բեռի փոխանցմանը (փոխանցմանը)¹, որի վերաբերյալ տեսակետը ձևակերպել է անգլիացի գիտնական Մորգանը, ով ընդգծել է, որ կանխավարկածները հաճախ արտացոլում են հիմնական և ենթադրյալ փաստերի միջև հավանական կապի վերաբերյալ սովորական փորձը: Այս պատճառով էլ հենց նա կարծում էր, որ եթե կողմերից մեկը ներկայացրել է ապացույց, որը բավարար է հիմնական փաստի ճշմարտացիությունը հաստատելու համար, ապա արժանահավատության բեռը պետք է դրվի կանխավարկածի հակառակորդի վրա: Սակայն վերոնշյալ տեսակետը չի ստացել աջակցություն և չի ամրագրվել իրավական ակտերում²:

Այդուհանդերձ, անդրադառնալով այն հարցին, թե արդյոք իրավական կանխավարկածները ներառվում են ապացուցման առարկայի մեջ թե ոչ, պրոֆեսոր Յու. Սերիկովը գտնում է, որ ցանկացած կանխավարկած բաղկացած է երկու փաստերից՝ հիմք-փաստից և ենթադրվող փաստից: Ընդ որում, ըստ Յու. Սերիկովի՝ որպեսզի ենթադրվող փաստը հնարավոր լինի օգտագործել, նախ և առաջ պետք է ապացուցել հիմք-փաստի առկայությունը, օրինակ՝ հայրության կանխավարկածի գործողության համար նախ պետք է ապացուցել ամուսնության առկայությունը: Ուստի հիմք փաստերը մտնում են ապացուցման առարկայի մեջ, իսկ ենթադրվող փաստերը չեն կազմում ապացուցման առարկայի մաս³:

Հարկ է նշել, որ օրենքում կանխավարկածների կիրառումն անհրաժեշտ է, քանի որ իրավակիրառ գործունեության ընթացքում դրանք նպաստում են գործով ճշմարտության բացահայտմանը՝ իրավական պրակտիկայի սուբյեկտներին ազատելով նույն իրավակիրառ գործընթացները կրկնելու անհրաժեշտությունից:

¹ St' u Lempert R.O., Saltzburg S.A. A modem approach to evidence. Text, problems, transcripts and cases. 6 th. Ed. St.Paul, 1982. էջ 148:

² St' u Mueller C. B., Kirkpatrick L.C. Evidence. Boston; New^ York; Toronto; London.1995. էջ 43:

³ St' u Сериков Ю. А. Презумпции в гражданском судопроизводстве. - Волтерс Клувер, 2008. - էջ 85:

Ընդհանրացնելով անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) իրավական կանխավարկածը օրենսդրական մակարդակում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամրագրված ենթադրություն է իրավական փաստերի առկայության կամ բացակայության մասին, որոնք պարտադիր են դատարանների համար, քանի դեռ չի հերքվել դրանց ճշմարտացիությունը,

2) իրավական կանխավարկածն ընկալվում է որպես իրավական համակարգի որոշակի տարր, ինչը ենթադրում է, որ դրա իրավական ամրագրումն ունի պարտադիր բնույթ. ընդ որում՝ այդպիսի ամրագրումը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի,

3) իրավական կանխավարկածի էությունը բացահայտվում է դասակարգման միջոցով, մասնավորապես, դրանք բաժանվում են հերքելի կանխավարկածների, որոնք թույլատրում են հակառակի ապացուցումը, ինչպես նաև՝ անհերքելի կանխավարկածների, որոնք չեն թույլատրում հակառակի ապացուցումը, և հենց այս տեսքով, իրենց գործողությամբ նրանք հավասարեցվում են սովորական իրավաբանական ֆիկցիաների հետ,

4) անհերքելի կանխավարկածը փաստացի (դե-ֆակտո) կարող է հերքվել, սակայն դրանց հերքումը որևէ իրավական հետևանք չի առաջացնում,

5) իրավական կանխավարկածի համակարգը ներառում է հետևյալ կանխավարկածների ամբողջությունը՝ համոզիչ կանխավարկած, ապացուցողական կանխավարկած, անհերքելի իրավական կանխավարկած, թույլատրելի իրավական կանխավարկած և փաստի կանխավարկած:

ПОНЯТИЕ И ВИДЫ ПРАВОВЫХ ПРЕЗУМПЦИЙ

Аннотация

Данная статья посвящена раскрытию сути и содержания презумпций в юридической науке, в частности, правовых презумпций. В рамках статьи предпринята попытка выявить существующие в науке понятия презумпции, выделить их типы, более детально изучить правовые презумпции как разновидность презумпции. Также была предпринята попытка определить место и роль правовых презумпций в правовой системе.

Ключевые слова: презумпция, правовая презумпция, доказательственные презумпции, понятие правовых презумпций, типы презумпций.

THE CONCEPT AND TYPES OF LEGAL PRESUMPTIONS

Annotation

This article is devoted to the disclosure of the essence and content of presumptions, and particularly legal presumptions, in legal science. Within the framework of the article, an attempt is made to identify the concepts and meaning of presumption existing in science, to distinguish their types, to study in more detail the legal presumptions as a type of presumption. An attempt was also made to determine the place and role of legal presumptions in the legal system.

Keywords: presumption, legal presumption, evidentiary presumptions, the concept of legal presumption, types of presumptions.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ, «ՉԱՐԹՈՆՔ»
ԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ,
«ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԹԻՎ 184-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 հունիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդ-
կարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (բանավոր ընթացակարգի շրջանակներում)
դիմողների՝ «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչ Ա. Վարդևանյանի,
«Չարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության գործադիր
մարմնի ղեկավար Ա. Չոհրաբյանի և ներկայացուցիչ Գ. Մկրտչյանի,
«Հայոց Հայրենիք» կուսակցության նախագահ Ա. Եղոյանի, ներկայա-
ցուցիչներ Ս. Սարգսյանի, Ա. Գալստյանի,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱՎՈՐ ♦ 3(103)2021 83

«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչ Դ. Հարությունյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տ. Մուկույանի, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ա. Սմբատյանի, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Ն. Հովհաննիսյանի,

գործով որպես հարակից պատասխանողներ ներգրավված՝ ՀՀ դատախազության ներկայացուցիչներ՝ Երևան քաղաքի դատախազ Ս. Հովհաննիսյանի, Երևան քաղաքի դատախազի տեղակալ Վ. Մկրտչյանի, ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Կ. Բիշարյանի,

ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Ֆիդանյանի,

ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տ. Հակոբյանի և ներկայացուցիչ՝ ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի օգնական Հ. Սարկիսովի,

գործով որպես երրորդ անձ ներգրավված՝ «Զաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչներ Ռ. Բաղասյանի, Ս. Գրիգորյանի, Վ. Հովակիմյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստան» դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց Հայրենիք» կուսակցության, «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հայաստան» դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց Հայրենիք» կուսակցության, «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի 2021 թվականի հուլիսի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 4-ի ՍԴԱՌ-138, ՍԴԱՌ-139, ՍԴԱՌ-140, ՍԴԱՌ-141 աշխատակարգային որոշումներով վերոնշյալ դիմումների հիման վրա գործերն ընդունվել են քննության, և ՍԴԱՌ-142

աշխատակարգային որոշմամբ «Հայաստան» դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց Հայրենիք» կուսակցության և «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործերը միավորվել են մեկ վարույթում, և միավորված գործով զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Է. Շաթիրյանը:

Հիշյալ որոշմամբ միավորված գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավվել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իսկ որպես հարա-կից պատասխանողներ՝ ՀՀ դատախազությունը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:

Նույն որոշմամբ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից, ՀՀ դատախազությունից, ՀՀ ոստիկանությունից, ՀՀ դատական դեպարտամենտից, ՀՀ հատուկ քննչական ծառայությունից, ՀՀ քննչական կոմիտեից, ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովից պահանջվել են այդ մարմինների իրավասության առնչվող՝ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին վերաբերող փաստաթղթեր, տեղեկատվություն:

Ուսումնասիրելով դիմումները, դիմող և պատասխանող կողմերի ներկայացուցիչների, հարակից պատասխանողների ներկայացուցիչների, երրորդ անձի բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը և նյութերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց.**

1. Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվել են 2021 թվականի հունիսի 20-ին՝ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգրք, ընդունվել է 25.05.2016թ., ստորագրվել՝ 28.05.2016թ., ուժի մեջ է մտել 01.06.2016թ.) 16-րդ հոդվածին և 104-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով Հանրապետության տարածքում կազմավորվել է 2008 ընտրական տեղամաս, որից 12-ը՝ քրեակատարողական հիմնարկներում (հիմք՝ Ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ մաս, 17-րդ հոդվածի 4-րդ մաս և 18-րդ հոդվածի 1-ին մաս):

Ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածին և 44-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերին համապատասխան՝ գործել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, տարածքային ընտրական հանձնա-ժողովներ և տեղամասային ընտրական հանձնա-ժողովներ:

Հայաստանի Հանրապետությունում գործել է ընդհանուր թիվով 38 տարածքային ընտրական հանձնաժողով՝ 10-ը՝ Երևան քաղաքում և 28-ը՝ Հանրապետության մարզերում:

Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները կազմակերպել և դրա օրինականության նկատմամբ վերահսկողություն է իրականացրել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի հունիսի 27-ին, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, կազմել է արձանագրություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ: Համաձայն նշված արձանագրության՝

ընտրողների ընդհանուր թիվը կազմում է 2.595.512,

քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը՝ 1.281.997,

տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված ինքնասունձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը՝ 2.690.900,

տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը՝ 206.400,

ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կրտրոնների ընդհանուր թիվը՝ 1.278.655,

ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը՝ 2.742,

ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը՝ 1.281.397,

չօգտագործված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը՝ 203.665,

չօգտագործված ինքնասունձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը՝ 1.409.889,

անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 4.593,

անճշտությունների գումարային չափը՝ 973:

Քվեաթերթիկներում ընդգրկված 21 կուսակցություններին և չորս կուսակցությունների դաշինքներին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը, ըստ վերոհիշյալ արձանագրության, հետևյալն է.

«Արդար Հայաստան» կուսակցություն՝ 3.914,
«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն՝ 19.691,
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 688.761,
«Չարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն՝ 4.619,
«Ազատություն» կուսակցություն՝ 1.844,
«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինք՝ 66.650,
«Միասնական հայրենիք» կուսակցություն՝ 964,
«Համահայկական ազգային պետականություն» (ՀԱՊ) կուսակցություն՝

803,

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն՝ 15.591,
«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն՝ 12.149,
«Հանրապետություն» կուսակցություն՝ 38.758,
«Հայոց Հայրենիք» կուսակցություն՝ 13.130,
«Ազատ հայրենիք» դաշինք՝ 4.119,
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 50.444,
«Հայաստանի դեմոկրատական» կուսակցություն՝ 5.020,
«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն՝ 15.549,
«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն՝

3.775,

«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք»՝ 19.212,
«Ազգային օրակարգ» կուսակցություն՝ 719,
«Վերելք» կուսակցություն՝ 1.233,
«Ազատական» կուսակցություն՝ 14.936,
«Հայաստանի եվրոպական կուսակցություն»՝ 2.440,
«Հայաստան» դաշինք՝ 269.481,
«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն՝ 18.976,

«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն՝ 3.915:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի թիվ 184-Ա որոշմամբ մանդատների բաշխմանը մասնակցում են՝

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 688.761 (53.91%),
2. «Հայաստան» դաշինքը՝ կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 269.481 (21.09%),
3. «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքը՝ կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 66.650 (5.22%):

Մանդատները բաշխվել են հետևյալ կերպ՝

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն – 71 մանդատ,
2. «Հայաստան» դաշինք – 29 մանդատ,
3. «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինք – 7 մանդատ:

3. Դիմողների դիրքորոշումները

Սույն գործով դիմողների հիմնական փաստարկները հանգում են հետևյալին.

3.1. «Հայաստան» դաշինք

«Հայաստան» դաշինքն իր դիմումով խնդրել է լուծել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքների վերաբերյալ վեճը՝ 1) *անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները, կամ* 2) *անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները և սահմանել մանդատների բաշխման կարգը, կամ* 3) *նշանակել ընտրությունների երկրորդ փուլ*»: Իր խնդրանքի հիմքում դիմողը դրել է, մասնավորապես, հետևյալ փաստարկները.

ա) 2021 թվականի մարտի 18-ին ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը հայտարարել է, որ 2021 թվականի հունիսի 20-ին տեղի կունենան արտահերթ խորհրդարանական ընտրություններ՝ անտեսելով արտահերթ խորհրդարանական ընտրությունների նշանակման սահմանադրաիրավական (Սահմանադրության 93-րդ հոդված), ինչպես նաև Ընտրական օրենսգրքով (104-րդ հոդվածի 2-րդ մաս) ամրագրված հիմքերը: Այսպիսի հակասահմանադրական վարքագիծը, ըստ դիմողի, անթաքույց խաթարել է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքների երաշխավորվածությունը: Մասնավորապես, մինչև բուն ընտրական գործընթացների պաշտոնական մեկնարկը, փաստացի թեկնածու կուսակցության առաջնորդներից մեկը, որը հայտարարել էր, որ մասնակցելու է ընտրական գործընթացին, արդեն իսկ զբաղվել է նախընտրական այնպիսի քարոզչությամբ, որով ընդգծել է իր թվացյալ առավելությունը բոլոր հնարավոր քաղաքական ուժերի նկատմամբ, ինչը միջազգային իրավական փաստաթղթերում արձանագրված դիրքորոշումների համաձայն՝ գնահատվում է որպես ընտրական իրավունքի հավասարության և ազատության սկզբունքի խախտում: Բացի դրանից, Հանրապետության նախագահի լիազորություններին միջամտության, փաստացի դրանց իրացման պարտադրանքի պայմաններում ընտրական գործընթացի օրինականության վրա տեղի է ունեցել էական ազդեցություն, և ընտրական իրավունք ունեցողների վրա ընդգծվել է կոնկրետ անձի, քաղաքական ուժի կարգավիճակի իբրև գերակայությունը:

բ) 2021 թվականի ապրիլի 25-ին ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը հայտարարեց հրաժարական տալու մասին՝ միաժամանակ հայտնելով, որ շարունակելու է իր պարտականությունների կատարումը: Արտահերթ խորհրդարանական ընտրությունների ողջ ընթացքում և մինչ օրս Ն. Փաշինյանը շարունակում է զբաղեցնել ՀՀ վարչապետի պաշտոնակատարի պաշտոնը: Արտահերթ խորհրդարանական ընտրությունների ողջ գործընթացում խաթարվել է ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածը, որը, հանդիսանալով սահմանադրական կարգի հիմունք նորմ, երաշխավորում է ընտրությունների հավասարության և օրինականության սկզբունքը, քանի որ վարչապետի կողմից թեև ներկայացվել էր վարչապետի պաշտոնից հրաժարական, սակայն վերջինս, բացահայտ շրջանցելով Սահմանադրության հիմնադրությունները, շարունակել էր կատարել վարչապետին վերապահված լիազորությունները, այդ թվում՝ վարչապետի կարգավիճակով ելույթներ է ունեցել Ազգային ժողովում, ընդունել է որոշումներ, նախագահել է Կառավարության նիստերը, հրապարակել է Կառավարության որոշումները, *ex officio* հանդիպումներ է ունեցել գործադիր իշխանության ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց հետ, այդ թվում՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների փուլում՝ մայիսի 10-ից սկսված: Ըստ դիմողի՝ նշված ապօրինությունն էական է ոչ միայն ընդհանուր սահմանադրաիրավական ասպեկտով, այլև ընտրական իրավունքների խախտումների տեսանկյունից, քանի որ անհիմն շարունակելով պաշտոնավարել և ողջ ծավալով իրականացնելով վարչապետի լիազորությունները՝ նաև անմիջապես արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակահատվածում, ըստ էության, խաթարել է սահմանադրական առանցքային գործընթացների բնականոն իրականացումն ու երաշխավորվածությունը, ինչն արդյունքում հանգեցրել է սահմանադրականության ճգնաժամի:

գ) 2021 թվականի մայիսի 10-ից մեկնարկած ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների ողջ ընթացքում օգտագործվել է մեծ ծավալի վարչական ռեսուրս: Դիմողի պնդմամբ ընտրական իրավունքի, հատկապես հավասարության սկզբունքի լրջագույն խախտումների հանգեցրած վարչական ռեսուրսի ապօրինի օգտագործումն իրականացվել է տարաբնույթ եղանակներով՝ թե՛ ծառայողական տրանսպորտային միջոցների, գույքի և այլ միջոցների օգտագործմամբ, թե՛ փաստացի գործադիր իշխանության համակարգում գտնվող մարմինների միջոցով (ինչպես օրինակ՝ ՀՀ ոստիկանության ծառայողների համակարգային և զանգվածային ներգրավման դեպքերը ցանկացած հանրային հավաքի ընթացքում)՝ դրանով արտաբնուստ ապահովելով քաղաքական հակառակորդների նկատմամբ, այսպես կոչված, «սառեցնող ազդեցություն» (*chilling effect*), ինչպես նաև ստեղծելով իբրև բարձր վարկանիշ երաշխավորող հավաքի մասնակիցների մեծաքանակ

կույթյան պատրանք (մարզպետարանների աշխատակազմերի, վարչապետի աշխատակազմի աշխատակիցների ներգրավման դեպքերը և այլն): Դիմողն այս առնչությամբ նշել է, որ ՀՀ վարչական դատարանի 2021 թվականի հունիսի 26-ին հրապարակված դատական ակտով արձանագրվեց, որ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 19.06.2021թ. թիվ 161-Ա որոշման 1-ին կետը մասնակի՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» կուսակցության նախընտրական քարոզարշավին ՀՀ մարզպետարաններից մեկի աշխատակցի և երկու ուսումնական հաստատության աշխատակիցների մասնակցելը որպես «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում չարձանագրելու մասով, ճանաչել անվավեր»:

Վարչապետի պաշտոնակատարն իր նախընտրական քարոզարշավների ժամանակ, մասնավորապես՝ Սյունիքի, Վայոց ձորի, Լոռու մարզեր այց կատարելիս կրկին վարչական ռեսուրսի միջոցով ակտիվ կերպով ներգրավել է երեխաների:

դ) ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում օգտագործվել է ընտրական գործընթացի հավասարության և ազատության սկզբունքները խաթարող ատելության խոսք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու և միաժամանակ վարչապետի փաստացի պաշտոնակատար Ն. Փաշինյանի կողմից: Դիմողը մատնանշել է վարչական դատարանի թիվ ՎԴ/6861/05/21 վարչական գործով 17.06.2021թ. դատական ակտը:

ե) 2021 թվականի մայիսի 10-ից ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների ողջ ընթացքում քրեական հետապնդման և հարկադրանքի միջոցների անհամաչափ ծավալի միջոցառումներ են իրականացվել «Հայաստան» դաշինքի անդամների նկատմամբ:

զ) Ընտրական գործընթացում խախտվել են ազատ և հավասար ընտրական իրավունքի սկզբունքների տարրերը նաև այնքանով, որ «Հայաստան» դաշինքի հարյուրավոր շտաբների ներկայացուցիչների, ակտիվ ներկայացուցիչների մայիսի 10-ից սկսված պարբերաբար բերման են ենթարկել ՀՀ ոստիկանություն և այսպես կոչված «ստուգողական գործողություններ» են կատարել՝ առանց որևէ պատշաճ հիմքի: Ըստ դիմողի՝ այն, որ համընդհանուր սպառնալիքի ու վախի մթնոլորտ ձևավորելուն հանգեցնող բոլոր այդ հարկադրանքի միջոցները թելադրված են եղել ոչ թե իրական և օրինական հիմքերով, այլ անհիմն ու արհեստական գործոններով, հատկապես հավաստվում է այն փաստարկներով, որ նշված անձանցից, ըստ էության, ոչ մեկին մեղադրանք չի առաջադրվել, նույնիսկ կասկածյալի կարգավիճակ չի տրվել: Ընդ որում, բացի համընդհանուր վախի մթնոլորտ ձևավորելուց, այդպիսի ապօրի-

նություններով անդամնալի վնաս է հասցվել «Հայաստան» դաշինքի քարոզչական աշխատանքներին, քանզի առանցքային աշխատակիցներն անհարկի տևական ժամանակով զրկված են եղել շտաբներում իրենց բնականոն աշխատանքներն իրականացնելու տարրական հնարավորությունից:

ե) ՀՀ քաղաքացու անձնագիր ունեցող բազմաթիվ անձանց ՀՀ անձնագրային և վիզաների վարչության կողմից չի տրամադրվել հնարավորություն ընտրությանը մասնակցելու հայեցողաբար:

ը) Քվեարկությանը մասնակցել է 23.790 քաղաքացի, որոնք քվեարկել են ոչ կենսաչափական անձնագրով, հետևաբար՝ առանց համապատասխան տրամադրվող կտրոնի վրա լուսանկարի առկայության:

թ) Քվեարկությանը մասնակցել են 10.993 զորամասում հաշվառված ընտրողներ, որոնց ցուցակների ներկայացման, ընտրական տեղամասի կոնկրետ վայրի քվեարկության տվյալները պահվել են գաղտնի, արձանագրվել են ուղղորդման դեպքեր, և կրկին համապատասխան տրամադրվող կտրոնը եղել է առանց լուսանկարի:

ժ) Քվեարկությանը մասնակցած 109,618 ՀՀ քաղաքացու դեպքում անձնագիրը մուտքագրվել է մասնագետի կողմից ստեղծաշարով՝ տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում:

ի) Հրապարակված ընտրողների ցուցակների և վերջնական արձանագրությունների միջև արձանագրվել են անճշտություններ:

յ) Իրականացված 83 ընտրական տեղամասերում վերահաշվարկների արդյունքում արձանագրվել է «Հայաստան» դաշինքին տրված ձայների ավելացում 742 ձայնով:

խ) ՀՀ ԿԸՀ-ի կողմից կատարված հաշվարկների և բաշխման արդյունքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 71 մանդատ, որի արդյունքում ստանալով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների թվի 3/5-րդից ավելին՝ խաթարել է ՀՀ Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների դերին և լիազորություններին վերապահված հնարավորությունները:

3.2. «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն

Դիմողը գտնում է, որ 2021 թվականի հունիսի 20-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում խախտվել են Սահմանադրությամբ ամրագրված ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները՝ ազատությունը և հավասարությունը: Բացի դրանից, էական ազդեցություն է գործադրվել ընտրողների կամքի ազատ ձևավորման և արտահայտման վրա, համատարած խախտվել է քվեարկության գաղտնիության իրավունքը, ինչպես նաև քվեարկության իրավունք ունեցող անձանց ընտրելու իրավունքը: Դիմողը խնդրում է

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ 3(103)2021 91

Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 27.06.2021թ. թիվ 183-Ա և 184-Ա որոշումները և ընտրությունների արդյունքները ճանաչել անվավեր: Իր դիրքորոշման հիմքում դիմողը դնում է հետևյալ փաստարկները.

ա) Ն. Փաշինյանն ինչպես նախընտրական քարոզարշավից առաջ, այնպես էլ այդ ընթացքում փաստացի քարոզչություն է իրականացրել վարչական ռեսուրսների կիրառմամբ, ինչով առավելություն է ձեռք բերել ինչպես դիմողի, այնպես էլ մյուս կուսակցությունների և դաշինքների նկատմամբ: Մասնավորապես, դիմողը հայտնում է, որ վարչական դատարանի թիվ ՎԴ/6999/05/21 գործով 26.06.2021թ. կայացրած վճռով հաստատվել են վարչական ռեսուրսի կիրառման և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից անգործություն դրսևորելու փաստեր:

բ) Նախընտրական քարոզչության ընթացքում Ն. Փաշինյանը հանդես է եկել ատելության և բռնություն գործադրելու կոչերով: Դիմողը նշում է, որ վարչական դատարանի թիվ ՎԴ/6861/05/21 գործով 17.06.2021թ. և թիվ ՎԴ/6997/05/21 գործով 25.06.2021թ. օրինական ուժի մեջ մտած վճիռներով հաստատվել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու Ն. Փաշինյանի կողմից հնչեցված արտահայտություններն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող էին ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիքներ, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված գործիքակազմի կիրառման տեսանկյունից առաջադրված նախապայմանը՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումը, սույն դեպքում առկա է:

գ) Դիմողը մատնանշում է նաև այնպիսի ենթադրյալ խախտումներ, ինչպիսիք են պետական գործառույթների և կուսակցական շահերի միահյուսումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց նախընտրական քարոզարշավին մասնակցությունը, հանրային ծառայողների՝ իրենց պաշտոնեական դիրքի չարաչափման միջոցով հոգուտ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության իրականացված գործողությունները, ընտրողների կամքի ազատ ձևավորման և արտահայտման իրավունքի խախտումները, այդ թվում՝ քվեարկության գաղտնիության խախտումները, ընտրողներին (այդ թվում՝ զինծառայողներին) ուղղորդելը և նրանց կուտակումները, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ոչ իրավաչափ անգործությունը, ընտրողների էլեկտրոնային գրանցման սարքավորումների հետ կապված խնդիրները, քվեարկության ընթացքում քարոզչության դեպքերը, այլ անձի փոխարեն քվեարկության, դրա փորձի և/կամ այլ անձի փոխարեն ընտրացուցակներում ստորագրելու դեպքերը, քվեարկության ծրարների թափանցիկ լինելը:

դ) Անձը հաստատող փաստաթղթերի միջոցով Հայաստանի Հանրապետությունում չգտնվող անձանց փոխարեն կատարվել է քվեարկություն:

ե) Մասսայական հոսանքագրկումների արդյունքում կարող էին փոխվել քվեատուփերը:

3.3. «Հայոց Հայրենիք» կուսակցություն

Դիմողը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունները տեղի են ունեցել մի շարք խախտումներով և պահանջել է անվավեր ճանաչել Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված 27.06.2021թ. թիվ 183-Ա և 184-Ա որոշումները և ընտրությունների արդյունքները: Իր պահանջի հիմքում դիմողը հիմնականում դնում է հետևյալ փաստարկները.

ա) ընտրատեղամասերի կեսից ավելին մատչելի չեն եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչի արդյունքում խախտվել է վերջիններիս ընտրական իրավունքը,

բ) ընտրությունների ընթացքում չի պահպանվել օրենքով սահմանված քվեաթերթիկների ձևը, այն է՝ չի պահպանվել ընտրողների՝ օրենքով սահմանված ընտրության կարգի մասին ծանուցման կարգը,

գ) քվեաթերթիկներում բացակայել է «բոլորին դեմ» քվեաթերթիկը, ինչի արդյունքում բոլորին դեմ քվեարկող ընտրողները զրկված են եղել իրենց կամքն արտահայտելու՝ քվեարկելու ու այդ քվեները հաշվարկվելու իրավունքից,

դ) գրեթե բոլոր տեղամասերում քվեաթերթիկները չեն դրվել չիրկիզվող պահարանում,

ե) նախընտրական փուլում, մասնավորապես՝ գործող իշխանության և այլ թեկնածուների կողմից նախընտրական քարոզչության ընթացքում վարչական ռեսուրսի տոտալ օգտագործում,

զ) ընտրական գործընթացի ամբողջ ժամանակահատվածը՝ նախընտրական քարոզչությունը և ընտրություններն ուղեկցվել են ատելության խոսքով,

է) «Ականատես» դիտորդական առաքելության կողմից կատարված մի շարք արձանագրումներ:

3.4. «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինք

Դիմողը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունները տեղի են ունեցել ազատության և հավասարության սկզբունքի կոպտագույն և շարունակական խախտումներով, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա՝

հանգեցնելով ժողովրդավարության սահմանադրական հիմնարար սկզբունքի ոտնահարման:

Դիմողը նկատում է, որ թե՛ նախընտրական քարոզարշավի, թե՛ ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել ընտրության հավասար պայմանների ապահովման սկզբունքի էական խախտումներ: Դիմողը խնդրում է անվավեր ճանաչել իր կողմից վիճարկվող՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշումը և ընտրությունների արդյունքները: Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորելու համար ներկայացնում է հետևյալ փաստարկները.

ա) Նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող թեկնածուների և քաղաքական ուժերի համար լուսաբանման խտրական և ոչ հավասար պայմաններ են տեղ գտել:

բ) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և ՀՀ վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Փաշինյանի կողմից վարչական ռեսուրս է ներգրավվել, որի արդյունքում իշխող քաղաքական ուժը ստացել է նշանակալի առավելություններ:

գ) Ընտրություններին նախորդած ամբողջ նախընտրական քարոզչության ժամանակահատվածն անցել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար և ՀՀ վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Փաշինյանի այնպիսի վարքագծի դրսևորմամբ, որը պարունակել է ահաբեկման, բռնության, վարչական ներգործության և հետագա վրեժխնդրության հստակ տարրեր: Ընդ որում՝ դիմողի գնահատմամբ նախընտրական քարոզչության ընթացքում Ն. Փաշինյանի հրապարակային խոսքում տեղ գտած բռնության կոչերը, ատելության խոսքն ու սպառնալիքներն ուղղված են եղել «... ոչ միայն քաղաքական մրցակիցներին, այլև՝ պաշտոնատար անձանց, ինչպես նաև ընտրողներին ընդհանուր առմամբ»: Դիմողի կարծիքով ձևավորվել է վախի, լարվածության մթնոլորտ, և ընտրողը ենթարկվել է այնպիսի հոգեբանական ճնշման, որը նրան գրկում է ազատ ընտրության հնարավորությունից:

Դիմողը նշում է, որ բռնության և սպառնալիքների մթնոլորտը չի սահմանափակվել միայն հրապարակային կոչերով և արտահայտություններով, այլ դրսևորվել է կոնկրետ գործողություններով և հետևանքներով, ինչպիսիք են, դիմողի գնահատմամբ՝ հրապարակային ելույթների ընթացքում Ն. Փաշինյանի կողմից ցուցադրված գործիք՝ «մուրճը», որն ըստ դիմողի՝ ներկայացվել է որպես քաղաքական հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելու միջոց՝ ընդգծելով այդ առնչությամբ ՄԻԳ-ի արտահայտած մտահոգությունը:

դ) Նախընտրական քարոզչության վերը բերված մթնոլորտն ուղեկցվել է, դիմողի գնահատմամբ՝ իրավապահ մարմինների անգործությամբ կամ աջակցությամբ, որոնք արտահայտվել են ընդդիմության պարագայում՝ իրավապահ մարմինների կողմից նախընտրական քարոզչության ընթացքում և ընտրության օրն ընդդիմադիր գործիչների և նրանց աջակիցների ցուցադրական ձերբակալություններով, այդ թվում՝ ապօրինի գործողություններով (իբրև օրինակ է բերվում պատգամավորի երկու թեկնածուների համար Ընտրական օրենսգրքով երաշխավորված անձեռնմխելիության հաղթահարման խախտումով թեկնածուի ձերբակալությունը), որոնք նաև կրել են շարունակական բնույթ՝ անգամ շարունակվել դատարանի կողմից ձերբակալման որոշումների ոչ իրավաչափ ճանաչվելուց հետո: Դիմողը նկատում է, որ իրավապահ մարմինների կողմից «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի տարածքային շտաբներ իրավապահ մարմինների աշխատակիցների այցելություններով, «պրոֆիլակտիկ գրույցներով», շտաբների ղեկավարների տվյալներ պահանջելով, շտաբների կողմից զբաղեցրած տարածքի իրավական հիմքերը պահանջելով և այլ գործողությունների հետևանքով իրավապահ մարմինները նպատակ են հետապնդել «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի թիմակիցներին ահաբեկելու, սթրեսի ենթարկելու և ճնշելու, ինչի հետևանքով էլ դաշինքի որոշ ակտիվիստներ հրաժարվել են շարունակել մասնակցել նախընտրական քարոզչությանը:

4. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանող ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշում է, որ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար պետք է պարզել՝ արդյո՞ք ընտրությունների կազմակերպման ու անցկացման, ինչպես նաև քվեարկության, արդյունքների ամփոփման ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի պահանջների խախտումներ, երկրորդ՝ այդ խախտումները պետք է կասկածի տակ դնեն քվեարկության արձանագրված արդյունքները, երրորդ՝ խախտումների բնույթը պետք է լինի այնպիսին, որ ընտրությունների արդյունքների ամփոփման կամ բողոքի քննարկման ժամանակ արդեն հնարավոր չէ ստույգ որոշել քվեարկության մասնակիցների կամաարտահայտության իրական արդյունքը: Այսինքն՝ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ է, որ խախտումների հետևանքները կրեն անդառնալի բնույթ, պետք է կորսված լինի քվեարկության մասնակիցների կամաարտահայտությունն ստույգ պարզելու հնարավորությունը:

Անդրադառնալով դիմումներին և դրանցում բերված իրավական հիմնավորումներին, ըստ որոնց՝ դիմողների կարծիքով խախտվել են Սահմանադրությամբ ամրագրված ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքները՝

ազատությունը, արդարությունը, հավասարությունն ու քվեարկության գաղտնիությունը՝ խաթարելով ընտրողների կամքի ազատ արտահայտությունը՝ պատասխանողը հայտնում է, որ համակարծիք չէ ներկայացված իրավական հիմնավորումների ու պնդումների հետ և գտնում է, որ դիմումների պահանջները ենթական են մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները նշանակվել են Հայաստանի Հանրապետության նախագահի 10.05.2021թ. «Ազգային ժողովի արտահերթ ընտրություն նշանակելու մասին» թիվ ՆՀ-99-Ն հրամանագրով, որն ուժի մեջ է մտել 11.05.2021թ.: Ընտրական գործընթացը մեկնարկում է նշյալ իրավական ակտի՝ Հանրապետության նախագահի՝ «Ազգային ժողովի արտահերթ ընտրություն նշանակելու մասին» հրամանագրի ուժի մեջ մտնելու պահից: Նույն օրն էլ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունել է թիվ 27-Ա որոշումը, որով հաստատել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը: Հետևաբար՝ մինչ այդ տեղի ունեցած և դիմումներում վկայակոչված գործողությունները պատասխանողի կարծիքով չեն կարող հանդիսանալ սույն գործով քննության առարկա:

Արտահերթ ընտրությունների ժամանակ վարչական ռեսուրսի օգտագործման վերաբերյալ պատասխանողը հայտնում է, որ օրենսդիրը որոշակի կատեգորիայի հանրային ծառայության մեջ գտնվողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին ոչ թե արգելում է ընդհանրապես քարոզչություն կատարելը, այլ այդ կապակցությամբ սահմանում է որոշակի կանոն: Մասնավորապես, նշված կատեգորիայի անձինք, այդ թվում՝ անմիջականորեն ընտրողների կողմից ընտրված համայնքների ղեկավարները և ավագանու անդամները կարող են իրականացնել քարոզչություն, բացառությամբ իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս: Այսինքն՝ նշված իրավանորմերից ակնհայտ է, որ պաշտոնատար անձինք, այդ թվում՝ քաղաքական պաշտոն զբաղեցնողները՝ Ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումների հաշվառմամբ ազատ են իրականացնելու նախընտրական քարոզչություն: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ինչպես նաև որոշակի հստակ նշված աշխատակիցների արգելված չէ նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝ օրենքով նախատեսված որոշակի և հստակ սահմանափակումների պահպանման պայմանով:

Համապատասխան սահմանափակումներ նախատեսող նորմերով արգելքներն ուղղակիորեն սահմանվում են միմիայն այն դեպքերի համար, երբ նախընտրական քարոզչությունն ու ցանկացած բնույթի քարոզչական նյութի տարածումն իրականացվում է տվյալ անձանց լիազորություններն իրականացնելիս: Ընդ որում՝ օրենքը նշված գործունեությունը կամ գործողությունները տվյալ անձանց կողմից իրականացնելու սահմանափակում է նախատեսում հենց այդ իրավասություններն իրականացնելիս, այսինքն՝ օրենքն արգելում է պաշտոնատար անձին նախընտրական քարոզչության իրականացման և պաշտոնական լիազորությունների իրականացման մեկտեղումը, սակայն օրենքը չի արգելում անձանց իրականացնելու որևէ կուսակցության օգտին նախընտրական քարոզչություն միայն այն պատճառով, որ տվյալ անձը մինևույն ժամանակ հանդիսանում է պաշտոնատար անձ:

Անդրադառնալով ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում Սահմանադրության 2-րդ և 7-րդ հոդվածների՝ մասնավորապես ազատ ընտրության սկզբունքի խախտման վերաբերյալ փաստարկներին՝ պատասխանողը նշում է, որ նախ՝ պետք է հաստատվեն Ընտրական օրենսգրքի խախտումները, դրանք պետք է ունենան այնպիսի բնույթ, որ ազդեն ընտրությունների արդյունքների վրա: Դիմողների փաստարկներն ու հիմնավորումները վերաբերում են կոնկրետ հանգամանքների գնահատմամբ դրանք խախտում որակելուն, սակայն չի ներկայացվում պատճառահետևանքային կապը նշված խախտումների և ընտրությունների արդյունքների միջև:

ՀՀ Տավուշի մարզպետի 04.06.2021թ. թիվ 171-Ա որոշման, ինչպես նաև ՀՀ Կառավարության 20.05.2021թ. թիվ 808-Ն որոշման վերաբերյալ պատասխանողը գտնում է, որ դրանք կայացնելու իրավական ուղղակի արգելք նախատեսված չէ:

Պատասխանողը, անդրադառնալով այն փաստարկին, ըստ որի՝ «ՀՀ անձնագրային և վիզաների վարչության կողմից չի տրամադրվել հնարավորություն ընտրությանը մասնակցելու վերաբերյալ՝ հայեցողաբար», նշում է, որ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հիշյալ իրավադրույթի հետ կապված իրականացրել է հանրային իրազեկում 2021 թվականի մայիսի 29-ին՝ նշելով, որ նշված անձինք կարող են մինչև 2021 թվականի հունիսի 10-ը դիմում ներկայացնել անձնագրային և վիզաների վարչություն կամ ըստ գտնվելու վայրի անձնագրային ծառայություն՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու համար՝ նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն: Նշված հարցով որոշում կայացնում է լիազոր մարմինը՝ նշված ընտրողներին կա՛մ ժամանակավորապես ընդգրկելով ցուցակում, կա՛մ կայացնելով մերժման որոշում, որի իրավաչափության վիճարկումը կարող էր իրականացվել դատական կարգով: Օրենս-

դիրը, ըստ էության, սահմանել է իրավական ամբողջական ընթացակարգ ինչպես մերժումը, այնպես էլ հնարավոր անգործությունը վիճարկելու համար, որպիսի պարագայում ընտրողներն ունեցել են լիարժեք հնարավորություն իրենց իրավունքներն իրացնելու համար:

Վկայակոչելով Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը՝ պատասխանողը հայտնում է, որ նշված իրավադրույթն արդեն իսկ հնարավոր է համարում առանց ընտրողի լուսանկարի քվեարկության կտրոնների առկայությունը, և նման կտրոնների տրամադրմամբ Ընտրական օրենսգրքի պահանջների խախտում առկա չէ: Դիմողի կողմից չի բերվում որևէ փաստարկ առ այն, որ որևէ քաղաքացու պարագայում լուսանկարի առկա չլինելը տեղի է ունեցել Ընտրական օրենսգրքի պահանջների խախտմամբ, ավելին՝ դա էլ նպաստել է որևէ իրավախախտման:

Պատասխանողը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է տեխնիկական սարքավորման խափանման հնարավորությունը և սահմանել համապատասխան իրավակարգավորում: Նշվածից ակնհայտ է, որ եթե անգամ չգործեին բոլոր տեխնիկական սարքավորումներն ու չտպագրվեին լուսանկարով կտրոններ, ապա դրանք չեն կարող համարվել Ընտրական օրենսգրքի պահանջների խախտումներ, ուստիև հանգեցնել անվավերության: Ընտրական օրենսգրքը միանշանակ հնարավոր և թույլատրելի է համարում մասնագետի կողմից ստեղծարարի միջոցով անձը հաստատող փաստաթղթի տվյալների ներմուծում տեխնիկական սարքավորման մեջ: Առկա չէ որևէ տեղամաս, որտեղ տեխնիկական սարքավորման միջոցով չի տպվել տեղեկանք, ինչպես նաև առկա չէ որևէ դիմում, որ նշված տեղեկանքը չի տրամադրվել իրավասու սուբյեկտներին:

Ինչ վերաբերում է տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից գործածվող ընտրողների ցուցակների կրկնվող էջերին, ապա պատասխանողի կարծիքով այդ կապակցությամբ դիմող «Հայաստան» դաշինքի կողմից ներկայացվել է ցուցակների էջերի կրկնություն, որը վերաբերել է 9 տեղամասի: Նշվածի բացատրությունը կարող է լինել հնարավոր տեխնիկական վրիպումը: Սակայն ներկայացված 9 տեղամասերից 6-ում ուղղակիորեն բացակայում է նույն անձին վերաբերող տողերում կրկնակի ստորագրման հանգամանքը, նույն անձի անունից երկու ստորագրության հանդիպում ենք 3 տեղամասի պարագայում, և խոսքը վերաբերում է 10 կրկնվող ստորագրության, այսինքն՝ լրացուցիչ 5 ստորագրության: ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նշված հանգամանքի վերաբերյալ նյութերն ուղարկվել են դատախազություն:

Վերահաշվարկի հետ փաստարկների վերաբերյալ պատասխանողը հայտնել է, որ 3 տարածքային ընտրական հանձնաժողովներում (թիվ 2, 3, 9)

ներկայացվել է ընդհանուր թվով 4 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ 4 դիմում: Դիմումները ներկայացված են եղել «Չարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության վստահված անձանց կողմից: ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել են նաև դիմումներ «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության լիազոր ներկայացուցչի և «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» կողմից, որոնք վերաբերել են տարբեր տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ անճշտություններին: Ներկայացված դիմումները վերաբերել են ընդհանուր թվով 24 տեղամասերի տվյալներին: Ընտրական օրենսգրքի պահանջների հաշվառմամբ՝ տարածքային ընտրական հանձնաժողովներն իրականացրել են վերահաշվարկ ինչպես վստահված անձանց ներկայացրած դիմումներով, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ են իրականացրել վերահաշվարկ՝ հաշվի առնելով նաև «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության լիազոր ներկայացուցչի և «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» կողմից նշված դիմողների մատնանշած ընտրական տեղամասերը: Թիվ 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 11, 13, 14, 17, 23, 24, 25, 33, 34 և 35 տարածքային ընտրական հանձնաժողովները սեփական նախաձեռնությամբ իրականացրել են քվեարկության արդյունքների վերահաշվարկ: Ընդհանուր առմամբ վերահաշվարկվել են 83 ընտրական տեղամասերի (թիվ 2/1, 2/2, 2/3, 2/6, 2/32, 2/44, 3/20, 3/26, 3/27, 4/3, 4/4, 4/5, 4/6, 4/8, 4/9, 4/10, 4/11, 4/16, 4/40, 4/44, 5/4, 5/14, 6/9, 6/13, 6/18, 6/22, 6/26, 7/7, 9/4, 9/30, 9/32, 9/33, 9/43, 9/44, 9/55, 10/33, 10/43, 11/11, 11/17, 11/22, 13/31, 14/8, 14/40, 17/14, 17/38, 23/38, 23/46, 23/47, 23/50, 24/4, 24/7, 25/12, 25/19, 25/21, 25/25, 25/34, 25/39, 25/43, 33/31, 34/2, 34/3, 34/4, 34/5, 34/6, 34/8, 34/9, 34/10, 34/12, 34/13, 34/19, 34/20, 34/21, 34/22, 34/24, 34/27, 34/29, 34/37, 34/44, 34/60, 34/63, 34/68, 35/30) արդյունքներ: Արդյունքում 16 տեղամասերում նախապես արձանագրված քվեարկության արդյունքները որևէ փոփոխություն չեն կրել, 31 տեղամասերում թեկնածուներին տրված «կողմ» ձայների որևէ փոփոխություն չի արձանագրվել: Մնացած 51 տեղամասերում արձանագրվել են ոչ էական բնույթի փոփոխություններ՝ պայմանավորված քվեաթերթիկները վավեր կամ անվավեր ճանաչելու հետ: Վերահաշվարկի աշխատանքներին ներկա են գտնվել համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վստահված անձինք, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ և դիտորդներ: Ներկայացված ամբողջ տեղեկատվությունը հրապարակվել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում՝ հենց վերահաշվարկի աշխատանքներին զուգահեռ: Կայքում հրապարակվել է նաև վերահաշվարկի ամբողջ աղյուսակավորումը: Այն տեղամասերում, որտեղ արձանագրվել են ան-

նշտություններ, նյութերն ուղարկվել են իրավապահ մարմիններին: Ինչ վերաբերում է «Հայաստան» դաշինքի դիմումի փաստարկներին՝ կապված մանդատների բաշխման հետ, ապա այն իրականացվել է Ընտրական օրենսգրքի 95 և 96-րդ հոդվածների պահանջների լիակատար պահպանմամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում վերջիններիս ընտրական իրավունքի խախտման վերաբերյալ փաստարկների առնչությամբ պատասխանողը հայտնում է, որ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ հաշմանդամություն ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրացումն ապահովելու համար: Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ առկա չէ որևէ ապացույց, որ անձինք գրկվել են քվեարկությանը մասնակցելու իրավունքից մատչելիության բացակայության պատճառով:

Ինչ վերաբերում է տեղամասային ընտրական հանձնաժողովներում կիրառվող սարքավորումների թողունակությանը, ապա պատասխանողի կարծիքով սարքերը բաշխվել են տեխնիկական հնարավորությունների հաշվարկով, և թողունակությամբ պայմանավորված որևէ ընտրող չի գրկվել քվեարկելու իրավունքից:

Քվեարկության կարգին վերաբերող հարցադրումներին անդրադառնալով՝ պատասխանողը նշում է, որ դիմողները թվարկում են քվեարկության օրն ընտրական տեղամասերում առկա կուտակումներ, որոնք անգամ լինելիության պայմաններում չէին կարող և չեն գործել որևէ ազդեցություն ընտրությունների արդյունքների վրա: Ուղղորդված քվեարկության դեպքերի հետ կապված տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից այդպիսին գնահատված նյութերը փոխանցվել են իրավապահ մարմիններին, սակայն տեսախցիկների օգնությամբ հետևելով քվեարկության ընթացքին, էլեկտրոնային կայքերում առկա հրապարակումներին, ինչպես նաև ուսումնասիրելով տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները՝ պատասխանողը գտնում է, որ ուղղորդված քվեարկության դեպքերը չեն կրել կազմակերպված կամ համընդհանուր բնույթ, ուստիև չէին կարող ունենալ որևէ ազդեցություն ընտրությունների արդյունքների վրա:

Ընտրական տեղամասերում հոսանքազրկումների հետ կապված՝ պատասխանողը փաստում է, որ հոսանքազրկման դեպքեր առկա են եղել և՛ քվեարկության ընթացքում, և՛ դրա ավարտից հետո: Այդ կապակցությամբ ներկայացվել են պարզաբանումներ, որ հոսանքազրկումը տեղի է ունեցել վթարների արդյունքում, ձեռնարկվել են միջոցներ հնարավորինս կարճ ժամկետներում հետևանքները վերացնելու ուղղությամբ, և հնարավոր ամենակարճ ժամկետներում վթարի հետևանքները վերացվել են, և մատակարարումները վերականգնվել են: Քվեարկության ընթացքում տեղի ունեցած հոսանքազրկումները որևէ խնդիր չեն առաջացրել, քանի որ տեխնիկական

սարքավորումներն աշխատում են նաև համապատասխան մարտկոցներով, և աշխատանքի խափանում չի արձանագրվել, իսկ քվեարկության արդյունքների ամփոփման հետ կապված իրավախախտման փաստեր չեն արձանագրվել:

Պատասխանողը պնդում է, որ քվեաթերթիկների ծրարների թափանցման հետ կապված դեպքեր քվեարկության ընթացքում չեն արձանագրվել:

Պատասխանողը հայտնում է, որ ըստ դիմողների՝ մի շարք ընտրատեղամասերում ընտրողներին են տրամադրվել նախօրոք պատրաստված քվեաթերթիկների փաթեթներ, ինչի արդյունքում արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ այդ փաթեթները չեն պարունակել բոլոր քվեաթերթիկները, և դիտորդների նկատառումներից հետո միայն բացակայող քվեաթերթիկները համալրվել են, և անդամներն սկսել են քվեաթերթիկները հավաքել ընտրողի աչքի առջև: Վկայակոչելով Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ պատասխանողը փաստում է, որ նշված իրավանորմում հիմնական շեշտադրումը մեկն է, որ ընտրողին տրամադրվեն բոլոր քվեաթերթիկները: Այսինքն՝ կա սահմանված կանոն, որ ընտրողին տրամադրվեն բոլոր քվեաթերթիկները: Եթե ընդունենք, որ ընտրողին տրվել են անգամ նախապես հավաքված քվեաթերթիկներ, ապա դա ինքնին չի կարող որակվել որպես Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում:

Դիտորդների իրավունքների խոչընդոտման վերաբերյալ դատողությունների առնչությամբ՝ կապված երկու դեպքում նախընտրական հանդիպումներին մասնակցությունն արգելելու հանգամանքի հետ, պատասխանողի կարծիքով նման դեպքերում Ընտրական օրենսգիրքը որևէ սահմանափակում չի պարունակում հավաքի կազմակերպիչների համար, և նրանց վարքագծում որևէ խախտում առկա չէ, ավելին՝ նշված դեպքերն ընդհանրապես որևէ առնչություն չեն կարող ունենալ ընտրությունների արդյունքների հետ:

Պատասխանողը հայտնում է, որ տեխնիկական սարքավորման միջոցով տպվող քվեարկության կտրոնի վրա, Ընտրական օրենսգրքով սահմանված տվյալներից բացի, նշվում են հետևյալ լրացուցիչ տվյալները՝ ընտրության անվանումը, քվեարկության օրը, ամիսը, տարեթիվը, քվեարկության կտրոնը տպելու ժամը, մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ օգտագործվելու դեպքում՝ տեղեկություն, թե որ տեխնիկական սարքավորման միջոցով է ընտրողը գրանցվել: Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված իրավակարգավորման դեպքում, երբ Էկրանին հայտնվում է կարմիր նշան, ապա միանում է ձայնային ազդանշան, և այս դեպքում ընտրողի անունը, ազգանունը, լուսանկարը (էլեկտրոնային շտեմարանում դրա առկայության դեպքում), անձը հաստատող փաստաթղթի համարը, ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում հերթական համարը հայտնվում են Էկրանի վրա՝ «Կրկնակի գրանցման փորձ» ծանուցման հետ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 3(103)2021

մեկտեղ, ինչպես նաև էկրանին հայտնվում է այն փաստաթղթի համարը, որով անձն արդեն գրանցված է եղել տվյալ տեղամասում և գրանցման ամսաթիվն ու ժամը: Սարքավորման կողմից տպված կրկնակի գրանցման փորձի կտրոնը ներառում է գրեթե բոլոր անհրաժեշտ տվյալները (ընտրությունների անվանումը, ամսաթիվը, կտրոնի տպման ժամը, ընտրական տեղամասի համարը, ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ընտրողի անունը, ազգանունը, կրկնակի գրանցման փորձի ժամանակ ներմուծված փաստաթղթի համարը, այն փաստաթղթի համարը, որով ընտրողն արդեն գրանցված է եղել տվյալ ընտրական տեղամասում, առաջին գրանցման ամսաթիվն ու ժամը) իրավախախտումն արձանագրելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: 2021 թվականի հունիսի 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ 1996 տեղամասերում գործարկված տեխնիկական սարքավորումները սահմանված կարգի համաձայն ունեին քվեարկության մասնակիցներին հաշվառելու, կրկնակի գրանցումը բացառելու ծրագրային հագեցվածություն: Այն տեղամասային ընտրական հանձնաժողովներում, որտեղ կիրառվել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ, դրանց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, ինչը հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով՝ բացառելով նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով:

Վերոգրյալի հիման վրա պատասխանողը գտնում է, որ վիճարկվող որոշումն իրավաչափ է, կայացվել է Ընտրական օրենսգրքի պահանջների պահպանմամբ, ուստիև խնդրում է դիմումները մերժել, իսկ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի թիվ 184-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

5. Հարակից պատասխանողների դիրքորոշումները

5.1. ՀՀ դատախազության դիրքորոշումը

Որպես հարակից պատասխանող՝ ՀՀ դատախազությունը, անդրադառնալով ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի կողմից հրաժարական տալուց հետո նրա՝ իբրև ՀՀ վարչապետի պաշտոնակատարի պաշտոնավարման ենթադրյալ ապօրինի լինելու հանգամանքին, նշում է, որ այդ առթիվ 28.04.2021թ. և 24.05.2021թ. գլխավոր դատախազություն հաղորդումներ են ներկայացվել հանցագործության մասին՝ խնդրելով ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի կողմից 25.04.2021թ. հրաժարական ներկայացնելուց հետո ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացումը շարունակելու փաստով քրեական գործ հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 3(103)2021

«Իշխանությունը յուրացնելը»: 29.04.2021թ. և 31.05.2021թ. դատախազների կողմից դիմողներին գրություններով պարզաբանվել է, որ դիմումներում նշված հանգամանքները վերաբերում են առերևույթ սահմանադրափրավական նորմերի կիրառման կապակցությամբ առկա վեճին, որի լուծումը դուրս է ՀՀ դատախազության լիազորությունների շրջանակից:

Նախընտրական քարոզչության թեկնածուների քարոզչական ելույթներում, քարոզչական հոլովակներում ասելույթյան խոսքի և բռնության հրապարակային կոչերի օգտագործման վերաբերյալ ՀՀ դատախազությունը հայտնում է, որ նախընտրական քարոզչության ընթացքում բռնության տարրեր պարունակող խոսքի առավել վիճահարույց դեպքերը քրեադատավարական ընթացակարգերով ստուգվել են, և կայացվել են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումներ: Իր պատասխանում ՀՀ դատախազությունը, ելնելով նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի, Ռաբաթի գործողությունների ծրագրի, ինչպես նաև այս առումով արտահայտած ՄԻԵԴ որոշակի դիրքորոշումներից, եզրահանգում է, որ նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուների և, մասնավորապես, քաղաքական կուսակցությունների կամ դաշինքների առաջնորդներ Ն. Փաշինյանի, Ռ. Քոչարյանի, Ս. Մարգարյանի և մյուսների ելույթներն իրենց ամբողջության մեջ չեն կարող համարվել բռնություն հրահրող, բռնությունը հրապարակայնորեն արդարացնող կոչեր պարունակող:

Անդրադառնալով դիմողների կողմից բարձրացվող այն պնդումներին, թե 2021 թվականի մայիսի 10-ից սկսված հարյուրավոր շտաբների ներկայացուցիչների, ակտիվի ներկայացուցիչների պարբերաբար բերման են ենթարկել ոստիկանություն առանց որևէ պատշաճ հիմքի, ինչի արդյունքում խաթարվել են ազատ և հավասար ընտրական սկզբունքների տարրերը, ՀՀ դատախազությունը կրկին շեշտադրում է, որ ընտրական գործընթացի ողջ ժամանակահատվածում ընթացք է տրվել առերևույթ ընտրական իրավախախտումների վերաբերյալ 861 հաղորդման, և որ այդ գործողությունները, այդ թվում՝ դաշինքների համակիրներին զանգվածային բերման ենթարկելու, նրանց բնակարաններում դիմողների պնդմամբ ապօրինի խուզարկությունների վերաբերյալ գործողությունները կատարվել են նշված հարյուրավոր հաղորդումների վերաբերյալ ձեռնարկված ստուգողական գործողությունների և նախապատրաստված նյութերի շրջանակներում՝ պահպանելով քրեադատավարական ընթացակարգերը, և որ դրանք կատարվել են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ և 225-231-րդ հոդվածներով սահմանված կարգով և հիմքերով:

Կատարված խուզարկությունների վերաբերյալ դիմողների պնդումների առնչությամբ ՀՀ դատախազությունը նշում է, որ ընտրական գործընթացի ժամանակ քրեական գործերի շրջանակներում կատարվել են 29 խուզարկություններ, որոնցից յոթը՝ «Հայաստան» դաշինքի հետ առնչվող անձանց բնակարաններում կամ շինություններում, քսանը՝ «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի, իսկ երկուսը՝ այլ միավորների: Դատախազությունն արձանագրում է, որ խուզարկությունները կատարվել են իրավական և փաստական հիմքերի վերաբերյալ պատշաճ հիմնավորված միջնորդությունների հիման վրա դատարանների կողմից կայացված դատական ակտերով: Անդրադառնալով քվեարկության օրը մայրաքաղաք Երևանի բազմաթիվ փողոցներում թափված՝ «Հայաստան» դաշինքը և նրա ղեկավար Ռ. Քոչարյանին վարկաբեկող և զրպարտող բովանդակությամբ թռուցիկներ տարածելու դեպքին՝ դատախազությունն արձանագրում է, որ այդ փաստով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակներում հայտնաբերվել է վարչական իրավախախտում կատարած անձը, որի վերաբերյալ և վարչական վարույթի նյութերն ուղարկվել են ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ վերջինիս վարչական պատասխանատվության հարցը լուծելու:

Դատախազությունը, անդրադառնալով քարոզչական պատասխանների վնասման կամ ոչնչացման դեպքերին, արձանագրում է, որ ոչնչացման բոլոր այն դեպքերը, որոնցով դրանց սեփականատերերին կարող էր առերևույթ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի իմաստով վնաս պատճառվել, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութավորվել են:

Նախընտրական քարոզչության ընթացքում և հենց ընտրության օրն ընդդիմադիր գործիչների և նրանց աջակիցների ցուցադրական ձերբակալությունների, այդ թվում՝ ընդդիմադիր թեկնածուների ապօրինի ձերբակալությունների հարցի առնչությամբ դատախազությունը հայտնում է, որ դատախազության կողմից ներկայացված բացատրություններում նշված ընտրական իրավախախտումների վիճակագրությունը վկայում է այն մասին, որ այդ առերևույթ ընտրական իրավախախտումների մի զգալի մասը կատարվել է հենց «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի աջակիցների կողմից, որոնցից 17 դեպքով ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով հարուցվել են քրեական գործեր:

Անդրադառնալով դիմողների բարձրացրած այն հարցին, որ ընտրական գործընթացի ժամանակահատվածում, այդ թվում՝ հենց քվեարկության օրը պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների կողմից մշտապես և համակարգված օգտագործվել է մեծածավալ վարչական ռեսուրս, ՀՀ դատախազությունը հայտնում է, որ արձանագրվել է

ընտրական գործընթացի ընթացքում ծառայողական կամ այլ կախվածությու-
նուն օգտագործելով քաղաքացու ընտրական իրավունքի ամերևույթ խախտ-
ման 102 դեպք, և որ այդպիսի դեպքերի վերաբերյալ հաղորդումներից 53-ը վե-
րաբերել է հենց դիմողներից մեկի՝ «Հայաստան» դաշինքի կողմնակիցների
կողմից ենթադրյալ հանցագործություն կատարելուն, իսկ 49-ը՝ «Քաղաքա-
ցիական պայմանագիր» կուսակցության կողմնակիցների կողմից: Այնուա-
մենայնիվ, ՀՀ դատախազությունը հայտնում է, որ նշված 102 դեպքից 101-ով
հաղորդումներում նշված հանգամանքները չեն հաստատվել, և որ դրանից
ընդամենը մեկով է առկա հարուցված քրեական գործ՝ ավարտված նախա-
քննությամբ:

Ընտրական տեղամասում ցուցակներում առկա ստորագրությունների և
արձանագրություններում առկա մասնակիցների թվի անհամապատասխա-
նության՝ բարձրացվող հարցի առնչությամբ ՀՀ դատախազությունը նշում է,
որ դիմողների կողմից նշված՝ 109 ընտրական տեղամասերում առկա ան-
ճշտությունների վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից հանձնարարվել է
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով
նախապատրաստել նյութեր, որոնց արդյունքների վերլուծության հիման վրա
ՀՀ դատախազությունը նկատում է, որ այդ «անհամապատասխանության
պատկերը» տեղ է գտնում այն պատճառով, որ մի դեպքում դիմողի կողմից
այս երկու ելակետային թվերի ուղղակի սխալ համադրում է կատարվել, իսկ մի
այլ դեպքում՝ տեղ է գտել դրանց մեխանիկական համադրում՝ առանց հաշվի
առնելու մի շարք հանգամանքներ: Իբրև այդպիսիք, ՀՀ դատախազությունը
նշում է ընտրական տեղամասում զինծառայողների քվեարկությունը, որոնց
թիվը գաղտնի է, և որ նրանք ստորագրում են զորամասում հաշվառված
ընտրողների ցուցակում, սակայն նրանց թիվն արդյունքների ամփոփման
արձանագրության մեջ ներառվում է տեղամասում քվեարկության մասնակից-
ների ընդհանուր թվի մեջ: Երկրորդ, մի շարք տեղամասերի ստորագրված
ցուցակների սկանավորման արդյունքում ցուցակի որոշ էջեր չեն սկանավորվել
և հրապարակվել են այդպես կիսատ: Երրորդ, մի շարք դեպքերում ուղղակի
դիմողի կողմից, ըստ ՀՀ դատախազության, կատարվել է սխալ համադրում, և
նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ տեղամասում
քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի և սկանավորված ցուցակնե-
րում ստորագրությունների թվի ոչ մի անհամապատասխանություն էլ չկա:
Չորրորդ, քիչ դեպքերում հանձնաժողովի անդամների անփույթ աշխատանքը,
որտեղ տարբերությունը կազմել է մեկ կամ երկու ստորագրության անհամա-
պատասխանություն և այլն:

Անդրադառնալով դատաքննության ընթացքում դիմողներից մեկի վկա-
յակոչյա՞ծ՝ քաղաքացի Ջ. Մարտիրոսյանի փոխարեն այլ անձի քվեարկության

դեպքին՝ ՀՀ դատախազությունը հայտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր են նախապատրաստվել, և որի արդյունքում Չ. Մարտիրոսյանի թոռնուհու, հանձնաժողովի անդամ Ե. Մարուքյանի և ընտրող Գ. Շահգալոյանի բացատրություններով և վերջինիս անվամբ տեխնիկական սարքավորման միջոցով տպված կտրոնի և ընտրողների ցուցակի համապատասխան էջի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Գ. Շահգալոյանը, գրանցվելով ընտրողների ցուցակում, շփոթմամբ ստորագրել է Չ. Մարտիրոսյանի անվան դիմաց, իսկ ցուցակում իր անվան դիմաց ստորագրությունը բացակայում է: Արդյունքում 06.06.2021թ. որոշում է կայացվել նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Անդրադառնալով դիմողների մի շարք այլ փաստարկներին և ամփոփելով 20.06.2021թ. ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում ՀՀ դատախազության կողմից ձեռնարկված գործողությունների, դրանց ընթացքի և արդյունքների մասին բացատրությունները՝ ՀՀ դատախազությունը նշում է, որ իրենց հաջողվել է իրավապահ մյուս մարմինների հետ համագործակցված ձևով ապահովել առերևույթ ընտրական իրավախախտումների կանխարգելումը, հայտնաբերումը, անհրաժեշտ դատավարական և այլ գործողությունների ձեռնարկումը և պատշաճ քրեաիրավական գնահատական տալը, որպիսի հանգամանքով էլ նաև, քրեաիրավական տեսանկյունից, ըստ ՀՀ դատախազության, ապահովվեց այդ համապետական ընտրությունների օրինականությունը և ՀՀ քաղաքացու կամարտահայտության ազատ իրականացումը:

5.2. ՀՀ ոստիկանության դիրքորոշումը

Հարակից պատասխանողը հայտնում է, որ ՀՀ ոստիկանությունը նախընտրական քարոզարշավից սկսած ՀՀ ողջ տարածքում իրականացրել է հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ, օպերատիվ արձագանքվել է իրավախախտումների և պատահարների վերաբերյալ բոլոր ահազանգերին, ապահովել է տարածքային ընտրական հանձնաժողովներից ընտրական փաստաթղթերի տեղափոխմանն ուղեկցումն ընտրական տեղամասեր և դրանց պահպանումը, քաղաքացիներին սպասարկելու նպատակով ընտրությունների և դրան նախորդող օրերին ՀՀ ոստիկանությունում գործել է Թեժ գիծ ծառայություն, ինչպես միջազգային, այնպես էլ տեղական դիտորդական առաքելությունների հետ տեղի են ունեցել հանդիպում-քննարկումներ և տեղեկատվության փոխանակում, ճշգրտվել են ընտրացուցակները և այլն:

Անդրադառնալով ՀՀ ոստիկանության ծառայողների մեծ ծավալով նախընտրական քարոզչությանը ներգրավելու առումով վարչական ռեսուրսի կիրառման վերաբերյալ դիմողների փաստարկներին՝ հարակից պատասխանողը նշում է, որ խնդրո առարկա հարցին անդրադարձել է թիվ ՎԳ/6999/05/21 գործի շրջանակներում վարչական դատարանը՝ արձանագրելով, որ չի հաստատվել որևէ փաստ առ այն, որ ՀՀ ոստիկանության ծառայողների ռեսուրսն օգտագործվել է երրորդ անձի օգտին քվե ստանալու նպատակով: Ավելին, ՀՀ ոստիկանության ծառայողները նշված ժամանակահատվածում իրականացրել են բացառապես «Ոստիկանության մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված՝ հանրային վայրերում հասարակական կարգի պահպանությունն ապահովելու իրենց լիազորությունը:

Հարակից պատասխանողը հավելել է, որ ՀՀ ոստիկանությունը բոլոր կուսակցությունների և խմբակցությունների նկատմամբ մշտապես ցուցաբերել է հավասարակշռված մոտեցում:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում տեղի ունեցած իրավախտումների վերաբերյալ ՀՀ ոստիկանությունում արձանագրվել է 285 դեպք, որոնցից որպես հանցագործության վերաբերյալ հաղորդում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով ընթացք է տրվել 132 դեպքի, իսկ 153-ը չեն պարունակել առերևույթ հանցագործության հատկանիշներ և ստուգվել են որպես պատահար: Ընտրությունների օրն արձանագրվել է 207 դեպք:

Անդրադառնալով քվեարկության օրը թռուցիկներ տարածելու դեպքով պատշաճ միջոցներ չձեռնարկելու մասին դիմողի պնդումներին՝ հարակից պատասխանողը ընդգծել է, որ ահագանգն ստանալուց անմիջապես հետո, այն է՝ 07.00-ից ընդամենը ժամեր անց, ձեռնարկված օպերատիվ միջոցառումների շնորհիվ իրավախախտումը բացահայտվել է: Ինչ վերաբերում է պատատների վնասման դեպքերին, ապա ՀՀ ոստիկանության կողմից արձանագրվել են բոլոր հայտնի դեպքերը, ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ դրանց բացահայտման ուղղությամբ: Այս պահին դեպքերից 6-ն արդեն բացահայտված են:

Անդրադառնալով առանց կենսաչափական անձնագրի 23.790 քաղաքացու քվեարկության վերաբերյալ դիմողի պնդումներին՝ նշել է, որ հիմնական պատասխանողի կողմից համապատասխան պարզաբանում ներկայացվել է: Բացի դրանից, անթույլատրելի է որևէ կերպ պարտադրել քաղաքացուն փոխարինելու իր անձնագիրը կենսաչափականով, և ՀՀ ոստիկանությունն այս առումով որևէ գործիքակազմով օժտված չէ:

Անդրադառնալով դիմողների կողմից մատնանշված այն փաստարկին, որ ՀՀ քաղաքացու անձնագիր ունեցող բազմաթիվ անձանց ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից հայեցողաբար ընտրությամբ

յանը մասնակցելու հնարավորություն չի տրամադրվել՝ հարակից պատասխանողը շեշտադրել է, որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը հիմնական և լրացուցիչ ընտրացուցակները կազմելիս առաջնորդվել է բացառապես համապատասխան հարաբերությունները կանոնակարգող իրավական կարգավորումներով՝ ապահովելով ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի պատշաճ իրացումը: Բացի դրանից, անձնագրային և վիզաների վարչության կողմից նաև հաշվի է առնվել ընտրացուցակներում քաղաքացիներին ընդգրկելու վերաբերյալ առկա դատական պրակտիկան: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիներին, ապա վերջիններս Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ իրավունք ունեին դիմում ներկայացնել լիազոր մարմին՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու վերաբերյալ՝ նշելով քվեարկության օրը Հայաստանում գտնվելու վայրի հասցեն: Այս հիմքով ընտրողների ցուցակներում ընդգրկվել է Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող 1479 ընտրող:

Ինչ վերաբերում է ընտրություններին մասնակցելու համար տեղեկանք ստանալու դիմումներն անձնագրային և վիզաների վարչության կողմից մերժելու մասին որոշումներին, ապա դրանք վերջնական չեն, օրենսդրությամբ նախատեսված է դրանք բողոքարկելու հստակ իրավական մեխանիզմ, ինչով պայմանավորված՝ որոշումների մի մասը բողոքարկվել է դատական կարգով: ՀՀ ոստիկանությունը նշել է, որ դատարաններից ստացվել են 239 հայցերով վարույթ ընդունված դատական գործեր, որոնցից 178-ով կայացվել է հայցը բավարարելու և հայցվորին ընտրողների ցուցակներում ընդգրկելու վերաբերյալ վճիռ, իսկ 61 հայց մերժվել, կարճվել կամ վերադարձվել է: Բավարարված 178 վճիռներից ոչ բոլորով են քաղաքացիները դիմել անձնագրային ծառայություններ ընտրություններին մասնակցելու համար տեղեկանքներ ստանալու համար: Անձնագրերի և վիզաների վարչությունում առկա տեղեկատվության համաձայն՝ դատարանների վճիռների հիման վրա տրամադրված տեղեկանքների թիվը կազմում է 59:

Ներկայացնելով դիմողների կողմից որպես ենթադրյալ խախտումների վարկած մատնանշված 2021 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 20-ը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ 70 000-ով ավելի անձը հաստատող փաստաթուղթ տպագրված լինելու փաստը (238 912)՝ հարակից պատասխանողը նշում է, որ նոր կորոնավիրուսային հիվանդության տարածմամբ պայմանավորված՝ տպագրված փաստաթղթերի քանակային տարբերությունն արդարացված է՝ փաստարկելով, որ 2019 թվականի 1-ին կիսամյակում տպագրված անձը հաստատող փաստաթղթերի թիվը կազմել է

239 772՝ հազարով ավելի, իսկ 2018 թվականի նույն ժամանակահատվածում 275 669՝ շուրջ 37 հազարով ավելի:

Անդրադառնալով նաև «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի կողմից հիշատակված պրոֆիլակտիկ գրույցներին վերաբերող հարցին՝ հարակից պատասխանողը փաստել է, որ Ազգային ժողովի ընտրությունների քարոզարշավի մեկնարկից սկսած՝ ՀՀ ոստիկանությունը համագործակցել է ընտրությունների մասնակից կուսակցությունների և դաշինքների հետ, տեղերում հանդիպումներ է ունեցել նրանց շտաբների ներկայացուցիչների հետ: Վերջիններիս հետ փոխանակվել են կոնտակտային տվյալներով, ունեցել են պրոֆիլակտիկ գրույցներ, ինչի նպատակն է եղել արագ արձագանքել հնարավոր ընտրախախտումներին, դրանց կանխարգելմանն ու բացահայտմանը, ինչպես նաև հասարակական կարգի առավել արդյունավետ ապահովմանը:

5.3. ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի դիրքորոշումը

Հարակից պատասխանողը նշում է, որ ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզարշավի մեկնարկից առաջ ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով կամ ՀՌՀ) ընդունել է համապատասխան որոշումներ՝ ուղղված ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի համար Հանրային հեռարձակողի եթերում հավասար և մատչելի ներկայության ապահովմանը: Հանձնաժողովի կողմից կազմակերպվել են սեմինար-դասընթացներ, որոնց նպատակը հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը, նախընտրական քարոզչությունը կարգավորող օրենսդրության պահանջները, նախընտրական շրջանում հեռարձակողների իրավունքները և պարտականությունները, էթիկայի կանոնների չպահպանման հետևանքները ներկայացնելն էր:

Հարակից պատասխանողը շեշտել է, որ թեև խնդրո առարկա ընտրությունների ընթացքում կուսակցությունները/դաշինքները հնարավորություն ունեին հանրային հեռուստատեսության և ռադիոյի եթերում անվճար տեղադրել 2340 րոպե քարոզչական նյութեր, սակայն վերջիններս իրենց հիշատակված իրավունքն իրացրել են մասամբ:

Հանձնաժողովն արձանագրել է, որ ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում հեռարձակողների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների կողմից Հանձնաժողով

բողոքներ չեն ներկայացվել, իսկ 08.06.2021թ. «Հայաստան» դաշինքի ներկայացուցչի կողմից նախընտրական և ընտրական ժամանակահատվածին չվերաբերող բողոքին և 09.06.2021թ. «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի ներկայացուցչի կողմից ներկայացված նույնաբովանդակ բողոքին տրվել են համապատասխան պատասխաններ:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում ՀՈՀ մշտադիտարկման արդյունքներով հարուցվել է 9 վարչական վարույթ, որոնց շրջանակներում Հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 1-ի թիվ 111-Ա որոշման համաձայն՝ «Ազատություն Թիվի» ՍՊԸ-ի հանդեպ կիրառվել է տուգանք՝ 200 000 ՀՀ դրամ, «ՖՄ-105,5» ՍՊԸ-ի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճվել է՝ Հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 1-ի թիվ 118-Ա որոշման համաձայն, իսկ «Զագեձոր հեռուստաընկերություն» ՍՊԸ-ի նկատմամբ 2021 թվականի հունիսի 11-ին հարուցված վարչական վարույթը չի ավարտվել: Հեղինակագրված «Ազատություն Թիվի» ՍՊԸ-ի («Ազատություն Թիվի» տեսալսողական ծրագիր), «Ֆրի Նյուզ» ՍՊԸ-ի («Ֆրի Նյուզ» տեսալսողական ծրագիր), «Մուլտի Մեդիա-Կենտրոն Թիվի» ՓԲԸ-ի («Կենտրոն» տեսալսողական ծրագիր), «Շարկ» ՍՊԸ-ի («5-րդ ալիք» տեսալսողական ծրագիր), «Հուսաբեր» ՓԲԸ-ի («Երկիր Մեդիա» ծրագիր) և «Արմնյուզ» ՓԲԸ-ի («Արմնյուզ» ծրագիր) հանդեպ ՀՀ օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ հեռարձակման հիմքով հարուցվել են վարչական վարույթներ, որոնց արդյունքում Հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 1-ի որոշումների հիման վրա ընկերությունների հանդեպ կիրառվել է տույժ՝ գրավոր նախազգուշացում:

Հանձնաժողովն արձանագրում է, որ առկա է առանձին հեռուստա-ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամանակի անհամաչափություն, որը պայմանավորված է կուսակցությունների/դաշինքների կողմից իրենց նախընտրական քարոզչության գործընթացների պլանավորման և իրականացման, միջոցառումների քանակական, տարածքային և ժամանակացուցային բաշխման տարբերություններով, հետևաբար՝ դա չի կարելի գնահատել իբրև հեռուստառադիոընկերությունների կողմից քաղաքական ուժերի համար հավասար պայմանների ապահովման խախտում:

Հանձնաժողովի գնահատմամբ նախընտրական քարոզարշավի ընթացքում քաղաքական ուժերը ցուցաբերել են բարձր ակտիվություն. 07.06.2021թ.-18.06.2021թ. ժամանակահատվածում կուսակցություններին/դաշինքներին տրամադրված եթերաժամանակն անվճար և վճարովի նախընտրական գո-

վագդի համար հեռուստաձրագրերում և ռադիոձրագրերում կազմել է 28 700 ռուպե /478 ժամ/, իսկ լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում քարոզչական ու ընտրություններին առնչվող նյութերի ընդհանուր ծավալը կազմել է մոտ 79 000 ռուպե /1316 ժ/:

Հանձնաժողովը փաստում է, որ նախընտրական շրջանում աճել է կոշտ, անհանդուրժող և սադրիչ հռետորաբանությունը, ատելությունը, կշտամբանքը, սակայն էթիկայի խախտումները լրատվամիջոցների ինքնակարգավորման տիրույթում են:

6. Որպես երրորդ անձ ներգրավված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դիրքորոշումը

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը գտնում է, որ սույն գործով չեն ներկայացվել ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու կամ անվավեր ճանաչելու և մանդատների բաշխման կարգ սահմանելու կամ ընտրության երկրորդ փուլ նշանակելու օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության մասով պատշաճ հիմնավորումներ, ընտրական խախտումների մասով վերաբերելի ապացույցներ: Թե՛ տեղամասային մակարդակում, թե՛ համապետական մակարդակում ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու նվազագույն չափանիշն այնպիսի ընտրախախտումների առկայությունն է, որոնք ազդեցություն են ունենում ընտրության ելքի վրա կամ համակարգային փոխկապակցվածություն ունեցող կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական ընտրախախտումները, որոնք խաթարում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները: Սույն գործով ներկայացված չեն տեղեկություններ որևէ նման ընտրախախտման մասին, բերված հիմնավորումները ձևական բնույթ ունեն: Հատկանշական է նաև, որ գրեթե բացակայում են ընտրական խախտումների արձանագրման մասով անհրաժեշտ իրավական գործընթացները:

Անդրադառնալով բռնության կոչերի, ատելության խոսքի և դրանց՝ ընտրական իրավունքի ազատության և հավասարության վրա ազդեցությանը՝ երրորդ անձը գտնում է, որ Ն. Փաշինյանի կողմից բազմիցս նշվել է, որ խոսքը բռնության մասին չէ, ֆիզիկական հաշվեհարդարի և նման երևույթների մասին, ինչպես նաև ակնհայտ է, որ քաղաքական սուր խոսքը, որը դիմողների կողմից անհիմն որակվում է իբրև բռնության կոչ, ուղղված է բացառապես այն անձանց, որոնք փորձ կկատարեն ապօրինի ներագդել ընտրողների կամքի վրա: Անձանց հիշատակված խուճբը ոչ մի կերպ չի կարող դիտարկվել որպես այնպիսի խուճբ, որի պաշտպանվող հատկանիշով պայմանավորված հնչեցվում է բռնության կոչ:

Վարչական ռեսուրսի կիրառման վերաբերյալ երրորդ անձը նշում է, որ թիվ ՎԴ/6999/05/21 վարչական գործի շրջանակներում վարչական դատարանի կողմից ներկայացվել են սպառնիչ պատճառաբանություններ, թե ինչու «Հայաստան» դաշինքի կողմից ներկայացված դրվագներում առկա չէ վարչական ռեսուրսի չարաշահում: Ինչ վերաբերում է դատարանի վերլուծությանը Հայաստանի Հանրապետության մարզպետարաններից մեկի աշխատակցի և երկու մանկավարժների վերաբերյալ, ապա տվյալ դեպքում առավելագույնը գործ ունենք կոնկրետ անձանց կողմից Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի արգելքի խախտման հետ, բայց ոչ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կամ գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմից վարչական ռեսուրսի չարաշահման դեպքի հետ, որը դիմողների կողմից վերագրվում է վերջիններիս:

Հայաստանի Հանրապետության անձնագիր ունեցող անձանց՝ ընտրություններին մասնակցելու անհնարինության վերաբերյալ երրորդ անձը փաստում է, որ անձնագրային և վիզաների վարչության կողմից բավարարվել են Արցախի հաշվառում ունեցող բոլոր այն անձանց դիմումները, որոնք ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերել «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքով սահմանված կարգով, սակայն հետագայում բնակության են մեկնել Արցախի Հանրապետություն (այդ թվում՝ վերաբնակեցման ծրագրերով) և, Հայաստանի Հանրապետությունում չունենալով հաշվառում, օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել են անձնագրային և վիզաների վարչություն ընտրություններին մասնակցելու նպատակով ըստ գտնվելու վայրի համապատասխան ընտրողների ցուցակում ընդգրկվելու համար: Ընդ որում, անձնագրային և վիզաների վարչության ստորաբաժանումների կողմից կայացված՝ ընտրություններին մասնակցելու վերաբերյալ դիմումների մերժումները վերջնական չեն, օրենսդրությամբ նախատեսված է դրանց բողոքարկման իրավական հնարավորություն, ինչով պայմանավորված՝ որոշումների մի մասը բողոքարկվել է դատական կարգով:

Երրորդ անձը հայտնում է, որ ինչ վերաբերում է զորամասերում հաշվառված անձանց քվեարկության տեղամասի գաղտնիության պայմանին, ապա դա ուղղակիորեն նախատեսված է Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 12-րդ մասով:

Անդրադառնալով դիմողների մի շարք այլ փաստարկներին՝ երրորդ անձը եզրահանգում է, որ Մահմանադրական դատարանի կողմից սույն գործով պետք է կայացվի «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 13-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումն ուժի մեջ թողնելու մասին որոշում:

7. Հարցումների արդյունքում Սահմանադրական դատարանում ստացվել են հետևյալ տեղեկությունները.

ՀՀ գլխավոր դատախազությունից՝

Չանգվածային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումներից առանձնացվել են զուտ իրենց բովանդակային նկարագրությամբ, առերևույթ ընտրական բնույթի հանցագործության հատկանիշներ պարունակող **375** հաղորդումներ: Բացի հիշատակված հաղորդումներից, ստուգման առարկա են դարձել նաև ՀՀ գլխավոր դատախազության Թեժ գծով և ՀՀ ոստիկանությունում ստացված նույն բնույթի **486** ահազանգերը: Ձեռնարկված օրենքով նախատեսված միջոցների արդյունքում 06.07.2021թ. դրությամբ, բացի 60 դեպքերով հարուցված քրեական գործերից, մնացած բոլոր դեպքերով հաղորդումներում նշված հանգամանքներն արդեն իսկ հերքվել են, քրեական գործ հարուցելու հիմքեր ձեռք չեն բերվել: Ձեռնարկված քննչական և օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում 60 դեպքերով արդեն հարուցվել են քրեական գործեր:

Առերևույթ ընտրական հանցագործությունների դեպքերով հարուցված 5 քրեական գործով նախաքննությունն ավարտվել է, որոնցից երկուսը վերաբերում են ընտրակաշառք տալուն, երկուսը՝ մի քանի անձանց ընտրություններին մասնակցելուն, կուսակցությունների կամ դաշինքի օգտին կողմ քվեարկելուն հարկադրելուն, ևս մեկը՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելուն հարկադրելուն: Նշված գործերից երեքը՝ 3 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար:

ՀՀ ոստիկանությունից՝

Ըստ ՀՀ ոստիկանության 10.07.2021թ. Սահմանադրական դատարան ներկայացված տեղեկանքի՝ ՀՀ Ազգային ժողովի 20.06.2021թ. արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում տեղի ունեցած իրավախախտումների վերաբերյալ ստացված տեղեկություններով մինչև քվեարկության օրը ՀՀ ոստիկանությունում արձանագրվել է 285 դեպք, որոնցից որպես հանցագործության վերաբերյալ հաղորդում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով ընթացք է տրվել 132 դեպքի, իսկ 153-ը չեն պարունակել առերևույթ հանցագործության հատկանիշներ և ստուգվել են որպես պատահար: Նշված 132 նյութերից 27-ով հարուցվել է քրեական գործ (միայն ՀՀ ոստիկանության կողմից), 57-ով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին, 58-ն ուղարկվել է նախաքննության, 1-ն ուղարկվել է ռազմական ոստիկանություն, 16 դեպքերով նա-

խապատրաստվում են նյութեր: Ընտրությունների օրը և հետընտրական ժամանակահատվածում ՀՀ ոստիկանությունում արձանագրվել է 600 դեպք, որոնցից որպես հանցագործության վերաբերյալ հաղորդում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով ընթացք է տրվել 355 դեպքի, իսկ 245-ը չեն պարունակել առերևույթ հանցագործության հատկանիշներ և ստուգվել են որպես պատահար: Նշված 355 նյութերից 10-ով հարուցվել է քրեական գործ (միայն ՀՀ ոստիկանության կողմից), 31-ով որոշում է կայացվել քրեական գործի հարուցելը մերժելու մասին, 122-ն ուղարկվել է նախաքննության, 3-ն ուղարկվել է այլ մարմին, 199-ով նախապատրաստվում են նյութեր: ՀՀ ոստիկանությունում գործող Թեժ գիծ ծառայության միջոցով ստացվել է 97 ահազանգ, իսկ ԱԳՀ և միջազգային դիտորդներից ահազանգեր չեն ստացվել:

ՀՀ քննչական կոմիտեից՝

ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին առնչվող՝ ՀՀ քննչական կոմիտեի իրավասության շրջանակներում, Կոմիտեի ստորաբաժանումներում ստացվել, ինչպես նաև նախապատրաստվել է 148 նյութ, որից՝

- 11-ով հարուցվել է քրեական գործ,
- 121-ով որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին,
- 16-ով լրացուցիչ նյութեր են նախապատրաստվում:

Բացի հարուցված 11 քրեական գործերից, դատախազությունից և հետաքննության մարմիններից ստացվել են նրանց կողմից հարուցված ևս 9-ը քրեական գործեր: Ընդհանուր 20 քրեական գործերից 1-ի նախաքննությունն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 149.1-րդ հոդված, 1 մեղադրյալ, խափանման միջոցը կալանավորում), 2-ն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն (ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդված), իսկ մնացած 17-ով նախաքննությունը շարունակվում է:

17 քրեական գործերով մեղադրանք է առաջադրվել 6 անձի, որոնց նկատմամբ խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունից՝

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթում քննվել է ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին առնչվող 33 քրեական գործ, որից՝

- 3 քրեական գործ՝ 4 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատարան (1 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ գործուն գոչալու հիմքով),

- 2-ը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով,

- 2-ը միացվել է այլ քրեական գործի,

- 26-ի նախաքննությունը շարունակվում է:

Մեղադրանք է առաջադրվել 52 անձի, որից՝

- 13-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը,

- 35 անձի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին,

- 2-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում՝ խափանման միջոց կիրառելով կալանքը:

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթում նախապատրաստվել է ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին առնչվող 6 նյութ, որից՝

- 4-ով քրեական գործի հարուցումը մերժվել է,

- 2-ով հարուցվել է քրեական գործ:

ՀՀ դատական ղեկարարամեթոդից և վարչական դատարանից՝

Ընտրությունների ընթացքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից ստացվել է 225 հայցադիմում և 27 հայցադիմում՝ վարչական դատարանի կողմից:

8. Դիտորդական առաքելությունների կարծիքները

2021 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների վերաբերյալ նախնական եզրակացության մեջ (կազմվել է ընդհանուր նախաձեռնության արդյունքում, որում ներգրավված են ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը (ԵԱՀԿ ԽՎ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) և Եվրոպական խորհրդարանը (ԵԽ), մասնավորապես, նշված է. «(...) արտահերթ խորհրդարանական ընտրությունները եղել են մրցունակ և, ընդհանուր առմամբ, կառավարվել են պատշաճ կերպով կարճ ժամանակահատվածում: Այնուհանդերձ, դրանք բնութագրվել են ինտենսիվ սուր բևեռացվածությամբ և առանցքային մասնակիցների աճող սադրիչ հռետորաբանությամբ: Իրավական դաշտը, ընդհանուր առմամբ, համապարփակ է, սակայն այն փաստը, որ փոփոխություններն ընդունվել են ընտրությունների անցկացման ժամկետին այդքան մոտ ժամանակահատվածում, որոշակի իրա-

վական անորոշություն է առաջացրել: Ընտրությունները կազմակերպող և անցկացնող մարմինն իր աշխատանքը կատարել է թափանցիկ, կոլեգիալ և մասնագիտորեն և վայելել է ընտրական շահառուների վստահությունը: Ընտրողներն ունեցել են ընտրության լայն հնարավորություն, և հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ընդհանուր առմամբ, հարգվել են: Մասնակիցները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել: Այնուհանդերձ, քարոզչության բացասական տոնայնությունը և անձնավորվածությունը խոչընդոտել են քաղաքականության շուրջ կենտրոնացված քննարկումների անցկացմանը: (...) Ընտրությունների օրը, ներառյալ ձայների հաշվարկը, ընդհանուր առմամբ դրական են գնահատվել: Քվեարկության օրը՝ ներառյալ ձայների հաշվարկը, ընդհանուր առմամբ գնահատվել է դրական:

(...) Իրավական դաշտը մեծամասամբ նպաստավոր է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար և, չնայած որոշ թերությունների, ապահովել է ընտրական գործընթացի բաղադրիչների համապարփակ կարգավորում:

(...) Հիմնարար իրավունքները և ազատությունները հիմնականում հարգվել են, և մրցակիցներն ունեցել են ազատ քարոզարշավ անցկացնելու հնարավորություն»¹:

ԱԳՀ դիտորդական առաքելության ներկայացուցիչները եզրահանգել են, որ 2021 թվականի հունիսի 20-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվել են Սահմանադրությանը և Ընտրական օրենսգրքին համապատասխան, բազմակուսակցական հենքի վրա, եղել են թափանցիկ և մրցունակ, բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովներն ապահովել են պայմաններ քաղաքացիների ազատ կամահայտնության իրացման համար:

9. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանը սույն գործով անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հանգամանքներին.

- արդյոք Սահմանադրության համաձայն վարչապետի պաշտոնից հրաժարական տված անձն իրավասու է շարունակել պաշտոնավարել վարչապետի պաշտոնակատարի կարգավիճակում մինչև նորանշանակ վարչապետի պաշտոնի ստանձնումը,

- արդյոք ընտրությունների և դրան նախորդող ժամանակահատվածում տեղ է գտել վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործում,

¹ <https://www.osce.org/files/f/documents/0/c/490436.pdf>

- արդյոք նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեղի են ունեցել բռնության կոչեր, սպառնալիքներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքի վրա,

- արդյոք դիմողների կողմից Սահմանադրական դատարան ներկայացված այլ փաստերն ու փաստարկներն ունեն սպացուցողական նշանակություն:

10. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

10.1. Սահմանադրական դատարանն ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի քննության առանձնահատկությունների թվին է դասել.

« (...)

- ընտրություններն անվավեր ճանաչելու կամ չճանաչելու որոշումը յուրաքանչյուր դեպքում կախված է կոնկրետ հանգամանքներից և պետք է հաշվի առնել իրավաբանորեն փաստարկված խախտման լրջությունն ու ծանրությունը, խախտումների ընդգրկման ծավալը, խախտումներ կատարելու միջոցներն ու ձևերը,

- (...) գործեր քննելիս՝ սահմանադրական դատարանը պետք է ելնի ոչ միայն Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, այլև ընտրական գործընթացի, ողջ ընտրական համակարգի հուսալիության ու վստահելիության հանգամանքից՝ օրենսդրությանը համապատասխան այն կազմակերպելու և անցկացնելու առումով,

- ընտրական իրավունքների սպացուցված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ընտրությունների արդյունքները վերանայելու համար, սակայն այդ վերանայման էական բովանդակությունը պետք է կազմի այն հարցի պատասխանը, թե արդյոք առկա իրավախախտումներն այնպիսի ընդգրկում ունեն, որ կարող են կասկածի տակ դնել ամբողջ ընտրությունների արդյունքները և վավերությունը,

- որևէ ընտրատեղամասում կամ տարածքում կատարված խախտումները չեն կարող հիմք հանդիսանալ այլ տեղամասերում նմանատիպ խախտումների մասին ենթադրություններ անելու կամ վստահության աստիճանը կասկածի տակ դնելու համար: Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ միայն իրավաբանորեն փաստարկված այն կոնկրետ խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա,

- ընտրությունների արդյունքները կարող են անվավեր ճանաչվել, եթե խախտումներն էապես ազդել են թեկնածուների ստացած ձայների հարա-

բերակցության վրա և ընդհանուր արդյունքն աղավաղված է» (24.03.2003թ., ՍԴՈ-408):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության համար անհրաժեշտ է.

- նկատի ունենալ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով,

- հստակ պատկերացնել դատական յուրաքանչյուր ատյանի իրավագործության շրջանակները,

- օրենքով սահմանված ժամկետներում և կարգով իրականացնել ընտրական իրավունքի պաշտպանությանն ուղղված միջոցներն այն դատարանում, որն ունի համապատասխան իրավագործություն,

- հաշվի առնել, որ ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցերով Սահմանադրական դատարանը ոչ թե այլ դատարանների նկատմամբ վերադաս դատարան է, այլ իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված կոնկրետ իրավասություն:

10.2. Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Սահմանադրությունն ամրագրում է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքները, որոնք եզրագծում են ընտրական իրավահարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման կառուցակարգերը:

Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի ուժով Հայաստանի Հանրապետությունն ունի իր քաղաքացիների (բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի) որոշ սահմանադրաիրավական պայմանների առկայության պարագայում ընտրելու և ընտրվելու իրավունքն ապահովելու պարտականություն: Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքով օժտված են Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Նույն հոդվածի ուժով՝ Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու իրավունքով օժտված է քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությո-

յունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Սահմանադրության նույն հոդվածով սահմանվում է նաև, որ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Հավասար ընտրական իրավունքի սկզբունքի էությունը «մեկ ընտրող՝ մեկ ձայն» բանաձևի ապահովումն է, ենթադրում է պետության պարտականությունը՝ արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի միջոցով բացառելու կրկնակի/բազմակի քվեարկությունների հնարավորությունը, ինչպես նաև ապահովելու մասնակցային հավասար հնարավորություններ ընտրական գործընթացին մասնակից քաղաքական միավորների համար:

Հավասար ընտրական իրավունքի՝ հնարավորությունների հավասարության տարրը բացահայտվել է Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1028 որոշմամբ, որում դատարանը, մասնավորապես, նշել է. «... հնարավորությունների հավասարությունը հավասար ընտրական իրավունքի կարևոր բաղադրատարրերից է: Վերջինս իր հերթին ներառում է, մասնավորապես, այնպիսի պայմաններ, ինչպիսիք են լրատվամիջոցների կողմից լուսաբանումը, ռադիոյի և հեռուստատեսության եթերաժամերի տրամադրումը, ընտրարշավի անկաշկանդ իրականացումը, խոսքի և արտահայտվելու ազատության երաշխավորումը, ընտրարշավի ֆինանսավորման թափանցիկությունը և այլն»:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ՝ «... վերահաստատում է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ ընտրական գործընթացի սուբյեկտներին հավասար հնարավորությունների ընձեռումը սերտորեն առնչվում է ընտրողների կարծիքի ձևավորմանը և ենթադրում պետական մարմինների չեզոքություն՝ նախընտրական քարոզչության, զանգվածային լրատվամիջոցների լուսաբանումների նկատմամբ: Սակայն ընտրական գործընթացների կազմակերպման և անցկացման միջազգային իրավական չափանիշների անվերապահ պահպանման անհրաժեշտությունից ելնելով, սույն գործով հարկ է նշել, որ նախընտրական քարոզչության իրականացման արդարության և ազատության սկզբունքը չի կարող մեկնաբանվել այնքան տարածական, որ բացառվի խոսքի, տեղեկատվության ազատության, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների՝ սեփական տեսակետ ունենալու և այն ներկայացնելու իրավունքի իրականացումը» (10.06.2007թ., ՄԴՈ-703):

Ազատ ընտրական իրավունքի սկզբունքը պահանջում է, որ պետությունն ապահովի ընտրողի կամքն ազատորեն ձևավորելու և այն արտահայտելու, ընտրողի քաղաքական կամքի ձևավորման ցանկացած ոչ իրավաչափ միջամտությունը բացառելու, ընտրական գործընթացում մրցակից քաղաքական միավորների կողմից իրենց ծրագրերի և գաղափարների ներկայացման և ընտրողների հետ հաղորդակցվելու հարցերում պետական իշխանության մարմինների չեզոքության, ազատ ընտրության այլ բաղադրիչների իրավական կառուցակարգերի ներդրումը և դրանց արդյունավետ գործարկումը:

Ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքի պահանջն է, որ Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ համայնքների ավագանիների կողմից ընտրվող համայնքների ղեկավարների, ընտրվեն ուղիղ և անմիջականորեն՝ ընտրողների կողմից:

Քվեարկության գաղտնիության սկզբունքի համաձայն՝ պետության պարտականությունն է ապահովել, որ քվեարկության ժամանակ ընտրողի քաղաքական կամքի արտահայտումը տեղի ունենա գաղտնիության պայմաններում և երաշխիքներով:

10.3. Սահմանադրական դատարանը կարևորում է ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճերի քննության ընթացքում կողմերի ներկայացրած փաստարկների՝ Սահմանադրական դատարանի կողմից գնահատման չափանիշների բացահայտման անհրաժեշտությունը:

Նախ՝ Սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 28-ի ՍԴՈ-1364 որոշման մեջ ամրագրված է. «ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված վերոհիշյալ իրավակարգավորումներից և ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 6-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված պահանջից հետևում է, որ.

ա/ ընտրական գործընթացին մասնակից իրավասուբյեկտները պարտավոր են օրենքով սահմանված ժամկետներում և կարգով իրականացնել ընտրական իրավունքի պաշտպանությանն ուղղված միջոցներն այն դատարանում, որն ունի համապատասխան իրավագործություն,

բ/ հաշվի առնեն, որ ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցերով ՀՀ սահմանադրական դատարանը ոչ թե այլ դատարանների նկատմամբ վերադաս դատարան է, այլ իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված կոնկրետ լիազորություն և Սահմանադրական դատարանի վրա նույնպես տարածվում է ՀՀ Սահմանադրության (2015թ. փո-

փոխություններով) 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը: ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Սահմանադրական դատարանն իրավասու չէ քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը (դիմումները), որոնք նախապես քննության պետք է առնվեն և իրավական լուծում ստանան վարչական (արտադատական) կարգով կամ ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում վերջնական են,

գ/ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը չեն կարող դիտարկվել որպես իրավական նորմի սահմանադրականության վերաբերյալ վեճեր, քանի որ վերջիններիս լուծման համար սահմանադրաիրավական այլ պահանջներ ու ընթացակարգեր են նախատեսված:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում (մասնավորապես ՄԴՈ-1028) նաև բազմիցս շեշտել ու ընտրական գործընթացին մասնակից իրավասույթեկտներին պարզաբանել է, որ (...) ընտրությունների արդյունքներով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած որոշման հետ կապված վեճերով **Սահմանադրական դատարանը պարզում է՝ արդյո՞ք տվյալ որոշման ընդունման ժամանակ իրավական անհրաժեշտ հիմնավորմամբ են առկա եղել ու հաշվի առնվել.**

ա/ քվեարկության արդյունքների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կազմված արձանագրությունը,

բ/ իրավասու դատարանների՝ ընտրական գործընթացին առնչվող ակտերը,

գ/ ընտրական հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքներով ընդունված որոշումները,

դ/ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները,

ե/ քվեարկության արդյունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովների ընդունած որոշումները»:

Վերահաստատելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ Սահմանադրական դատարանում այս տեսակի վեճերով դիմումներին առաջադրված ընտրական իրավունքի՝ օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցները բարեխղճորեն սպառելու պայմանից շեղումները թույլատրելի են միայն այն դեպքերում, երբ դիմողի կամ երրորդ անձի դիրքորոշման հիմքում վկայակոչված հանգամանքն ակնհայտորեն կվկայի Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներից որևէ մեկի խախտման մասին:

Ամեն դեպքում, Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճերով դիմողը պարտավոր է ապահովել իր պահանջի համար

հիմք ծառայող հանգամանքների ապացուցման համար անհրաժեշտ նվազագույն ապացուցողական շեմը: Այլապես՝ Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով այս տեսակի վեճի քննության համար ժամանակի սղությունը, դատավարության մասնակից իրավասուբյեկտների հնարավոր ընդարձակ կազմը, ուսումնասիրության և քննության համար ներկայացվող նյութերի և տեղեկատվության՝ այլ տեսակի գործերի և դատավարությունների համեմատ բազմակի ավել ծավալը, բազմաշերտ իրավահարաբերությունների առկայությամբ հնարավոր հարցադրումների և քննության ենթակա հարցերի հնարավոր մեծ շրջանակը, ինչպես նաև արդարադատության կազմակերպման համար կարևորություն ունեցող այլ խնդիրները, չի կարող թույլ տալ սույն տեսակի վեճի լուծման համար առնվազն *prima facie* կարևորություն չունեցող հանգամանքների կամ դրանց առկայության կամ բացակայության վերաբերյալ փաստարկումների *prima facie* հիմնավորվածության բացակայության պայմաններում քննությամբ վտանգել նման վեճերին առաջադրվող ժամկետային սահմանափակումների նպատակը, այն է՝ ժողովրդավարական գործընթացի (ազատ ընտրությունների) արդյունքի օր առաջ կենսագործումն ու սահմանադրական կայունությունը:

Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրախախտումների առկայության հնարավորության կամ դրանց ազդեցության մասին ենթադրությունները, ինչպես նաև նման ընտրախախտումների դրվագային դրսևորումները չեն կարող բավարար լինել Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճերով դիմողին առաջադրվող ապացուցման շեմը բավարարված համարելու դատողության, հետևաբար՝ Սահմանադրական դատարանի կողմից այդ հանգամանքը քննության առարկա դարձնելու համար:

Ուստի՝ սույն գործով դիմողների և երրորդ անձի ներկայացրած հանգամանքների նվազագույն ապացուցողական շեմի բավարար լինելը և դրանց՝ սույն գործի ելքի համար նշանակությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն առաջնորդվելու է իր կողմից նախկինում արտահայտված և վերը նշված մոտեցմամբ:

Միևնույն ժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 10-րդ մասի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը նշում է, որ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի լուծման դեպքում նախատեսվել է հատուկ կանոն, ըստ որի՝ դիմող կողմի ներկայացրած տեղեկությունները համարվում են հավաստի, որը գործում է բացառապես ներքոնշյալ երկու նախապայմանների միաժամանակյա առկայության պարագայում:

- պատասխանող կողմը հրաժարվում է դրանց վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելուց,

- դրանք չեն հերքվում Սահմանադրական դատարանի կողմից ձեռք բերված, տվյալ գործով որոշում ընդունելու համար էական նշանակություն ունեցող այլ ապացույցներով:

Այսինքն՝ նշված երկու նախապայմաններից նույնիսկ մեկի բացակայության պարագայում չի գործում դիմող կողմի ներկայացրած տեղեկությունների հավաստիության կանխավարկածը: Միևնույն ժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 11-րդ մասին համապատասխան՝ այն դեպքում, երբ պատասխանող կողմն ընդունում է այն հանգամանքները, որոնցով դիմող կողմը հիմնավորում է իր պահանջներն ու առարկությունները, ապա դիմող կողմն ազատվում է այդ հանգամանքների վերաբերյալ հետագայում ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունից:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 14-րդ մասի իրավակարգավորմանը, որի համաձայն՝ եթե գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանը, սպառելով ապացույցներ ձեռք բերելու համար սույն օրենքով նախատեսված բոլոր միջոցները, այդուհանդերձ, հնարավորություն չի ունեցել պարզելու ընտրությունների իրական արդյունքները, սակայն Սահմանադրական դատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է դարձել, որ ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, ապա որոշում ընդունելիս Սահմանադրական դատարանն իրավասու է այդ հիմքով անվավեր ճանաչելու ընտրությունների արդյունքները: Այս համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու լիազորության իրացման համար անհրաժեշտ է երկու պայմանի միաժամանակյա առկայություն՝ «ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ» և «դրանց համադրումը վկայում է վերջիններիս միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները»:

Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու՝ խնդրո առարկա բնութագրիչներն օբյեկտիվորեն անհրաժեշտ է դիտարկել համակցության մեջ՝ վերհանելով դրանց համակարգային փոխկապակցվածությունը՝ պարզելու՝ արդյոք դրանք իրենց տեսակով և հատկանիշներով էական բնույթ կրել են, թե ոչ, այսինքն՝ արդյոք իրենց քանակական և որակական ցուցիչներով եղել են այնպիսին, որ գնահատելով դրանք ողջ ընտրական գործընթացի տիրույթում՝ անվիճելիորեն կարելի է փաստել, որ ազդել են ընտրությունների ելքի վրա՝ խաթարելով Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի որևէ սկզբունք:

10.4. Անդրադառնալով դիմողների՝ 2021 թվականի ապրիլի 25-ին վարչապետ Ն. Փաշինյանի հրաժարականից հետո վարչապետի պաշտոնակատարի կարգավիճակում պաշտոնավարման հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի համար էական նշանակություն ունեցող հանգամանք է, քանզի վերաբերում է Հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն պետական պաշտոնատար անձի պաշտոնավարման սահմանադրականությանը, որի բացը կարող է անդրադառնալ 2021 թվականի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության վրա, ինչպես նաև ուղղակի կարևորություն կարող է ունենալ վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ կիրառման հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանի գնահատականի համար:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված հանգամանքը ենթակա է գնահատման Սահմանադրական դատարանի կողմից՝ հաշվի առնելով, որ այն բարձրացվել է երեք դիմողների կողմից Սահմանադրական դատարանում սույն վեճի շրջանակներում, ինչպես նաև, որ սույն գործով պատասխանող ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և հարակից պատասխանող ՀՀ դատախազությունը, դիմողների կողմից իրենց առաջ սույն հարցը բարձրացվելիս, վարչապետի հրաժարականից հետո նույն անձի՝ վարչապետի պաշտոնակատարի կարգավիճակում պաշտոնավարելու օրինականության գնահատականի հարցը դիտարկել են որպես իրենց իրավասությունից դուրս խնդիր:

Սահմանադրական դատարանը մինչ վարչապետի հրաժարականից հետո նույն անձի՝ վարչապետի պաշտոնակատարի կարգավիճակում պաշտոնավարումը շարունակելու սահմանադրականության գնահատումն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վարչապետի նշանակման ընթացակարգերին և գործադիր իշխանության մարմինների համակարգում նրա կարգավիճակին: Մասնավորապես, Սահմանադրությամբ նախատեսված է վարչա-

պետի պաշտոնի ստանձնման երկու ընթացակարգ, որոնցից առաջինի դեպքում Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով Ազգային ժողովի ընտրության արդյունքում ձևավորված քաղաքական մեծամասնության թեկնածուն վարչապետի պաշտոնում նշանակվում է Հանրապետության նախագահի կողմից: Երկրորդ ընթացակարգի դեպքում՝ Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով՝ Հանրապետության նախագահը հրամանագրով վարչապետ է նշանակում Ազգային ժողովի կողմից վարչապետի պաշտոնում ընտրված անձին: Փաստացի, վերը թվարկված երկու դեպքերում՝ վարչապետի պաշտոնում նշանակումը ժողովրդավարական գործընթացների արդյունքում կայացվող որոշում է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ վարչապետի նշանակումից հետո Կառավարությունը ձևավորվում է վարչապետի կողմից Կառավարության անդամների թեկնածությունները Հանրապետության նախագահին ներկայացվելու և նրանց նշանակվելու միջոցով: Այսինքն՝ Հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի ձևավորման հարցում վարչապետի նշանակման որոշումը, անկախ նրանից՝ դա կատարվել է որպես Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համապետական ընտրության արդյունքում ժողովրդի կողմից կայացված որոշմամբ, թե նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ Ազգային ժողովի՝ որպես ժողովրդի ներկայացուցչական մարմնի կողմից կայացված որոշմամբ, Կառավարության ժողովրդավարական լեգիտիմության հիմնական աղբյուրն է և Կառավարության ձևավորման անփոխարինելի պայմանը:

Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումներում և դատաքննության ընթացքում իրենց բացատրություններում «Հայաստան» դաշինքի, «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի և «Հայոց Հայրենիք» կուսակցության ներկայացուցիչները վարչապետի պաշտոնակատարի պաշտոնավարման կարգավորումներին վերաբերող սահմանադրական դրույթների մեկնաբանության հիմքում դրել են «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի դրույթները: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ Սահմանադրության նորմերի իրավական բովանդակության բացահայտման և դրանց մեկնաբանման նպատակով օրենսդրի կամքը չի դիտարկվել որպես ուղենիշ:

Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ժողովրդաիշխանության և ժողովրդավարական ինստիտուտների առանցքային կարևորության առումով Հանրապետության վարչապետի ինչպես պաշտոնում նշանակման, այնպես էլ այդ պաշտոնում պաշտոնավարման շարունակականության և դադարեցման հարցերը ենթակա են քննարկման ժողովրդավա-

րության պաշտպանության սահմանադրական կարգավորումների և դրանց հիմքում ընկած սկզբունքների և նպատակների համատեքստում:

Սահմանադրի կողմից հստակորեն նկարագրված՝ վարչապետի պաշտոնում նշանակման և պաշտոնի ստանձնման կարգի հետ մեկտեղ վարչապետի պաշտոնում նշանակված անձի պաշտոնավարման դադարեցումը նույնպես հստակորեն նկարագրված է սահմանադրական կարգավորումներով՝ որպես ժողովրդավարական գործընթացի արդյունքում կայացված որոշմանը միջամտություն կամ նման միջամտության բացառման երաշխիք: Մասնավորապես, Սահմանադրության 147-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից: Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչապետի հրաժարական ներկայացնելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում Կառավարության հրաժարականն ընդունվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ:

Սահմանադրության 158-րդ հոդվածի ուժով Կառավարությունը Հանրապետության նախագահին ներկայացնում է իր հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի, Կառավարությանը վստահություն չհայտնելու, Կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը: Կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև նոր Կառավարության կազմավորումը:

Վերոշարադրյալ իրավանորմների համակարգային վերլուծությունից բխում է, որ սահմանադիրը Սահմանադրության 158-րդ հոդվածում ուղղակիորեն նախատեսել է Կառավարության անդամների պաշտոններում նշանակված անձանց պաշտոնակատարի կարգավիճակում պաշտոնավարելու շարունակականության կանոնը, ինչը բխում է Կառավարության գործառույթների իրականացման անընդհատության անհրաժեշտությունից: Միաժամանակ, հաշվի առնելով վարչապետի նշանակմամբ գործադիր իշխանության բարձրագույն մարմինն՝ Կառավարությանը ժողովրդավարական լեգիտիմությամբ ապահովելու գործող սահմանադրական ընթացակարգերը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Կառավարության հրաժարականից հետո մինչև նորանշանակ վարչապետի պաշտոնի ստանձնումը Կառավարության անդամների պաշտոնավարման շարունակականության սահմանադրական պահանջը վերաբերում է ոչ թե վարչապետից բացի Կառավարության մյուս անդամներին, այլ Կառավարության բոլոր անդամներին, ներառյալ՝ վարչապետի պաշտոնում նշանակված անձի պաշտոնավարմանը:

Համեմատության մեջ դիտարկելով վարչապետի հրաժարականի և Հանրապետության նախագահի հրաժարականի դեպքերը՝ Սահմանադրական դատարանը նկատում է, որ Սահմանադրության 144-րդ հոդվածով ամրագրված է, որ Հանրապետության նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան դեպքերում մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը Հանրապետության նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը: Այսինքն՝ Հանրապետության նախագահի պաշտոնավարման դադարելու դեպքում սահմանադիրը հստակ սահմանել է, թե ով է կատարում Հանրապետության նախագահի լիազորությունները՝ մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը: Մինչդեռ վարչապետի պարագայում Սահմանադրության 152-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է վարչապետին փոխարինելու հնարավորություն՝ բացառապես նրա բացակայության ժամանակ՝ վերջինիս սահմանած կարգով: Ըստ այդմ, փոխվարչապետներից մեկը վարչապետի սահմանած կարգով փոխարինում է վարչապետին նրա բացակայության ժամանակ: Ակնհայտ է, որ տվյալ պարագայում վարչապետի բացակայությունը չի կարող նույնացվել վերջինիս հրաժարականի դեպքի հետ:

Վերը նշվածի հաշվառմամբ պետք է նկատի ունենալ, որ վարչապետի՝ հրաժարական ներկայացնելուց հետո վարչապետի պաշտոնակատարի պաշտոնում պաշտոնավարման շարունակականությունը երաշխավորված է բացառապես վարչապետին առաջադրվող՝ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված պահանջների բավարարման պայմանով: Հրաժարական տված վարչապետի պաշտոնավարման շարունակականության կանոնը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ վարչապետ նշանակված անձը չի բավարարում վարչապետի պաշտոնի համար Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված պահանջները: Վարչապետի հրաժարականից հետո վարչապետի պաշտոնը զբաղեցրած անձի՝ վարչապետի պաշտոնակատարի կարգավիճակում պաշտոնավարումը դադարում է պատգամավորին ներկայացվող պահանջների խախտման, անհամատեղելիության, ինչպես նաև վարչապետի պաշտոնում պաշտոնավարումը դադարելու օրենքով նախատեսված հիմքերի հայտ գալու դեպքերում, ինչպիսիք դիմողների կողմից սույն գործով չեն վկայակոչվել:

Հետևաբար՝ սույն գործով դիմողների և երրորդ անձի ներկայացրած փաստակազմի շրջանակում 2021 թվականի ապրիլի 25-ին վարչապետ Ն. Փաշինյանի՝ վարչապետի պաշտոնից հրաժարականից հետո վարչապետի պաշտոնում պաշտոնավարումը համահունչ է սահմանադրական կարգավորումներին:

10.5. Անդրադառնալով ընտրությունների և դրան նախորդող ժամանակահատվածում վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրությունների ժողովրդավարական բնույթը երաշխավորելու համար նախևառաջ անհրաժեշտ է ապահովել դրանց անցկացումը համընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի, գաղտնի և ուղղակի քվեարկության, օրենսդրությամբ սահմանված պարբերականության գաղափարասկզբունքային հենքի խստիվ պահպանմամբ: Միաժամանակ, կարևոր է նաև ընտրություններում «արդար մրցակցային» դաշտն ապահովելը: Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահումը, խաթարելով ընտրություններում «առողջ մրցակցության» գաղափարը, անառարկելիորեն խարխլում է նաև Սահմանադրությամբ երաշխավորված ընտրական ընդհանուր սկզբունքների կենսագործումը:

Վարչական ռեսուրսի չարաշահման ինստիտուտի իրավական բովանդակության բացահայտման շրջանակներում հիմնարար կարևորություն ունեն Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), ինչպես նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) դիրքորոշումները:

2013 թվականի CDL-AD(2013)033 գեկույցում Վենետիկի հանձնաժողովը *վարչական ռեսուրսը* ներկայացրել է իբրև *ընտրությունների ընթացքում գործող պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների՝ մարդկային, ֆինանսական, նյութական և այլ ռեսուրսները, հանրային զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ նրանց ունեցած վերահսկողության հանգամանքը, ինչպես նաև իրենց դիրքով պայմանավորված՝ հանրային օբյեկտների և ռեսուրսների նկատմամբ ունեցած հասանելիությունը, ինչը կարող է վերածվել քաղաքական կամ այլ ձևաչափի աջակցության:*

«Ընտրական գործընթացների ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահումը կանխելու և դրան արձագանքելու վերաբերյալ» Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ՝ 2016 թվականին ընդունված համատեղ ուղեցույցում (CDL-AD(2016)004) ընդգծվում է, որ՝ «իրավական կարգավորումները պետք է հստակ պահանջներ նախատեսեն քաղաքացիական ծառայողների համար, այն է՝ ընտրական գործընթացների ամբողջ ընթացքում իրենց պաշտոնական պարտականություններն իրականացնելիս գործել անաչառ: Ավելին, իրավական կարգավորումները պետք է երաշխավորեն քաղաքացիական ծառայության չեզոքություն՝ արգելելով քաղաքացիական ծառայողներին քա-

րոզչական գործունեություն իրականացնել իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս, ինչպես այն դեպքում, երբ իրենք թեկնածու են հանդիսանում, այնպես էլ այն դեպքում, երբ աջակցում են թեկնածուներին: Իրավական կարգավորումները պետք է հստակ նորմեր նախատեսեն այն մասին, թե ինչպես և երբ կարող է քարոզչություն իրականացվել, ինչպես նաև ընտրություններին մասնակցող որոշակի պաշտոնատար անձանց լիազորությունների կասեցման կամ հրաժարականի ներկայացման հնարավորություն նախատեսեն»: Ուղեցույցը չի բացառում պաշտոնատար անձ թեկնածուների կողմից ընտրություններին մասնակցելու և քարոզչություն իրականացնելու հնարավորությունն աշխատանքային ժամերից դուրս և առանց վարչական ռեսուրսների չարաշահման:

Որդեգրելով ընտրական գործընթացներում միջազգային հանրային առաջարկած առաջադեմ մոդելները՝ Ընտրական օրենսգիրքը 19-րդ հոդվածում ամրագրում է նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները, իսկ «Նախընտրական քարոզչության սահմանափակումները» վերտառությամբ 23-րդ հոդվածը վարչական ռեսուրսները որակում է որպես մարդկային, ֆինանսական և նյութական միջոցներ, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, և որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

Հիշատակված հոդվածն ուղղակիորեն արգելում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսներն օգտագործելը՝ որպես բացառություն սահմանելով «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրատիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումները:

Վարչական ռեսուրսի չարաշահումներն ընտրական գործընթացներում խաթարում են ժողովրդավարական ընտրությունների անցկացման հիմքերը, քանզի չեն երաշխավորում՝

✓ *բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ. վերջիններս պետք է հավասար հնարավորություն ունենան իրենց թեկնածությունն առա-*

ջադրելու և հավասարությունը երաշխավորող միջավայրում «ազատ մրցակցելու»,

✓ *հավասար վերաբերմունք տարբեր թեկնածուների հանդեպ*. Առանձին ինստիտուտների հետ հարաբերվելիս թեկնածուները պետք է արժանանան նույնական վերաբերմունքի, օրինակ՝ զանգվածային լրատվական միջոցների հասանելիությունը բոլորին,

✓ *ընտրողների կարծիք ձևավորելու ազատությունը*. ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի պետք է գերծ լինի ցանկացած ճշումից, ինչի լավագույն երաշխիքը պետական իշխանության «չեզոքությունն» է, որը պետք է արտահայտվի ընտրողի ազատ կամքի ձևավորման գործընթացում ցանկացած տեսակի «միջամտող» վարքագծի բացառմամբ,

✓ *ընտրական գործընթացում անաչառության սկզբունքի պահպանումը*. պետական իշխանության կողմից ընտրությունների կազմակերպումը պետք է լինի առանց իշխող կուսակցության համար առավելությունների տրամադրման:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ *վարչական ռեսուրսի չարաշահման հնարավոր բացառման ապահովման* տեսանկյունից ՀՀ օրենսդրությունը նախատեսում է մի շարք *իրավական կառուցակարգեր*, մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքն ամրագրում է, որ հանրային ծառայողը, ծառայության առանձնահատկություններին համապատասխան, ծառայողական պարտականությունները կատարելիս քաղաքականապես չեզոք է (հոդված 27)², Ընտրական օրենսգիրքն արգելում է հանրային ծառայության մեջ գտնվող պատգամավորի թեկնածուներին օգտագործել իրենց պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունները (հոդված 91): Ավելին, այն ոչ միայն արգելում է վարչական ռեսուրսի չարաշահումն ընտրական գործընթացներում, այլև սահմանում հստակ մեխանիզմներ համապատասխան իրավախախտումներին իրավական գնահատական տալու համար (հոդված 48), ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու (հոդված 149), քվեարկության գաղտնիությունը խախտելու (հոդված 154), ընտրողներին կաշառք տալու, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտման կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելու (հոդված 154.2), զենքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելու (հոդված 154⁴) և այլ

² «Հանրային ծառայության մասին» օրենքում 07.05.2021թ. կատարված փոփոխության արդյունքում օրենքը լրացվել է 27.1 հոդվածի 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Հանրային ծառայողները ... նախընտրական քարոզչությանը մասնակցելիս իրավունք չունեն հանդես գալու ի պաշտոնե կամ նշելու իրենց պաշտոնեական դիրքի, կոչման մասին կամ որևէ կերպ օգտագործելու պաշտոնի հեղինակությունը որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի օգտին»: Այս փոփոխությունը ողջունել է նաև Վենետիկի հանձնաժողովը իր 21.04.2021թ. թիվ 1026/2021 կարծիքում (կետ 85):

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 3(103)2021

քրեորեն հետապնդելի արարքների համար պատասխանատվություն, որոնք կարող են իրականացվել նաև վարչական ռեսուրսի կիրառմամբ:

Վարչական ռեսուրսի կիրառման դրսևորումները ընտրական գործընթացներում կարող են լինել ինչպես զանգվածային, այնպես էլ սահմանափակ: Այս առումով Սահմանադրական դատարանի գնահատմամբ էական չէ կիրառված ռեսուրսների քանակական բնութագիրը, քանզի մի դեպքում վարչական ռեսուրսի մեկանգամյա կիրառումն անգամ՝ կախված դրա բնույթից, կարող է հանգեցնել համակարգային խնդրի, մեկ այլ դեպքում՝ առանձին դրվագներով վարչական ռեսուրսի կիրառումը, այնուամենայնիվ, կարող է և չհանգեցնել ընտրությունների ելքի վրա որևէ էական ազդեցության (այլ է խնդիրը, որ հանրային իշխանության մարմինները պետք է համարժեք իրավական գնահատականի արժանացնեն յուրաքանչյուր դեպք և կիրառեն պատասխանատվության համաչափ միջոցներ): Խնդրո առարկա հարցի շրջանակներում առավելապես գնահատման ենթակա են վարչական ռեսուրսների օգտագործման որակական բնութագրիչները, քանզի յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է գնահատել դրանց ազդեցությունն ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա: Այս տեսանկյունից Սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել վարչական ռեսուրսների չարաշահման բովանդակությունը, շարունակականությունը, ապա նաև դրա հետևանքներն ընտրական գործընթացի վերջնական արդյունքի վրա:

Դիմողների պնդմամբ «Զաղաքացիական պայմանագիր» կուսակցության և, մասնավորապես, վարչապետի պաշտոնակատարի կողմից նախընտրական քարոզչության մեկնարկից առաջ և ընթացքում, ինչպես նաև ընտրության օրը կիրառվել է վարչական ռեսուրս՝ այդպիսով ակնհայտ առավելություն ձեռք բերելով մյուս կուսակցությունների և դաշինքների նկատմամբ: Այդ առնչությամբ դիմողները ներկայացնում են համապատասխան տեսանյութեր, ինչպես նաև վկայակոչում են ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/6999/05/21 գործով 26.06.2021թ. վճիռը, համաձայն որի՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 19.06.2021թ. թիվ 161-Ա որոշման 1-ին կետը մասնակի՝ «Զաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավին ՀՀ մարզպետարաններից մեկի աշխատակցի և երկու ուսումնական հաստատության աշխատակիցների մասնակցելը որպես Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում չարձանագրելու մասով, ճանաչվել է անվավեր:

Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի ապրիլի 28-ի ՍԴՈ-1364 որոշմամբ փաստել է. «(...) ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանել է նաև նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումների դեպքում վարչական կամ դատական կարգով խնդրի լուծման համապատասխան ընթացակարգեր: Սահմանադրական դատարանը, բազմիցս անդրադառնալով այս

խնդրին, շեշտել է, որ նման ընթացակարգերը, որոնք անմիջականորեն առնչվում են ընտրություններին մասնակցող պատգամավորի թեկնածուների կամ կուսակցությունների ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու խնդրին, պետք է օրենքով սահմանված կարգով բողոքարկվեն և լուծում ստանան մինչև քվեարկության օրը:

Սույն գործի քննությունը վկայեց, որ դիմողն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում տվյալ խնդրի առնչությամբ որևէ իրավաչափ գործողություն չի իրականացրել, և գործում առկա չէ ապացուցողական նշանակություն ունեցող որևէ փաստական հիմք /մասնավորապես՝ դատական ակտ/ հակառակը վկայելու կամ այդ հարցով դիմողի իրավունքների պաշտպանությանը խոչընդոտելու մասին: Նման բնույթի ենթադրյալ խախտումներն իրավասու մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով համարժեք իրավական գնահատական պետք է ստանան, մասնավորապես նաև այն գործերով, որոնք դեռևս քննության առարկա են իրավապահ մարմինների կողմից»:

Թիվ ՎԳ/6999/05/21 վարչական գործի շրջանակներում հայցվորի դատավարական կարգավիճակով հանդես է եկել դիմող «Հայաստան» դաշինքը՝ ներկայացնելով վարչական ռեսուրսի առերևույթ կիրառման մի քանի դրսևորումներ՝ ՀՀ ոստիկանության ծառայողների, պետական պահպանության ծառայողների, վարչապետի աշխատակազմի աշխատակիցների, մարզպետարանների և դրանց հսկողության ներքո գտնվող կառույցների և այլ պետական մարմինների աշխատակիցների ներգրավում նախընտրական քարոզչությանը:

Վարչական դատարանն արձանագրել է, որ տվյալ գործով չի հաստատվել որևէ փաստ այն մասին, որ ոստիկանության ծառայողները ներգրավվել են երրորդ անձի օգտին քվե ստանալու նպատակով: Ավելին, վարչական դատարանը փաստել է, որ հիմք չունի պնդելու, որ երրորդ անձը պետական պահպանության մարմնի միջոցներն օգտագործել է ի շահ իր քաղաքական նպատակների, իսկ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին վերաբերող դրվագով հնարավոր չէ հաստատել, որ նա ներգրավված է նախընտրական քարոզչությանը՝ այդ պահին հանդես գալով ի պաշտոնե և իր դիրքն օգտագործելով ի շահ երրորդ անձի: Նույնիսկ առկա չէ տվյալ այն մասին, որ այդ դրվագն աշխատանքային օր ու ժամին է վերաբերում: Ընդգծելով, որ հանրային ծառայողներին չի արգելվում ներգրավվել նախընտրական քարոզչությանը (բացառությամբ որոշ հատուկ պաշտոնների), վարչական դատարանը շեշտադրել է, որ նրանք այդ ընթացքում չպետք է իրենց դիրքը չարաշահեն, ինչի հաշվին ընտրությանը մասնակցող քաղաքական ուժերից մեկն անարդար առավելություն կստանա մյուսների նկատմամբ: Իսկ նման իրավիճակի մասին վկայող տվյալ դրվագով առկա չէ:

Բացի դրանից, վարչական դատարանն արձանագրել է, որ Սյունիքի մարզպետի ինքնությունը տվյալ դրվագում անվիճելի է, այնուամենայնիվ, միայն այդ դրվագով հնարավոր չէ հաստատել, որ վերջինս օգտագործում է իր վարչական ռեսուրսը երրորդ անձի նախընտրական քարոզարշավի օգտին: Սյունիքի մարզպետի մասնակցությամբ դրվագում ընդհանրապես հնարավոր չէ հստակեցնել կոնկրետ ինչ գործառնություններ է վերջինս այդ պահին իրականացնում: Երևացող իրավիճակում անհնար է մատնանշել մի դեպք, երբ Սյունիքի մարզպետն ի պաշտոնե գործելիս ներգրավված է նախընտրական քարոզչությանը:

Հատկանշական է, որ վարչական դատարանն արձանագրել է, որ ՀՀ մարզպետարաններից մեկի աշխատակիցը, ակնհայտորեն նախընտրական քարոզարշավի շրջանակներում երրորդ անձի կողմից կազմակերպված միջոցառմանը մասնակցելիս լրագրողին հարցազրույց տալիս ներկայանալով որպես «կրթության ոլորտը համակարգող», ընդունում է, որ աշխատանքային ժամին գտնվում է հավաքի վայրում, ավելին՝ բացահայտ խրախուսում է նաև մանկավարժների ներկայությունը՝ իր խոսքով՝ «վարչապետի հանդիպմանը»: Համանման իրավիճակ արձանագրվել է նաև հարցազրույց տվող մանկավարժների դրվագում: Նշված փաստերը վարչական դատարանի կողմից որակվել են իբրև Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում՝ դիտարկվելով որպես վարչական ռեսուրսի չարաշահում:

Հաշվի առնելով վկայակոչված դատական ակտով դիմողի մատնանշած առանձին փաստարկներին վարչական դատարանի կողմից տրված իրավական գնահատականները և նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանում դատական ակտի իրավաչափությունը քննության առարկա չի կարող հանդիսանալ, Սահմանադրական դատարանն այս մասով դիմողի կողմից վկայակոչված փաստարկներին չի անդրադառնում:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ վարչական ռեսուրսի կիրառման այլ դրսևորումների, այդ թվում՝ երեխաների մասնակցությամբ հավաքների անցկացման, Կառավարության կողմից համապատասխան գումարների բաշխման վերաբերյալ սույն գործով դատավարության այլ մասնակիցների կողմից համապատասխան դատական վարույթներ չեն հարուցվել:

Նման պայմաններում Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեև սույն գործով ներկայացված առանձին փաստարկներ ըստ էության վկայում են վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման մասին, սակայն, որպես այդպիսին, դրանք կրում են դրվագային բնույթ: Ավելին, սույն գործով չի հիմնավորվում, որ վարչական ռեսուրսը Ազգային ժողովում քաղաքական մեծամասնությունն ունեցող ուժի կողմից օգտագործվել է կազմակերպված եղանակով:

կով և ունեցել զանգվածային բնույթ, ուստի՝ դրա օգտագործման համադրումը չի փաստում, որ այն որևէ կերպ ազդել է ընտրությունների արդյունքների վրա:

10.6. Դիմողները նշում են նաև նախընտրական քարոզչության ընթացքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու և վարչապետի պաշտոնակատար Ն. Փաշինյանի կողմից բռնության կոչերի, սպառնալիքների և որպես հետևանք ասելության մթնոլորտ ձևավորելու մասին, ինչն ըստ իրենց՝ բացասական և անդառնալի ազդեցություն է ունեցել ընտրությունների արդյունքների վրա:

Որպես Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունք՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է գաղափարախոսական բազմակարծությունը (Սահմանադրության 8-րդ հոդված), իսկ Սահմանադրության 42-րդ հոդվածում ամրագրվել է կարծիքի արտահայտման ազատությունը:

Ինչպես ազատ ընտրությունների իրավունքը, այնպես նաև արտահայտվելու ազատությունը երաշխավորվում են միջազգային փաստաթղթերով: Մասնավորապես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք, իսկ նշված կոնվենցիային կից Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը սահմանում է, որ Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով վերը նշված դրույթներին, նշել է, որ ազատ ընտրությունները և արտահայտվելու ազատությունը, մասնավորապես քաղաքական բանավեճի ազատությունը, միասին կազմում են ցանկացած ժողովրդավարական համակարգի հիմքը (Mathieu-Mohin and Clerfayt v. Belgium, 2 March 1987, § 47; the Lingens v. Austria, 8 July 1986, §§ 41-42): Երկու իրավունքները փոխկապակցված են և գործում են միմյանց ամրապնդման համար. օրինակ՝ խոսքի ազատությունը «օրենսդրի ընտրության հարցում ժողովրդի կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու» համար անհրաժեշտ «պայմաններից» մեկն է (Mathieu-Mohin and Clerfayt, § 54): Այդ պատճառով ընտրություններին նախորդող շրջանում հատկապես կարևոր է, որ բոլոր տեսակի կարծիքներն ու տեղեկությունները թույլատրվեն ազատ շրջանառվել: Ընտրական բանավեճերի համատեքստում թեկնածուների կողմից խոսքի ազատության անխոչընդոտ իրացումն առանձնահատուկ նշանակություն ունի (Kudeshkina v. Russia, 26 February 2009, § 87):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը և դրանց ներկայացուցիչները նախընտրական քարոզչության ընթացքում օգտվում են իրենց կարծիքն արտահայտելու լայն հնարավորություններից, ինչը ժողովրդավարական հասարակությունում հնարավորություն է տալիս ազատորեն ձևավորելու ժողովրդի կամքը, ուստի՝ այն ընտրությունների ազատության սկզբունքի ապահովման անհրաժեշտ պայման է:

Այդուհանդերձ, նախընտրական քարոզչությունը չի կարող ուղեկցվել ասելության, բռնության կոչերով և սպառնալիքներով (եթե անգամ այդ սպառնալիքն իրական չէ), որոնք խաթարում են խաղաղ և առողջ սոցիալական միջավայրը: Քաղաքական ուժերը և դրանց ներկայացուցիչները պետք է նախընտրական քարոզչության ընթացքում դրսևորեն առավելագույն զսպվածություն, քաղաքական կոռեկտություն՝ բացառելով ասելության, բռնության ցանկացած կոչ ու սպառնալիք և արժանապատվությունը նվաստացնող ցանկացած վարքագիծ:

Նախընտրական քարոզչության ընթացքում հնչեցված բռնության կոչերի, սպառնալիքների և նմանաբնույթ այլ հայտարարությունների հարցը քննարկման առարկա է դարձել վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/6861/05/21 վարչական գործով 17.06.2021թ. կայացված վճռով, որով վարչական դատարանը մերժել է «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության հայցն ընդդեմ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, երրորդ անձ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ պատասխանողին դատարան դիմելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Նշված վճռով վարչական դատարանն արձանագրել է. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու Ն. Փաշինյանի կողմից ելույթներում հնչեցված որոշ արտահայտություններ (որոնք, ըստ էության, նույնությամբ ներկայացվում են նաև Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներում) օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող են ընկալվել իբրև բռնության կիրառման սպառնալիքներ, ուստի՝ վարչական դատարանը դա արձանագրել է իբրև նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում: Մյուս կողմից, ելնելով այդ արտահայտությունների՝ տարբեր ժամանակներում հնչեցված լինելու հանգամանքից՝ վարչական դատարանը առկա է համարել նաև այդպիսի խախտման շարունակականությունը:

Այդուհանդերձ, վարչական դատարանը, գնահատելով նախընտրական քարոզչության ընթացքում նշված խախտումների հետևանքները վերացնելու հնարավորության, ինչպես նաև ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցություն ունենալու հարցերը, իր վճռում արձանագրել է, որ բացակայում է և՛ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման՝ հե-

տևանքները վերացնելու անհնարինության չափանիշը, և՛ որ առկա չէ ողջամիտ կասկած այն մասին, որ շարունակական բնույթ կրող նշված խախտումները կարող են էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա: Վարչական դատարանն այս առումով նկատել է, որ՝ «էական ազդեցություն» եզրույթը պետք է դիտարկել ընտրությունների արդյունքների հետ ուղղակի պատճառահետևանքային կապի տեսանկյունից: Դա նշանակում է, որ ազդեցությունը կարող է որակվել էական միայն այն դեպքում, երբ նախընտրական քարոզչության սահմանված կարգի շարունակական խախտման արդյունքում առկա է ռեալ վտանգ կամ այդպիսի հիմնավոր կասկած, որ տեղի է ունեցել ներգործություն ընտրողների այնպիսի զանգվածի ազատ արտահայտման հնարավորության վրա, որը ձայների հարաբերակցության պայմաններում կարող է փոխել ընտրությունների արդյունքը: Ըստ այդմ, խախտման շարունակական բնույթը տվյալ դեպքում խիստ փոխկապակցված է էական ազդեցության հետ, քանի որ միայն դրանց միջև պատճառահետևանքային կապի հաստատման կամ այդպիսի հիմնավոր կասկածի դեպքում հնարավոր է արձանագրել, որ տեղի է ունեցել այնպիսի շարունակական խախտում, որը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա կամ, առկա է այդպիսի հիմնավոր կասկած: Այսինքն՝ սույն դեպքի փաստակազմի և տրված իրավական մեկնաբանության համադրմամբ Դատարանն արձանագրում է, որ առկա չէ ողջամիտ կասկած այն մասին, որ շարունակական բնույթ կրող վերը նշված խախտումները կարող են էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա»:

Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում վարչական դատարանի վկայակոչված վճռով քննարկված հրապարակումներում առկա ձևակերպումների՝ ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցության բացակայությունն ու նաև խախտման հետևանքները վերացնելու հնարավորությունը՝ միաժամանակ վերահաստատելով Սահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված այն դիրքորոշումը, որի համաձայն՝

«... ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցերով ՀՀ սահմանադրական դատարանը ոչ թե այլ դատարանների նկատմամբ վերահաս դատարան է, այլ իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված կոնկրետ իրավասություն» (31.05.2012թ., ՍԴՈ-1028),

«... ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Սահմանադրական դատարանն իրավասու չէ քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը (դիմումները), որոնք նախապես քննության պետք է առնվեն և իրավական լուծում ստանան վարչական (արտադատական) կարգով կամ ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում վերջնական են» (28.04.2017թ., ՍԴՈ-1364):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողների կողմից ներկայացված՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանի կողմից ենթադրյալ բռնության կոչերի և սպառնալիքների՝ ընտրությունների արդյունքի վրա ազդեցության մասին փաստարկները վերացական են, զուրկ են որոշակիությունից և հիմնված են քաղաքական ելույթներից մեջբերված հատվածներում կառուցված առանձին արտահայտությունների վրա՝ առանց դրանց ընդհանուր համատեքստին անդրադարձի:

Ամեն դեպքում, Սահմանադրական դատարանը հարկ է համարում այդ արտահայտություններին անդրադառնալ դրանց հասցեականության տեսանկյունից՝ արձանագրելով, որ չնայած դրանց անընդունելի կոպտությանը և ցնցող ազդեցությանը, վկայակոչված արտահայտությունների համատեքստի վերլուծությունից բխում է, որ դրանք ուղղված են եղել քաղաքական մրցակիցներին և ընտրողների կողմից ողջամտորեն որպես իրենց ուղղված սպառնալիք կամ ատելության խոսք չէին կարող դիտարկվել. հետևաբար՝ չէին կարող ազդեցություն ունենալ ընտրողի քաղաքական կամքի ձևավորման վրա այն աստիճան, որ կանխորոշեին կամ էականորեն ազդեին նրա ընտրության կամ քվեարկությանը չմասնակցելու որոշման վրա:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2021 թվականի հունիսի 20-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին նախորդած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության ընտրողների բարձր իրավագիտակցության, քաղաքական հասունության և քաղաքական իրադարձությունների մասնակցության հարուստ կենսափորձին հանդիման քաղաքական գործիչների քաղաքական խոսքում օգտագործված անթույլատրելիորեն ցածր մշակութային և հանրային՝ բարոյական տեսանկյունից դատապարտելի արտահայտությունների գործելաճը չի կարող վերագրվել միայն մեկ քաղաքական ուժի և դրա ներկայացուցչի: Այն առկա է եղել մրցակցող մի շարք քաղաքական ուժերի և դրանց ներկայացուցիչների հրապարակային խոսքում՝ ցավալիորեն դառնալով Հայաստանում քաղաքական խոսքի մշտական բաղադրիչ:

Սահմանադրական դատարանը նման խոսքի՝ ընտրողների կամքի և ընտրությունների արդյունքի վրա ազդեցության գնահատման և հաշվարկի գիտականորեն հիմնավորված մեթոդների բացակայության պայմաններում խիստ տեսական է գնահատում «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի ներկայացուցչի՝ իր դիրքորոշմանը կից կարծիքին հղմամբ պնդումներն առ այն, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանի քննարկված խոսքը կարող էր ընտրողների

որոշ մասին հանգեցնել հարմարվողականության հակման, իսկ մյուս ազդակիրներին հակեր ընտրություններին չմասնակցելու:

Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դիմողների վկայակոչած՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանի կողմից կիրառված արտահայտությունների՝ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների արդյունքների վրա ունեցած ազդեցության հարցին, գտնում է, որ դրա վերաբերյալ դիմողների պնդումները հիմնավոր չեն:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ վերլուծված՝ վարչապետի սահմանադրական կարգավիճակը և լիազորությունների ծավալը Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության պայմաններում, ինչպես նաև քաղաքական մեծամասնության ունեցած ազդեցությունը հանրային իշխանության մարմինների համակարգում, ընդգծում է նրանց կողմից գործում միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը հայաստանյան քաղաքական խոսքում՝ ատելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքի և վարքագծի որևէ դրսևորում, ներառյալ նաև նախընտրական քարոզչության ժամանակ հնչեցվող խոսքում բացառելու նպատակով: Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կողմից իրականացվող նախընտրական քարոզչությունն ուղղված է ընտրողների վստահությունը ձեռք բերելուն (ամրապնդելուն): Այդ գործընթացում առանցքային դեր պետք է կատարի տնտեսական, սոցիալական, պաշտպանական և այլ բնագավառներում քաղաքական ուժերի ծրագրային դրույթների մասին ընտրողների իրազեկումը և այդ դրույթների առարկայական քննարկումը՝ չբացառելով նախընտրական քարոզչության ժամանակ սուր քննադատական խոսքը, որը, սակայն, չպետք է ուղեկցվի ատելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքով և վարքագծով: Ընդ որում, նշված գործընթացի արդյունավետության ապահովման հարցում մեծ դերակատարում ունեն ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերը:

10.7. Անդրադառնալով դիմումներում նշված մյուս հանգամանքների և վերջիններիս առնչությամբ ներկայացված փաստարկների (մասնավորապես՝ ընտրությունների ժամանակահատվածում քրեական հետապնդման իրականացում և հարկադրանքի միջոցների կիրառում, ՀՀ քաղաքացու անձնագիր ունեցող անձանց ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ընտրություններին մասնակցելու հնարավորության հայեցողաբար չտրամադրում, 23750 քաղաքացու մասնակցությունը քվեարկությանը՝ առանց համապատասխան կտրոնի վրա լուսանկարի առկայության, քվեարկությանը

մասնակցած 109618 ՀՀ քաղաքացու դեպքում անձը հաստատող փաստաթղթի տվյալների՝ մասնագետի կողմից ստեղծաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով, անճշտություններ հրապարակված ընտրողների ցուցակների և վերջնական արձանագրությունների միջև, նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող թեկնածուների և քաղաքական ուժերի համար լուսաբանման խտրական և ոչ հավասար պայմաններ, անձը հաստատող փաստաթղթերի միջոցով Հայաստանի Հանրապետությունում չգտնվող անձանց փոխարեն քվեարկություն, զանգվածային հոսանքազրկումներով պայմանավորված հնարավոր ընտրախախտումներ, ընտրատեղամասերի ոչ մատչելի լինելը հաշմանդամություն ունեցող անձանց համար, սահմանված նմուշի քվեաթերթիկի վրա քվեարկության կարգի վերաբերյալ ծանուցման բացակայություն, «բոլորին դեմ» քվեարկելու հնարավորության բացակայություն, քվեաթերթիկները չհրկիզվող պահարանում պահելու պահանջի խախտում, զորամասերում հաշվառված 10993 ընտրողների (զինձառայողների) մասնակցությանն առնչվող տվյալների գաղտնիություն, քվեարկության նախորդ օրը քարոզչության արգելքի խախտում, նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի/թեկնածուների համար լուսաբանման պայմանների ոչ համաչափություն և այլն)՝ քննության առարկա գործի լուծման համար նշանակության հարցին՝ Սահմանադրական դատարանը, **հիմք ընդունելով սույն որոշման 10.3-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները**, փաստում է, որ դրանց մի մասն ունեցել է դրվագային կամ եզակի դրսևորումներ (օրինակ՝ անձը հաստատող փաստաթղթերի միջոցով Հայաստանի Հանրապետությունում չգտնվող անձանց փոխարեն քվեարկություն), կամ համապատասխան պնդումները հիմնված են սոսկ ենթադրությունների և փաստական որևէ հենք չունեցող կասկածների վրա (օրինակ՝ անճշտություններ հրապարակված ընտրողների ցուցակների և վերջնական արձանագրությունների միջև, զանգվածային հոսանքազրկումներով պայմանավորված հնարավոր ընտրախախտումներ, զորամասերում հաշվառված 10993 ընտրողների (զինձառայողների) մասնակցությանն առնչվող տվյալների գաղտնիություն) կամ վերաբերում են օրենսդրական կարգավորումներին (օրինակ՝ 23750 քաղաքացու մասնակցություն քվեարկությանը՝ առանց համապատասխան կտրոնի վրա լուսանկարի առկայության, քվեարկությանը մասնակցած 109,618 ՀՀ քաղաքացու դեպքում անձը հաստատող փաստաթղթի տվյալների՝ մասնագետի կողմից ստեղծաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով) և այլն:

Վերոնշյալի առնչությամբ Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ դիմողները որպես փաստարկ Սահմանադրական դատարան են

ներկայացրել նաև հարցեր, որոնց լուծումն օրենքով սահմանված կարգով վերապահված է եղել այլ իրավասու մարմինների: Սահմանադրական դատարանն իր՝ 2007 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-703 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «... եթե դիմող կողմն ընտրությունների նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման գործընթացով պայմանավորված ընտրական հանձնաժողովների, իրավասու այլ մարմինների որոշումները, գործողությունները կամ անգործությունը մինչև սահմանադրական դատարան դիմելը ՀՀ ընտրական օրենսգրքով և իրավական այլ ակտերով նախատեսված՝ արտադատական (վարչական) կամ դատական կարգով չի բողոքարկել, այսինքն՝ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով և ժամկետներում չի օգտագործել (սպառել) իր ընտրական իրավունքների պաշտպանության՝ օրենքով նախատեսված բոլոր միջոցները, ապա լիարժեք չեն դառնում սահմանադրական դատարանում ընտրությունների արդյունքներով քննվող հանրային-իրավական վեճի շրջանակներում ապացուցողական նշանակություն ունեցող փաստեր ներկայացնելու և դրանցով իր փաստարկները հիմնավորելու նրա դատավարական հնարավորությունները»:

Ի մասնավորումն վերոգրյալի՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում որպես օրինակներ ստորև դիտարկել դիմումներում վկայակոչված մի քանի հանգամանքներ:

Այսպես՝ «Հայաստան» դաշինքը բարձրացնում է այլ անձանց (մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող անձանց) փոխարեն քվեարկության կասկած՝ նշելով մեկ օրինակ, երբ ընտրողների ստորագրված ցուցակում քաղաքացու անվան դիմաց առկա է ստորագրություն, սակայն այդ անձը քվեարկության օրը, ըստ դիմողի, Հայաստանի Հանրապետությունում չի գտնվել:

Բացի դրանից, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցությունը գտնում է, որ առկա է հիմնավոր կասկած, որ անձը հաստատող փաստաթղթերի միջոցով Հայաստանի Հանրապետությունում չգտնվող անձանց փոխարեն քվեարկություն է կատարվել:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրությունները՝ որպես ժողովրդաշխանության իրացման միջոց, արտահայտում են ժողովրդի կամքը, որը չպետք է աղավաղվի այլ անձանց փոխարեն քվեարկությունների զանգվածային դեպքերի միջոցով: Հետևաբար՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացում պետք է ապահովվեն այնպիսի կառուցակարգերի առկայություն և կիրառություն, որոնք հնարավորություն կտան բացառել այլ անձանց փոխարեն քվեարկությունների դեպքերը, որոնք կարող են խեղաթյուրել ընտրությունների իրական արդյունքները:

Անդրադառնալով «Հայաստան» դաշինքի կողմից ներկայացված դեպքին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ դեպքի կապակցությամբ շահագրգիռ անձանց կողմից օրենքով սահմանված որևէ միջոց չի ձեռնարկվել (դրա վերաբերյալ որևէ ապացույց առկա չէ), և նշված օրինակը ներկայացվել է միայն Սահմանադրական դատարանում: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում այդ օրինակը չի կարող վկայել այլ անձանց փոխարեն քվեարկությանն առնչվող համակարգային խնդրի կամ այդ հարցում հսկողական կառուցակարգերի անարդյունավետության մասին:

Բացի դրանից, «Հայաստան» դաշինքի կողմից նշված դեպքի կապակցությամբ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և ՀՀ դատախազությունը ներկայացրել են բացատրություն այն մասին, որ այդ ստորագրությունը սխալմամբ կատարվել է մեկ այլ ընտրողի կողմից, որը մասնակցել է քվեարկությանը, սակայն վերջինիս անվան դիմաց ստորագրություն առկա չէ: Նշված հանգամանքը հիմնավորվում է ՀՀ դատախազության կողմից Սահմանադրական դատարան ներկայացված բացատրությամբ և նյութերով:

Ավելին, Ընտրական օրենսգիրքն ամրագրել է գործիքակազմ, որն անձանց լայն շրջանակի հնարավորություն է ընձեռում այլ անձի փոխարեն քվեարկության դեպքեր հայտնաբերելու պարագայում նախաձեռնել իրավական գործընթաց: Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասից հետևում է, որ ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, վստահված անձը, համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, ինչպես նաև քվեարկությանը չմասնակցած այն ընտրողը, որի տվյալների դիմաց, ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ, իրավունք ունեն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնել այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում: Հատկանշական է, որ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում ներկայացնելու և դրա քննության կառուցակարգի կիրառման համար պարտադիր չէ տվյալ ընտրողի հայտարարությունը քվեարկությանը մասնակցած չլինելու վերաբերյալ. բավարար է որևէ անձի աներկբա հայտարարությունն այն մասին, որ ընտրողը քվեարկությանը չի մասնակցել, և այդ ընտրողի փոխարեն քվեարկել է այլ անձ (Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 18-րդ մաս): Ընդ որում, օրենսդիրը մանրամասն կարգավորման է ենթարկել համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումի քննության հարցը, սահմանել է այն գործողությունները, որոնք տարածքային ընտրական հանձնաժողովը պետք է կատարի Հայաստանի Հանրապետությունից բացակայող անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումները քննելիս: Ավելին, օրենսդրական ամրա-

գրում է ստացել այն կանոնը, որ եթե չկան տվյալ անձի կողմից քվեարկությանը մասնակցությունը հաստատող բավարար ապացույցներ, ապա հավաստիության կանխավարկածի սկզբունքի կիրառմամբ, բացառապես ընտրությունների արդյունքներով որոշում կայացնելու համար, համարվում է, որ տեղի է ունեցել այլ անձի փոխարեն քվեարկություն (Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 17-րդ մաս):

Այլ անձի փոխարեն քվեարկության դեպքերի բացառմանն է ուղղված նաև ընտրողների ստորագրված ցուցակների մատչելիությունը: Այսպես՝ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից սկսած, իրականացնում է ընտրողների ցուցակների սկանավորում, (...) ընտրողների սկանավորված ցուցակները ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքներն սկսվելուց 24 ժամ հետո պաշտոնապես հրապարակվում և ներքեմնելու և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում (Ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-ին մաս): ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 27.06.2021թ. թիվ 183-Ա որոշման համաձայն՝ «Ընտրողների ստորագրված ցուցակները սահմանված կարգով և ժամկետներում տեղադրվել են ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, սահմանված վերջնաժամկետից ավելի քան երկու ժամ առաջ: Նշվածի մասին հրապարակայնորեն իրազեկվել է հանրությունը՝ մամուլի հաղորդագրություններ տարածելու միջոցով»:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումն իրավասու անձը ներկայացնում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն: Վերոգրյալից հետևում է, որ ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակումը Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասով նախատեսված շրջանակում ներառված անձանց (հատկապես՝ ընտրողներին) հնարավորություն է տալիս ծանոթանալ այդ ցուցակներին և այլ անձի փոխարեն քվեարկության դեպքերի հայտնաբերման դեպքում օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացնել համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 27.06.2021թ. թիվ 183-Ա որոշման համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում սահմանված ժամանակահատվածում, անգամ այդ ժամանակահատվածից հետո, տարածքային ընտրական հանձնաժողովներում, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական ընտ-

րական հանձնաժողովում չի ստացվել որևէ դիմում այլ անձի փոխարեն քվեարկելու մասին»:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ այլ անձի փոխարեն քվեարկության դեպքերի առկայության վերաբերյալ դիմողների կողմից ներկայացվել են սոսկ վերացական բնույթ ունեցող, պատշաճորեն չփաստարկված ենթադրություններ, որոնք չեն կարող վկայել ընտրական գործընթացում խախտումների առկայության մասին, իսկ «Հայաստան» դաշինքի կողմից ներկայացված մեկ օրինակը չի հիմնավորում վերջինիս կողմից ներկայացված համակարգային ենթադրյալ խնդիրը:

Հրապարակված ընտրողների ցուցակների և վերջնական արձանագրությունների անճշտությունների հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Հայաստան» դաշինքի կողմից մատուցված 109 ընտրական տեղամասերում առկա անճշտությունների վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից հանձնարարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նախապատրաստել նյութեր: Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ դիմողի կողմից իրականում կատարվել է երկու ելակետային թվերի մեխանիկական համադրում՝ առանց հաշվի առնելու մի շարք հանգամանքներ, իսկ երբեմն իրականացվել է սխալ համադրում:

Համաձայն ՀՀ դատախազության ներկայացուցչի բացատրության և գործի նյութերի՝ տվյալ ընտրական տեղամասում զինծառայողները, որոնց թիվը գաղտնի է, ստորագրում են գորամասում հաշվառված ընտրողների ցուցակում, սակայն նրանց թիվն արդյունքների ամփոփման արձանագրության մեջ ներառվում է տեղամասում քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի մեջ: Մի շարք տեղամասերի ստորագրված ցուցակների սկանավորման արդյունքում ցուցակի որոշ էջեր չեն սկանավորվել և հրապարակվել են կիսատ, իսկ որոշ դեպքերում դիմողի կողմից կատարվել է սխալ համադրում, և նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ տեղամասում քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի և սկանավորված ցուցակներում ստորագրությունների թվի անհամապատասխանությունն առկա չէ. սակավ դեպքերում հանձնաժողովի անդամների անփույթ աշխատանքի հետևանքով արձանագրվել է մեկ կամ երկու ստորագրության անհամապատասխանություն և այլն:

Ավելին, տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը և ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը համընկնում են:

Համաձայն ՀՀ դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության՝

«- 3/31, 25/13, 37/14, 38/29 ընտրական տեղամասերում քվեարկել են զինվորական ծառայողներ, համապատասխանաբար 76, 16, 535 և 253 զինծառայող, ովքեր քվեարկել են զինծառայողների լրացուցիչ ցուցակով, և նրանց թիվը ներառվել է արձանագրության՝ քվեարկության մասնակիցների թվի մեջ, սակայն գաղտնի լինելու պատճառով լրացուցիչ ցուցակի տվյալները չեն հրապարակվել: Նրանց թվի հաշվառմամբ որևէ անհամապատասխանություն չի արձանագրվում:

- 1/02, 1/05, 6/08, 11/12, 11/15, 11/31, 24/20, 24/24, 24/38, 24/41, 24/50, 37/38, 38/19, 38/20, 38/38, 38/35, 38/39, 38/55, 38/54, 38/53, 38/52, 38/51, 38/50, 38/42, 38/46, 38/47, 38/40, 38/02, 38/17, 38/14, 38/48 ընտրական տեղամասի ընտրողների ցուցակի սկանավորված տարբերակում որոշակի էջեր բացակայում են, որոնց վրա առկա ստորագրությունների հաշվառմամբ մասնակիցների թիվը համընկնում է ցուցակներում առկա ստորագրությունների թվին. Օրինակ, 1/02, 1/05 տեղամասերի ընտրողների ցուցակներից բացակայել է 46-րդ էջը, որոնց վրա առկա է համապատասխանաբար 16, 12 ստորագրություն, որի պայմաններում մասնակիցների թիվը համընկնում է ցուցակներում առկա ստորագրությունների թվին.

- 11/49, 12/38, 22/34, 23/29, 24,35, 24/31, 24/46, 22/06 ընտրական տեղամասերում հենց դիմումատուների կողմից ներկայացված հիմքերի համադրության պայմաններում որևէ անհամապատասխանություն չի արձանագրվել.

- 5/01, 11/47, 16/03, 16/08, 12/24, 20/24, 21/57, 22/04, 22/17, 22/20, 22/25, 23/7, 23/39, 24/07, 36/25, 24/02, 25/45 ընտրական տեղամասերում արձանագրվել է մեկ կամ երկու անհամապատասխանություն, ինչը, ըստ էության պայմանավորված է մարդկային գործոնով, (ընտրողի կողմից ցուցակում չստորագրել, հանձնաժողովի անդամի անուշադրությունը և այլ).

- Նույն գործոնով է պայմանավորված 21/56 և 21/57 ընտրական տեղամասերում առկա, համապատասխանաբար, երեք և վեց անհամապատասխանություն, որի դեպքում պարզվել է, որ ցուցակում առկա է ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները ու հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, սակայն բացակայում է ընտրողի ստորագրությունը):

«Հայաստան» դաշինքը և «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքը փաստարկներ են ներկայացրել նախընտրական քարոզարշավի ընթացքում իրենց հետ առնչություն ունեցող անձանց ՀՀ ռստիկանություն պարբերաբար բերման ենթարկելու և այսպես կոչված «ստուգողական գործողություններ» կատարելու մասին՝ առանց որևէ պատշաճ հիմքի, արտահերթ ընտրությունների ընթացքում քրեական հետապնդման և հարկադրանքի միջոցների անհամաչափ ծավալի միջոցառումների իրականացման մասին:

Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննությանը նախորդող ժամանակահատվածում առանձին դեպքերով կամ անձանց առնչությամբ ՀՀ ոստիկանության կամ այլ իրավապահ մարմինների գործողությունները քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված և օրենսդրության շրջանակներում գնահատման ենթակա գործողություններ են, որոնց իրավաչափության գնահատումը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասությունից:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ **Սահմանադրական դատարանն իրավասու չէ և չի կարող փոխարինել ընտրական վարչարարության մարմիններին, դատարաններին և իրավապահ համակարգի օղակներին, որոնց՝ ընտրական իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է նաև օրենքով նախատեսված կարգով ու համապատասխան իրավունքներով օժտված ընտրական գործընթացին մասնակից քաղաքական ուժերի ու նրանց ներկայացնող կամ նրանց կողմից առաջադրված հազարավոր իրավասուբյեկտների կողմից իրենց՝ Ընտրական օրենսգրքով վերապահված ընթացակարգային իրավունքների լիարժեք իրացումից:** Սահմանադրական դատարանի որոշման իրավական հիմք կարող է հանդիսանալ բացառապես նշված սուբյեկտների իրավաչափ գործողության արդյունքում ձևավորված ապացուցողական նշանակության իրավական փաստերի համակցության համադրված գնահատումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի թիվ 183-Ա որոշմամբ հաստատվել են հետևյալ բողոքները. 2021 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը՝ 2021 թվականի հունիսի 20-ը, տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է 1 դիմում՝ նախընտրական քարոզչության կարգի ենթադրյալ խախտման վերաբերյալ, որով պահանջվում էր հեռացնել նախընտրական շտաբի վրա փակցված պաստառը: Դիմումը մերժվել է, քանի որ պաստառը փակցված էր Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան:

Մինչև քվեարկության օրը՝ 2021 թվականի հունիսի 20-ը, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել են 85 դիմումներ (բողոքներ), որոնցից կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացվել է 13 դիմում, պատգամավորի թեկնածուների կողմից՝ ինքնաբացարկի մասին 17 դիմում, «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության կողմից՝ 2 դիմում պարզաբանում տալու վերաբերյալ, Ազգային ժողովի պատգամավորի կողմից՝ 2 դիմում, քաղաքացիների կողմից՝

մից՝ 48 դիմում, 2 դիմում ներկայացվել է նաև քաղաքացի Տիգրան Արզաբանյանի կողմից, որի՝ որպես պատգամավորի թեկնածուի գրանցումն անվավեր էր ճանաչվել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ, 1 դիմում հասարակական կազմակերպության կողմից՝ դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիտորդներին հավատարմագրելու վերաբերյալ, որը մերժվել է Ընտրական օրենսգրքի պահանջները չբավարարելու հիմքով:

Պարզաբանում տալու վերաբերյալ 2 դիմումները բավարարվել են:

Զվեարկության օրվանից մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է 21 դիմում, որոնցից մեկը ներկայացվել է ընտրողի կողմից, մեկը՝ պատգամավորի թեկնածուի կողմից, 19-ը՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների կողմից:

Զվեարկության օրվանից մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է 18 դիմում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների քվեարկության օրը 2 տարածքային ընտրական հանձնաժողովին սահմանված կարգով ներկայացված է եղել 2 դիմում՝ ընտրողի և պատգամավորի թեկնածուի կողմից: Ներկայացված դիմումները քննարկվել են սահմանված կարգով:

38 տարածքային ընտրական հանձնաժողովներից և ոչ մեկում չի ստացվել դիմում տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ ընտրական ողջ գործընթացի և Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումների վերլուծությունը վկայում է իրավական միջոցներով ընտրական գործընթացի՝ քաղաքական ուժերի կողմից վերահսկման ցածր մակարդակի մասին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողները չեն հաղթահարել իրենց պահանջների համար հիմք ծառայող հանգամանքների ապացուցման համար անհրաժեշտ նվազագույն ապացուցողական շեմը: Ինչպես վերը նշվեց, ընտրախախտումների տեղ գտած լինելու հնարավորության կամ դրանց ազդեցության մասին ենթադրությունները, ինչպես նաև նման ընտրախախտումների դրվագային դրսևորումները չեն կարող բավարար լինել Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճերով դիմողին առաջադրվող ապացուցման շեմը հաղթահարված համարելու դատողության,

հետևաբար՝ Սահմանադրական դատարանի կողմից այդ հանգամանքը քննության առարկա դարձնելու համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Սահմանադրական դատարան դիմում ներկայացրած կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների ընթացքում օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չեն արձանագրվել ու բողոքարկման առարկա դարձել իրավախախտումների վերաբերյալ ապացուցողական նշանակություն ունեցող այնպիսի փաստեր, որոնք հիմք ընդունելով՝ Սահմանադրական դատարանն ընտրությունների արդյունքներն անվավեր կճանաչեր:

10.8. «Հայաստան» դաշինքի կողմից իր դիմումում, հետագայում նաև բացատրություններում ներկայացված այն դիրքորոշման առնչությամբ, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանը սույն վեճի շրջանակներում պետք է անդրադառնա նաև Ընտրական օրենսգրքի դրույթների սահմանադրականության հարցին և դրանց ստուգումն իրականացնի սույն գործով որոշման շրջանակներում, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությամբ նախատեսված իր իրավասության շրջանակը չի բացառում համապատասխան ընթացակարգերի ապահովման դեպքում Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճերի շրջանակում նաև կիրառելի նորմերի սահմանադրականության ստուգման լիազորությունը: Սակայն նման լիազորության իրականացումը պայմանավորված է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված համապատասխան ընթացակարգերի ներդրմամբ, առանց որոնց Սահմանադրական դատարանն առերեսվում է ոչ թե սահմանադրական իրավասության, այլ կոնկրետ լիազորության իրականացման փաստացի ընթացակարգային հնարավորության խնդրի:

Սահմանադրական դատարանի համար Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճերով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված լիազորության կիրառման սահմանադրական հնարավորության առկայության հետ մեկտեղ, այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման հնարավորությունը չի վերաբերում նույն տեսակի վեճերով ընտրական իրավունքի նորմերի սահմանադրականության ստուգմանը՝ ընտրական իրավունքի կանխատեսելիության և ընտրական համակարգի կայունության նկատառումներից ելնելով: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն ընդգծում է ընտրական իրավունքի հիմնարար նորմերի փոփոխությունների կատարման համար ընտրական գործընթացների մեկնարկից ժամանակային «ապահով տարածության» պահ-

պանման անհրաժեշտությունը՝ ընտրական գործընթացների մասնակիցների, ինչպես նաև հանրային իշխանության մարմինների կողմից իրենց վարքագիծը և գործունեությունը կանխատեսելիորեն կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով: Ընտրական իրավունքի նորմերի հիմնարար կարգավորումների կայունության սկզբունքը համընդհանուր (կոնսենսուալ) ճանաչում ունի նաև համեմատական ընտրական իրավունքում (մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» հանձնաժողովի Ընտրական իրավունքի կայունության մասին մեկնաբանություններ, թիվ CDL-AD(2005)004 փաստաթուղթ, կետեր 1-5, Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՄԻՀԳ միացյալ կարծիքը Ալբանիայի սահմանադրության և ընտրական օրենսգրքի նախագծերի վերաբերյալ, թիվ CDL-AD(2020)036 փաստաթուղթ, կետեր 19-20, Ընտրական իրավունքի և ընտրական վարչարարության մասին զեկույց, թիվ CDL-AD(2020)023, կետեր 19-20):

Այդ կապակցությամբ ընտրական իրավունքը կարգավորող իրավական նորմերի սահմանադրականության ստուգումը Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճի շրջանակում կարող է հանգեցնել ընտրական իրավունքի նորմերի կայունությանը վտանգավոր միջամտության՝ ընտրական գործընթացների ավարտից հետո նորմը հակասահմանադրական ճանաչելու հետևանքի հետադարձորեն կիրառմանն ընտրական գործընթացի կամ դրա արդյունքների նկատմամբ Սահմանադրական դատարանում գործով որոշում կայացնելու դեպքում կամ տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանը, որն այն չունի կիրառման՝ ընտրական գործընթացի պահին: Իսկ եթե Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճի վերաբերյալ գործերով ընտրական իրավունքի նորմերի սահմանադրականության ստուգման մասին Սահմանադրական դատարանի որոշման ազդեցությունը չի տարածվելու մինչ այդ տեղի ունեցած ընտրության և դրա արդյունքների նկատմամբ, ապա Սահմանադրական դատարանը չի տեսնում այս դեպքում այն նպատակահարմարությունը, որ ընտրական իրավունքի նորմերի սահմանադրականության ստուգումը տեղի ունենա Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված վեճի վերաբերյալ գործերով, քանի որ նույն ստուգման հնարավորությունը ոչ պակաս արդյունավետությամբ ապահովված է նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված Սահմանադրական դատարանի լիազորությունների իրականացման գործերով:

Վերոնշյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է վերացական սահմանադրական վերահսկողության դիմումներով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու իրավասություն ունեցող հանրային իշխանության մարմինների դերակատարությունը՝ ընտրական գործըն-

թացնների մեկնարկից ժամանակային «ապահով տարածության» պահպանմամբ Սահմանադրական դատարանում սահմանադրականության ստուգման առարկա դարձնել նախորդ ընտրությունների արդյունքում տեղ գտած ենթադրյալ խնդրահարույց կարգավորումները՝ դրանով իսկ ապահովելով ամեն հաջորդ ընտրական գործընթացի համար «սերտած դասերի» բարեբեր արդյունքը:

Այս մոտեցումները տեղայնացնելով դիմող «Հայաստան» դաշինքի կողմից բարձրացված խնդրի վրա, այն է՝ քաղաքական մեծամասնության՝ ՀՀ Ազգային ժողովում ստացած տեղերի քանակը՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի 3/5 և ավել չափը թույլատրող կարգավորումների հակասահմանադրականության մասին պնդումների քննության մասով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այնքանով, որքանով սույն հարցը վերաբերում է ընտրողների ձայները ՀՀ Ազգային ժողովում տեղերի վերափոխվելու կարգավորումներին, դասվում է ընտրական իրավունքի հիմնարար կարգավորումների շարքին: Համապատասխանաբար՝ սույն վեճի շրջանակներում, նույնիսկ եթե Սահմանադրական դատարանն ապահովված լիներ անհրաժեշտ ընթացակարգերով, այդ հարցի շուրջ Ընտրական օրենսգրքի նորմերի սահմանադրականության ստուգումն ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի գործով խնդրահարույց կհամարվեր ընտրական իրավունքի հիմնարար նորմերի կայունության սկզբունքի տեսանկյունից:

10.9. Հաշվի առնելով, որ դիմողներից մեկը՝ «Հայաստան» դաշինքը, անհամաձայնություն է հայտնել նաև ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մանդատների բաշխման վերաբերյալ, իսկ որպես այլընտրանք պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը, անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները և սահմանել մանդատների բաշխման կարգը, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ մանդատների բաշխման կարգին:

Այսպես՝ Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ 5, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Եթե կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 5 (7) տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են 3-ից պակաս

կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած 3 կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները:

Ըստ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալների՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվն է 688.761 (53.91%), «Հայաստան» դաշինքին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվն է 269.481 (21.09%), իսկ «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվն է 66.650 (5.22%): Ընդ որում, նշված երեք կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվն է 1.024.892:

Քանի որ կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 5 (7) տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են 3-ից պակաս կուսակցություն (կուսակցությունների դաշինք), այն է՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և «Հայաստան» դաշինքը, մանդատների բաշխմանը մասնակցել է նաև «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքը՝ որպես առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած 3-րդ կուսակցությունների դաշինք (կուսակցություն):

Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Ազգային ժողովի մանդատները բաշխվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև՝ նրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն: Յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է 101-ով, արդյունքը բաժանվում է արգելապատնեշը հաղթահարած կուսակցություններին (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվերն են:*

Այսինքն՝ Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասում նշված բանաձևը հետևյալն է.

Մանդատներ

կուսակցությանը կողմ քվեարկված քվեաթերթիկներ x 101

արգելապատնեշը հաղթահարած կուսակցություններին կողմ քվեարկված քվեաթերթիկներ

Ընդ որում, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) մանդատների թվի հաշվարկը կատարվում է հիմք ընդունելով վերը նշված բանաձևով ստացված **ամբողջ թիվը**:

Հիմք ընդունելով վերը նշված տվյալները՝ Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ մանդատների բաշխումը պետք է կատարվի հետևյալ կերպ.

$$\text{ՔՊ մանդատներ} = \frac{688.761 \times 101}{1.024.892}$$

$$\text{«Հայաստան» դաշինքի մանդատներ} = \frac{269.481 \times 101}{1.024.892}$$

$$\text{«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի մանդատներ} = \frac{66.650 \times 101}{1.024.892}$$

Արդյունքում մանդատները, ըստ Ընտրական օրենսգրքի կարգավորումների, պետք է բաշխվեն հետևյալ կերպ.

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 67 մանդատ (67,87-ից վերցվում է ամբողջ թիվը),

«Հայաստան» դաշինք՝ 26 մանդատ (26,55-ից վերցվում է ամբողջ թիվը),

«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինք՝ 6 մանդատ (6,56-ից վերցվում է ամբողջ թիվը):

Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև 101 մանդատ մնացած մանդատները կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությանը:

Քանի որ նախորդ բանաձևով կատարված հաշվարկի արդյունքում բաշխվել է 99 մանդատ, պետք է բաշխել ևս 2 մանդատ, որը պետք է կատարել՝ հիմք ընդունելով մնացորդների մեծությունը՝ ըստ հերթականության մեկական մանդատ սկզբունքով:

Տվյալ դեպքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը բաշխված մանդատների մնացորդն ամենամեծն է՝ **67,87**, նրան հաջորդում է «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքը՝ **6,56**, ապա՝ «Հայաստան» դաշինքը՝ **26,55**: Քանի որ ենթակա է բաշխման ընդամենը 2 մանդատ, ուստի **մեկական մանդատ պետք է ստանան «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքը:**

Արդյունքում մանդատները, ըստ օրենսդրական կարգավորումների, պետք է բաշխվեն հետևյալ կերպ.

**«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 68 մանդատ,
«Հայաստան» դաշինք՝ 26 մանդատ,
«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինք՝ 7 մանդատ:**

Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ պատգամավորների 4 մանդատ բաշխվում է ազգային փոքրամասնության ներկայացուցիչների միջև՝ ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրին՝ մեկ մանդատ սկզբունքով: Այդ նպատակով մանդատները բաշխվում են արգելապատնեշը հատյախարած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև՝ ըստ յուրաքանչյուր մանդատի համար ստացված գործակցի, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Գկ = \frac{Ամ}{Մփ + 1}$$

որտեղ՝

Գկ-ն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) գործակիցն է,

Ամ-ն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) ցուցակի առաջին մասից հասած մանդատների թիվն է,

Մփ-ն հերթական մանդատի համար կուսակցության (կուսակցությունների դաշինքի) գործակիցը հաշվելիս ազգային փոքրամասնության ներկայացուցիչների չորս մանդատներից կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) արդեն բաժին հասած ընդհանուր թիվն է:

Ազգային փոքրամասնության ներկայացուցիչների մանդատները կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում են ըստ գործակիցների նվազման հերթականության: Հավասար գործակիցների դեպքում մանդատը բաշխվում է վիճակահանությամբ:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մանդատները բաշխելիս կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) մանդատը տրամադրում է իր ցուցակի դեռևս մանդատ չունեցող առավել փոքր հերթական համար ունեցող ազգային փոքրամասնությանը: Եթե այդպիսին չկա կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի երկրորդ մասում, ապա բաշխման հերթը փոխանցվում է մեծությամբ հաջորդ գործակից ունեցող կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին): Եթե նման գործընթացում այլևս հնարավոր չէ բաշխել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մանդատ, ապա համապատասխան մանդատը մնում է թափուր:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակված՝ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների ձևում ազգային փոքրամասնություններն ունեն հետևյալ հերթական համարները. **I – եզդի, II – ռուս, III – ասորի, IV – քուրդ**: Ընդ որում, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի երկրորդ մասում ներառված են վերը նշված բոլոր ազգային փոքրամասնություններից մեկական թեկնածուներ, «Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակի երկրորդ մասում ներառված չէ միայն քուրդ թեկնածու, իսկ «Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի երկրորդ մասում որևէ թեկնածու ընդգրկված չէ:

1)

$$\text{ՔՊ գործակից} = \frac{68}{0 + 1}$$

$$\text{«Հայաստան» դաշինքի գործակից} = \frac{26}{0 + 1}$$

$$\text{«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի գործակից} = \frac{7}{0 + 1}$$

Արդյունքում՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գործակից՝ 68,

«Հայաստան» դաշինքի գործակից՝ 26,

«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի գործակից՝ 7:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի երկրորդ մասում ներառված՝ դեռևս մանդատ չունեցող առավել փոքր հերթական համար ունեցող ազգային փոքրամասնությունը եզդիներն են, ուստի **եզդիներին տրամադրվող մանդատը տրամադրվում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը:**

2)

$$\text{ՔՊ գործակից} = \frac{68}{1 + 1}$$

$$\text{«Հայաստան» դաշինքի գործակից} = \frac{26}{0 + 1}$$

$$\text{«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի գործակից} = \frac{7}{0 + 1}$$

Արդյունքում՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գործակից՝ 34,

«Հայաստան» դաշինքի գործակից՝ 26,

«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի գործակից՝ 7:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի երկրորդ մասում ներառված՝ դեռևս մանդատ չունեցող առավել փոքր հերթական համար ունեցող ազգային փոքրամասնությունը ռուսներն են, ուստի **ռուսներին տրամադրվող մանդատը տրամադրվում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը:**

3)

$$\text{ՔՊ գործակից} = \frac{68}{2 + 1}$$

$$\text{«Հայաստան» դաշինքի գործակից} = \frac{26}{0 + 1}$$

$$\text{«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի գործակից} = \frac{7}{0 + 1}$$

Արդյունքում՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գործակից՝ 22,66,

«Հայաստան» դաշինքի գործակից՝ 26,

«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի գործակից՝ 7:

«Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակի երկրորդ մասում ներառված՝ դեռևս մանդատ չունեցող առավել փոքր հերթական համար ունեցող ազգային փոքրամասնությունն ասորիներն են, ուստի **ասորիներին տրամադրվող մանդատը տրամադրվում է «Հայաստան» դաշինքին:**

4)

$$\text{ՔՊ գործակից} = \frac{68}{2 + 1}$$

$$\text{«Հայաստան» դաշինքի գործակից} = \frac{26}{1 + 1}$$

$$\text{«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի գործակից} = \frac{7}{0 + 1}$$

Արդյունքում՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գործակից՝ 22,66,

«Հայաստան» դաշինքի գործակից՝ 13,

«Պատիվ ունեն» կուսակցությունների դաշինքի գործակից՝ 7:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի երկրորդ մասում ներառված՝ դեռևս մանդատ չունեցող առավել փոքր հերթական համար ունեցող ազգային փոքրամասնությունը քրդերն են, ուստի

քրդերին տրամադրվող մանդատը տրամադրվում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը:

Այսպիսով՝ ազգային փոքրամասնություններին տրամադրվող մանդատները, ըստ Ընտրական օրենսգրքի, պետք է բաշխվեն հետևյալ կերպ.

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 3 մանդատ (եզդի, ռուս և քուրդ),

«Հայաստան» դաշինք՝ 1 մանդատ (ասորի):

Ընտրական օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե որևէ կուսակցություն սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերի հերթական կիրառման արդյունքում ստացել է 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին, ապա մյուս կուսակցություններն ստանում են այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ (ԼՄ), որ արդյունքում նրանց մանդատների ընդհանուր թիվը լինի Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի 1/3-ից ոչ պակաս: Յուրաքանչյուր կուսակցությանը հասանելիք լրացուցիչ մանդատների թիվը որոշվում է հետևյալ կերպ. այդ կուսակցության ստացած մանդատների թիվը բազմապատկվում է ԼՄ թվով, ստացված թիվը բաժանվում է լրացուցիչ մանդատներ ստացող կուսակցությունների՝ մինչև լրացուցիչ մանդատներ տալը ստացված մանդատների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք տվյալ կուսակցությանը հասանելիք լրացուցիչ մանդատների թվերն են: Մնացած մանդատները կուսակցության միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն կուսակցությանը, որի մանդատների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ:

Այսինքն՝ Ընտրական օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասում նշված բանաձևը հետևյալն է.

$$\frac{\text{Կուսակցության լրացուցիչ մանդատներ}}{\text{կուսակցության մանդատներ} \times \text{ԼՄ}} = \frac{\text{ԼՄ ստացող կուսակցությունների՝ մինչև ԼՄ տալը ստացված մանդատներ}}$$

Քանի որ վերը նշված դրույթների հերթական կիրառման արդյունքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ստացել է բաշխված 105 մանդատների 2/3-ից (70 մանդատ) ավելին, այն է՝ 71 մանդատ, ուստի մյուս կուսակցությունները պետք է ստանան այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ (ԼՄ), որ արդյունքում նրանց մանդատների ընդհանուր թիվը լինի Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի 1/3-ից ոչ պակաս: Տվյալ դեպ-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 3(103)/2021

քում որպեսզի մյուս կուսակցություններին տրամադրվող մանդատների ընդհանուր թիվը լինի Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի 1/3-ից ոչ պակաս, պետք է ընդհանուր մանդատների թիվը լինի 107(107/3 = 35,33), ինչը նշանակում է, որ մյուս կուսակցություններին պետք է բաշխվի ընդհանուր 2 լրացուցիչ մանդատ, որի արդյունքում նրանք կունենան ընդհանուր 36 մանդատ:

$$\text{«Հայաստան» դաշինքի լրացուցիչ մանդատներ} = \frac{27 \times 2}{34}$$

$$\text{«Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի լրացուցիչ մանդատներ} = \frac{7 \times 2}{34}$$

Արդյունքում՝

«Հայաստան» դաշինք՝ 1 մանդատ (1,88-ից վերցվում է ամբողջ թիվը),

«Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինք՝ 0 մանդատ (0,41-ից վերցվում է ամբողջ թիվը):

Ինչ վերաբերում է 2 մանդատներից չբաշխվածին, ապա այն պետք է տրամադրվի **«Հայաստան» դաշինքին՝** հաշվի առնելով մնացորդների մեծությունը:

Անիտիլեով վերոգրյալը՝ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, ըստ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգավորումների, պետք է բաշխվի 107 մանդատ, որից՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 71 մանդատ, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին տրամադրվող 3 մանդատ,

«Հայաստան» դաշինք՝ 29 մանդատ, այդ թվում՝ ազգային փոքրամասնությանը տրամադրվող 1 մանդատ,

«Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինք՝ 7 մանդատ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մանդատները նշված կերպ են բաշխվել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Ինչ վերաբերում է «Հայաստան» դաշինքի այն դիրքորոշմանը, որ Ազգային ժողովի քաղաքական փոքրամասնությանը, ընդդիմությանը պատշաճ դեր ապահովելու համար անհրաժեշտ էր, որ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մանդատները բաշխեր այնպես, որ դրա արդյունքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ստանար ոչ ավելի, քան 63 մանդատ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասն օրենսդրից պահանջում է Ընտրական օրենսգրքով երաշխավորել կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Մյուս կողմից՝ Սահմանադրությունը պարտադիր է համարում Ազ-

գային ժողովում ընդդիմադիր խմբակցությունների առկայությունը՝ 104-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրելով, որ Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Միաժամանակ Ազգային ժողովի ընտրության կարգին, մանդատների բաշխմանը վերաբերող հարցերի կարգավորումը վերապահված է օրենսդրին, որը պետք է հաշվի առնի սահմանադրական վերը նշված պահանջները:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու հանգամանքով պայմանավորված՝ բարձրացվեց խորհրդարանական փոքրամասնության դերը: Այդ առնչությամբ սահմանադրական մակարդակում ամրագրում ստացավ նաև Ազգային ժողովի մարմիններում խորհրդարանական ընդդիմության ներկայացվածությունը, նախատեսվեցին մի շարք օրենքների ընդունում և մի շարք պաշտոնատար անձանց ընտրություն՝ ձայների որակյալ մեծամասնությամբ: Ազգային ժողովի ձևավորման արդյունքում խորհրդարանական ընդդիմության ներկայացվածության աստիճանը (մանդատների նվազագույն քանակը) առաջին հերթին պայմանավորված է ժողովրդի կամահայտնությամբ, որն արտահայտվում է ընտրությունների արդյունքներում: Վերոգրյալը բխում է ընտրությունների՝ որպես ժողովրդաիշխանության իրացման միջոցի էությունից:

Այս կապակցությամբ դիմողների բարձրացրած խնդիրը դասվում է Ընտրական օրենսգրքի դրույթների սահմանադրականության գնահատման հարցերի շարքին, ինչը, ինչպես սույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված լիազորության իրականացման գործերով քննության մաս լինել չի կարող:

Վերոգրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների կողմից ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների գործընթացում օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չեն արձանագրվել ու բողոքարկման առարկա դարձել իրավախախտումների վերաբերյալ ապացուցողական նշանակություն ունեցող այնպիսի փաստեր, որոնք ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար կարող էին հիմք ծառայել Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի այլ կետով որոշում կայացնելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ մասերով, «Սահմանադրական դա-

տարանի մասին» սահմանադրական օրենքի 62, 63 և 77-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**։

1. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշումը թողնել ուժի մեջ։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

17 հուլիսի 2021 թվականի
ՍԴՈ-1606



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1970 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԱՐԱԳ ՓԶԱՅՈՂ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԴՊԻՍԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ATP)» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 հուլիսի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդ-
կարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Միմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանա-
դրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1970 թվականի
սեպտեմբերի 1-ին ստորագրված «Արագ փչացող սննդամթերքի միջազգային
փոխադրումների և այդպիսի փոխադրումների համար օգտագործվող հատուկ
տրանսպորտային սարքավորումների մասին (ATP)» համաձայնագրում ամ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3(103)2021

րագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի մայիսի 13-ի N 746-Ա որոշմամբ հավանություն է տվել 1970 թվականի սեպտեմբերի 1-ին ստորագրված «Արագ փչացող սննդամթերքի միջազգային փոխադրումների և այդպիսի փոխադրումների համար օգտագործվող հատուկ տրանսպորտային սարքավորումների մասին (ATP)» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի մայիսի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ Համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. «Արագ փչացող սննդամթերքի միջազգային փոխադրումների և այդպիսի փոխադրումների համար օգտագործվող հատուկ տրանսպորտային սարքավորումների մասին (ATP)» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի շրջանակներում ստորագրվել է 1970 թվականի սեպտեմբերի 1-ին Ժնևում՝ պետությունների միջև սպրանքաշրջանառության բարձրացումը և այդ գործընթացում միջպետական համագործակցությունը խթանելու նպատակով: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1976 թվականի նոյեմբերի 21-ին:

2. Համաձայնագրով սահմանվում են արագ փչացող սննդամթերքով բեռների միջազգային փոխադրումների հիմնական պահանջները և փոխադրման պայմանները, ինչպես նաև դրանց փոխադրման համար նախատեսված տրանսպորտային սարքավորումներին ներկայացվող պահանջները:

Արագ փչացող սննդամթերքի միջազգային փոխադրումների նպատակով «ջերմամեկուսացվող», «սառեցվող», «մեխանիկորեն սառեցվող», «տաքացվող» կամ «մեխանիկորեն սառեցվող և տաքացվող» են համարվում այն հատուկ տրանսպորտային սարքավորումները, որոնք համապատասխանում են Համաձայնագրի 1-ին հավելվածում ներկայացված սահմանումներին և չափանիշներին:

Համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագիրն ստորագրելիս, վավերացնելիս կամ համաձայնագրին միանալիս ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է հայտարարել, որ իրեն պարտավորված չի համարում Համաձայնագրի 15-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, որոնք վերաբերում են կողմերի միջև վեճերի կարգավորմանը:

Համաձայնագիրը և դրա հավելվածներն ուժի մեջ մտնելուց հետո պարբերաբար փոփոխվել և թարմացվել են Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի Ներքին տրանսպորտի կոմիտեի՝ արագ փչացող սննդամթերքի փոխադրման հարցերով աշխատանքային խմբի կողմից:

3. Համաձայնագրի անբաժան մաս են կազմում 3 հավելվածները՝ Հավելված

1. «Արագ փչացող սննդամթերքի փոխադրման համար հատուկ տրանսպորտային սարքավորումների վերաբերյալ սահմանումները և չափանիշները», Հավելված 2. «Արագ (խորը) սառեցված և սառեցված սննդամթերք փոխադրելիս տրանսպորտային սարքավորման ընտրությունը և ջերմաստիճանային պայմանները», և Հավելված 3. «Պաղեցված սննդամթերք փոխադրելիս տրանսպորտային սարքավորման ընտրությունը և ջերմաստիճանային պայմանները» վերտառությամբ:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

4.1. Համաձայնագրի 1-ին Հավելվածում նշված չափանիշներին համապատասխանելու նպատակով միջոցներ ձեռնարկել Համաձայնագրի 1-ին հոդվածում նկարագրված տրանսպորտային սարքավորումների պատշաճ ստուգման և փորձաստուգման համար՝ Համաձայնագրի 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթահավելվածներում սահմանված դրույթներին համապատասխան, ինչպես նաև ճանաչել Համաձայնագրի 1-ին հավելվածի 1-ին ենթահավելվածի 3-րդ կետին համապատասխան այլ Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի կողմից տրամադրված համապատասխանության հավաստագրերի վավերականությունը (հոդվ. 2),

4.2. Համաձայնագրի 4-րդ հոդվածի դրույթները կիրառել բոլոր տեսակի փոխադրումների նկատմամբ ինչպես վարձատրության կամ հատուցման դիմաց, այնպես էլ սեփական միջոցներով, որոնք իրականացվում են բացառապես երկաթուղով, ավտոմոբիլային տրանսպորտով կամ այդ երկուսի համակցությամբ՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան, և փոխադրում են՝ արագ (խորը) սառեցված և սառեցված սննդամթերք, Համաձայնագրի 3-րդ հավելվածով սահմանված սննդամթերք, նույնիսկ եթե դրանք արագ (խորը) սառեցված կամ առհասարակ սառեցված չեն,

ինչպես նաև եթե ապրանքի կամ այն պարունակող տրանսպորտային միջոցի՝ երկաթուղային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցի բեռնման և երկաթուղային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցից ապրանքի կամ այն պարունակող տրանսպորտային միջոցի բեռնաթափման վայրերը գտնվում են երկու տարբեր պետություններում, և ապրանքի բեռնաթափման վայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում (հոդվ. 3, կետ 1, մաս 1),

4.3. Եթե փոխադրումը ներառում է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետում նկարագրված ծովային փոխադրումներից բացի մեկ կամ մի քանի ծովային փոխադրումներ, ապա յուրաքանչյուր ցամաքային փոխադրում դիտարկել առանձին (հոդվ. 3, կետ 1, մաս 2),

4.4. Համաձայնագրի 2-րդ և 3-րդ հավելվածներում սահմանված՝ արագ փչացող սննդամթերքի փոխադրման նպատակով օգտագործել Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված տրանսպորտային սարքավորումները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվի առնելով բեռնափոխադրման համար նախատեսված ջերմաստիճանային ռեժիմը՝ Համաձայնագրի 2-րդ և 3-րդ հավելվածներով սահմանված ջերմաստիճանի պահպանման համար սահմանված պահանջը չի դառնում ակնհայտ ավելորդ, և ապահովել, որ տրանսպորտային սարքավորումն ընտրվի և օգտագործվի այնպես, որ հնարավոր լինի ապահովել նշված հավելվածներում սահմանված ջերմաստիճանային ռեժիմը բեռնափոխադրման ամբողջ ընթացքում, և բացի այդ, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կապված մասնավորապես սննդամթերքը բեռնելու պահին անհրաժեշտ ջերմաստիճանն ապահովելու կամ ցամաքային փոխադրման ընթացքում սառեցման և կրկնակի սառեցման կամ այլ գործողությունների հետ: Այնուամենայնիվ, վերոնշյալ կետի դրույթները կիրառել, եթե դրանք չեն հակասում Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահին գործող կոնվենցիաներից կամ դրանց փոխարինող այլ կոնվենցիաներից բխող Հայաստանի Հանրապետության միջազգային փոխադրումներին վերաբերող միջազգային պարտավորություններին (հոդվ. 4, կետ 1),

4.5. Եթե Համաձայնագրով սահմանված բեռնափոխադրումների ժամանակ չեն պահպանվում Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, ապա արգելել բեռնափոխադրման ավարտից հետո սննդամթերքի օգտագործումը և տնօրինումը Հայաստանի Հանրապետության տարածքում, եթե Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն այն չեն համարում հանրային առողջության պահպանման հետ համատեղելի՝ նման օգտագործումն ու տնօրինումը թույլատրելու համար, և եթե չեն պահպանվել թույլտվություն ստանալու համար տվյալ մարմինների կողմից սահմանված անհրաժեշտ պայմանները (հոդվ. 4, կետ 2, ենթակետ «ա»),

4.6. ապահովել, որ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին պարբերության պահանջները կատարվեն վարձատրության կամ հատուցման դիմաց բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների կողմից միայն այն դեպքում, երբ նրանք պարտավորվել են նշված դրույթներին համապատասխանությունն ապահովելու նպատակով ձեռք բերել կամ տրամադրել ծառայություններ, և եթե համապատասխանության ապահովումը կախված է այդ ծառայություններից, և եթե այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք պարտավորվել են ձեռք բերել կամ տրամադրել ծառայություններ, որոնք անհրաժեշտ են Համաձայնագրի դրույթների պահպանման համար, ապա ապահովել, որպեսզի նրանք այդ համապատասխանությունն ապահովեն այնքանով, որքանով դա կախված է ծառայությունների մատուցումից, որոնք նրանք պարտավորվել են ձեռք բերել կամ տրամադրել (հոդվ. 4, կետ 3),

4.7. այն բեռնափոխադրումների ժամանակ, որոնց վրա տարածվում է Համաձայնագրի գործողությունը, և որոնց բեռնման վայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, ապահովել, որ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների կատարման պարտավորությունը՝ հաշվի առնելով նույն հոդվածի 3-րդ կետի դրույթները, կրի վարձատրության կամ հատուցման դիմաց բեռնափոխադրում իրականացնելու դեպքում՝ այն անձը (ֆիզիկական կամ իրավաբանական), որը՝ ըստ տրանսպորտային միջոցն ուղեկցող փաստաթղթերի, բեռնառաքողն է, իսկ ուղեկցող փաստաթղթերի բացակայության դեպքում՝ այն անձը (ֆիզիկական կամ իրավաբանական), որը բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպության հետ կնքել է բեռնափոխադրման պայմանագիր, իսկ այլ դեպքերում՝ այն անձը (ֆիզիկական կամ իրավաբանական), որն իրականացնում է բեռնափոխադրումը (հոդվ. 4, կետ 4),

4.8. Համաձայնագրի դրույթները չկիրառել այն ցամաքային բեռնափոխադրումների նկատմամբ, որոնք իրականացվում են բեռնարկղերով, որոնք, ըստ ջերմային բնութագրերի, դասակարգվում են որպես ծովային և չեն ենթադրում փոխաբեռնում՝ պայմանով, որ այդպիսի ցամաքային բեռնափոխադրումներին նախորդի կամ հաջորդի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված բեռնափոխադրումներից բացի այլ ծովային փոխադրում (հոդվ. 5),

4.9. ապահովել, որ Համաձայնագրի 1-ին հավելվածի 1-ին ենթահավելվածով սահմանված չափանիշներին տրանսպորտային սարքավորումների համապատասխանությունը ստուգվի հետևյալ կարգով՝ նախքան դրանք օգտագործելը, պարբերաբար՝ առնվազն վեց տարին մեկ անգամ իրավասու մարմնի պահանջով (Հավելված 1, ենթահավելված 1, կետ 1),

4.10. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը ձեռնարկի միջոցառումներ՝ ապահովելու համար արտադրանքի այլ միա-

վորների համապատասխանությունը թույլատրված տեսակին (Հավելված 1, ենթահավելված 1, կետ 6(բ)),

4.11. ապահովել, որ փորձաստուգման ենթարկվող սարքավորմանը համապատասխանող փորձաստուգման վերաբերյալ արձանագրությունը կազմվի յուրաքանչյուր փորձաստուգման համար Համաձայնագրի 1-ին հավելվածի, 2-րդ ենթահավելվածից հետո ներկայացված 1-13 օրինակելի ձևերին համապատասխան (Հավելված 1, ենթահավելված 2, կետ 8),

4.12. ապահովել, որ հեղուկացված գազի օգտագործմամբ միավորների փորձաստուգման ընթացակարգը լինի այնպիսին, ինչպիսին սահմանված է Համաձայնագրի 1-ին հավելվածի 2-րդ ենթահավելվածի 4-րդ բաժնում՝ հաշվի առնելով Համաձայնագրի 1-ին հավելվածի, 2-րդ ենթահավելվածի, 9.2.1 կետում շարադրված առանձնահատկությունները (Հավելված 1, ենթահավելված 2, կետ 9.2.1):

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 1970 թվականի սեպտեմբերի 1-ին ստորագրված՝ «Արագ փչացող սննդամթերքի միջազգային փոխադրումների և այդպիսի փոխադրումների համար օգտագործվող հատուկ տրանսպորտային սարքավորումների մասին (ATP)» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

27 հուլիսի 2021 թվականի
ՍԴՈ-1607



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «1970 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱՐԱԳ ՓԶԱՅՈՂ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԱՅԴԱԿԻՍԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՀԱՏՈՒԿ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(ATP)» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1607 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «1970 թվականի սեպտեմբերի 1-ին ստորագրված «Արագ փչացող սննդամթերքի միջազգային փոխադրումների և այդպիսի փոխադրումների համար օգտագործվող հատուկ տրանսպորտային սարքավորումների մասին (ATP)» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի հուլիսի 27-ի ՍԴՈ-1607 որոշմամբ որոշել է, որ 1970 թվականի սեպտեմբերի 1-ին ստորագրված «Արագ փչացող սննդամթերքի միջազգային փոխադրումների և այդպիսի փոխադրումների համար օգտագործվող հատուկ տրանսպորտային սարքավորումների մասին (ATP)» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 27-ի ՍԴՈ-1607 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՍԻՍ ♦ 3(103)2021

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՄԳՈ-1607 որոշմամբ 1970 թվականի սեպտեմբերի 1-ին ստորագրված «Արագ փչացող սննդամթերքի միջազգային փոխադրումների և այդպիսի փոխադրումների համար օգտագործվող հատուկ տրանսպորտային սարքավորումների մասին (ATP)» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահ-

մանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանն ղիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանն ղիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ղիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** ղիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանն ղիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարանն ներկայացվող ղիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով ղիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանն առանց նախապայմանների.

- այդ հարցով ղիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանն միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված

կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկույթյան ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավա-

սարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և

պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ**

պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական**

դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Անփոփեղով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի երանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

27 հուլիսի 2021 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 3(103)2021



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 24-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ՝
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ, «ԼԻՑԵՆԶՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
«ԲՆԱԿԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻՆ ՎԵՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 3(103)2021
174

«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
 «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
 ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ
 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
 ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԶՈՐԱՄԱՍԵՐԻԻ
 ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
 ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ, «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
 ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ, «ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ
 ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ, «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ
 ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ, «ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
 ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
 ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
 ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 օգոստոսի 2021թ.

Մահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
 Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդ-
 կարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
 մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
 դիմողի՝ Հանրապետության նախագահի,

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3(103)2021

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետ Գ. Աթանեսյանի, Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 73-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի և հարակից՝ «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Հիմնադրամների մասին» օրենքում լրացում կատարելու մասին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին, «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Չորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Դեղերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության պետական պարզևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Լեզվի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին, «Գնումների մասին» օրենքում

լրացում կատարելու մասին օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) և հարակից 22 օրենքներն Ազգային ժողովի կողմից ընդունվել են 2021 թվականի մարտի 24-ին:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի (այսուհետ՝ դիմող)՝ 2021 թվականի ապրիլի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող Օրենքը և հարակից 22 օրենքները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները և փաստարկները

Դիմողը բարձրացնում է Օրենքի դրույթների սահմանադրականության հետ կապված խնդիրներ երեք ուղղությամբ.

1) Հիմք ընդունելով Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը՝ դիմողը գտնում է, որ բուհական ինքնավարությունը ներառում է կազմակերպական, ակադեմիական, մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարման ինքնավարություն: Ընդ որում՝ բուհական ինքնավարության այդ իրավունքը սահմանված է նաև Օրենքի 6-րդ հոդվածով: Սակայն, դիմողի կարծիքով, բուհն օժտված է ինքնավարությամբ, «երբ այն ունի իրավասությունն ու փաստացի հնարավորությունը ինքնուրույն՝ առանց պետության կողմից անհարկի միջամտության, որոշելու իր գործունեության ուղղությունը»: Դիմողն իր այս փաստարկները ներկայացնելիս վկայակոչում է վերաբերելի միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներ:

Դիմողը, վկայակոչելով Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված՝ բուհի կառավարման խորհրդի (ներառյալ բուհի գործադիր մարմնի) լիազորությունների լայն շրջանակը, պնդում է, որ բուհի կառավարման խորհրդի ձևավորման այնպիսի համամասնությունը, որով «խորհրդի անդամների բացարձակ մեծամասնությանը նշանակում է համապատասխան պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի ղեկավարը, խեղաթյուրում է բուհերի ինքնակառավարման սահմանադրական» հայեցակարգն ու փաստացի անհնարին է դարձնում բուհական ինքնավարության կենսագործումը: Հետևաբար՝ դիմողը եզրակացնում է. «Բուհի ինքնակառավարման սահմանադրական երաշխիքը տրամաբանորեն ենթադրում է բուհական ինքնավարությանը և ակադեմիական ազատությանն առնչվող լայն լիազորություններով օժտված կառավարման մարմինների ձևավորման գործընթացում բուհի որոշիչ դերի կամ առնվազն հավասար դերակատարության սահմանում»: Այս եզրակա-

ցության հիման վրա դիմողը գտնում է, որ Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն առերևույթ չեն համապատասխանում Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին:

2) Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք ...»: Սահմանադրական այս դրույթը դիմողը մեկնաբանում է այն իմաստով, որ «ինքնակառավարման շրջանակը, հետևաբար նաև այդպիսի ինքնակառավարման սահմանափակումներն ու պայմանները կարող են նախատեսվել միայն օրենքներով»: Ելնելով դրանից՝ դիմողն Օրենքի 6-րդ հոդվածի («Բուհական ինքնավարությունը և հաշվետվողականությունը») 2-րդ մասը, համաձայն որի՝ «Բուհը, սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան» ունի ակադեմիական ու կազմակերպական գործունեության, մարդկային ու ֆինանսական ռեսուրսների կառավարման ինքնավարություն, դիտարկում է առերևույթ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող այն իմաստով, որ «ինքնակառավարման սահմանները (սահմանափակումները), կարող են նախատեսվել ոչ միայն օրենքներով, այլ նաև այլ նորմատիվ իրավական ակտերով»:

3) Դիմողը, Օրենքի՝ Սահմանադրությանն անհամապատասխանություն է դիտարկում դրա մի շարք դրույթներում ամրագրված՝ բուհական կամ գիտական կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելու տարիքային սահմանափակումները կամ այդ պաշտոններում ընտրված անձանց լիազորությունների դադարումը՝ որոշակի տարիքից: Մասնավորապես՝

ա) Օրենքի 25-րդ հոդվածի 10-րդ մասը նախատեսում է, որ գիտական կազմակերպության տնօրենի պաշտոնում ընտրված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե լրացել է նրա 65 տարին,

բ) Օրենքի 37-րդ հոդվածի 17-րդ մասը սահմանում է, որ 70 տարին լրացած անձը բուհում ակադեմիական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար անցկացվող մրցութային ընտրությանը չի մասնակցում: Այդ անձի հետ բուհի ռեկտորն ամբիոնի առաջարկությամբ կարող է կնքել ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատանքային պայմանագիր մեկ ուսումնական տարի ժամկետով՝ տարեկան երկարաձգման իրավունքով,

գ) Օրենքի 37-րդ հոդվածի 18-րդ մասը սահմանում է, որ բուհում (մասնաճյուղում) վարչական պաշտոնում նշանակված կամ ընտրության միջոցով վարչական պաշտոնում նշանակված (ընտրված) անձի լիազորությունները դադարեցվում են ռեկտորի որոշմամբ, եթե լրացել է նրա 70 տարին:

Վերլուծելով այս սահմանափակումները՝ դիմողը գտնում է, որ Օրենքի 25-րդ հոդվածի 10-րդ մասը, 37-րդ հոդվածի 17 և 18-րդ մասերն ամերևույթ չեն համապատասխանում Սահմանադրության 28 և 29-րդ հոդվածներին:

Դիմողը, վկայակոչելով ՄԻԵԴ-ի մի շարք գործերով խտրականության արգելքի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները, համարում է, որ վերը նշված դեպքերում Օրենքով նախատեսված տարիքային հիմքով սահմանափակումների մեջ չի տեսնում իրավաչափ նպատակը, ինչպես նաև դրան հասնելու համար ընտրված միջոցի համաչափություն:

Դիմողի ենթադրությամբ, եթե «առաջարկվող տարբերակված մոտեցման հիմքում ընկած է որոշակի տարիքով անձանց առողջական կամ ֆիզիկական վիճակի առանձնահատկությունների վերաբերյալ կանխավարկածը, ապա կարծում ենք, որ այդպիսի հիմքով ապրիորի տարբերակում սահմանելն ինքնին օբյեկտիվ և իրավաչափ հիմք չի կարող հանդիսանալ, իսկ, բոլոր բնագավառներում տեղի ունեցող սրընթաց զարգացումների համատեքստում, ժամանակակից աշխարհում տարիքը per se չի կարող դիտարկվել որպես սահմանափակ արդյունավետությամբ աշխատանքի պատճառ, հատկապես՝ գիտակրթական ոլորտում»:

2. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը դիմումում բարձրացված՝ Օրենքի՝ Սահմանադրությանը երեք ուղղություններով հակասելու վերլուծությունների դեմ առաջ է քաշում հետևյալ հակափաստարկները.

1) Վերլուծելով բուհական ինքնակառավարման իրավունքի հասկացությունը, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ, 39-րդ կետերը, 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև 27-րդ հոդվածը («Բուհի կառավարման խորհրդի ձևավորումը»)՝ հանգում է եզրակացության, որ բուհական ինքնակառավարման իրավունքը լայն հասկացություն է, որը ներառում է «ինչպես ակադեմիական ազատությունն ու հետազոտությունների ազատությունը, այնպես էլ կազմակերպական, այդ թվում՝ մարդկային ու ֆինանսատնտեսական ռեսուրսները կառավարելու գործառույթները ինքնուրույն սահմանելու, որոշումներ կայացնելու և իրականացնելու իրավասությունը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կանոնադրությանը համապատասխան:

Հանրային բուհի կառավարման խորհրդի 5 անդամի՝ համապատասխան լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակվելն ինքնին չի կարող դիտարկվել որպես բուհերի ինքնակառավարման իրավունքի խախտում: Լիազոր մարմնի ղեկավարի կողմից անդամների նշանակման հարցը բուհի ինքնավարության իրավունքի համատեքստում քննարկելիս պետք է դիտարկվել նաև այդ

անդամների՝ օրենսդրությամբ ամրագրված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նրանց գործունեության երաշխիքները»:

Վկայակոչելով Օրենքի 24-րդ հոդվածը՝ պատասխանողը հիմնավորում է, որ բուհի կառավարման երեք մարմիններից (կառավարման խորհուրդ, ակադեմիական խորհուրդ, կառավարման գործադիր մարմին) կառավարման խորհուրդը մշտապես գործող մարմին է, որի անդամ չի կարող դառնալ որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը: Այնուհետև վկայակոչելով Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ կառավարման խորհրդի նախագահի և անդամների իրավունքների ու պարտականությունների կարգավորման/ամրագրման իրավական ձևը, խորհրդի անդամին ներկայացվող չափանիշները՝ եզրակացնում է, «... որ բուհն իր գործունեությունն իրականացնում է ինքնակառավարման իրավունքի լիարժեք իրացման միջոցով, խոսք չի կարող գնալ բուհի ինքնակառավարման իրավունքի խախտման մասին»: Պատասխանողը հարկ է համարում նաև ընդգծել, որ կառավարման խորհրդի անդամների՝ լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակումն ինքնին որևէ կերպ չի կարող ընկալվել որպես լիազոր մարմնից կախվածության հիմք և անկաշկանդ գործելուն խոչընդոտ:

2) Պատասխանողը, անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին, եզրակացնում է, որ Օրենքի «Բուհական ինքնավարությունը և հաշվետվողականությունը» վերտառությամբ այդ հոդվածը՝ «Ֆ կատարումն Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի, սահմանում է բուհի ինքնակառավարման իրավունքի շրջանակները, որոնք թվարկված են հոդվածի 2-րդ մասում: Վիճարկվող օրենսդրական ակտն ինքնին հանդիսանում է օրենք՝ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով, ուստի դիմումն այս մասով ևս անհիմն է»:

3) Պատասխանողը, համադրելով Օրենքի՝ տարիքային սահմանափակումներ նախատեսող՝ 25-րդ հոդվածի 10-րդ, 37-րդ հոդվածի 17-րդ, 18-րդ մասերը, ինչպես նաև Սահմանադրության 28 և 29-րդ հոդվածները, վկայակոչելով ՄԻԵԴ-ի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ « գիտական կազմակերպության տնօրենի համար որպես սահմանային տարիք 65 տարեկանը, իսկ բուհում վարչական պաշտոնում նշանակված անձի համար՝ 70 տարեկանը նախատեսելը արդարացված է՝ հաշվի առնելով նրանց կողմից կատարվող աշխատանքի բնույթը և առանձնահատկությունները: Մասնավորապես, օրենսդրի կողմից նման կարգավորում նախատեսելիս հաշվի է առնվել այդ տարիքում անձանց ֆիզիկական ու առողջական վիճակի և նրանց համար սահմանված աշխատանքային պարտականությունների ծավալի հարաբերակ-

ցությունը: Պատահական չէ, որ գիտական կազմակերպության տնօրենի համար որպես սահմանային տարիք նախատեսվել է ավելի ցածր տարիքային շեմ, քանի որ նա իրականացնում է գիտական կազմակերպության ողջ ընթացիկ գործունեության ղեկավարումը, ինչն իրենից ենթադրում է ավելի մեծ ծանրաբեռնվածություն»:

Ինչ վերաբերում է 70 տարին լրացած անձի կողմից ակադեմիական պաշտոն զբաղեցնելու՝ Օրենքով նախատեսված առանձնահատկությանը, ապա, ըստ պատասխանողի, այս դեպքում ևս օրենսդիրը, ելնելով նույն տրամաբանությունից, սահմանել է, որ վերջինս կարող է կնքել ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատանքային պայմանագիր: Նման մոտեցումը միանգամայն արդարացված է՝ հաշվի առնելով ակադեմիական պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրականացվող աշխատանքի բնույթը:

Պատասխանողը հիմնավորում է, որ ցանկացած տարբերակված մոտեցում չէ, որ հանգեցնում է խտրականության: Տարբերակված այն մոտեցումը, որն ունի օբյեկտիվ և ողջամիտ հիմք, հետապնդում է իրավաչափ նպատակ, խտրականություն չէ:

Պատասխանողն այս դիրքորոշումների համատեքստում խնդրում է սույն գործով ընդունել որոշում՝ Օրենքի վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում ամրագրված իրավակարգավորումները համահունչ են արդյոք Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությանը,
- արդյո՞ք բուհերի ինքնակառավարման իրավունքի շրջանակը սահմանելու օրենսդրի հայեցողությունը սահմանափակված է,
- արդյո՞ք բուհերի ինքնակառավարման իրավունքի շրջանակը կարող է սահմանվել օրենքից ցածր աստիճանակարգության նորմատիվ իրավական ակտով,
- արդյո՞ք Օրենքում որոշ պաշտոնների համար տեղ գտած տարիքային սահմանափակումները խնդրահարույց են Սահմանադրության 29-րդ հոդվածի տեսանկյունից:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում վեր հանել Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 3(103)2021

իրավաբանական բովանդակությունը, համաձայն որի՝ «բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը»:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների սահմանադրական այդ իրավունքի իրավական բովանդակությունն են կազմում հետևյալ կարևոր իրավադրույթները.

ա) բարձրագույն ուսումնական հաստատությունները Հայաստանի Հանրապետությունում ունեն ինքնակառավարման իրավունք,

բ) բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի շրջանակները սահմանվում են օրենքով,

գ) բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը ներառում է նաև ակադեմիական և հետազոտության ազատությունները:

Ինքնակառավարումը դասական իմաստով նշանակում է կազմակերպված սոցիալական ընդհանրության կամ հաստատության (կազմակերպության) անկախությունն ու ինքնուրույնությունը՝ սեփական գործերը կառավարելիս, իր կենսագործունեության հարցերը լուծելիս: Պետությունը սահմանում է ինքնակառավարվող սուբյեկտների գործունեության օրենսդրական հիմունքները և ուղղակի չի միջամտում դրանց ու դրանց ստեղծած մարմինների գործունեությանը, այլ օրենքով սահմանված կարգով իրականացնում է համապատասխան վերահսկողություն:

Սահմանադրությունը և օրենքներն ինքնակառավարմամբ օժտում են նաև որոշակի հանրային (պետական) մարմիններին ու հաստատություններին (կազմակերպություններին)՝ դրանց գործունեության ոլորտի կամ լիազորությունների յուրահատկության ուժով, ինչը նպատակամղված է ոլորտին կամ գործառնությանը հարիր ձեռնահաս, օպերատիվ որոշումների ընդունմանը, դրանց առջև դրված սոցիալական առաքելության կենսագործմանը: Հաստատությունների (կազմակերպությունների) ինքնակառավարման աստիճանը նախանշվում է օրենքով, որպես կանոն, ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են ֆինանսականը, տնտեսականը, կազմակերպական-կառավարչականը, կադրայինը (մարդկային ռեսուրսները):

Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասը, սահմանելով բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, վերջիններիս օժտել է ոչ միայն ինքնակառավարմանը բնորոշ ընդհանուր տարրերով (որոնք, ինչպես նշվեց՝ բաղկացած են կազմակերպական-կառավարչական (ներառյալ կադրային) և ֆինանսական բաղադրիչներից, և ինքնակառավարվող սուբյեկտների անքակտելի հատկություններն են), այլ նաև լրա-

ցուցիչ, դրանց սոցիալական և մշակութային դերին բնորոշ բաղադրատարրերով՝ ակադեմիական (կրթության ոլորտ) և հետազոտությունների (գիտական ոլորտ) ազատությամբ:

Սահմանադրական դատարանը շեշտում է պետության և հասարակության զարգացման, վերջիններիս գոյապահպանման հարցերում կրթության և գիտության առանցքային, հիմնարար նշանակությունը: Կրթությունն առաջադիմության, մշակութային պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է, իսկ կրթվելն անհատի զարգացման գործընթացն է՝ միտված գիտելիքների, հմտությունների տիրապետմանը, արժեքային վերաբերմունքի ձևավորմանը: Կրթությունը ոչ միայն մարդու, այլև ողջ հասարակության զարգացման գործոն է, այն որոշում է մարդու կյանքի բազում կողմերը և որպես արդյունք՝ մարդու հասարակական ակտիվության աստիճանը, աշխարհայացքն ու արժեքները: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ կրթությունը զարգացնելու պետության պարտավորությունը դիտարկվել է **որպես սահմանադրական կարգի հիմունք, այսինքն՝ պետական ու հասարակական հիմնական սկզբունք: Պետության նպատակն է կրթությունը դարձնել հասարակության զարգացումը և առաջադիմությունն ապահով գործիք:**

Կրթության և գիտության դեպքում նոր գիտելիքի որոնման շարունակական գործընթացին, որը վերջին հաշվով պետք է հանգեցնի ճշմարիտ գիտելիքի, օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը, հնարավոր է հասնել որոշակի ազատ միջավայրում, միջավայր, որը զերծ է կանխակալ մոտեցումներից, ինչն իր հերթին թույլ է տալիս հետազոտողին գիտելիքի որոնման այդ գործընթացում (դրա արդյունքում) հասնելու (մոտենալու) օբյեկտիվ ճշմարտությանը և ոչ թե «ստանալու» «նախապես ծրագրված, ցանկալի» արդյունք: Այդպիսի ճշմարիտ գիտելիքին հասնելու համար անհրաժեշտ է՝

նախ՝ գիտելիքի որոնման գործընթացը զերծ պահել քաղաքական, գաղափարախոսական և այլ նախապաշարմունքներից (որոնց դեպքում ստացվում է ոչ թե ճշմարիտ գիտելիք, այլ ցանկալի արդյունք),

երկրորդ՝ գիտելիքի որոնման շարունակական այդ գործընթացում սխալի, սխալվելու հանդեպ հանդուրժողական, իսկ որոշ դեպքերում դրական վերաբերմունք (քանի որ սխալի բացահայտումը թույլ է տալիս կատարելագործել առաջ քաշված վարկածները, զարգացնել դրանք՝ ըստ այդմ մոտեցնելով ճշմարտությանը) ձևավորելը (ինչը գրեթե բացառվում է «անքննելի ճշմարտությունների», քաղաքական գաղափարախոսությունների դեպքում):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հենց ասվածի լույսի ներքո պետք է դիտարկել նաև Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 38-րդ հոդվածի 3-րդ մասում բնորոշված՝ բուհերի՝ օրենքով սահմանված շրջանակներում ինքնակառավարման՝ ներառյալ ակադեմիական և հետազոտությամբ:

յունների ազատության իրավունքը՝ այն դիտարկելով ոչ այնքան **ինքնապատակ**, որքան **միջոց՝ բուհի ինքնակառավարման բաղադրատարր հանդիսացող ակադեմիական և հետազոտությունների ազատությամբ հասնելու կրթության և գիտության զարգացմանը՝ որպես արդյունք ապահովելով հասարակության գոյապահպանումն ու հարընթաց զարգացումը:**

Միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում շեշտադրվում է մի կողմից ակադեմիական հանրության խոցելիությունը «անբարենպաստ քաղաքական ճնշումներից, որոնք կարող են քայքայել ակադեմիական ազատությունը», մյուս կողմից՝ այն արձանագրումները, որ ակադեմիական՝ ժամանակակից աշխարհի և հանրության պահանջմունքները բավարարելու առաքելությունը լավագույնս կարող է իրականացվել, երբ բուհերը «բարոյապես և ինտելեկտուալ առումով անկախ են» բոլոր քաղաքական կամ տնտեսական ուժերից:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բուհերի՝ ակադեմիական (այդ թվում՝ հետազոտական) ազատության երաշխավորումը դառնում է հենց այն նպաստավոր նախադրյալը, որը խթան է կրթության և գիտության զարգացման համար՝ ապահովելով դրանց համար առանցքային կարևորության արդյունավետ ազատ միջավայր:

4.2. Սահմանադրական դատարանը շեշտում է, որ ակադեմիական ազատությունն ունի մի քանի հայեցակետ (ասպեկտ)։ մի կողմից դիտարկվում է իբրև կրթության հիմնական իրավունքի բաղադրատարր, որն ուղղակիորեն առնչվում է նաև արտահայտվելու ազատության իրավունքի հետ, այսինքն՝ դրա կրողն են բուհերում՝ գիտակրթական գործընթացի սուբյեկտները (ուսանողական ու գիտական-մանկավարժական կազմը), մյուս կողմից՝ այն դիտարկվում է ինստիտուցիոնալ առումով, իբրև բուհերի ինքնավարության տարր՝ ակադեմիական և հետազոտական՝ իրենց գործառնություններն իրացնելիս «արտաքին» միջամտություններից հնարավորինս ազատ լինելու տեսանկյունից:

Ակադեմիական և հետազոտական ազատությունը որպես կրթության իրավունքի տարր լինելու տեսանկյունից անհրաժեշտ է շեշտադրել «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածին նվիրված (որը վերաբերում է կրթության իրավունքին) ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեի համընդհանուր մեկնաբանությունում արված այն արձանագրումը, որ կրթության իրավունքը կարող է իրացվել այն դեպքում, երբ

այն ուղեկցվում է անձնակազմի և ուսանողների ակադեմիական ազատությամբ:

Նույն մեկնաբանությունում նշվում է, որ ակադեմիական հանրության անդամներն անհատապես կամ կոլեկտիվ կերպով ազատ են ստանալու, զարգացնելու, փոխանցելու գիտելիքներ և գաղափարներ հետազոտությունների, ուսուցանելու, սովորելու, քննարկումների, փաստաթղթավորման, արտադրման, ստեղծագործության կամ գրելու միջոցով: Մեկնաբանություններում նաև նշվում է, որ ակադեմիական ազատությունը ներառում է նաև հաստատությունում կամ համակարգում աշխատող անձանց կողմից նշված հաստատության կամ համակարգի մասին ազատորեն կարծիքներ արտահայտելու, իրենց գործառույթներն առանց **խտրականության կամ պետության կամ այլ սուբյեկտի կողմից ճնշումների ենթարկվելու վախի կատարելու**, մասնագիտական կամ ներկայացուցչական ակադեմիական մարմինների աշխատանքներին մասնակցություն ունենալու իրավունքը:

Հարկ է արձանագրել, որ ակադեմիական ազատության համանման ընկալում է տեղ գտել նաև միջազգային իրավական այլ փաստաթղթերում, օրինակ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ հանձնարարականում, որի 27-րդ հոդվածում մասնավորապես նշվում է, որ բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսական կադրերն ունեն ակադեմիական ազատության իրավունք, այսինքն՝ առանց որևէ կաշկանդվածության ուսուցման և քննարկումների ազատության իրավունք, հետազոտություններ իրականացնելու, այդ թվում՝ դրանց արդյունքները տարածելու և հրատարակելու ազատություն, այն համակարգի կամ ինստիտուտի մասին ազատորեն կարծիք արտահայտելու ազատություն, որում նրանք աշխատում են, ազատություն ինստիտուցիոնալ գրաքննությունից, ինչպես նաև մասնագիտական կամ ներկայացուցչական գիտական մարմիններում մասնակցություն ունենալու ազատություն: **Բարձրագույն կրթության ուսումնական կազմի բոլոր անդամները պետք է իրավունք ունենան կատարելու իրենց գործառույթներն առանց որևէ խտրականության և պետության կամ որևէ այլ աղբյուրի կողմից ճնշումներից վախենալու:**

Վերոշարադրյալի հիման վրա և հիմք ընդունելով Սահմանադրության 81-րդ հոդվածի այն պահանջը, որ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, **Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած ակա-**

դեմիական և հետազոտությունների ազատությունը, իբրև կրթության իրավունքի բաղադրատարր բուհերում՝ գիտակրթական գործընթացի սուբյեկտների իրավունք, ներառում է սովորելու և դասավանդելու (սովորեցնելու), հետազոտություններ իրականացնելու, դրա արդյունքները տարածելու և հրապարակելու, ներկայացուցչական, ինչպես նաև գիտական մարմիններին մասնակցություն ունենալու, քննարկումների ազատության, այդ թվում նաև՝ այն համակարգի կամ ինստիտուտի մասին, որում աշխատում են, ազատորեն կարծիք արտահայտելու ազատություն:

Ակադեմիական և հետազոտական ազատությունը ենթադրում է, որ բացառվի բուհերում՝ գիտակրթական գործընթացի սուբյեկտների նկատմամբ իրենց գործառնությունների իրականացման ընթացքում խտրական վերաբերմունքը, կա՛մ պետության, կա՛մ այլ սուբյեկտի կողմից ճնշումները, օրենսդրական մակարդակում պետք է ստեղծվեն որոշակի ինստիտուցիոնալ երաշխիքներ: Իբրև այդպիսի ինստիտուցիոնալ երաշխիք հանդես է գալիս բուհական ինքնավարության **արդյունավետ** երաշխավորումը պետության կողմից:

Ու թեև Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով բուհերի ինքնակառավարման իրավունքի շրջանակի որոշումը վերապահված է օրենսդրին, սակայն ելնելով նույն հոդվածում 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում տեղ գտած այն շեշտադրումից, որ բուհերի ինքնակառավարման իրավունքը ներառում է ակադեմիական և հետազոտությունների ազատությունը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի հայեցողությունը բուհի ինքնակառավարման շրջանակը սահմանելիս սահմանափակված է, և օրենսդիրն իրավասու չէ այդ շրջանակն այնչափ «նեղացնել», որ ինքնաբերաբար հանգեցնի բուհերում՝ գիտակրթական գործընթացի սուբյեկտների ակադեմիական և հետազոտական ազատության իրավունքի սահմանափակմանը՝ այն վերջիններիս համար վերածելով առավելապես վերացական և պատրանքային իրավունքի:

Այս առումով, օրինակ, բուհերում դասախոսական կազմի՝ դասավանդելու ազատությունն ապահովելու համար անհրաժեշտ է ինստիտուցիոնալ մակարդակում երաշխավորել նաև դասախոսական կազմի՝ դասավանդողի աշխատատեղի ազատ, մրցակցային և թափանցիկ պայմաններում անկախ և անկողմնակալ մարմնի կողմից ընտրվելու հնարավորությունը: Դասախոսի դասավանդման ազատությունն ապահովելու համար անհրաժեշտ է ինստիտուցիոնալ մակարդակում դասախոսական կազմի համար երաշխավորել աշխատատեղը և բացառել դրանից զրկումը (աշխատանքից ազատումը)՝ որո-

շակի քաղաքական դրդապատճառներից ելնելով: Այս առումով կարևոր է երաշխավորել, որ նշված պաշտոնից զրկումը հնարավոր է մասնագիտական անձեռնահասության կամ իր գործառնության պարտականությունների ոչ պատշաճ կատարման համար, այլ օբյեկտիվ պատճառներով (սահմանային տարիքին հասնելու, ֆինանսական դրդապատճառների բերումով և այլն)՝ այդպիսով իսկ բացառելով տարատեսակ խտրական հիմքով պայմանավորված՝ աշխատանքից ազատման-ընդունման հնարավորությունը:

Մյուս կողմից, օրինակ, ելնելով այն հանգամանքից, որ դասավանդելու ազատության իրավունքը կարող է որոշակիորեն սահմանափակվել առարկայական ծրագրերի շրջանակում անցկացվելիք նյութի շրջանակներով, և հետևաբար՝ ակադեմիական ազատության վրա հնարավոր ճնշումները բացառելու և դասավանդելու ազատության՝ դասավանդողի կողմից նյութի բովանդակությունը (ինչ սովորեցնել) և մեթոդը (ինչպես սովորեցնել) որոշելու ազատության իրացվելիության համար անհրաժեշտ է, որ ամրագրվեն առարկայական, կրթական ծրագրերի կազմմանը դասախոսական կազմի մասնակցությունն ապահովող երաշխիքներ:

Վերոշարադրյալից բխում է, որ բուհական ինքնավարությունը (1) անհրաժեշտ պայման և նախադրյալ է բուհերում՝ գիտակրթական գործընթացի սուբյեկտների ակադեմիական և հետազոտական ազատության ապահովման և երաշխավորման համար, հետևաբար՝ (2) այդ ինքնավարությունը չպետք է խոչընդոտի (անհամաչափորեն սահմանափակի) վերոնշյալ սուբյեկտների ակադեմիական և հետազոտական ազատությունը:

Նմանատիպ դիրքորոշումներ են տեղ գտել նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ հանձնարարականում (1997թ.) նախատեսված են ակադեմիական ազատության և ինստիտուցիոնալ ինքնավարության սահմանումները: Այդ փաստաթղթի 18, 19 և 21-րդ կետերի համաձայն՝

- բուհական ինքնավարությունն ակադեմիական ազատության ինստիտուցիոնալ ձևն է, որն անհրաժեշտ նախապայման է բարձրագույն ուսումնական հաստատություններին և դասախոսական կազմին վերապահված գործառնությունների պատշաճ իրականացման համար,
- ինքնակառավարումը, կոլեգիալությունը և համապատասխան ակադեմիական առաջնորդությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների նպատակային ինքնավարության էական բաղադրիչներն են,

- անդամ պետությունը պարտավոր է պաշտպանել բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ դրանց ինքնավարությանն արտաքին աղբյուրներից սպառնացող վտանգների դեպքում:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 13-րդ համընդհանուր մեկնաբանության 40-րդ կետի համաձայն՝ **ակադեմիական ազատությունը պահանջում է բարձրագույն կրթության հաստատությունների ինքնավարություն:** Ինքնավարությունն ինքնակառավարման այն աստիճանն է, որն անհրաժեշտ է բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից **արդյունավետ որոշում կայացնելու համար՝ կապված նրանց ակադեմիական աշխատանքի, ստանդարտների, կառավարման և դրանց հետ կապված գործունեության հետ:**

Եվրոպական համալսարանների ռեկտորների կողմից 1988 թվականի սեպտեմբերի 18-ին ստորագրված «Magna Charta Universitatum»-ը հռչակում է համալսարանների առաքելությունն ապահովող հիմնարար սկզբունքները, ինչպես նաև դրանց կենսագործման միջոցները: «Magna Charta Universitatum»-ը համալսարանի առաջին հիմնարար սկզբունքն է համարում ինքնավարությունը՝ ազդարարելով, որ «համալսարանները, լինելով աշխարհագրական բազմազան պայմանների ու պատմական զարգացման տարբերությունների ուժով յուրահատուկ կազմավորված հասարակությունների սրտում, հանդիսանում են ինքնավար հաստատություն, որը քննադատաբար ստեղծում և տարածում է մշակույթ գիտական հետազոտության ու կրթության միջոցով: Արդի աշխարհի կարիքներին պատշաճորեն արձագանքելու համար համալսարանը, իրականացնելով իր գործունեությունը հետազոտությունների ու կրթության ոլորտում, պետք է ունենա բարոյական և մտավոր անկախություն ցանկացած քաղաքական ու տնտեսական իշխանությունից»:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) «Բարձրագույն կրթության կառավարման մոդելի փոփոխություն» վերաառությամբ վերլուծության համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման անհրաժեշտ բաղադրիչներից է այդ հաստատությունների ինքնավարությունը: Բուհերի ինքնավարությունը միայն ակադեմիական ազատությունը չէ, թեև դրանք իրար հետ կապված են: **Բուհական ինքնավարությունը հաստատության կարողությունն ու իրավունքն է որոշելու իր գործողությունների ընթացքն առանց պետության անհարկի միջամտության:**

Վերը բերված, ինչպես նաև միջազգային մի շարք այլ խորհրդատվական փաստաթղթերի վերլուծության հիման վրա Մահմանադրական դատարանը եզրակացնում է, որ բուհերի ինքնավարության իրավունքը հիմնարար արժեք է: Այդ ինքնավարությունը բաղկացած է ուսումնական հաստատության ինք-

նակառավարման իրավունքից, ակադեմիական ու հետազոտական ազատություններից և երաշխիք է բուհի գործունեությանը գաղափարական, քաղաքական և կրոնական միջամտությունից զերծ պահելու համար:

Վերոշարադրյալի լույսի ներքո վերլուծելով Օրենքում տեղ գտած մի շարք կարգավորումներ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք խնդրահարույց են Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի տեսանկյունից:

4.3. Սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով և վերլուծելով Օրենքի բուհական ինքնավարության վերաբերյալ դրույթները, արձանագրում է, որ այն սահմանված է դրա մի շարք հոդվածներով:

Այսպես՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետը, ամրագրելով «բուհական ինքնավարություն» հասկացությունը, սահմանում է, որ դա «բուհի ակադեմիական և կազմակերպական, այդ թվում՝ մարդկային ու ֆինանսատնտեսական ռեսուրսները կառավարելու գործառույթները ինքնուրույն սահմանելու, որոշումներ կայացնելու և իրականացնելու իրավասությունն» է:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ելնելով Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ կետի բովանդակությունից, բուհական ինքնավարությունն ու ակադեմիական ազատությունը համարում է բարձրագույն կրթության և գիտության համակարգի պետական քաղաքականության սկզբունք:

Կարգավորման նորմատիվ համակարգում կարևոր նշանակություն ունի Օրենքի 6-րդ հոդվածը («Բուհական ինքնավարությունը և հաշվետվողականությունը»), որն, ըստ էության, սահմանում է 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված իրավական սկզբունք-բնորոշումը: Դրա 1-ին մասն ամրագրում է, որ բուհն իր գործունեությունն իրականացնում է ինքնակառավարման իրավունքի լիարժեք իրացման միջոցով՝ բուհական ինքնավարության, ակադեմիական և հետազոտությունների ազատության, կոլեգիալության սկզբունքներով՝ պահպանելով հաշվետվողականության պահանջները, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում են բուհական ինքնավարության ոլորտները՝ ինքնավար գործունեության շրջանակները, այն է՝ ակադեմիական (երկու ենթաոլորտներով՝ կրթական և հետազոտական կամ գիտական), կազմակերպական, մարդկային ու ֆինանսական ռեսուրսները:

Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային բուհի կառավարման խորհուրդը բաղկացած է ինն անդամից: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային բուհի կառավարման խորհուրդը ձևավորվում է հետևյալ համամասնությամբ. անդամներից չորսին առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը՝ սահմանելով նրանց ներկայացվող պահանջները,

առաջադրման և լիազորությունների դադարեցման կարգը, իսկ հինգին նշանակում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը: Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բուհի կառավարման խորհրդի չորս անդամին սահմանված ժամկետում չառաջադրելու կամ չորսից պակաս առաջադրելու դեպքում կառավարման խորհրդի՝ բուհի կողմից չառաջադրված անդամների համալրումն իրականացնում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը:

Օրենքի 30-րդ հոդվածով սահմանված հանրային բուհի կառավարման խորհրդի լիազորությունների ամբողջությունն էական կշիռ ունի բուհական կառավարման համակարգում, և այդ հանգամանքը հնարավորություն է տալիս պնդել, որ կառավարման խորհուրդը սկզբունքային ազդեցություն ունի բուհի գործունեության հիմնարար ուղղությունների, ռազմավարական զարգացման, կառուցվածքային և ֆինանսավորման, հաստիքային միավորների բաշխման և այլ հարցերում: Հատկանշական է, որ բուհերի ինքնակառավարման իրավունքի պատշաճ երաշխավորումն սկսվում է կառավարման խորհրդի անդամների նշանակումով՝ որպես ինքնակառավարման հիմք:

Օրենքով նախատեսվում է հանրային բուհի կառավարման մարմիններից՝ կառավարման խորհրդի (հոգաբարձուների խորհրդի) **ձևավորման վրա առանցքային և ուղղակի** ազդեցության հնարավորություն համապատասխան **լիազոր մարմնի ղեկավարի կողմից, որն ըստ Օրենքի ստանում է** կառավարման խորհրդի 9 անդամներից 5-ին **նշանակելու լիազորություն** (Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

Այս լիազորությունը՝ զուգակցված հանրային բուհի կառավարման խորհրդի անդամի ինքնավարության հստակ և արդյունավետ երաշխիքների բացակայությամբ, խնդրահարույց է Սահմանադրության 38-րդ հոդվածի տեսանկյունից: Թեև Օրենքում տեղ են գտել որոշակի երաշխիքներ (ինչպիսիք են, օրինակ, այն, որ կառավարման խորհրդի անդամ չի կարող լինել անձը, որը որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ է կամ զբաղեցնում է քաղաքական պաշտոն (Օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ և 4-րդ կետեր), և այդպիսի հանգամանքները դիտարկվում են իբրև կառավարման խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման հիմքեր (Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր), այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք չեն կարող դիտարկվել իբրև **լիազոր մարմնի ղեկավարի կողմից** նշանակված **կառավարման խորհրդի անդամի ինքնուրույնության արդյունավետ երաշխիքներ**, առնվազն այն պատճառով, որ նշանակող մարմինն ունի նշանակված անդամներին պաշտոնից վաղաժամկետ ազատելու իրավասություն, և այդպիսի հանգամանքն Օրենքով դիտարկվում է իբրև կառավարման խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման հիմք (Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ):

Այսպիսի կարգավորումների պարագայում, երբ հանրային բուհի կառավարման խորհրդի անդամների **մեծամասնությունը նշանակվում և ազատվում է լիազոր մարմնի ղեկավարի կողմից, խիստ պատրանքային է դառնում հանրային բուհի կառավարման խորհրդի նշանակված անդամի ինքնուրույնությունը նշանակող մարմնից, իսկ այդպիսի** ինքնուրույնությունը դրսևորելու դեպքում, չբացառելով նշանակող մարմնի կողմից կառավարման անդամի ազատումը հենց վերջինիս ինքնուրույնության շարժառիթով պայմանավորված տեսական հնարավորությունը՝ ստեղծվում է իրավիճակ, երբ հանրային բուհի կառավարման խորհրդի մեծամասնությունն ընկնում (հայտնվում) է նշանակող մարմնից (լիազոր մարմնի ղեկավարից) **կախվածության մեջ, որպես արդյունք՝ այդպիսով գործադիր իշխանությունից ուղղակի կախվածության մեջ է ընկնում հանրային բուհի կառավարման 3 մարմիններից մեկը:**

Մյուս կողմից, ելնելով այն հանգամանքից, որ հանրային բուհի կառավարման մարմիններից մյուսը՝ կառավարման գործադիր մարմինը՝ ռեկտորը (տնօրենը, պետը), ընտրվում է կառավարման խորհրդի կողմից՝ անդամների **ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ** (Օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մաս), և հաշվի առնելով նախորդ պարբերությունում արված եզրահանգումը՝ ստեղծվում է իրավիճակ, որ գործադիր իշխանությունը (հանձին՝ համապատասխան լիազոր մարմնի (ղեկավարի) անուղղակի ազդեցություն է ունենում (կարող է ունենալ) նաև հանրային բուհի կառավարման մարմիններից մյուսի՝ կառավարման գործադիր մարմնի կազմավորման վրա: Այս համատեքստում հաշվի առնելով նաև Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 9-րդ կետերի համադրված վերլուծությունից բխող հանրային բուհի կառավարման խորհրդի այն առանցքային լիազորությունը, ըստ որի՝ կառավարման խորհուրդն իրավասու է բուհի գործունեության և զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունը երկու անգամ անընդմեջ չընդունելով քննարկել և քվեարկել **ռեկտորին անվստահություն հայտնելու հարցը և վերջինիս լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել**, միաժամանակ ելնելով արդեն իսկ շեշտադրված կառավարման խորհրդի՝ անդամների մեծամասնության նշանակման և ազատման վրա լիազոր մարմնի (ղեկավարի) ազդեցությամբ պայմանավորված **կախվածությունից**, մեծանում է գործադիր իշխանության ազդեցությունը նաև բուհի կառավարման գործադիր մարմնի՝ ռեկտորի վրա՝ **մեծացնելով վերջինիս՝ գործադիր իշխանությունից անուղղակի կախվածությունը (առնվազն ավելացնելով այդպիսի ջիսկերը)**՝ անկախ **ռեկտորի ինքնուրույնությունն ապահովող՝ Օրենքում տեղ գտած որոշ երաշխիքներից** (ինչպիսիք են, օրինակ, Օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ, 32-րդ հոդվածի 8-րդ և 37-րդ հոդվածի 13-րդ մասերի համադրված վերլուծությունից

բխող հանրային բուհի ռեկտորի բաց մրցույթի միջոցով ընտրության, վերջինիս որևէ կուսակցության մարմնի ղեկավար անդամ չլինելու, քաղաքական գաղափարություն և չեզոքություն դրսևորելու երաշխիքները):

Վերոշարադրյալի հաշվառմամբ և նկատի ունենալով այն, որ հանրային բուհի ռեկտորն ինքն է նշանակում բուհի պրոռեկտորներին (մասնաճյուղի տնօրենի տեղակալներին) (Օրենքի 32-րդ հոդվածի 10-րդ մաս) և աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում բուհի աշխատողներին (Օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասի 6-րդ կետ), նաև այն, որ հանրային բուհի կառավարման երրորդ մարմնի՝ բուհի ակադեմիական խորհրդի կազմում **ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը** (որն ակադեմիական խորհրդի նախագահն է), պրոռեկտորները, մասնաճյուղերի ղեկավարները, բուհի կառուցվածքային միավորների ղեկավարները (Օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մաս), *Օրենքով նախատեսված կանոնակարգումներով ստեղծվում է մի իրավիճակ, ըստ որի՝ գործադիր իշխանությունը (հանձինս՝ բարձրագույն կրթության և գիտության համակարգում լիազոր մարմնի և նրա ղեկավարի) ստանում է հանրային բուհի կառավարման բոլոր երեք մարմինների վրա առանցքային ազդեցություն: Եվ հաշվի առնելով նաև, որ այդ մարմինների լիազորությունների թվում են այնպիսիները, որոնք անմիջականորեն առնչվում են բուհերում՝ գիտակրթական գործընթացի սուբյեկտների ակադեմիական և հետազոտական ազատության հարցերին, Սահմանադրական դատարանը փաստում է, որ վերոնշյալ օրենսդրական կարգավորումներով անհամաչափորեն սահմանափակվում է հանրային բուհերի ինքնավարությունը, ինչը որպես հետևանք վտանգում է բուհերում՝ գիտակրթական գործընթացի սուբյեկտների ակադեմիական և հետազոտական ազատությունը՝ վերջիններին համար այդ իրավունքը դարձնելով առավելապես պատրանքային և ոչ իրական:*

Բուհական ինքնավարության և ինքնակառավարման տեսանկյունից խնդրահարույց է նաև Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը, ըստ որի՝ սահմանված ժամկետում բուհի կառավարման խորհրդի չորս անդամին չառաջադրելու կամ չորսից պակաս առաջադրելու դեպքում՝ այդ անդամների համալրումն իրականացնում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը: Այս իրավակարգավորման առաջնային նպատակը բուհական կառավարման անընդհատության ապահովումն է, որը կենսական նշանակություն ունի ցանկացած կազմակերպության գործունեության համար և ինքնին խնդրահարույց չէ: Մինևույն ժամանակ, վերոհիշյալ, ինչպես նաև Օրենքի այլ դրույթներում առկա չեն կարգավորումներ բուհական ինքնավարության և ինքնակառավարման պաշտպանության և վերականգնման համապատասխան երաշխիքներ սահմանելու վերաբերյալ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 3(103)2021

Մասնավորապես, սահմանված չէ Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ համալրված անդամների լիազորությունների ժամանակավոր լինելու և բուհի կողմից համապատասխան թեկնածուներ առաջադրելու իրավունքը ցանկացած ժամանակ իրացնելու հնարավորությունը: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ բուհական ինքնակառավարման էությունից բխում է, որ բուհական կառավարման մարմինների գործունեության անընդհատության խնդիրը պետք է լուծվի բուհական ինքնակառավարման սկզբունքի համատեքստում և պարունակի այնպիսի երաշխիքներ, որոնք կապահովեն բուհի՝ կառավարման խորհրդի համապատասխան անդամների առաջադրման իրավունքը՝ անկախ լիազոր մարմնի ղեկավարի կողմից դրանք համալրված լինելու հանգամանքից:

4.4. Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացվող՝ Օրենքի 25-րդ հոդվածի 10-րդ մասի, 37-րդ հոդվածի 18-րդ մասի՝ Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածներին ենթադրյալ անհամապատասխանության հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի ներկայացրած հիմնավորումները վերաբերում են վիճարկվող հոդվածներով նախատեսված որոշակի վարչական պաշտոնների համար տարիքային սահմանափակումների մասով խտրականության արգելքի դիտանկյունից ենթադրյալ խնդրահարույց կարգավորումներին, այդ թվում՝ ընտրովի վարչական պաշտոններ զբաղեցնող անձանց, համապատասխանաբար՝ գիտական կազմակերպության տնօրենի դեպքում՝ 65 տարին (Օրենքի 25-րդ հոդվածի 10-րդ մաս), իսկ բուհում (մասնաճյուղում) վարչական պաշտոնում նշանակված կամ ընտրված անձի դեպքում՝ 70 տարին լրանալուն (Օրենքի 37-րդ հոդվածի 18-րդ մաս):

Սահմանադրության 29-րդ հոդվածի («Խտրականության արգելքը») համաձայն՝ «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Սահմանադրական դատարանը նախկինում խտրականության արգելքի սահմանման մասին իր դիրքորոշմամբ նշել է, որ «... խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ» (ՄԴՈ-1224):

Սույն գործով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձանց նկատմամբ վերը նշված վարչական պաշտոններում պաշտոնավարման սահմանափակումները կիրառվում են նրանց տարիքի հիմքով՝ 65 կամ առանձին դեպքերում՝ 70 տարին լրացած անձանց վերը հիշատակված պաշտոններում պաշտոնավարումը սահմանափակելով: Հետևաբար՝ խնդրո առարկա իրավակարգավորումներով նախատեսված՝ տարիքի հիմքով տարբերակված վերաբերմունքը ենթակա է քննության Սահմանադրության 29-րդ հոդվածի ներքո:

Նույն կամ համանման կարգավիճակում անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքի սահմանադրական արգելքը ոչ բոլոր դեպքերում է բացառում տարբերակված վերաբերմունքը, այլ միայն այն դեպքերում, երբ նման տարբերակված վերաբերմունքը չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում: Համանման տարբերակված վերաբերմունքն օբյեկտիվորեն և ողջամտորեն արդարացված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ այն հետապնդում է իրավաչափ նպատակ, և, որին հասնելու համար ընտրված միջոցը համաչափ է այդ նպատակին (Stec and Others v. the United Kingdom, դիմումներ 65731/01 և 65900/01, 2006 թվականի ապրիլի 12-ի վճիռ, § 51, Lithgow and Others v. the United Kingdom, դիմումներ 9006/80 և այլն, 1986 թվականի հուլիսի 8-ի վճիռ, § 177):

Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքը չի բացառում այնպիսի տարբերակված վերաբերմունքը, որը հիմնված է էականորեն տարբեր փաստական հանգամանքների օբյեկտիվ գնահատականի վրա, և, որը, հետապնդելով հանրային շահ, ապահովում է հետապնդված հանրային շահի և անձի անհատական իրավունքների նկատմամբ հարգանքի միջև արդարացի հավասարակշռությունը (Schwizgebel v. Switzerland, 2010 թվականի հունիսի 10-ի վճիռ, դիմում թիվ 25762/07, § 78):

Սահմանադրական դատարանը, ՄԴՈ-1605 որոշմամբ վերլուծելով տեսական գրականության մեջ և պրակտիկայում մասնագիտական պիտանիության վերաբերյալ հարցերը, նշել է, որ մասնագիտական պիտանիությունը հոգեբանական, հոգեֆիզիկական հատկությունների, ինչպես նաև հատուկ գիտելիքների, ունակությունների, փորձի ամբողջություն է, որոնք անհրաժեշտ են աշխատանքի ընդունելի արդյունավետությանը հասնելու համար: Մասնագիտական պիտանիությունը մարդուն ի ծնե բնորոշ հատկություն չէ, ձևավորվում է երկարատև մասնագիտական գործունեության արդյունքում, որը ծավալվում է որոշակի սոցիալ-տնտեսական պայմաններում: Ժամանակի ընթացքում ձևավորվում են ոչ միայն մարդու առանձին գործառնական համակարգերը և հոգեկան գործընթացները (մասնագիտական ընկալումը, հիշողությունը, մտածողությունը և այլն), այլև նրա անձը: Կոնկրետ գործու-

նեության համար մասնագիտական պիտանիությունը հիմնվում է որոշակի հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական, մարդաբանական, բժշկական և այլ չափանիշների վրա:

Նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթներով վարչական պաշտոնում նշանակված կամ ընտրված անձանց՝ օրենքով սահմանված տարբերակված հիմքը տարիքն է: Տարիքով պայմանավորված փոխվում են մարդու ֆիզիոլոգիական, հոգեբանական, մտավոր որակները, հետևաբար տարիքային վերը նշված սահմանափակումները՝ մի դեպքում 65, մեկ այլ դեպքում՝ 70, ունեն օբյեկտիվ հիմքեր: Այդ սահմանափակումներն ունեն ողջամիտ հիմնավորում, որովհետև տարիքին զուգընթաց որպես կանոն տեղի է ունենում աշխատունակության, աշխատանքային ու գիտական գործունեության, նախաձեռնողականության որոշակի կորուստ, ինչը կարող է ազդել աշխատանքի որակի վրա: Իհարկե այդ ազդեցությունն ունի դրսևորման առանձնահատկություններ՝ կապված մարդու անհատական որակներից ու աշխատանքի տեսակից:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի (2004թ. խմբագրությամբ) առնչությամբ արտահայտած իրավական դիրքորոշմամբ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, գտել է, որ « ... աշխատանքային հարաբերությունների հաստատման (պահպանման) խնդրում օրենքով կամ աշխատանքային պայմանագրով առանձին աշխատողների առնչությամբ սահմանային տարիք նախատեսելն արդարացված է, եթե այն հետապնդում է իրավաչափ նպատակներ, մասնավորապես պայմանավորված է կատարվող աշխատանքի բնույթով կամ առանձնահատկությամբ: Այս առումով, սահմանադրական դատարանն արդարացի է համարում հանրային (պետական և համայնքային) ծառայության բնագավառը կարգավորող օրենսդրության ակտերով ծառայողի պաշտոնավարման սահմանային տարիք նախատեսելուն զուգընթաց գործատուի և կենսաթոշակային տարիքի հասած ու աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի միջև երկկողմ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորության նախատեսումը և դրա հիման վրա աշխատանքային հարաբերությունների կայունությունն ապահովելը» (ՄԴՈ-792 որոշման 6-րդ կետ):

Դիմողի բարձրաձայնած հարցի շրջանակում Սահմանադրական դատարանի գնահատման առարկան է գիտական կազմակերպության 65 տարին լրացած տնօրենների, ակադեմիական ոլորտի 70 տարին լրացած բուհական աշխատողների, ինչպես նաև բուհական համակարգում վարչական պաշտոններ զբաղեցնող և 65 տարին լրացած անձանց՝ ի տարբերություն իրենց ավելի երիտասարդ գործընկերների, նշված պաշտոններում պաշտոնավարումը շարունակելու անհատական իրավունքների՝ մի կողմից, և հանրային շահի՝ մյուս

կողմից, միջև արդարացի հավասարակշռության առկայությունը: Սույն գործով վիճարկվող իրավադրությունների սահմանադրականության գնահատման շրջանակներում Սահմանադրական դատարանը հանրային շահի մեջ է ներառում բուհերի և գիտական կազմակերպությունների պատշաճ, արդյունավետ գործունեությունը, մատուցվող կրթության բարձր որակի ապահովման իրավաչափ նպատակի սպասարկումը, որի իրականացման անմիջական մասնակիցները գիտական ու ակադեմիական պաշտոնյաներն ու աշխատողներն են:

Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն գործի շրջանակներում քննարկվող տարիքային սահմանափակումների՝ որպես տարբերակում նախատեսող վերաբերմունքի օբյեկտիվ հիմքերի և ողջամիտ հիմնավորման, հետապնդվող իրավաչափ նպատակների և դրան ուղղված սահմանափակման միջոցների միջև համաչափության վերաբերյալ վերլուծությունը, գտնում է, որ գիտական կազմակերպության 65 տարին լրացած տնօրենների, ակադեմիական ոլորտի 70 տարին լրացած բուհական աշխատողների, ինչպես նաև բուհական համակարգում վարչական պաշտոններ զբաղեցնող և 65 տարին լրացած անձանց նկատմամբ նշված պաշտոններում պաշտոնավարման սահմանափակումների տեսքով տարբերակված վերաբերմունքը միտված է իրավաչափ հանրային շահի ապահովմանը, իսկ դրան ուղղված անհատական իրավունքների սահմանափակումները համատեղելի են Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների սահմանափակման չափանիշների իրավական շրջանակներին, համապատասխանում են աշխատանքային իրավունքում պետության որդեգրած աշխատանքային և կենսաթոշակային տարիքի ընդհանուր հայեցակարգին: Հետևաբար՝ խնդրո առարկա տարբերակված վերաբերմունքի վերաբերյալ իրավական կարգավորումները չեն հակասում օրենքի առջև հավասարության և խտրականության արգելքի մասին Սահմանադրության դրույթներին:

4.5. Անդրադառնալով դիմողի բարձրացրած այն հարցին, թե վիճարկվող Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասն առերևույթ չի համապատասխանում Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին, քանի որ հնարավորություն է նախատեսում բուհերի ինքնակառավարման շրջանակներն օրենքից բացի նաև այլ նորմատիվ իրավական ակտով սահմանելու համար, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նկատել, որ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած կարգավորմամբ՝ օրենսդրի հայեցողությանն է վերապահվում այդ ինքնավարության շրջանակի սահմանումը, ինչը ենթադրում է լրացուցիչ երաշխիք նաև բուհերի ինքնավարության ապահովման, այդ թվում՝ ակադեմիական և հետազոտությունների ազատության տեսանկյունից:

Վերոշարադյալի լույսի ներքո անդրադառնալով վիճարկվող դրույթում տեղ գտած կարգավորումներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած՝ «...սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան» ձևակերպումն ինքնին չի կարող մեկնաբանվել այնպես, թե բուհական ինքնավարության շրջանակների սահմանումը, այդ թվում՝ այդ ինքնավարության սահմանափակումն հնարավոր է օրենքից ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտով, հակառակ դեպքում կվտանգի Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երաշխիքը: Հաշվի առնելով նշված սահմանադրական երաշխիքը՝ Օրենքում օգտագործված՝ «...սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով» ձևակերպումը պետք է ընկալվի այն իմաստով, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքից բացի, նշված ինքնավարության շրջանակը կարող է սահմանվել միայն այն նորմատիվ իրավական ակտերով, որոնք իրենց իրավաբանական ուժով ցածր չեն օրենքից, ինչը, սակայն, չի բացառում արդեն իսկ **օրենքով ուրվագծված շրջանակներում և դրանց հիման վրա** օրենքից ավելի ցածր աստիճանակարգության նորմատիվ իրավական ակտերով մասնաբաժանումը:

Վերոնշյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի նշված դրույթի ձևակերպումը Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից ինքնին խնդրահարույց չէ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 73-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունված՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը և հարակից՝ «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Հիմնադրամների մասին» օրենքում լրացում կատարելու մասին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին, «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փո-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 3(103)2021

փոխություն կատարելու մասին, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Չորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Դեղերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Լեզվի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին, «Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքները՝ **«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի մասով, ճանաչել Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող:**

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

2 օգոստոսի 2021 թվականի
ՄԴՈ-1608



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 սեպտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշ-
յանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներ-
կայացուցիչներ՝ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վեր-
լուծական վարչության պետ Գ. Աթանեսյանի և Ազգային ժողովի աշխա-
տակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի գլխավոր մաս-
նագետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդ-
վածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմա-
նադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածներին,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ»
ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդ-
վածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերա-
բերյալ» գործը:

«Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսու-
հետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 3(103)2021

25-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի հունվարի 22-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի փետրվարի 10-ին:

Օրենքի՝ «Գույքի վաճառքից ստացված միջոցների բաշխումը» վերտառությամբ 80-րդ հոդվածով սահմանվում է.

«1. Պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված (փոխհատուցված) միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և սույն հոդվածով սահմանված կարգով ընդունված (չառարկված) միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան:

2. Պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը:

3. Միջանկյալ բաշխման ծրագրի՝ իր կողմից հաստատված երկու օրինակ կառավարիչը ներկայացնում է դատարան, մեկական օրինակ՝ պարտապանին և պարտատերերին: Պարտատերերի թիվը 10-ից ավելի լինելու դեպքում կառավարիչը բաշխման ծրագիրը դատարան է ներկայացնում այն դեպքում, երբ միջնորդությամբ և այդ մասին հայտարարություն է հրապարակում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում:

4. Եթե պարտատերերը բաշխման ծրագրի օրինակն ստանալու կամ հայտարարությունը հրապարակելու հաջորդող 7 օրվա ընթացքում բաշխման ծրագրի վերաբերյալ գրավոր առարկություն չեն ներկայացնում դատարան, ապա կառավարչի հաստատած բաշխման ծրագիրը համարվում է ընդունված:

Դատավորը կառավարչի ներկայացրած բաշխման ծրագրի մեկ օրինակը վերադարձնում է կառավարչին՝ օրենքով սահմանված ժամկետում առարկված չլինելու նշագրմամբ և կնքված իր կնիքով:

5. Եթե պարտատերը (պարտատերերը) բաշխման ծրագրի օրինակն ստանալու կամ հայտարարությունը հրապարակելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բաշխման ծրագրի վերաբերյալ գրավոր առարկություն է ներկայացնում դատարան, ապա դատավորն առարկությունն ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, հրավիրում է դատական նիստ, որի տեղի և ժամանակի մասին կառավարչին, պարտապանին և պարտատերերին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում՝ նիստից առնվազն երեք օր առաջ տրվող հայտարարությամբ կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Ամենախոշոր 5 պարտատերերին ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակեր-

պումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով:

6. Առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է կայացնում կառավարչի ներկայացրած միջանկյալ բաշխման ծրագիրն անփոփոխ թողնելու, փոփոխելու կամ մերժելու վերաբերյալ»:

Օրենքի վերոնշյալ դրույթը փոփոխության է ենթարկվել 2021 թվականի մարտի 3-ի ՀՕ-89-Ն օրենքով:

Գործի քննության առիթը «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի՝ 2021 թվականի մարտի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրություններն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Ըստ դիմողի՝ Օրենքի 80-րդ հոդվածը հակասում է Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողն ընդգծում է, որ սույն գործով առկա է իրավական անորոշություն. «Մնանկության մասին» օրենքի 80-րդ հոդվածը հնարավորություն է տալիս հաստատել միջանկյալ բաշխման ծրագրի միայն ա՞յն մասը, որի դեմ առարկություն չի ներկայացվել, և բաշխել անվիճելի գումարը, թե՞ դրա ցանկացած մասի, այդ թվում՝ չնչին մասի դեմ առարկելն օրենքի ուժով հանգեցնում է ամբողջ գումարի սառեցմանը մինչև վերջնական լուծումը:

Իր այդ դիրքորոշումը դիմողը հիմնավորում է՝ մեջբերելով դատարանների կողմից «Մնանկության մասին» օրենքի 80-րդ հոդվածին տրված մեկնաբանությունն այն մասին, որ միջանկյալ բաշխման ծրագիրը մասնակի հաստատելու հնարավորություն «Մնանկության մասին» օրենքով նախատեսված չէ:

Դիմողի համոզմամբ առկա օրենսդրական բացը միջամտում է սնանկության գործով պարտատեր բանկի սեփականության իրավունքին, քանզի գրկում է բանկին իր պահանջի բավարարում ստանալու իրավունքից՝ չուներնալով դրա համար որևէ լեգիտիմ նպատակ:

Վկայակոչելով օրենսդրական բացի վերաբերյալ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները՝ դիմողը նշում է, որ առկա չեն նշված օրենսդրական բացն այլ միջոցներով հաղթահարելու եղանակներ, որ տվյալ դեպքում օրենսդրական բացն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե օրենսդրի կամքը, որ առկա օրենսդրական բացը հնարավոր չէ հաղթահարել

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 3(103)2021

այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով, որ օրենսդրական բացը հանգեցնում է հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել, որ լիարժեքություն ապահովող տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը, որ վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանը և կիրառմանը, որոնք խախտում են միջանկյալ բաշխման ծրագրի միայն մի մասի դեմ առարկող և դրամական միջոցներ ստանալու լեգիտիմ ակնկալիքներ ունեցող պարտատիրոջ արդար դատաքննության և սեփականության իրավունքները, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքը:

Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներին՝ դիմողն արձանագրում է, որ պարտատերը միջանկյալ բաշխման դեմ առարկություն ներկայացնելու գործիքով, ըստ էության, իրավունք ունի պաշտպանել իր սեփականության իրավունքը, սակայն առարկություն ներկայացնելու դեպքում վերջինս զրկվում է չառարկված մասով իրեն հասանելիք դրամական միջոցները ստանալու հնարավորությունից, որպիսի պայմաններում ոտնահարվում է բանկի արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև խաթարվում առարկություն ներկայացնելու և սեփականության իրավունքի պաշտպանության բուն էությունը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածները, ինչպես նաև խնդրո առարկա հիմնախնդրի վերաբերյալ ներկայացնելով Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, նշում է, որ Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պարտապանի գույքի վաճառքից ստացված միջոցները բաշխվում են օրենքով սահմանված հերթականությամբ, ինչը բխում է սնանկության ինստիտուտի նպատակներից: Միջոցների բաշխումն ըստ ծրագրի թույլ է տալիս ապահովել պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատուկ հերթականությունը: Նշվածով է պայմանավորված այն հանգամանքը, որ եթե պարտատերերից որևէ մեկն առարկություն է ներկայացնում միջանկյալ բաշխման ծրագրի վերաբերյալ, ապա դատարանն այդ առարկությունը դիտարկում է ամբողջ միջանկյալ բաշխման ծրագրի համատեքստում, որպեսզի առարկության քննության արդյունքում ապահովվի պահանջների բավարարման՝ օրենքով նախատեսված հերթակա-

նությունը և բավարարման ենթակա պահանջների ճշգրիտ չափերի սահմանումը:

Պատասխանողն ընդգծում է, որ առարկության քննության արդյունքում դատարանը որոշում է կայացնում միջանկյալ բաշխման ծրագիրն անփոփոխ թողնելու, փոփոխելու կամ մերժելու վերաբերյալ, որը վերաբերում է ծրագրին ամբողջությամբ, այսինքն՝ դատարանը միջանկյալ բաշխման ծրագրի մի մասի վերաբերյալ պարտատիրոջ արտահայտած անհամաձայնությունը կամ ենթադրյալ խնդիրը դիտարկում է ամբողջ ծրագրի համատեքստում:

Պատասխանողը պնդում է, որ միջանկյալ բաշխման ծրագրի միայն մի մասի հաստատման հնարավորություն չնախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է սնանկության վարույթի շրջանակներում արդարադատության պատշաճ իրականացմանը:

Պատասխանողը փաստում է, որ անձն ունի միջանկյալ բաշխման ծրագրի վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնելու՝ օրենսդրորեն ամրագրված իրավունք, որի իրացման համար գործում են օրենսդրական բավարարելիքներ, որպիսի պայմաններում սուբյեկտիվ մտադրություններով պայմանավորված՝ տվյալ իրավունքից չօգտվելը չի կարող դիտարկվել իբրև իրավունքի սահմանափակում:

Անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրության 10 և 60-րդ հոդվածներն ու վերլուծելով Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները, ընդգծում է, որ սնանկության ինստիտուտը հնարավորություն է տալիս բավարարել բոլոր պարտատերերի պահանջները համամասնորեն, ինչի պատշաճ կատարումն ապահովելու համար էլ օրենսդրի կողմից սահմանվել է միջանկյալ բաշխման ծրագիրը: Ավելին, հաշվի առնելով պարտատերերից յուրաքանչյուրի պահանջի բավարարում ստանալու ակնկալիքը՝ օրենսդրի կողմից նախատեսվել է սեփականության իրավունքի պաշտպանության համապատասխան գործիքակազմ, որից մեկն էլ կառավարչի կողմից ներկայացված բաշխման ծրագրի դեմ առարկություն ներկայացնելու իրավունքն է:

Վերոնշյալի հիման վրա պատասխանողը եզրահանգել է, որ վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Հաշվի առնելով, որ դիմողը վիճարկում է սնանկության վարույթի շրջանակում հավաքագրված դրամական միջոցների միջանկյալ բաշխման ծրագրի մասնակի հաստատման օրենսդրական կառուցակարգերի բացակայության հանգամանքը, ինչի արդյունքում գործող իրավակարգավորումների պարա-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 3(103)2021

գայում մասնագիտացված դատարանն իրավասու չէ միջանկյալ բաշխման ծրագրի դեմ մասնակի առարկություն ներկայացնելու դեպքում չառարկված մասով հաստատելու միջանկյալ բաշխման ծրագիրը, Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում կանդրադառնա միայն վիճարկվող հոդվածի այն դրույթներին, որոնք դիմողի կարծիքով սահմանափակում են պարտատիրոջ սեփականության իրավունքը, ինչպես նաև խախտում են վերջինիս դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանը սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման համար անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

- արդյո՞ք վիճարկվող դրույթն այնքանով, որքանով չի նախատեսում սնանկության գործի շրջանակներում հավաքագրված դրամական միջոցների միջանկյալ բաշխման ծրագրի դեմ մասնակի առարկության պայմաններում չառարկված մասով միջանկյալ բաշխման ծրագիրը դատարանի կողմից հաստատելու իրավասություն, չի բխում իրավական որոշակիության սկզբունքից, իսկ իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությունը խախտում է անձի սեփականության, ինչպես նաև դատական պաշտպանության իրավունքները:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ իր մի շարք որոշումներով ձևավորած օրենսդրական բացի վերաբերյալ իրավական դիրքորոշումներին: Մասնավորապես՝ 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՍԴՈ-1476 որոշմամբ վերահաստատելով և զարգացնելով օրենսդրական բացի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը նշել է.

1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից.

2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը որպես օրենսդրական բաց կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով.

3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից:

4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը:

5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Վերոգրյալից բխում է, որ համապատասխան իրավահարաբերության շրջանակներում կոնկրետ կարգավորման բացակայությունն ինքնին չի փաստում օրենսդրական բացի առկայությունը: Բացի դրանից, հարկ է նշել, որ կարգավորման բացակայության պատճառները կարող են պայմանավորված լինել ինչպես օրենսդրի կամահայտնությամբ, այնպես էլ թերի, ոչ լիարժեք իրավակարգավորմամբ:

Սնանկության հարաբերությունների օրենսդրական կարգավորումներից բխում է, որ միջանկյալ բաշխման ծրագիրն այն փաստաթուղթն է, որի կառուցվածքային տարրերը՝ պարտատերերի պահանջները, դրանց բավարարման չափերը, առաջնահերթության հարցերը և այլն, սերտորեն փոխկապակցված են միմյանց, ուստի՝ մեկ տարրի փոփոխությունը կարող է հանգեցնել մյուսի վերափոխմանը: Այդ իսկ պատճառով միջանկյալ բաշխման ծրագրի դեմ պարտատերերի առարկությունը՝ անկախ առարկության բովանդակությունից, օրենսդիրը դիտել է իբրև առարկություն ամբողջ ծրագրի դեմ, քանզի առերևույթ առարկությունը կարող է վերաբերել մեկ պարտատիրոջ պահանջի բավարարմանը, սակայն դրա քննության և բովանդակության բացահայտման արդյունքում՝ առնչվել նաև այլ պարտատերերի շահերին: Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորումն օրենսդրի կամահայտնությունն է:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում միջանկյալ բաշխման ծրագիրը մասնակի հաստատելու հնարավորության բա-

ցակայությունը դիտարկել իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին (ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1176, ՄԴՈ-1213, ՄԴՈ-1270 և այլն)՝ ընդգծելով, որ՝

«Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008թ. ՄԴՈ-753),

«... իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (09.06.2015թ. ՄԴՈ-1213):

Իրավական որոշակիության սկզբունքին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար՝ շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է (*«Busuioac v. Moldova», application no. 61513/00, 21/12/2004*): Բացի դրանից, օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (*«Hilda Hafsteinsdottir v. Iceland», application no.40905/98, 08.06.2004, p. 56*):

Վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում Օրենքի վիճարկվող դրույթի որոշակիությունը գնահատելու համար հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքներին, թե որքանով են դրանով նախատեսված վարքագծի կանոնները հստակ, արդյոք չեն հանգեցնում տարրնկալումների, և որքանով են կանխատեսելի դրանց իրականացման արդյունքում վրա հասնող հետևանքները:

Միջանկյալ բաշխման ծրագրի միջոցով սնանկության գործով կառավարիչը վարույթի շրջանակներում հավաքագրված միջոցները պարբերաբար օրենքով սահմանված առաջնահերթությամբ բաշխում է պարտատերերի միջև՝ երաշխավորելով վերջիններիս պահանջների բավարարումը: Ընդ որում՝ օրենսդիրը միջանկյալ բաշխման ծրագրի կազմելու, հավաքագրված դրամական միջոցները բաշխելու պարբերականությունը որոշելու բացառիկ իրավուն-

քը վերապահել է սնանկության գործով կառավարչին՝ հաշվի առնելով ինչպես վերջինիս կողմից սնանկության գործի հանգամանքներին տիրապետելու իրողությունը, այնպես էլ կառավարչի կողմից պարբերաբար կատարվող միջոցառումները և դրանց դիմաց վարձատրություն ստանալու իրավունքը:

Օրենքի վերլուծությունից բխում է, որ ո՛չ պարտատերերը, և ո՛չ էլ պարտապանը բաշխման ծրագրերի կազմման և ներկայացման գործընթացին որևէ կերպ ներգրավվելու, հավաքագրված դրամական միջոցները բաշխելու պարբերականությունը որոշելու դատավարական իրավունք չունեն. Պարտատերերն Օրենքի 80-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով կարող են միայն առարկություն ներկայացնել դատարան ներկայացված բաշխման ծրագրի դեմ: Այս առումով կարելի է արձանագրել, որ գործող իրավակարգավորումները սնանկության վարույթի հիշատակված փուլում հստակ սահմանում են պարտատիրոջ վարքագիծը, այն է՝ միջանկյալ բաշխման ծրագրի դեմ առարկություն ունենալու դեպքում յոթնօրյա ժամկետում այն ներկայացնել դատարան, որպիսի պայմաններում պարտատիրոջ համար առավել քան կանխատեսելի է դառնում դրսևորվելիք վարքագիծը:

Նման պայմաններում հիմնավոր չեն նաև դիմողի՝ վիճարկվող դրույթն իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ փաստարկները: Սնանկության գործընթացի արդյունավետ կարգավորման համատեքստում վիճարկվող դրույթը հնարավորինս հստակ և կանխատեսելի սահմանում է այն կարգավորումները, որոնք օրենսդիրն անհրաժեշտ և բավարար է համարել, որպեսզի դրանց հասցեատերերը դրսևորեն համապատասխան իրավաչափ վարքագիծ, հետևաբար՝ նաև կանխատեսեն դրա արդյունքում ի հայտ եկող հնարավոր հետևանքները:

4.2. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթը դիտարկել նաև դիմողի՝ Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանվածության տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ արձանագրելով, որ՝

- ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք (18.03.2008թ., ՍԳՈ-741):

- ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված դրույթները կազմում են սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը՝ ամրագրելով այն իրավագործությունները, որոնցից յուրա-

քանցյուր որ անարգել պետք է կարողանա օգտվել սեփականության հիմնական իրավունքն իրականացնելիս, այսինքն՝ անձը պետք է առանց որևէ խոչընդոտի կարողանա իրականացնել սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու իրավունքը, օգտագործելու իրավունքը, տնօրինելու իրավունքը ...: Միևնույն ժամանակ, սահմանադիրը նշված իրավունքների իրականացումը երաշխավորելու՝ պետության պոզիտիվ պարտականության կատարումը պայմանավորում է բացառապես օրինական հիմքերով ձեռք բերված սեփականությամբ: Հետևաբար, միայն օրինական հիմքով ձեռք բերված սեփականության դեպքում անձը հանրային իշխանություններից կարող է պահանջել սեփականության հիմնական իրավունքի մաս կազմող՝ վերը նշված իրավունքների իրականացման երաշխավորում (31.01.2017թ., ՄԴՈ-1340):

Սեփականության իրավունքի իրացման և առանձին դեպքերում դրան կատմամբ օրինական միջամտության առանձնահատկություններ դրսևորվում են, մասնավորապես, սնանկության վարույթում:

Սնանկության ինստիտուտը տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված պետության միջամտության առանձնահատուկ դրսևորում է, որը, մի կողմից՝ կոչված է առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները՝ վարույթի շրջանակներում հավաքագրված միջոցներն արդար բաշխելով վերջիններիս միջև, մյուս կողմից՝ օրենսդրական կարգավորումների ներդրման միջոցով փրկել գոյատևման ընդունակ տնտեսվարող սուբյեկտներին:

Սահմանադրական դատարանը, 2021 թվականի հունվարի 26-ի ՄԴՈ-1572 որոշմամբ վերահաստատելով իր՝ 2008 թվականի փետրվարի 25-ի ՄԴՈ-735 որոշմամբ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ «... «Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը», ընդգծել է, որ յուրաքանչյուր դեպքում սնանկության գործընթացում պետք է հաշվի առնվեն տարբեր շահագրգիռ կողմերի՝ ներառյալ պարտապանների շահերը:

Համաձայն «Սնանկության մասին» օրենքի՝ անձը սնանկության վարույթում ձեռք է բերում պարտատիրոջ կարգավիճակ պարտապանի նկատմամբ պահանջ ներկայացնելու եղանակով՝ պարտատերերի պահանջների վերջնական ցուցակում ընդգրկվելով (Օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մաս, 46-րդ հոդված), այդ պահից ձեռք բերելով սնանկության վարույթի շրջանակներում հա-

վաքագրված դրամական միջոցներն իր պահանջին համամասնորեն ստանալու իրավական հնարավորություն:

Միջանկյալ բաշխման ծրագիրն օրենսդրի կողմից սնանկության գործով ներդրված այն առանցքային գործիքն է, որի միջոցով հավաքագրված միջոցները պարբերաբար օրենքով սահմանված առաջնահերթությամբ բաշխվում են պարտատերերի միջև՝ երաշխավորելով վերջիններիս պահանջների բավարարումը:

Այդ առումով, ներգրավվելով պարտատերերի վերջնական ցուցակում պահանջատերը ձեռք է բերում պարտատիրոջ դատավարական կարգավիճակ՝ այդ պահից «օրինական ակնկալիք» ունենալով սնանկության վարույթում հավաքագրված դրամական միջոցներից ստանալ պահանջի բավարարում:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-723, ՍԴՈ-741, ՍԴՈ-881 որոշումներում անդրադարձել է «Օրինական ակնկալիքի» իրավական պաշտպանության հիմնախնդրին՝ շեշտադրելով սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեզիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Սահմանադրական դատարանը ՍԴՈ-741 որոշման 8-րդ կետում ընդգծել է. «... Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սեփականության իրավունքի օրինական ակնկալիքի հարցին անդրադարձել է մի շարք վճիռներով, այդ թվում՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 07.05.2002թ. վճռով, Բեյլերն ընդդեմ Իտալիայի գործով 05.01.2000թ. վճռով՝ շեշտադրելով, որ «սեփականություն» հասկացությունը բովանդակում է ոչ միայն ֆիզիկական բարիքների սեփականությունը, այլև սեփականություն կարող են համարվել որոշ գույքային այլ իրավունքներ և շահեր, ինչպես նաև անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունքը: Այսինքն՝ ըստ Եվրոպական դատարանի՝ «պահանջի իրավունքը ևս կարող է համարվել «սեփականություն» Կոնվենցիայի նշված դրույթի իմաստով, եթե հիմնավորապես հաստատվել է, որ այդ պահանջը ենթակա է կատարման»:

Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն միջանկյալ բաշխման ծրագրով օրենսդիրը հնարավորություն է ընձեռել սնանկության վարույթի մասնակիցներին վարույթի շրջանակում հավաքագրված միջոցներից պարբերաբար ստանալ իրենց պահանջների բավարարում: Սակայն այդ հնարավորությունը դառնում է «օրինական ակնկալիք», երբ սնանկության գործով կառավարչի կողմից պարտատիրոջ դատավարական կարգավիճակ ունեցող անձն ընդ-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 3(103)2021

գրկվում է միջանկյալ բաշխման ծրագրում: Այդ առումով, պարտատիրոջ պահանջի իրավունքը և դրանից բխող միջանկյալ բաշխման ծրագրով հավաքագրված դրամական միջոցներից գումար ստանալու օրինական ակնկալիքը գտնվում են Սահմանադրության 60-րդ հոդվածի պաշտպանության ներքո:

4.3. Մյուս կողմից, Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն սահմանադիրը որոշակի դեպքերում և նպատակներով պայմանավորված՝ սեփականության իրավունքին միջամտությունը համարել է ընդունելի: Սահմանադրական դատարանը նշված հիմնահարցի բովանդակության բացահայտմանն անդրադարձել է 2017 թվականի հունվարի 31-ի ՄԴՈ-1340 որոշմամբ՝ նշելով, որ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, ըստ որի՝

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, որից բխում է, որ օրենքը պետք է բավարարի իրավական օրենքին ներկայացվող՝ Սահմանադրական դատարանի որոշումներում բազմիցս արտացոլված, պահանջները,

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

- սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման հիմնախնդրին, արձանագրել է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, հռչակելով սեփականության իրավունքը, միաժամանակ նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն՝ ի շահ հանրության, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով, և ընդհանուր շահերին համապատասխան՝ սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար: Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ինչ հիմքով էլ տեղի ունենա միջամտությունը սեփականության իրավունքին, դա կարող է արդարացված համարվել բացառապես այն դեպքում, երբ այն տեղի է ունեցել ի շահ հանրության: Միջամտությունն արդարացված համարվելու համար պետք է հետապնդի օրինաչափ նպատակ և լինի համաչափ: Եվրոպական դատարանը որոշում է՝ արդյոք արդար հավասարակշռություն է

ապահովվել հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (*Beyeler v. Italy, judgment 5 January 2000, §98, §107; Sporrong and Lonnroth v. Sweden, judgment of 23 September 1982, §61, §69*):

Հարկ է նշել, որ միջանկյալ բաշխման ծրագիրը սնանկության գործով կառավարչի կողմից կազմվող մեկ միասնական դատավարական փաստաթուղթ է, որը ներառում է համապարփակ տեղեկատվություն սնանկության վարույթում հավաքագրված դրամական միջոցների հանրագումարի, դրանց ծագման աղբյուրների, ինչպես նաև Օրենքի 43 և 44-րդ հոդվածներով սահմանված՝ ապահովված և չապահովված պահանջների ու 82-րդ հոդվածով սահմանված կարգով պահանջների բավարարման հերթականության վերաբերյալ: Միաժամանակ, օրենսդիրը հնարավորություն է ընձեռել սնանկության գործով պարտատեր ներգրավված մասնակիցներին սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացված միջանկյալ բաշխման ծրագրի դեմ յոթնօրյա ժամկետում գրավոր առարկություն ներկայացնել դատարան, ընդ որում՝ առարկությունը կարող է վերաբերել ինչպես պարտատիրոջ՝ իր պահանջի բավարարմանն ուղղված դրամական միջոցների ավել կամ նվազ լինելուն կամ առաջնահերթությանը, այնպես էլ այլ պարտատերի պահանջներին, ինչպես նաև կառավարչի վարձատրությանը և/կամ վարչական ծախսերին: Ընդ որում՝ մի պարտատիրոջ կողմից բերված առարկությունը կարող է ուղղակիորեն չվերաբերել այլ պարտատիրոջ պահանջի բավարարմանն ուղղված դրամական միջոցների բաշխմանը, սակայն կատարված վերահաշվարկի արդյունքում հանգեցնել նաև տվյալ սուբյեկտի պահանջի բավարարմանն ուղղված դրամական միջոցների նվազմանը կամ ավելացմանը:

Վերոհիշյալը հաշվի առնելով՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող դրույթով առկա է պարտատիրոջ սեփականության իրավունքին միջամտություն, որպիսի պայմաններում հարկ է անդրադարձ կատարել՝ արդյոք այն չի խախտում սեփականության իրավունքի սահմանափակման համաչափության և որոշակիության սահմանադրական սկզբունքները:

Օրենսդիրը հստակ սահմանել է, որ միջանկյալ բաշխման ծրագրի դեմ առարկություն ներկայացվելու դեպքում պարտատերերի արդար դատաքննության իրավունքի երաշխավորման նկատառումներից ելնելով՝ սահմանափակվում են մյուս պարտատերերի սեփականության իրավունքի տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավագործությունները, քանի դեռ առկա չէ վեճի վերաբերյալ վերջնական դատական ակտ՝ միաժամանակ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ միայն առարկությունների քննարկման արդյունքում կարող են որոշվել պարտատերերի պահանջների բավարարման հստակ չափը:

Ավելին, թեև առարկությունն առերևույթ կարող է շոշափել կոնկրետ պարտատիրոջ շահերը, սակայն առարկության քննության արդյունքում դատարանը կարող է կայացնել միջանկյալ բաշխման ծրագիրը փոփոխելու մասին որոշում, ինչը հանգեցնելու է բաշխվող գումարի վերահաշվարկին:

Սահմանադրական դատարանը 2020 թվականի ապրիլի 14-ի ՄԴՈ-1522 որոշմամբ ընդգծել է, որ սեփականության իրավունքի սահմանափակման հիմքը և ծավալը սահմանող օրենքը պետք է այնքան որոշակի լինի, որ անձն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարողանա կատարել այդ սահմանափակումից բխող և իր վրա դրված պարտականությունները, և որ անձի՝ ակնկալվող վարքագծին ներկայացվող պահանջները պետք է լինեն ոչ միայն որոշակի և կանխատեսելի, այլև օբյեկտիվորեն իրականանալի: Այսինքն՝ բարեխիղճ անձի համար օբյեկտիվ իրականության մեջ պետք է ոչ միայն համապատասխան պահանջը կատարելու իրական և ողջամիտ հնարավորություն լինի, այլև անձը հարկադրաբար չպետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ կամ չպետք է կրի այնպիսի զրկանքներ, որոնք չարդարացված կերպով անհամաչափ վնաս կհասցնեն նրա հիմնական իրավունքներին և ազատություններին:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

Համաչափության սկզբունքը դիտարկելով սեփականության իրավունքի սահմանափակման տեսանկյունից՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված միջոցները պետք է համաչափ լինեն հանրության շահերի կամ այոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակին, այսինքն՝ այն պետք է լինի պիտանի, անհրաժեշտ և համարժեք հետապնդվող նպատակին:

Վերոշարադրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթը պարտատիրոջ սեփականության իրավունքը ժամանակավորապես սահմանափակում է՝ այլ պարտատերերի կողմից իրենց իրավունքների պաշտպանության նկատառումներից ելնելով: Միաժամանակ, տվյալ պարագայում հնարավոր չէ այլ եղանակով իրացնել պարտատերերի՝ միջանկյալ բաշխման ծրագրի դեմ առարկություն ներկայացնելու իրավունքը: Բացի դրանից, առարկության քննության արդյունքում կայացվելիք դատական ակտը հնարավոր է իրավական հետևանքներ առաջացնի այլ պարտատերերի համար: Այդ առումով վիճարկվող դրույթով պարտատիրոջ սեփականության

իրավունքի սահմանափակումը համահունչ է սահմանադրաիրավական սկզբունքներին:

4.4. Դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները պարտավորեցնում են պետությանը սահմանել իրավական համապատասխան կառուցակարգեր, որոնք կերաշխավորեն տվյալ իրավունքների արդյունավետ իրացումը:

2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, վերահաստատելով նախորդ մի շարք որոշումներում արդար դատաքննության և դատարանի մատչելիության իրավունքների առնչությամբ իր արտահայտած իրավական դիրքորոշումները, գտել է. «... որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարանի դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ»: Նշվել է նաև, որ «ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում... »:

Համանման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արդար դատաքննության բաղադրատարր համարվող դատարանի մատչելիության վերաբերյալ: Մասնավորապես, դատարանը եզրահանգել է, որ հիշյալ իրավական սկզբունքի խախտում կարող է առկա լինել, երբ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվի այնչափ, որ սահմանափակվի անձի՝ դատական պաշտպանությունից գործնականում օգտվելու իրավունքը (*Sialkowska v. Poland 2007թ. մարտի 22-ի վճիռ*):

Արդար դատաքննության իրավունքի համատեքստում դիմողի բարձրացրած սահմանադրաիրավական խնդիրը հանգում է միջանկյալ բաշխման ծրագրի դեմ առարկություն ունենալու հիմնախնդրին, քանզի դիմողի գնահատմամբ առարկության ներկայացման գործիքով պարտատերը, մի կողմից՝ իրավունք ունի պաշտպանելու իր սեփականության իրավունքը, իսկ մյուս կողմից՝ այլ պարտատերերի կողմից առարկություն ներկայացնելու պարագայում անորոշ ժամկետով ապագայում գումարը ստանալու հեռանկարը խաթարում է առարկություն ներկայացնելու և սեփականության իրավունքի պաշտպանության բուն էությունը:

Վիճարկվող դրույթի 5-րդ մասի իրավակարգավորումը սնանկության գործով որպես պարտատեր ներգրավված մասնակիցներին իրավական հնարավորություն է ընձեռում, իրենց սեփականության իրավունքի պաշտպանության նկատառումներից ելնելով, առարկություն ներկայացնել սնանկության գործով կառավարչի կողմից կազմված և դատարան ներկայացված միջանկյալ բաշխ-

ման ծրագրի դեմ: Միջանկյալ բաշխման ծրագրի դեմ առարկություն ներկայացնելու իրավունքն օրենսդրի կողմից նախատեսված դատավարական միջոց է, որը թույլ է տալիս պարտատերերին իրենց փաստարկված անհամաձայնությունը հայտնել ինչպես բաշխվող գումարի չափի, այնպես էլ պահանջների բավարարման առաջնահերթության դեմ: Առարկություն ներկայացնելը պարտատիրոջ բացառիկ իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, որպիսի պայմաններում պարտատերն ինքն է որոշում իր իրավունքների պաշտպանության այս կամ այն ձևն ընտրելու նպատակահարմարությունը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ առարկության քննարկումը տևական ժամանակ է պահանջում, որպիսի պայմաններում պարտատերը ստիպված հրաժարվում է իրացնել իր առարկություն ներկայացնելու իրավունքը, ապա հարկ է նշել, որ առարկության քննության և հետագայում կայացրած որոշման բողոքարկման շրջանակներում մի քանի ամիս տևող դատական գործընթացների ժամկետները ողջամիտ են՝ հաշվի առնելով դատարանների ծանրաբեռնվածությունը և սնանկության գործերի թվաքանակը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼՆՅԱՆ

14 սեպտեմբերի 2021 թվականի
ՄԴՈ-1609



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՉՈՅՎ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 20.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 սեպտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Չոյա Մկրտչյանի ներկայացուցիչներ Մ. Դանիելյանի, Վ. Վարդանյանի, Ն. Սամսոնյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետ Գ. Աթանեսյանի և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Չոյա Մկրտչյանի դիմումի հիման վրա՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 3(103)2021

«Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի հունվարի 22-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի փետրվարի 10-ին:

Օրենքի՝ «Մնանկության գործով առանձին պահանջների քննության կատարման հիմքերը և կարգը» վերտառությամբ 20.1-ին հոդվածը լրացվել է 17.06.2016թ. ՀՕ-105-Ն օրենքով: Օրենքի վիճարկվող հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը.

«1. Մնանկության գործի վարույթը առանձին պարտատերերի պահանջների մասով կարող է կատարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կատարման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ:

2. Առանձին պահանջների մասով վարույթի կատարումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը:

3. Առանձին պահանջի քննությունը կատարելու դեպքում հետագա վարույթի ընթացքում նույն հերթի մնացած պահանջները բավարարելուց հետո կատարված պահանջի չափի համամասնությամբ դրամական միջոցներ են սատարելու սնանկության հատուկ հաշվին: Վարույթը կատարելու հիմքը վերանայուց և պահանջը հաստատվելուց հետո դատարանի որոշմամբ սնանկության հատուկ հաշվին սատարելուց հետո դրամական միջոցները փոխանցվում են պարտատիրոջը: Եթե պահանջի քննության կատարման հիմքերը վերանայուց հետո կատարված պահանջը չի հաստատվում, ապա այդ հիմքով սնանկության հատուկ հաշվին սատարելուց հետո դրամական միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված կարգով՝ դատարանի որոշման հիման վրա:

4. Այն պարտատերը, որի պահանջի քննությունը կատարվել է, կարող է մասնակցել պարտատերերի ժողովներին միայն խորհրդակցական ձայնի իրավունքով: Պահանջի քննության կատարման հիմքերը վերանայու և դատարանի կողմից այդ պահանջը հաստատվելու դեպքում պարտատերը մասնակցում է պարտատերերի ժողովին քվեարկության իրավունքով՝ սույն օրենքով սահմանված կարգով»:

Գործի քննության առիթը Չոյա Մկրտչյանի (այսուհետ՝ դիմող)՝ 2021 թվականի ապրիլի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա այլ փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող Օրենքը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողի պնդմամբ՝ Օրենքի 20.1-ին հոդվածը հակասում է Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև 75-րդ, 78-րդ հոդվածներին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դիմողը գտնում է, որ սնանկության վարույթը կարգավորող օրենսդրությունը, մասնավորապես՝ խնդրո առարկա օրենքի 20.1-ին հոդվածը, չի նախատեսում որևէ իրավակարգավորում, որը սնանկության գործեր քննող դատարանին կօժտեր սնանկության գործի վարույթը, այլ ոչ թե առանձին պահանջի քննությունը, կասեցնելու լիազորությամբ այն դեպքերում, երբ սնանկության գործի հետագա ընթացքն անհնարին է մինչև այլ դատարանում քննվող դատական գործի քննության ավարտը:

Դիմողի գնահատմամբ՝ սնանկության գործերի քննության ընթացքում ամբողջ գործի վարույթի կասեցումը ոչ միայն սնանկության, այլև քաղաքացիական, քրեական, վարչական գործերի դեպքերում վարույթի մասնակիցների դատավարական իրավունքների արդյունավետ ապահովման համար կարող է ունենալ կենսական նշանակություն, քանզի բոլոր տեսակի գործերով դատավարության ցանկացած փուլում հնարավոր է այնպիսի հանգամանքների առկայություն, որոնց դեպքում տվյալ գործի վարույթն ամբողջությամբ կամ մասնակի կասեցնելը դառնում է անհրաժեշտություն, ընդ որում՝ անկախ սնանկության գործի քննության փուլից:

Դիմողն արձանագրում է, որ մասնագիտացված դատարանի կողմից սնանկության գործի վարույթը կասեցնելու լիազորության իրականացումն անհրաժեշտ է դատավարության մասնակիցների իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նկատառումներից ելնելով, քանզի բոլոր դեպքերում, երբ սնանկության գործի վարույթի կասեցման հնարավորությունը բացակայում է, անհնարին է դառնում գործի քննության բնականոն ընթացքի և դատավարության մասնակիցների արդար դատաքննության, դատական պաշտպանության և սեփականության իրավունքների անխախտելիության ապահովումը:

Դիմողն ընդգծում է, որ սնանկության գործը կասեցնելու լիազորության բացակայության պայմաններում դատարանը չի կարող կասեցնել գործի քննությունը, օրինակ՝ գործի քննությանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի առկայության դեպքում, Սահմանադրական դատարան դիմելու համար, մինչև իրավահաջորդության հարցի լուծումը ֆիզիկական անձ պարտատիրոջ մահվան դեպքում, ֆիզիկական անձ պարտապանի կամ պարտատիրոջ անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում, պարտատեր իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում և այլն, քանի որ գոր-

ծող իրավակարգավորմամբ հիշյալ հանգամանքների առկայության պայմաններում դատարանը պարտավոր է քննել գործը՝ անկախ գործի քննությանը ժամանակավոր խոչընդոտող հանգամանքների առկայությունից:

Դիմողը նշում է, որ սնանկության գործի վարույթի կասեցումը որևէ կերպ չի կարող հանգեցնել դատավարության այլ մասնակիցների իրավունքների խախտմանը, քանզի այդպիսի լիազորության առկայությունն ու դրա իրավաչափ կիրառումը, օրինակ՝ քաղաքացիական գործերի դեպքում, խնդրահարույց չէ:

Դիմողի համոզմամբ, այն դեպքում, երբ անձին սնանկ ճանաչելուց և նրա նկատմամբ հանրային իրավական դրամական պահանջի գրանցումից հետո տվյալ անձը Վարչական դատարանում վիճարկում է այն վարչական ակտը, որից բխող հանրային իրավական դրամական պահանջը գրանցվել է սնանկության գործը քննող դատարանի կողմից, մասնագիտացված դատարանը պետք է ունենա սնանկության գործի քննությունն ամբողջությամբ կամ համապատասխան մասով կասեցնելու լիազորություն՝ նկատի ունենալով, որ Վարչական դատարանի կողմից հայցի բավարարման պայմաններում սնանկության վարույթի հետագա ընթացքը դառնում է առարկայագուրկ, մինչդեռ հակառակ պարագայում անվիճելիորեն թույլ է տրվելու պարտապանի արդար դատաքննության, դատական պաշտպանության և սեփականության իրավունքների հանիրավի խախտում:

Համեմատական եզրեր անցկացնելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված իրավակարգավորումների հետ՝ դիմողը նշում է, որ համանման իրավիճակում, երբ բացակայում է սնանկության վարույթը, վարչական ակտի վիճարկումը կատարողական վարույթը կարճելու, իսկ առանձին դեպքում՝ կասեցնելու հիմք է:

Դիմողը փաստում է, որ սնանկության գործի վարույթի կասեցումը մինչև այլ դատարանում քննվող գործի կամ հարցի լուծման ավարտը ոչ թե բացառելու, այլ առժամանակ հետաձգելու է պարտատերերի պահանջների կատարումը, եթե տվյալ գործի կամ հարցի քննության արդյունքներով տվյալ պահանջները, առհասարակ, չվերանան: Նման պայմաններում նպատակահարմար է կասեցնել սնանկության գործի վարույթը, ուստի և պահանջի կատարմանն ուղղված գործողությունների կատարումը, հակառակ դեպքում պարտապանի գույքը կարող է իրացվել, իսկ դրանից ստացված միջոցները՝ ուղղվել համապատասխան պահանջի բավարարմանն այն պարագայում, երբ նույն պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտը վիճարկվում է Վարչական դատարանում: Նկարագրված իրավիճակում անառարկելիորեն կխախտվի պարտապանի սեփականության իրավունքը, իսկ հարուցված վարչական գործի վարույթը ենթակա կլինի կարճման՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով,

որպիսի պայմաններում պարտապանը գրկվում է իր նկատմամբ միջամտող քնույթի վարչական ակտի իրավաչափությունը դատական կարգով արդյունավետ և արդարացի պայմաններում վիճարկելու և դատական քննության առարկա դարձնելու հնարավորությունից:

Պատճառաբանելով, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածն այնքանով, որքանով սնանկության գործը քննող դատարանին չի վերապահում սնանկության գործի վարույթն ամբողջությամբ կամ պարտապանի նկատմամբ գրանցված որևէ պահանջի մասով՝ կատարման գործողությունները ներառյալ, կասեցնելու լիազորություն այն դեպքում, երբ սնանկության գործի հետագա ընթացքն ամբողջությամբ կամ մասամբ անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը, հակասում է Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև 75-րդ և 78-րդ հոդվածներին՝ Սահմանադրական դատարանին խնդրում է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածը ճանաչել Սահմանադրության վերոնշյալ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը գտնում է, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի ուժով սնանկության գործի վարույթը կասեցնելիս կիրառելի են ոչ թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, այլ քննության առարկա հանդիսացող Օրենքով սահմանված կանոնները, այսինքն՝ սնանկության գործի վարույթը կարող է կասեցվել առանձին պարտատերերի պահանջների մասով, եթե առկա են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կասեցման հիմքեր, և տվյալ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ, ինչը, սակայն չի հանգեցնում սնանկության վարույթի ընդհատմանը:

Վկայակոչելով Օրենքի 3-րդ, 17-րդ և 19-րդ հոդվածները և Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով 05.04.2013թ. որոշմամբ և Սահմանադրական դատարանի 11.01.2011թ. ՄԴՈ-932 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պատասխանողն ընդգծում է, որ պարտապանին հարկադիր սնանկ ճանաչելու հարցը լուծելիս դատարանը դիտարկում է երեք պայմանների միաժամանակյա առկայությունը, այն է՝ վճարային պարտավորության անվիճելիությունը, նման պարտավորության առկավազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելը: Ավելին, օրենսդիրը սնանկության գործի բաղադրա-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՐ ♦ 3(103)2021

տարր հանդիսացող մի շարք առանձին վարույթների շարքում իրավաչափորեն առանցքային նշանակություն է վերապահել պարտապանին սնանկ ճանաչելու և սնանկության գործն ավարտելուն ուղղված վարույթներին, իսկ մնացած բոլոր վարույթները, այդ թվում՝ ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթները, հանդիսանում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետևանքները:

Պատասխանողը փաստում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվում է պարտապանի սնանկությունը, վերջինիս նկատմամբ գրանցված պահանջների իրավաչափությունը և դրանից բխող՝ Օրենքով սահմանված դատավարական ընթացակարգերի կատարման պարտադիր պահանջը: Հաշվի առնելով սնանկության վարույթի փուլային կառուցվածքը՝ օրենսդիրը, վարույթի արդյունավետությունն ապահովելու նպատակով նախատեսել է վարույթի կասեցման հնարավորություն միայն առանձին պարտատերերի պահանջների մասով և այն պայմանով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կասեցման հիմքը կիրառելի լինի այդ իրավահարաբերության նկատմամբ, ընդ որում, առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը, ինչը ենթադրում է, որ օրենքով սահմանված կարգով առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման դեպքում սնանկության վարույթի մյուս փուլերը պետք է ընթանան օրենքով նախատեսված ընթացակարգով:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ անձի սեփականության և արդար դատաքննության իրավունքների ենթադրյալ խախտումներին՝ պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 10-րդ, 60-րդ, 75-րդ և 78-րդ հոդվածները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի վճիռները, Սահմանադրական դատարանի 25.02.2008թ. ՄԴՈ-735 որոշումը, պնդում է, որ դիմողի փաստարկն առ այն, որ վիճարկվող վարչական ակտի ամկայության դեպքում սնանկության վարույթի շրջանակներում կարող է թույլ տրվել պարտապանի սեփականության իրավունքի խախտում, քանի որ պարտապանը հանիրավի գրկվելու է իր սեփականության իրավունքից, անհիմն է: Ավելին, վիճարկվող հոդվածի 3-րդ մասի ուժով՝ առանձին պահանջի քննությունը կասեցնելու դեպքում հետագա վարույթի ընթացքում նույն հերթի մնացած պահանջները բավարարելուց հետո կասեցված պահանջի չափի համամասնությամբ դրամական միջոցներ են սառեցվում սնանկության հատուկ հաշվին, իսկ վարույթը կասեցնելու հիմքը վերանալուց և պահանջը հաստատվելուց հետո դատարանի որոշմամբ սնանկության հատուկ հաշվին սառեցված դրամական միջոցները փոխանցվում են պարտատիրոջը: Եթե պահանջի

քննության կասեցման հիմքերը վերանալուց հետո կասեցված պահանջը չի հաստատվում, սպա այդ հիմքով սնանկության հատուկ հաշվին սամեցված դրամական միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված կարգով՝ դատարանի որոշման հիման վրա:

Պատասխանողն անհիմն է համարում նաև դիմողի այն դիրքորոշումը, որ Վարչական դատարանում վիճարկվող վարչական ակտից բխող պահանջը գուգահեռաբար քննվող սնանկության գործով փաստացի կատարվելու, ուստիև սպառվելու դեպքում, վարչական գործի վարույթը վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով ենթակա է կարճման, քանզի կասեցված պահանջի չափի համամասնությամբ դրամական միջոցները սամեցվում են սնանկության հատուկ հաշվին՝ մինչև կասեցման հիմքի վերանալը:

Վկայակոչելով Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ1/0261/04/16 քաղաքացիական գործով 2018 թվականի հունիսի 1-ի որոշումը՝ պատասխանողը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումը համահունչ է Օրենքի 20.1-ին հոդվածով նախատեսված իրավակարգավորումներին, որը հնարավորություն է տալիս առանձին պարտատերերի պահանջների մասով կասեցնել սնանկության գործի վարույթը՝ այլ վարույթի շրջանակներում վիճարկելով պահանջների իրավաչափությունը:

Պատասխանողը պնդում է, որ վիճարկվող դրույթով սահմանված իրավակարգավորումն ինքնանպատակ չէ և ուղղված է ապահովելու սնանկության վարույթի շարունակականությունը, պարտապանի և պարտատերերի շահերի ողջամիտ հարաբերակցությունը, ուստի կարելի է փաստել, որ Օրենքով նախատեսված իրավակարգավորումների շրջանակներում գործում են բավարար և արդյունավետ երաշխիքներ ապահովելու անձի սահմանադրական իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը, ինչպես նաև տվյալ իրավունքների պատշաճ իրացումը:

Բացի դրանից, պատասխանողը գտնում է, որ առկա են սույն գործի վարույթը կարճելու հիմքեր, քանզի դիմողն Օրենքի համապատասխան նորմի սահմանադրականությունը վիճարկում է ոչ թե նորմի և Սահմանադրության միջև ենթադրյալ հակասության համատեքստում, այլ դիմողի ներկայացրած պնդումներն իրականում ուղղված են վիճարկվող նորմին դատարանների տված մեկնաբանությանը:

Պատճառաբանելով, որ դիմողը, ձևականորեն բարձրացնելով իրավական նորմի սահմանադրականության հարց, առաջ է քաշում իրավանորմի կիրառման իրավաչափության խնդիր՝ պատասխանողը Սահմանադրական դատարանին խնդրում է սույն գործի վարույթը կարճել կամ որոշում ընդունել վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման համար անհրաժեշտ է անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

արդյո՞ք Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը, չի նախատեսում սնանկության գործի վարույթն ամբողջությամբ կամ պարտապանի նկատմամբ գրանցված որևէ պահանջի մասով, այդ թվում՝ կատարման գործողությունները, կասեցնելու օրենսդրական կառուցակարգեր, խաթարում է Սահմանադրությամբ երաշխավորված իրավական որոշակիության սկզբունքը, ինչպես նաև սահմանափակում անձի սեփականության և արդար դատաքննության իրավունքները:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործի քննության շրջանակներում դիմողը, ըստ էության, բարձրացնում է օրենսդրական բացի խնդիր՝ նշելով, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածն այնքանով, որքանով սնանկության գործը քննող դատարանին չի վերապահում սնանկության գործի վարույթն ամբողջությամբ կամ պարտապանի նկատմամբ գրանցված որևէ պահանջի մասով՝ կատարման գործողությունները ներառյալ, կասեցնելու լիազորություն այն դեպքում, երբ սնանկության գործի հետագա ընթացքն ամբողջությամբ կամ մասամբ անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը, Սահմանադրական դատարանը, նախևառաջ, հարկ է համարում անդրադառնալ սնանկության գործի վարույթն ամբողջությամբ կամ պարտապանի նկատմամբ գրանցված որևէ պահանջի մասով, այդ թվում՝ կատարման գործողությունները կասեցնելու օրենսդրի կողմից սահմանած չլինելը ենթադրյալ օրենսդրական բաց համարելու հարցին:

Սահմանադրական դատարանը, իր ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143, ՍԴՈ-1476 որոշումներում անդրադառնալով օրենսդրական բացի հիմնախնդրին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամ-

քը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից.

2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը որպես օրենսդրական բաց կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով.

3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից.

4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը.

5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր դեպքերում, երբ հարաբերության օրենսդրական կարգավորման բացակայությունն առերևույթ խնդրահարույց է, սակայն գործի քննության ընթացքում բացահայտվում է, որ կարգավորման բացակայությունը ոչ թե թերություն է, այլ օրենսդրի կամահայտնությունը, անհրաժեշտ է իրավական գնահատական տալ օրենսդրի նման մոտեցումներին, թե որքանով են դրանք իրավաչափ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ հասարակական հարաբերության իրավական կարգավորման բացակայությունը չի կարող դիտարկվել իբրև օրենսդրական բաց, եթե այն բավարարում է իրավաչափության պարտադիր չափանիշներին:

Մանակության հարաբերությունները կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ օրենսդիրը չի նախատեսել սնանկության վարույթի ամբողջական կամ կոնկրետ պահանջի կատարման գործողությունների կասեցման իրավական հնարավորություն, այլ միայն հնա-

րավորություն է ընձեռել կասեցնել առանձին պարտատերերի պահանջների քննությունը՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներն այնքանով, որքանով դրանք կիրառելի են սնանկության վարույթում: Հատկանշական է, որ հիշյալ իրավակարգավորումն օրենսդիրը կատարել է 2016 թվականի հունիսի 16-ի ՀՕ-105-Ն օրենքով՝ Օրենքի ընդունումից շուրջ տասը տարի անց՝ չանդրադառնալով սնանկության վարույթն ամբողջությամբ կասեցնելու իրավական կառուցակարգերի ներդրմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի նման գործելաոճն ինքնանպատակ չէ, քանզի հակառակ պարագայում, երբ սնանկության գործի քննության ցանկացած փուլում իրավական հնարավորություն նախատեսվեր կասեցնել սնանկության գործի քննությունն ամբողջությամբ, տվյալ պարագայում կխաթարվեր սնանկության ինստիտուտի առջև դրված հիմնարար նպատակներից մեկը՝ պարտատերերի և պարտապանի շահերի հավասարակշռված պաշտպանությունը, մասնավորապես՝

1. սնանկության վարույթի ողջ ընթացքում սնանկության կառավարիչը (նաև՝ ժամանակավոր կառավարիչը) իրականացնում է մի շարք լիազորություններ՝ ուղղված պարտապանի գույքի գույքագրմանը, պահպանությանը, դեբիտորական պարտքերի հավաքագրմանը, հսկողություն է իրականացնում պարտապանի ղեկավարի պարտականությունների կատարման նկատմամբ և այլն (Օրենքի 29-րդ հոդված), մինչդեռ սնանկության գործի վարույթն ամբողջությամբ կասեցնելու պայմաններում կկասեցվեն նաև սնանկության գործով կառավարչի լիազորությունները, որպիսի պայմաններում վերջինս չի կարող կատարել վերոգրյալ և օրենքով նախատեսված այլ դատավարական գործողություններ, որոնք կարող են հանգեցնել պարտատերերի շահերի ոտնահարման, օրինակ՝ պարտապանի կողմից գույքագրման ենթակա գույք թաքցնելուն և այլն:

2. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումից բխում է, որ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում, միաժամանակ հնարավորություն ընձեռելով պարտատերերին դատարան պահանջ ներկայացնել նաև նշված ժամկետից դուրս՝ Օրենքի 85-րդ հոդվածով սահմանված կարգով: Սնանկության գործի վարույթի կասեցման դեպքում հիշյալ պահանջների քննությունը և գրանցումը դառնում է անհնարին, որպիսի պայմաններում ոտնահարվում են պահանջ ներկայացնող սուբյեկտների իրավունքները:

3. Օրենսդիրը, Օրենքի 20.1-ին հոդվածով նախատեսելով պահանջների քննության փուլում պարտատիրոջ պահանջի քննության կասեցման հնարավորություն, պարտապանին հնարավորություն է ընձեռել ոչ միայն պահանջի

քննության ընթացքում սնանկության դատարանում առարկել պարտատիրոջ պահանջի օրինականության, հիմնավորվածության և առաջնահերթության դեմ (Օրենքի 46-րդ հոդվածի 8 և 10-րդ մասեր), այլև այլ դատարանում վիճարկել պահանջի հիմքերը՝ սնանկության վարույթի տվյալ փուլում բացառելով պահանջի կատարմանն ուղղված ցանկացած գործողություն: Օրենսդրական առկա կարգավորումը, փաստորեն, լիարժեքորեն երաշխավորում է պարտապանի իրավունքների ապահովումը, իսկ սնանկության վարույթի հաջորդական փուլերում նման կառուցակարգի ներդրումը ոչ միայն վտանգում է սնանկության վարույթի քննության ողջամիտ ժամկետների պահպանումը, այլև անհարկի հետաձգում է պարտատիրոջ պահանջի բավարարմանն ուղղված գործողությունների կատարումը, որոնք առանձին դեպքերում կարող են պարտապանի՝ իրավունքի ուշացած իրացման եղանակով անբարեխղճության արդյունք հանդիսանալ:

4. Անկախ այն հանգամանքից, թե պահանջի հիմքի վիճարկումն այլ դատարանում ինչ էլք կունենա, Օրենքի 30, 80 և 82-րդ հոդվածների իրավակարգավորումներից բխում է, որ կառավարչի վարձատրությունը և սնանկության վարույթի շրջանակներում ձևավորված վարչական ծախսերը ենթակա են հատուցման:

Այսպիսով, օրենսդրական բացի առկայության վերաբերյալ դիմողի պնդումները հիմնազուրկ են:

4.1. Այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդրո առարկա դեպքերում սնանկության գործի վարույթն ամբողջությամբ կամ պարտապանի նկատմամբ գրանցված որևէ պահանջի մասով, այդ թվում՝ կատարման գործողությունները, կասեցնելու օրենսդրական հիմքեր չամրագրելու հիմնահարցը դիտարկել **իրավական որոշակիության սկզբունքի, սեփականության և արդար դատաքննության իրավունքների սահմանափակումների համատեքստում:**

4.1.1. Սահմանադրության 79-րդ հոդվածը, հռչակելով որոշակիության սկզբունքի սահմանադրաիրավական հիմքերը, սմյրագրում է.

«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

4.1.2. Իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից է իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավո-

րումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ ընդգծելով, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Սահմանադրական դատարանը 2008 թվականի մայիսի 13-ի ՄԴՈ-753 որոշմամբ փաստել է, որ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Ավելին, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (09.06.2015թ. ՄԴՈ-1213):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն. «Չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է» (The Sunday Times v. the United Kingdom (Application no. 6538/74, 26/04/79, § 49):

Որոշակիության սկզբունքի համատեքստում հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ իրավական նորմերը, որպես ընդհանուր վերացական կարգավորումներ, միշտ որոշակի մեկնաբանությունների կարիք ունեն, և գրեթե անհնար է իրավական միարժեք նորմերով հստակ կարգավորել հասարակական կյանքի բոլոր բազմաբնույթ հարաբերությունները:

4.1.3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սնանկության հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերի մշակումը և ապահովումը պետության տնտեսական կայունության երաշխիքներից է: Միևնույն ժամանակ, սնանկության ինստիտուտը յուրօրինակ տնտեսաիրավական գործիք է, որը կատարում է նաև տնտեսվարող սուբյեկտների՝ առևտրային իրավահարաբերություններում պատշաճ վարքագիծն ապահովող գործառույթ:

Սահմանադրական դատարանը 2008 թվականի փետրվարի 25-ի ՍԳՈ-735 որոշմամբ ընդգծել է. «Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը», իսկ 2021 թվականի հունվարի 26-ի ՍԳՈ-1572 որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է. «... յուրաքանչյուր դեպքում սնանկության գործընթացում պետք է հաշվի առնվեն տարբեր շահագրգիռ կողմերի՝ ներառյալ պարտապանների շահերը»:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սնանկության վարույթը միմյանց հաջորդող բազմափուլ համակարգ է, որի կառուցվածքային տարր հանդիսացող յուրաքանչյուր փուլի առջև օրենսդիրը դրել է կոնկրետ խնդիրներ (սնանկության դիմումի ընդունելիության փուլում՝ ստուգել դիմումի ձևին, բովանդակությանը, դատարան ներկայացվող փաստաթղթերին առաջադրված օրենսդրական պահանջներին համապատասխանությունը, սնանկ ճանաչելու հարցի լուծման փուլում՝ սնանկության հիմքերի և հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը և այլն), որը բխում է սնանկության վարույթի համընդհանուր նպատակից, այն է՝ ապահովել պարտատերերի պահանջների բավարարումը՝ երաշխավորելով պարտատերերի և պարտապանի իրավունքների պաշտպանության ողջամիտ հավասարակշռությունը:

Սնանկության վարույթի փուլային շարունակականությունը պայմանավորված է սնանկության գործերի առանձնահատկություններով, ընդ որում՝ յուրաքանչյուր փուլին տրամաբանորեն հաջորդում է մյուս փուլը, ուստի և կոնկրետ փուլի առջև դրված խնդիրների ողջամիտ ժամկետներում քննությունն ու լուծումը դառնում է առավել քան հրատապ:

Անդրադառնալով «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական իմաստի բացահայտմանը՝ Սահմանադրական դատարանը 2011 թվականի հունվարի 11-ի ՍԳՈ-932 որոշմամբ նշել է, որ նշված հասկա-

ցությունը չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթով, և ներառում է այն բոլոր վեճերի լուծմանն ուղղված դատական վարույթները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության ընթացքում, կամ առնչվում են պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարման իրավական հետևանքներին: Այլ կերպ՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված դատական գործը, որպես սնանկության գործ, ի տարբերություն այլ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող գործերի, չի ավարտվում տվյալ վարույթով կայացված դատական ակտով և կարող է բաղկացած լինել մի քանի առանձին վարույթներից, որոնք, սակայն, չեն հանդիսանում առանձին գործեր, այլ ներառվում են տվյալ իրավասուբյեկտի սնանկության վերաբերյալ միասնական դատական գործում:

Օրենքի 20.1-ին հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ օրենսդիրը հստակ սահմանել է սնանկության գործով առանձին պահանջների քննության կասեցման իրավական հիմքերը և դատավարական կարգը՝ հիշյալ հոդվածի 1-ին մասով ամրագրելով, որ գործով վարույթի կասեցման հնարավորություն նախատեսվում է բացառապես պահանջների քննության փուլում՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերն այնքանով, որքանով դրանք կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ: Այսինքն՝ օրենսդիրը հստակ նախանշել է այն սահմանները, որոնց շրջանակներում կասեցման ինստիտուտը կիրառելի է սնանկության վարույթի նկատմամբ՝ բացառելով սնանկության գործի քննության ընդհատում պահանջների հաստատման փուլից հետո: Նման պայմաններում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթը հնարավորինս հստակ և կանխատեսելի սահմանում է այն կարգավորումները, որոնք օրենսդիրն անհրաժեշտ և բավարար է համարել, որպեսզի դրանց հասցեատերերը դրսևորեն համապատասխան իրավաչափ վարքագիծ, հետևաբար, նաև կանխատեսեն դրա արդյունքում ի հայտ եկող հնարավոր հետևանքները:

4.2. Սահմանադրության «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

Սահմանադրության «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր որ ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

4.2.1. Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222) հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության հիմնախնդիրներին՝ դրանք քննարկելով իբրև դատական պաշտպանության իրավունքի հիմնարար բաղադրատարրեր:

Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշմամբ արձանագրել է, որ 2015թ. փոփոխություններով Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված են անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն սկզբունքները, որոնց համատեքստում սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ: Այդ դիրքորոշումներն արտացոլում են նաև միջազգային իրավական փորձի համալիր ուսումնասիրության արդյունքները:

Սահմանադրական դատարանը վերոթվարկյալ որոշումներում կարևորել է իրավակարգավորման սկզբունքներ (չափանիշներ), որոնք վեճի առարկա նորմի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն, մասնավորապես.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելե Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմաններ, բողոքարկման ժամկետ սահմանելիս պետք է գերակայեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները,

- դատական ակտի պատճառաբանվածությունը, ըստ որի ընդունվում կամ մերժվում է անձի դիմումը, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման իրավունքը մատչելիության իրավունքի իրացման երաշխիքներ են,

- օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, արդյունքում չապահովելով դատարանի մատչելիության իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, բացահայտելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը, ընդգծել է, որ դատավարության մասնակիցները պետք է ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները (*BĚLEŠ AND OTHERS v. THE CZECH REPUBLIC*, Application no. 47273/99, 12.11.2002), իսկ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր համարվող՝ դատարանի մատչելիության իրավական սկզբունքի խախտում կարող է առկա լինել, երբ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվի այնչափ, որ սահմանափակվի անձի դատական պաշտպանությունից գործնականում օգտվելու իրավունքը (*Sialkowska v. Poland*, Application no. 8932/05, 22.03.2007): Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հնարավոր է համարում սույն իրավունքի սահմանափակումը՝ շեշտադրելով, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների, սակայն դրանով չպետք է սահմանափակվի կամ նվազեցվի անհատին տրամադրված մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*De Geouffre de la Pradelle v. France*, Application no. 12964/87, 16.12.1992, *Stanev v. Bulgaria*, App. No. 36760/06, 17.01.2012):

4.2.2. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում դիմողի բարձրացրած օրենսդրական բացով պայմանավորված սահմանադրաիրավական խնդիրը հանգում է սնանկության վարույթն ամբողջապես կամ պարտապանի նկատմամբ գրանցված որևէ պահանջի մասով, այդ թվում՝ կատարման գործողությունները, կասեցնելու միջնորդություն հարուցելու օրենսդրական հիմքերի բացակայության հիմնախնդրին:

Զննության առարկա Օրենքի վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ պարտապանը սնանկության վարույթի և ոչ մի փուլում զրկված չէ դատական կարգով պարտատիրոջ դիմումի (սնանկության վարույ-

թի հարուցման փուլում) կամ պահանջի հիմքում ընկած վճիռը, դատավճիռը, վարչական ակտը, գործարքը վիճարկելու հնարավորությունից, ընդ որում՝ կախված այն հանգամանքից, թե սնանկության վարույթի որ փուլում է պարտապանը վիճարկում պարտատիրոջ պահանջի հիմքերը՝ սնանկության գործի քննության ընթացքը ստանում է այլ ելք, մասնավորապես.

1. այն դեպքում, երբ պարտապանը դատական կարգով վիճարկում է վճարային պարտավորության հիմքում դրված վճիռը, դատավճիռը, գործարքը կամ վարչական ակտը **պարտապանին սնանկ ճանաչելու հարցի քննության փուլում**, այսինքն՝ դատավարական նորմերին համապատասխան ապացուցում է, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի, ապա տվյալ պարագայում պահանջը, ըստ էության, **դառնում է վիճելի, որպիսի պայմաններում բավարար հիմքերի առկայության դեպքում դատարանը կարող է մերժել սնանկության դիմումը**,

2. այն դեպքում, երբ պարտապանը դատական կարգով վիճարկում է վճարային պարտավորության հիմքում դրված վճիռը, դատավճիռը, գործարքը կամ վարչական ակտը պահանջատիրոջ կողմից **պահանջի քննության փուլում**, ապա տվյալ պարագայում կիրառելի են **Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորումները**,

3. այն դեպքում, երբ պարտապանի կողմից վիճարկվում է **արդեն իսկ գրանցված պահանջի** հիմքում ընկած վճիռը, դատավճիռը, գործարքը կամ վարչական ակտը, ապա տվյալ պարագայում պարտապանի **արդար դատաքննության իրավունքի իրացումը չպետք է խոչընդոտի սնանկության վարույթի այլ մասնակիցների ողջամիտ ժամկետներում արդար դատաքննության իրավունքի իրացմանը**:

Թեև պարտապանն ինքն է ընտրում իր իրավունքի իրացման ժամանակը, սակայն դա չի կարող բացասական հետևանքներ ունենալ սնանկության վարույթի այլ մասնակիցների վրա, առավել ևս այն պայմաններում, երբ պարտապանը երբևէ զրկված չի եղել իրացնել տվյալ իրավունքը: Բացի դրանից, քննարկվող փուլում սնանկության վարույթի կասեցման հնարավորությունն նախատեսվելու դեպքում օրենսդրորեն հնարավորություն է ընձեռվելու պարտապաններին արհեստականորեն ձգձգել սնանկության գործի քննությունը՝ կասեցնելով դրա ամբողջ ընթացքը կամ սնանկության գործով կառավարչի գործողությունները: Ավելին, տվյալ փուլում պարտատիրոջ պահանջի հիմքերը վիճարկելը և սնանկության գործի վարույթը կասեցնելու ցանկությունն ինքնին կարող են վկայել պարտապանի՝ գործի քննությունը հետաձգելու, գույքի վաճառքը կասեցնելու, պարտատիրոջ պահանջի բավարարումը սառեցնելու և այլ ոչ իրավաչափ նպատակների մասին:

Ավելին, օրենսդիրն Օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով հնարավորություն է ընձեռել ոչ միայն պարտապանին, այլև սնանկության գործով կառավարչին և պարտատերերին յոթնօրյա ժամկետում գրավոր առարկություն ներկայացնել պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, որն օրենքով սահմանված կարգով քննության առարկա է դառնում Սնանկության դատարանում: Հիշյալ փուլում ևս պարտապանը կարող է այլ դատարանում վիճարկել պարտատիրոջ պահանջի հիմքերը, որպիսի պայմաններում պարտապանի արդար դատաքննության իրացման համար օրենսդրական ընթացակարգերն ու կառուցակարգերը երաշխավորվում են:

Նման պայմաններում, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորումն արդար դատաքննության և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ենթադրյալ հակասության երաշխավորման տեսանկյունից սահմանադրականության խնդիր չի առաջացնում:

4.3. Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասը հոչակում է.

«1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը»:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերը հոչակում են.

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: (...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի»:

4.3.1. Սահմանադրության 10-րդ հոդվածի ուժով սահմանադիրը ոչ միայն ճանաչում է սեփականության իրավունքը, այլև շեշտադրում պետության պարտավորությունը՝ ապահովել տվյալ իրավունքի արդյունավետ պաշտպանությունը և երաշխավորել տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը: Սահմանադրության 10-րդ հոդվածի տրամաբանությամբ Սահմանադրության 60-րդ հոդվածն ամրագրում է սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող այն իրավագործությունների ամբողջությունը, որոնք պատկանում են սեփականատիրոջը՝ որպես սեփականության սուբյեկտիվ իրավունքի կրողի՝ այդպիսով ուրվագծելով խնդրո առարկա սահմանադրական իրավունքի իրականացման սահմանները:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում բացահայտել և պարզաբանել է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունն ու բնույթը, մասնավորապես՝ 2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշմամբ արձանագրել է, որ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավագործությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով սեփականատիրոջ հայեցողությունը: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն:

Սահմանադրական դատարանը, 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման շրջանակում անդրադառնալով սեփականության իրավունքի թույլատրելի սահմանափակումներին, նշել է. «Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այն կարող է, նախ՝ իրականացվել օրենքով նախատեսված դեպքերում բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Երկրորդ՝ «սեփականության օտարման» միջոցով, որը «սեփականության զրկումից» էապես տարբեր այլ ինստիտուտ է և պետք է իրականացվի Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի հիմքերով»:

Հիշատակված ՍԴՈ-1009 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սեփականության իրավունքի թույլատրելի սահմանափակման նշված երկու դեպքերի համար բնորոշ ընդհանրական տարրն այն է, որ երկու դեպքում էլ սեփականատիրոջ հայեցողությունը, կամքն այլևս առաջնային

և վճռորոշ չեն, քանի որ այս դեպքերում առաջնայնություն են ստանում տվյալ իրավիճակում պաշտպանության նախապատվություն ունեցող այլ շահեր:

Սահմանադրական դատարանը փաստել է նաև. «...Սահմանադրությունը թույլատրում է բացառապես երկու դեպք, այն է՝ 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերը, երբ սեփականատիրոջ կամքն առաջնային չէ, և սեփականության իրավունքի իրացումը չի բխում սեփականատիրոջ հայեցողությունից: Հետևաբար, ցանկացած այլ դեպքում սեփականության իրավունքի իրացման գործընթացում միջամտությունը սեփականատիրոջ հայեցողությանը, սեփականատիրոջ գույքի տնօրինումն առանց այդ հայեցողության հստակ արտահայտման և դրսևորման չի կարող համարվել իրավաչափ և կհանդիսանա սեփականության իրավունքի խախտում»:

Սահմանադրական դատարանը 2010 թվականի հուլիսի 13-ի ՄԴՈ-903 որոշմամբ սահմանել է. «ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականագրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար»:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է նաև իրավական դիրքորոշումներ *«սեփականությունից զրկելու»* ինստիտուտի առնչությամբ (ՄԴՈ-903, ՄԴՈ-1073, ՄԴՈ-1142): Մասնավորապես, վերոգրյալ ՄԴՈ-903 որոշման մեջ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով *«սեփականությունից զրկելու»* բնութագրիչ տարրերին, մասնավորապես արձանագրել է. «... սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ են հետևյալ հիմնական պարտադիր տարրերը.

- *սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում,*

- *սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,*

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավագործությունների միաժամանակյա և լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման»:

4.3.2. Մնանկության իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ նախատեսվում են սեփականության իրավունքի իրավաչափ միջամտության առանձին դրսևորումներ: Նման իրավակարգավորումը պայմանավորված է այն օբյեկտիվ հանգամանքով, որ սնանկության վարույթը հարուցվում է պարտավորական իրավահարաբերությունների մասնակիցների կողմից իրենց ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով, որպիսի պայմաններում վերջիններս պատասխանատվություն են կրում իրենց գույքով:

Սահմանադրական դատարանը կարևորում է սնանկության ինստիտուտի դերը տնտեսական իրավահարաբերությունների կայունության, տնտեսվարող սուբյեկտների կողմից իրենց պարտավորությունների պատշաճ կատարման երաշխավորման տեսանկյունից: Միաժամանակ, սնանկության վարույթի առջև դրված խնդիրների կենսագործման նպատակով օրենսդրի կողմից ներդրվել են համապատասխան իրավական կառուցակարգեր, որոնք առանձին դեպքերում սահմանափակում են սնանկության վարույթի մասնակիցների, և հատկապես՝ պարտապանի, սեփականության իրավունքը:

Սահմանադրական դատարանը 2017 թվականի հունվարի 31-ի ՍԴՈ-1340 որոշմամբ արձանագրել է. «... ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, ըստ որի՝

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, որից բխում է, որ օրենքը պետք է բավարարի իրավական օրենքին ներկայացվող՝ Սահմանադրական դատարանի որոշումներում բազմիցս արտացոլված, պահանջները,

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

- սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ նշված պայմանների աուկայությունն անհրաժեշտ է իրավունքն իրավաչափորեն սահմանափակելու համար»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման հիմնախնդրին, արձանագրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, հռչակելով սեփականության իրավունքը, միաժամանակ նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն ի շահ հանրության, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով, և ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար (Beyeler v. Italy, judgment 5 January 2000, §98, §107; Sporrang and Lonroth v. Sweden, judgment of 23 September 1982, §61, §69): James and others v. The United Kingdom գործով (Application no. 8793/79, 21.02.1986) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ մասնավոր անձանց պայմանագրային և գույքային իրավունքները կարգավորող իրավական համակարգի արդարությունը հանրային խնդիր է, և հետևապես, այդպիսի արդարություն հաստատելուն ուղղված օրենսդրական միջոցները կարող են համարվել «ի շահ հանրության», նույնիսկ եթե դրանք ներառում են սեփականության իրավունքի հարկադիր փոխանցում մեկ անհատից մյուսին, իսկ Handyside v UK գործով (Application no. 5493/72, 07.12.1976) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է սահմանափակվի միջամտության օրինականության և նպատակահարմարության վերահսկմամբ:

Գործող իրավակարգավորումները թույլ են տալիս Սահմանադրական դատարանին արձանագրել, որ սնանկության վարույթն ինքնին պարտապանի սեփականության իրավունքի իրացման նկատմամբ պետության օրինական վերահսկողության սահմանման ընթացակարգ է, որի շրջանակներում օրենսդիրը թույլատրում է կիրառել որոշակի սահմանափակումներ: Ավելին, դատարանի որոշմամբ պարտապանի նկատմամբ գործունեության դադարեցման վարույթ սկսելուց հետո պարտապանի գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքները կասեցվում են: Ստացվում է՝ սնանկության վարույթի հարուցման փուլից սկսած մինչև պարտապանի գույքի վաճառքի փուլն օրենսդիրը նախատեսում է պարտապանի սեփականության իրավունքի որոշակի սահմանափակումների իրավական համապատասխան մեխանիզմներ, իսկ գույքի վաճառքի փուլում՝ սեփականությունից զրկման ինստիտուտի կիրառում՝ իբրև պատասխանատվության միջոց:

Սույն գործով դիմող Չոյա Վարդանի Մկրտչյանը, հաշվառվելով որպես անհատ ձեռնարկատեր, ինքնուրույն, իր ռիսկով իրականացրել է ձեռնարկա-

տիրական գործունեություն, ուստի ստանձնած պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով:

Գործում առկա դատավարական փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դատարանի որոշմամբ պարտապանի նկատմամբ սկսվել է գործունեության դադարեցման վարույթ, ինչը ենթադրում է, որ կասեցվել են պարտապանի գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքները, որպիսի ընթացակարգի նպատակը պարտապանի գույքի վաճառքի գործընթաց սկսելու օրենսդրի իրավաչափ նպատակն է:

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճը հանգում է սնանկության վարույթն ամբողջությամբ կամ պահանջի բավարարմանն ուղղված գործողությունները կասեցնելու իրավական մեխանիզմների բացակայության խնդրին, որպիսի պայմաններում, դիմողի պնդմամբ, սահմանափակվում է պարտապանի սեփականության իրավունքը, իսկ պարտապանի գույքի վաճառքի դեպքում՝ հանգեցնելու է նաև վերջինիս սեփականությունից զրկելուն, մինչդեռ առկա իրավակարգավորումները թույլ են տալիս եզրակացնել, որ Սնանկության դատարանի որոշմամբ պարտատիրոջ պահանջի հաստատումից հետո պահանջի հիմքերը վիճարկելն ինքնին վկայում է պարտապանի կողմից հետապնդվող ոչ իրավաչափ նպատակի մասին, ուստի համապատասխան օրենսդրական կառուցակարգերի բացակայությունը որևէ կերպ չի կարող դիտարկվել իբրև պարտապանի սեփականության իրավունքի խախտում: Ավելին, պարտապանը պարտատիրոջ պահանջի քննության փուլում զրկված չէ ինչպես սնանկության դատարանում առարկություն ներկայացնելու հնարավորությամբ պահանջի գրանցման դեմ, այնպես էլ այլ դատարանում վիճարկելու պահանջի հիմքերը, որպիսի պայմաններում, բնականաբար, քանի դեռ առկա չի լինի օրինական ուժի մեջ մտած համապատասխան դատական ակտ, պարտատիրոջ պահանջի կատարմանն ուղղված որևէ գործողություն, այդ թվում՝ պարտապանի գույքի վաճառք, չի կարող իրականացվել:

Վերոշարադրյալի հիման վրա, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սնանկության վարույթի ամբողջական կամ առանձին պահանջի կատարման գործողությունների կասեցման օրենսդրական հիմքերի բացակայությունը, քննության առարկա հարցի համատեքստում սեփականության իրավունքի երաշխավորման տեսանկյունից խնդրահարույց չէ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

23 սեպտեմբերի 2021 թվականի
ՍԴՈ-1610



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 317-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 337-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 սեպտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Կ. Հովհաննիսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետ Գ. Աթանեսյանի և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 3(103)2021

հողվածի 2-րդ մասի և 337-րդ հողվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

Օրենսգրքի՝ «Անվավեր գործարքներով հայցային վաղեմության ժամկետները» վերտառությամբ 317-րդ հողվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել, եթե գործարքը կնքվել է բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ, դրա դադարման օրվանից (313 հողվածի 1-ին կետ) կամ այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին»:

Օրենսգրքի՝ «Հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը» վերտառությամբ 337-րդ հողվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով»:

Ընդունման պահից ի վեր Օրենսգրքի 317 և 337-րդ հողվածները չեն փոփոխվել:

Գործի քննության առիթը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ դիմող) 2021 թվականի ապրիլի 8-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում ամկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրոյթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Չ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

«ԴՎին Հոլդինգ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Վարկառու») «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») հետ 02.10.2007թ. կնքված թիվ 132 վարկային պայմանագրի, 21.01.2009թ. կնքված չծածկված ակրեդիտիվի թիվ 2 պայմանագրի և 27.03.2009թ. կնքված չծածկված ակրեդիտիվի թիվ 3 պայմանագրի համաձայն՝ 08.05.2009թ. դրությամբ Բանկի նկատմամբ ունեցել է պարտք՝ ընդհանուր առմամբ 2, 153, 832.36 ԱՄՆ դոլարի չափով:

Վարկառուի՝ Բանկից այլ վարկային պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումն ապահովված է եղել, ի թիվս այլոց, «Դվին Կոնցեռն» ՓԲԸ-ին (այսուհետ՝ «Գրավատու») պատկանող մի շարք հասցեներում գտնվող անշարժ գույքերի (այսուհետ՝ «Գույքեր») գրավով:

Հաշվի առնելով Վարկառուի մոտ Բանկի նկատմամբ կուտակված ժամկետանց վարկային պարտավորությունները՝ 11.05.2009թ. Բանկի, Գրավատուի և Վարկառուի միջև ստորագրվել է հրաժարագնով պարտավորության դիմաց գույքի հանձնման պայմանագիր (այսուհետ՝ Հրաժարագնի պայմանագիր), որով Գրավատուն Բանկին որպես հրաժարագին սեփականության իրավունքով փոխանցել է Գույքերը և նշված հրաժարագնի դիմաց Բանկը համաձայնվել է մարված համարել Վարկառուի՝ թիվ 132 վարկային պայմանագրից և չձածկված ակրեդիտիվի թիվ 2 և թիվ 3 պայմանագրերից բխող պարտավորությունները:

30.06.2011թ. Գրավատուի որոշ բաժնետերեր (այսուհետ՝ «Հայցվորներ») հայցով դիմել են դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել Հրաժարագնի պայմանագիրը: Բանկը դատարանին ներկայացրել է դիմում՝ հայցային վաղեմության ժամկետի կիրառման մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԿԴ/1397/02/11 քաղաքացիական գործով ներկայացված սկզբնական և հակընդդեմ հայցերը, 2018 թվականի մարտի 27-ին վճռել է սկզբնական հայցը և հակընդդեմ հայցը բավարարել մասնակի, իսկ թիվ ԵԿԴ/1397/02/11 քաղաքացիական գործի վարույթը՝ «Երևանի Կաշվե Գալանտերեայի Ֆարբիկա» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, ք. Երևան, Թևոսյան փող. թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքը հոգուտ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի գրավադրված ճանաչելու հակընդդեմ հայցապահանջի մասով, կարճել: Հայցը և հակընդդեմ հայցը մնացած մասերով մերժել: 27.03.2018թ. կայացված վճռով ընդհանուր իրավասության դատարանը մերժել է հայցային վաղեմության ժամկետի կիրառումը:

Այնուհետև, Բանկը նշված վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2018 թվականի սեպտեմբերի 26-ին որոշել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության և «Ֆրեդեքս Սերվիսիզ» ՓԲ ընկերության ներկայացրած վերաքննիչ բողոքները մերժել: «Դվին Կոնցեռն» ՓԲ ընկերության ներկայացրած վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 27.03.2018թ. թիվ ԵԿԴ/1397/02/11 վճիռը՝ մի մասով բեկանել և փոփոխել, իսկ մնացած մասով՝ թողնել անփոփոխ:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման դեմ Բանկի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: Վճռաբեկ դատարանը 2020 թվականի հոկ-

տեմբերի 8-ին որոշել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը մերժել և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.09.2018թ. որոշումը թողնել օրինական ուժի մեջ հետևյալ պատճառաբանությամբ. «... ստորադաս դատարանների եզրահանգումները հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասով իրավաչափ են, քանի որ պատասխանող կողմը, վկայակոչելով հայցային վաղեմության կիրառման հիմքերը, չի ներկայացրել անհրաժեշտ ապացույցներ, որոնք կարող էին հաստատել հայցվորների կողմից իրենց իրավունքի խախտման մասին հավաստի կերպով իմանալու կամ իմացած լինելու փաստը: Այսինքն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատասխանող կողմը որևէ կերպ չի հիմնավորվել, որ հայցվորները իմացել էին վիճարկվող գործարքներն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին:

(...)

... Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ևս մեկ անգամ նշել, որ «Պետք է իմացած լինել», ինչպես և «իմացել է» օրենսդրական եզրույթները ձևակերպելիս օրենսդիրը կարևորել է հայցային վաղեմության ընթացքը սկսվելու հարցում հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու հանգամանքը:

(...)

... Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենքով չնախատեսված պարտականությունները չկատարելու բացասական հետևանքները չեն կարող ազդել բաժնետերերի՝ օրենքով սահմանված իրավունքների վրա, մասնավորապես՝ չեն կարող գրկել հայցվորներին դատական պաշտպանության իրավունքից՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով»:

2. Գիմողի դիրքորոշումները

Գիմողը նշում է, որ ՀՀ քաղաքացիական իրավունքում հայցային վաղեմության ինստիտուտը նախատեսված է քաղաքացիական շրջանառության կայունության ապահովման համար: Օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասը հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը կապում է ոչ թե իրավունքի խախտման օրվա հետ (այսպես կոչված «օրյեկտիվ չափանիշ»), այլ այն օրվա հետ, երբ հայցվորն «իմացել է կամ պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին» (այսպես կոչված «սուբյեկտիվ չափանիշ»): Նմանապես, գործարքի անվավերության հայցերով, Օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը կապում է այն օրվա հետ, «երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին»:

Դիմողը կարծում է, որ Օրենսգրքի՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբին վերաբերող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին և տեղիք են տալիս դրանց տարաբնույթ մեկնաբանման համար: Ըստ դիմողի՝ Օրենսգրքի «պետք է իմացած լիներ» և «պարտավոր էր իմանալ» սուբյեկտիվ չափանիշներն ունեն նույն՝ «պետք է իմանար» իմաստը:

Դիմողի համոզմամբ՝ «պետք է իմացած լիներ» և «պարտավոր էր իմանալ» պայմանները պետք է մեկնաբանվեն որպես՝ «ունեին իմանալու համար հիմք և օբյեկտիվ հնարավորություն»: Հարցը, թե երբ հայցվորը պետք է իմանար («պետք է իմացած լիներ»/«պարտավոր էր իմանալ») իր իրավունքի խախտման մասին, պետք է որոշվի դատարանի կողմից՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և ելնելով քաղաքացիական շրջանառության յուրաքանչյուր մասնակցի՝ իր գույքի նկատմամբ ողջամիտ հոգատարություն ցուցաբերելու հարցում շահագրգռված լինելու կանխավարկածից: Եթե պարզվի, որ հայցվորն իր իսկ անհոգ վերաբերմունքի պատճառով ժամանակին չի իմացել իր իրավունքի խախտման մասին, ապա հայցային ժամկետի ընթացքը պետք է սկսված համարվի այն պահից, երբ, ըստ գործի հանգամանքների, հայցվորը պետք է ողջամտորեն իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին, եթե նա չցուցաբերեր անհոգ վերաբերմունք:

Դիմողը գտնում է, որ վաղեմության ժամկետին վերաբերող Օրենսգրքի դրույթների՝ Վճռաբեկ դատարանի որոշ որոշումներում կատարված մեկնաբանությունները, որոնք դիտվում են որպես նախադեպային նշանակություն ունեցող, հակասում են այդ դրույթներում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությանը, Օրենսգրքի կարգավորման համատեքստին և Սահմանադրության սկզբունքներին և նպատակներին: Ըստ դիմողի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները ոչ թե նպաստում են իրավական որոշակիության ապահովմանը, այլ ստեղծում են լրացուցիչ անորոշություն:

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-630, ՍԴՈ-753, ՍԴՈ-1176, ՍԴՈ-1270, ՍԴՈ-983, ՍԴՈ-1271 որոշումները՝ դիմողն արձանագրում է, որ Օրենսգրքի՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբին վերաբերող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, ուստիև տարաբնույթ մեկնաբանման տեղիք են տալիս:

Դիմողը փաստում է, որ թիվ ԵԿԴ/1397/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 8-ին կայացված որոշումը, ոչ թե նպաստում է իրավական որոշակիության ապահովմանը, այլ ստեղծում է լրացուցիչ իրավական անորոշություն: Վճռաբեկ դատարանը խնդրո առարկա որոշմամբ արձանագրել է, որ այն դեպքում, երբ վիճող կողմը

դիմում է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանների օրակարգային խնդիրն է դառնում պարզել այն իրական ժամանակահատվածը, երբ հայցվորը հետամուտ է եղել իր իրավունքների դատական կարգով պաշտպանությանը, մինչդեռ դիմողի գնահատմամբ դատարանների օրակարգային խնդիրը պետք է դառնա՝ պարզել այն օրը, երբ հայցվորն «իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին»:

Դիմողը կարծում է, որ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն առ այն, որ օրենսդիրը գործածել է «իմացել է» և «պետք է իմացած լիներ» արտահայտությունները, որոնց տառացի մեկնաբանությունը հանգեցնում է այն հետևության, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու համար անհրաժեշտ է, որ հայցվորը հաստատապես իմանա կամ իմացած լինի իր իրավունքի խախտման մասին, սխալ է և հակասում է այդ արտահայտությունների տառացի նշանակությանը, քանզի Վճռաբեկ դատարանի մեկնաբանությամբ առաջարկված «անհրաժեշտ է, որ հայցվորը հաստատապես իմանա» և «անհրաժեշտ է, որ հայցվորը հաստատապես իմացած լինի իր իրավունքի խախտման մասին» պայմանները նույնական են, իսկ վերջին արտահայտությունը չի արտացոլում օրենսդրի կողմից գործածված «պետք է իմացած լիներ» արտահայտության տառացի նշանակությունը:

Դիմողն իր անհամաձայնությունն է հայտնում Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշմանը, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը չի կարող սկսվել, եթե հայցվորին հասանելի տեղեկությունները նրան թույլ տան եզրակացնել միայն իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին, քանզի կարծում է, որ այն բավարար որոշակի չէ, քանի որ այն համատեքստում, որում այն արտահայտվել է, հնարավոր չէ գալ միանշանակ եզրահանգման, թե արդյոք «հայցվորին հասանելի տեղեկությունները» ներառում են այն տեղեկությունները, որոնք օրենքի կամ պայմանագրի համաձայն ժամանակ առ ժամանակ հասանելի են դառնում հայցվորին, կամ այնպիսի տեղեկությունները, որոնք հայցվորը կարող է ստանալ, եթե պահանջի դրանք՝ իր իրավունքի հնարավոր խախտման մասին ողջամիտ կասկած ունենալու պարագայում:

Դիմողն ակնհայտ սխալ է համարում Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն առ այն, որ «պետք է իմացած լիներ» ձևակերպմամբ, ինչպես և «իմացել է» ձևակերպման պարագայում, օրենսդիրը կարևորել է հայցային վաղեմության ընթացքն սկսվելու հարցում հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու հանգամանքը, քանզի օրենսդրի կողմից սահմանված խնդրո առարկա արտահայտություններն ունեն միմյանցից տարբերվող տառացի նշանակություն:

Դիմողի պնդմամբ՝ Վճռաբեկ դատարանի եզրահանգումն այն մասին, որ օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու իրավական

հետևանքը պայմանավորել է հայցվորի կողմից ոչ թե իր իրավունքի խախտման մասին ենթադրելու հնարավորությամբ, այլ այդ խախտման մասին հավաստի կերպով իմանալու կամ իմացած լինելու փաստերով, չի համապատասխանում օրենքի նպատակին և հակասում է դրա տառացի նշանակությանը:

Վկայակոչելով թիվ ԵԱՔԴ/4524/02/15 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը և մեկնաբանելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի իրավակարգավորումները՝ դիմողը նշում է. դատարանները համարում են, որ բաժնետիրական ընկերության կողմից օրենքով սահմանված որոշակի պարտավորություններ չկատարելը չի խախտում բաժնետերերի իրավունքները, եթե դրա մասին ուղղակիորեն նշված չէ օրենքում:

Դիմողը խնդրում է՝ «(1) ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 59-րդ, 61-րդ, 75-րդ, 76-րդ հոդվածներին հակասող ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի «պետք է իմացած լինեք» արտահայտությունը նշանակում է «պետք է հաստատապես իմացած լինի», (2) ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 59-րդ, 61-րդ, 75-րդ, 76-րդ հոդվածներին հակասող ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը՝ այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի «պարտավոր էր իմանալ» արտահայտությունը նշանակում է «պետք է հաստատապես իմացած լինի», (3) ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 59-րդ, 61-րդ, 75-րդ, 76-րդ հոդվածներին հակասող ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասը և 317-րդ հոդվածի 2-րդ մասը՝ այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի «պետք է իմացած լինեք» և «պարտավոր էր իմանալ» արտահայտություններն ունեն տարբեր նշանակություն»:

Ի լրումն դիմումի՝ դիմողը ներկայացրել է գրավոր բացատրություն, որում ներկայացրել է ինչպես պատասխանողի բացատրությունների դեմ իր առարկությունները, այնպես էլ իր պահանջը հիմնավորող լրացուցիչ բացատրություններ՝ վերահաստատելով իր դիրքորոշումն առ այն, որ վիճարկվող դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, հակասում են իրավական որոշակիության սկզբունքին:

Վկայակոչելով Սահմանադրության 61-րդ հոդվածը՝ միաժամանակ խնդրել է դիմումի խնդրամասում Սահմանադրության այլ հոդվածներին կատարված հղումներն անտեսել:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը նշում է, որ դիմողը վիճարկվող դրույթները դիտարկել և վերլուծել է իրավական որոշակիության տեսանկյունից, մինչդեռ խնդրել է

դրանք հակասող ճանաչել Սահմանադրության 1-ին, 3-րդ (մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները), 10-րդ (սեփականության երաշխավորումը), 59-րդ (տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը), 61-րդ (դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը), 75-րդ (հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը), 76-րդ (հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ) հոդվածներին: Պատասխանողը նշում է, որ դիմողը որևէ կերպ չի հիմնավորել, թե վիճարկվող դրույթներն ինչպես են հակասում Սահմանադրության վկայակոչված հոդվածներին, ուստի հարկ չի համարում անդրադառնալ այդ հոդվածներին:

Հիմք ընդունելով Սահմանադրության 79-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 333-րդ, 317-րդ, 337-րդ հոդվածները, վկայակոչելով Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերաբերելի որոշումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռները՝ պատասխանողը պնդում է, որ Օրենսգրքի վիճարկվող իրավանորմերը համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքին և իրավակիրառ պրակտիկայում տարբերությունների տեղիք չեն տալիս:

Ըստ պատասխանողի՝ Օրենսգրքի 337-րդ հոդվածի մասով օրենսդրի կարգավորումը բխում է այն տրամաբանությունից, ըստ որի՝ եթե անձն իր իրավունքի խախտման մասին չիմանա, ապա չի էլ կարող ձեռնամուխ լինել որևէ եղանակով՝ այդ թվում և հայց հարուցելու միջոցով իր խախտված իրավունքի պաշտպանությանը: Ընդ որում, հայցային վաղեմության ժամկետի ընթացքի մեկնարկի երկու նախապայմանների դեպքում էլ օրենսդիրը գործածել է «իմացել է» և «պետք է իմացած լիներ» արտահայտությունները, որոնց տառացի մեկնաբանությունը հանգեցնում է այն հետևության, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու համար անհրաժեշտ է, որ հայցվորը հաստատապես իմանա կամ իմացած լինի իր իրավունքի խախտման մասին:

Վերոգրյալից բխում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը չի կարող սկսվել, եթե հայցվորին հասանելի տեղեկությունները նրան թույլ տան եզրակացնել միայն իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին: Իրավակիրառ պրակտիկայում շահագրգիռ անձը դատական պաշտպանության իր իրավունքն իրացնում է այն դեպքում, երբ համոզված է իր իրավունքի հաստատապես խախտման հարցում: Այլ կերպ ասած՝ շահագրգիռ անձը պետք է համոզված լինի իր իրավունքի խախտման հարցում՝ անկախ նրանից, թե իրակա-

նում իրավունքի խախտում տեղի ունեցել է, թե ոչ, ինչը դատարանի գնահատման առարկա է: Ըստ պատասխանողի՝ Օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդրի կողմից կիրառված «պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին» արտահայտությունը չպետք է սխալմամբ մեկնաբանվի այնպես, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կարող է սկսվել հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին ենթադրելու հնարավորություն ունենալու օրվանից, ընդհակառակը՝ «պետք է իմացած լիներ» ձևակերպմամբ, ինչպես և «իմացել է» ձևակերպման պարագայում օրենսդիրը կարևորել է հայցային վաղեմության ընթացքն սկսվելու հարցում հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին իմանալու հանգամանքը:

Պատասխանողի կարծիքով՝ դիմողն Օրենսգրքի համապատասխան նորմերի սահմանադրականությունը վիճարկում է ոչ թե նորմերի և Սահմանադրության միջև ենթադրյալ հակասության համատեքստում, ինչը Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների համար պարտադիր պայման է, այլ դիմողի ներկայացված պնդումներն իրականում ուղղված են վիճարկվող նորմերին դատարանների տրված մեկնաբանությանը: Այսինքն, դիմողը, ձևականորեն բարձրացնելով իրավական նորմի սահմանադրականության հարց, իրականում առաջ է քաշում իրավանորմի կիրառման իրավաչափության հարց:

Ըստ պատասխանողի՝ օրենսդրի կողմից կարևորվել է նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտների վարքագիծը: Այդ իսկ պատճառով, Օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվել է նաև «պետք է իմացած լիներ» նախապայմանը, որը կիրառելի է այն դեպքերի համար, երբ հայցվորն իր իրավունքի խախտված լինելու մասին ունի որոշակի, սակայն դատարան պատշաճ հայց հարուցելու համար ոչ բավարար տեղեկություններ: Այդ դեպքում նա պարտավոր է ձեռնարկել իրենից կախված բոլոր ողջամիտ միջոցները՝ պարզելու, թե իր իրավունքի խախտում իրականում տեղի է ունեցել, թե՛ ոչ: Եթե հայցվորն ունի իր իրավունքի խախտված լինելու մասին որոշակի, բայց ոչ բավարար տեղեկություններ և չի ձեռնարկում ողջամիտ միջոցներ՝ պարզելու խախտման իրականում տեղի ունեցած լինելու հանգամանքը, ապա կրում է իր խախտված իրավունքը դատական կարգով վերականգնել չկարողանալու ռիսկը:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին և 317-րդ հոդվածի 2-րդ մասերի այնպիսի մեկնաբանության հակասահմանադրականությանը, համաձայն որի՝ «պետք է իմացած լիներ» և «պարտավոր էր իմանալ» արտահայտություններն ունեն տարբեր նշանակություն, պատասխանողն ընդգծում է, որ դիմողն ինքն է նշում, որ. «ինչպես վկայում է սույն դիմումի կետ 1.11 (22)-ում կատարված մեջբերումը, ՀՀ վճռաբեկ դատարանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասում գործածված «պարտավոր

էր իմանալ» արտահայտությունը նույնպես մեկնաբանում է որպես «պետք է հաստատապես իմանար», ուստի այս մասով ևս Դիմողի պահանջն անհիմն է»:

Պատասխանողի համոզմամբ սույն գործով առկա են գործի վարույթը կարճելու հիմքեր, քանզի դիմողն Օրենսգրքի համապատասխան նորմերի սահմանադրականությունը վիճարկում է ոչ թե տվյալ նորմերի և Սահմանադրության միջև ենթադրյալ հակասության համատեքստում, այլ դիմողի ներկայացրած պնդումներն իրականում ուղղված են վիճարկվող նորմին դատարանների տված մեկնաբանությանը: Այդպիսով, դիմողը, ձևականորեն բարձրացնելով իրավական նորմի սահմանադրականության հարց, առաջ է քաշում իրավանորմի կիրառման իրավաչափության խնդիր:

Պատասխանողը խնդրում է գործի վարույթը կարճել կամ քննության առարկա վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչել:

4. Սահմանադրաիրավական վեճի շրջանակները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճը հանգում է վիճարկվող իրավադրույթների սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականության, այդ պրակտիկայում նշված նորմերի՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխանող մեկնաբանության և կիրառման հանգամանքի գնահատմանը:

5. Գործի շրջանակում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթների և դրանց կիրառման պրակտիկայի սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) ո՞րն է հայցային վաղեմության իրավական ինստիտուտի գործառույթային առաքելությունը և դրանով պայմանավորված վիճարկվող դրույթների սահմանադրական իրավական բովանդակությունն ու նշանակությունը,

2) արդյո՞ք վիճարկվող դրույթների վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում առկա մեկնաբանությունը հանգեցրել է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների, այդ թվում՝ սեփականության, տնտեսական գործունեության ազատության, դատական պաշտպանության իրավունքների խախտման,

3) ո՞րն է վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական կարգավորումներից բխող բովանդակությունը և արդյո՞ք իրավակիրառ պրակտիկայում

վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունը համապատասխանում է Սահմանադրությանը,

4) որո՞նք են առևտրային իրավաբանական անձանց մասնակիցների հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման հարցում օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշների գնահատման առանձնահատկությունները՝ նրանց բարեխղճության կանխավարկածի համատեքստում:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը սույն գործով քննության առարկա է համարում Օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասի և 337-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը Սահմանադրության 59, 60, 61 և 75-րդ հոդվածներին:

6. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

6.1. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում առաջին հերթին վեր հանել հայցային վաղեմության ինստիտուտի գործառությանիկարգավորիչ նշանակությունը, որով և պայմանավորված է այդ ինստիտուտի սահմանադրական իրավական նշանակությունը:

Սեփականության իրավունքի և քաղաքացիական ու ձեռնարկատիրական շրջանառության պաշտպանության շահերը նախորոշում են իրավական կարգավորման կառուցակարգում ներմուծել իրավադրույթներ, որոնք կողմերից մեկին հնարավորություն են տալիս արգելակել վեճի ըստ էության դատական լուծումը, եթե մյուս կողմը դիմել է իր իրավունքների պաշտպանությանն այն պահից բավական երկար ժամանակ հետո, երբ իրեն հայտնի է դարձել իր իրավունքի խախտման մասին: Քաղաքացիական օրենսդրության մեջ դա է հայցային վաղեմության առաքելությունը:

Այս համատեքստում առաջին հերթին անհրաժեշտ է արձանագրել, որ հայցային վաղեմության ինստիտուտն ինքնին ուղղված է քաղաքացիական շրջանառության մեջ սեփականության, տնտեսական գործունեությանը զբաղվելու, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքներին և մյուս սահմանադրական արժեքներին առնչվող քննարկված նպատակների երաշխավորմանն ու դրա միջոցով քաղաքացիական շրջանառության կայունության, իրավահարաբերությունների որոշակիության, դրանց մասնակիցների բարեխղճության, իրավունքների պաշտպանության գործիքակազմերի բարեխիղճ օգտագործման, արդյունքում նաև՝ իրավահարաբերությունների ոչ թե մեկ, այլ բոլոր սուբյեկտների հիմնարար իրավունքների պաշտպանության ապահովմանը: Նշված նպատակները բացառիկ կարևորություն ունեն իրավական պետության կայացման տեսանկյունից և պետք է ընկած լինեն հայցային վաղեմությանն առնչվող ցանկացած իրավակարգավորման և իրավակիրառական պրակտիկայի հիմքում: Այդ հանգամանքը ստացել է ոչ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ ♦ 3(103)2021

միայն դոկտրինալ ձևակերպում, այլ արձանագրվել է նաև այլ երկրների արդարադատական պրակտիկայում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքին առնչվող դիրքորոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ վաղեմության ժամկետները «ծառայում են մի քանի կարևոր նպատակների, որոնցից են՝ իրավական որոշակիության և վերջնականության ապահովումը, հնարավոր պատասխանողներին հնացած և հետևաբար դժվարությամբ վիճարկելի պահանջներից պաշտպանությունը, անարդար որոշումների նախականիումն այն դեպքերում, երբ դատարանից պահանջվի լուծել պահանջը վաղ անցյալում տեղի ունեցած փաստերի հաստատման միջոցով և այնպիսի ապացույցներով, որոնք զգալի ժամանակ անցնելու պատճառով այլևս անարժանահավատ կամ ոչ ամբողջական են դարձել» (Մթաբինգսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 22083/93 և 22095/93 դիմումներ, կետ 51, 1996 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռ, ինչպես նաև Կոեմեն և այլոք ընդդեմ Բելգիայի, թիվ 32492/96 և 4 այլ դիմումներ, 146 կետ, 2000 թվականի հունիսի 22-ի վճիռ):

Այսպիսով, հայցային վաղեմության ինստիտուտի նպատակն է կանոնակարգել քաղաքացիական շրջանառությունը, ստեղծել իրավական կապերի որոշակիություն ու կայունություն, ապահովել իրավահարաբերության մասնակիցների կարգապահությունը, նպաստել պայմանագրերի կատարմանը, ապահովել քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների իրավունքների և շահերի ժամանակին պաշտպանությունը: Խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար ողջամիտ ժամանակային սահմանափակումների բացակայությունը կհանգեցնեք պատասխանողների և երրորդ անձանց իրավունքների ու շահերի խախտման, որոնք միշտ չէ, որ նախապես կարող էին հաշվի առնել գործի քննության համար նշանակություն ունեցող տեղեկությունների և փաստերի հավաքման ու պահպանման անհրաժեշտությունը: Միաժամանակ, հայցային վաղեմության կիրառումը քաղաքացիական շրջանառության մասնակիցներին պաշտպանում է անհիմն պահանջներից և միաժամանակ դրդում է նրանց ժամանակին հոգ տանել իրենց իրավունքների իրացման և պաշտպանության մասին:

Հայցային վաղեմության ինստիտուտն իր կարևոր գործառնությանն նշանակությամբ համակարգային կապի մեջ է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքների հետ, քանի որ կոչված է երաշխավորելու նաև վերջիններիս և հատկապես Սահմանադրության 1-ին հոդվածի, 10-րդ հոդվածի (Սեփականության երաշխավորումը), 11-րդ հոդվածի (Տնտեսական կարգը) հիմքերում ընկած տրամաբանությունն ու արժեքները:

6.2. Սույն գործով վեճի առարկա հանդիսացող հայցային վաղեմության իրավական ինստիտուտը և համապատասխանաբար՝ վիճարկվող դրույթները, սերտ առնչություն ունեն Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքի հետ և վերջինիս կարևոր երաշխիքներից են: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այս առնչության վերլուծությանը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք»: Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-92, ՍԴՈ-630, ՍԴՈ-649, ՍԴՈ-650, ՍԴՈ-667, ՍԴՈ-669, ՍԴՈ-735, ՍԴՈ-815, ՍԴՈ-901, ՍԴՈ-903, ՍԴՈ-1009, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1073, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1189, ՍԴՈ-1203, ՍԴՈ-1210 և այլն) անդրադարձել է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, այդ իրավունքի պաշտպանության, հնարավոր սահմանափակման խնդիրներին՝ իրավական դիրքորոշումներ արտահայտելով սեփականության իրավունքի էության, այդ իրավունքի սահմանափակման, դադարման հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման սահմանադրականության վերաբերյալ, կարևորելով այդ բնագավառում սահմանադրական կարգի սկզբունքներից բխող իրավական միջոցների գործադրման անհրաժեշտությունը, միաժամանակ բացահայտելով սեփականությունից զրկելու սահմանադրական եզրույթի բովանդակությունն ու միջազգային իրավական պրակտիկայում դրա ընկալման և կիրառման փորձը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2018 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ-1432 որոշմամբ արձանագրել է, որ սեփականության իրավունքը որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև՝ որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն: Այն միջազգային իրավական ամրագրում է ստացել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 17-րդ), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունում, որի 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ

յամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ վերոհիշյալ իրավապայմանները ելակետային նշանակություն ունեն ներպետական իրավահամակարգում սեփականության իրավունքի օրենսդրական կանոնակարգման համար:

Սահմանադրական դատարանն արձանագրել է. «Այսպիսով, ինչպես միջազգային իրավական, այնպես էլ սահմանադրական մակարդակներով հաստատագրված է հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքներ, մասնավորապես.

առաջին՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի,

երկրորդ՝ երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար,

երրորդ՝ Սահմանադրությամբ կանխորոշված նպատակով սահմանել սեփականության իրավունքի իրացման ազատության օրենքով թույլատրելի շրջանակը,

չորրորդ՝ երաշխավորել օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունը հարկադիր օտարելու և նախնական ու համարժեք փոխհատուցում ապահովելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը»:

Ավելին, իր մի շարք որոշումներով Սահմանադրական դատարանն արձանագրել և կարևորել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ **լեզիտիմ ակնկալիքների** հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը: Մասնավորապես, 2021 թվականի մարտի 9-ի ՍԴՈ-1583 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «... Սահմանադրության 60 և 75-րդ հոդվածներով ամրագրված իրավակարգավորումների ուժով պետությունը երաշխավորում է անձի՝ սեփականության իրավունքի նկատմամբ օրինական ակնկալիքների իրավունքի իրացումը, ի թիվս այլնի՝ վերջինիս իրացման համար արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի օրենսդրական ամրագրման միջոցով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն

գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու **լեզիտիմ ակնկալիքը** (տե՛ս, մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, Trgo v. Croatia, 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44):

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-723, ՍԴՈ-741, ՍԴՈ-881 որոշումներում փաստել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ **լեզիտիմ ակնկալիքների** հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Ավելին, 18.03.2008թ. ՍԴՈ-741 որոշման 8-րդ կետում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Վերահաստատելով և զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականության իրավունքի հետ առնչակցություն ունեցող ցանկացած օրենսդրական կարգավորում, դրա մեկնաբանություն և կիրառում պետք է համապատասխանեն նշյալ իրավունքի առնչությամբ Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումներին և Սահմանադրական դատարանի՝ ներկայացրած իրավական դիրքորոշումներին, մասնավորապես՝ դրանք պետք է երաշխավորեն սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար, պետք է երաշխավորեն օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը, **ինչպես նաև երաշխավորեն սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեզիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանությունը:**

6.2.1. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հայցային վաղեմության ինստիտուտն առնչվում է ոչ միայն սեփականության (այդ թվում՝ սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեզիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի), այլ նաև տնտեսական գործունեությանը զբաղվելու սահմանադրական իրավունքին, հետևաբար՝ կարևորվում է այդ ինստիտուտի վերլուծությունը տնտեսական գործունեությանը զբաղվելու իրավունքի համատեքստում:

Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ

զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Անդրադառնալով քննարկվող իրավունքի բովանդակությանը՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2014 թվականի փետրվարի 18-ի ՍԴՈ-1139 որոշմամբ արձանագրել է. «... ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը: Այն իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն է ապահովում անձանց (տնտեսավարող սուբյեկտների) համար՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը օրենքով չարգելված տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Միաժամանակ, այդ ազատության սկզբունքը բացարձակ չէ և ինչպես պետության, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների առջև դնում է կոնկրետ պարտականություններ: Այսպես, պետության հիմնական գործառույթն է ապահովել այդ ազատության երաշխավորման անհրաժեշտ իրավական և տնտեսական պայմաններ: Սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմի բովանդակությունից ուղղակիորեն բխում է նաև, որ Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտաբար պետք է ստեղծվեն տնտեսական ողջ համակարգի կենսագործունեության առավել բարենպաստ պայմաններ՝ հիմնված ազատ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների կազմակերպման ու գործունեության ազատության, իրավահավասարության, այդ գործընթացում պետության դերի առավելագույնս հստակեցման սկզբունքների վրա»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի հուլիսի 13-ի ՍԴՈ-903 որոշմամբ արձանագրել է. «... Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 և 33.1-րդ հոդվածներին համապատասխան՝ տնտեսական հարաբերությունների կանոնակարգման հիմքում, ի թիվս այլոց, ընկած են տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության սահմանադրական սկզբունքները: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքն օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այն է՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Վերջինս հանդես է գալիս որպես տնտեսավարող սուբյեկտի ինքնուրույն, իր շիսկով ու օրենքով սահմանված կարգով իրականացվող գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի հետ որևէ առնչակցություն ունեցող ցան-

կացած օրենսդրական կարգավորում, դրա մեկնաբանություն և կիրառում և սպետք է համապատասխանեն նշյալ իրավունքի առնչությամբ Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումներին և Սահմանադրական դատարանի ներկայացրած իրավական դիրքորոշումներին: Ավելին, մի շարք իրավիճակներում տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի պատշաճ իրացումը պայմանավորված է սեփականության իրավունքի, այդ թվում՝ սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեզվախիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության բավարար և անհրաժեշտ կառուցակարգերի առկայությամբ ու դրանց պատշաճ իրացմամբ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ հայցային վաղեմության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումները և իրավական դիրքորոշումները սպետք է ապահովեն սեփականության (այդ թվում՝ սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեզվախիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի), ինչպես նաև տնտեսական գործունեությամբ զբաղվելու սահմանադրական իրավունքների բովանդակությանն ու պատշաճ իրացմանն առնչվող երաշխիքները, չվտանգեն նշված իրավունքները՝ դրանք անիրական դարձնելով:

6.2.2. Վերահաստատելով և զարգացնելով իր մի շարք վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության ինստիտուտն ուղղված է դատական պաշտպանության իրավունքի և Սահմանադրությամբ ամրագրված այլ հիմնարար իրավունքների չարաշահման բացառմանը:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը չի կարող երաշխավորվել այն իրավիճակներում, երբ կողմերից մեկը չարաշահում է իր իրավունքները, այդ թվում՝ դատարան դիմելու իրավունքը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2020 թվականի մարտի 10-ի ՍԳՈ-1515 որոշմամբ արձանագրել է. «... նույն հարցի կրկնակի քննության արգելքը կոչված է ապահովելու արդյունավետ արդարադատության իրականացումը՝ թույլ չտալով նույն հարցով դատարանին կրկնակի ծանրաբեռնելը: Ի վերջո, այդ արգելքի նպատակն է նաև բացառել հայցվորի կողմից դատական պաշտպանության իրավունքի չարաշահումը»: Սահմանադրական դատարանը գտել է, որ հայցից հրաժարվելու հիմքով քաղաքացիական գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու դեպքում դատարանի մատ-

չելիության իրավունքի սահմանափակման նշված նպատակներն իրավաչափ են և չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթակա լինել սահմանափակումների: Այդպիսի սահմանափակումները կարող են բխել նաև առանձին դատավարական կանոններից: Մինևույն ժամանակ, կարևոր է, որպեսզի այդ սահմանափակումները կամ դրանց ծավալը չլինեն այնպիսին, որպեսզի դրանցով ձևախեղվի իրավունքի էությունը: Դրանք պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ, պետք է լինի ողջամիտ համաչափություն՝ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև (Deweere v. Belgium, § 49; Kart v. Turkey, § 67; Guérin v. France, § 37; Omar v. France, § 34):

Այս պարագայում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հայցային վաղեմության ինստիտուտը կողմերից մեկի դիտանկյունից հանդես է գալիս որպես դատարան դիմելու իրավունքի սահմանափակում՝ դատավարական կոնկրետ կանոնի հիմքով, որը, մինևույն ժամանակ, համապատասխանում է իրավունքի սահմանափակման իրավաչափության վերը նշված չափանիշներին: Ուստի, նշյալ ինստիտուտի և իրավակարգավորումների՝ այդ հանգամանքին հակասող որևէ եղանակով մեկնաբանություն և կիրառում կհակասի վերջիններիս սահմանադրաիրավական բովանդակությանը:

6.2.3. Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Սահմանադրական դատարանը 2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշմամբ արձանագրել է. «Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության ինստիտուտը ևս նպատակ ունի ապահովել հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման անհրաժեշտ երաշխիքներ, և պետք է հանգեցնի ոչ թե նշված իրավունքների էության ձևախեղմանը, այլ վերջիններիս արդյունավետ իրացմանն ու պաշտպանությանը:

6.3. Հաշվի առնելով սույն գործով արդեն արտահայտված դիրքորոշումների կարևորությունը՝ Սահմանադրությամբ ամրագրված վերը նշված հիմնա-

կան իրավունքների ապահովման և երաշխավորման գործում, Սահմանադրական դատարանը հատուկ կարևորում է սույն գործով վիճարկման առարկա հանդիսացող իրավադրույթների բովանդակության բացահայտումը:

Հայցային վաղեմության ինստիտուտի նպատակների իրացման համար Օրենսգիրքը սահմանել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է ոչ միայն այն օրվանից, երբ անձն իմացել է, այլ նաև այն օրվանից, երբ նա պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Ակնհայտ է, որ օրենսդրի կողմից նշված հասկացությունների և իրավիճակների տարբերակումն ինքնանպատակ չէ, և այդ հանգամանքն առանցքային նշանակություն ունի վիճարկվող նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման առումով: Նման տարբերակումն ուղղված է քաղաքացիական շրջանառության մասնակիցների բարեխիղճ վարքագծի, քաղաքացիական շրջանառության և իրավահարաբերությունների որոշակիության և կայունության, իրավահարաբերության բոլոր սուբյեկտների հիմնարար իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը:

Բնականաբար, շահագրգիռ անձը դատական պաշտպանության իրավունքն իրացնում է այն դեպքում, երբ համոզված է իր իրավունքի խախտման հարցում: Սակայն նշված հանգամանքը չի ենթադրում, որ անձը կարող է իր «անբարեխիղճ» պասիվ վարքագծով նպաստել իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու հանգամանքի բացառմանը կամ ազատված լինել իր իրավունքի ենթադրյալ խախտումների հարցում հաստատապես համոզվելու համար ողջամտորեն ենթադրվող իրավաչափ գործողությունների կատարման անհրաժեշտությունից: Հակառակ դեպքում գործ կունենանք քաղաքացիական շրջանառության որոշակիության և կայունության ու վերջինիս մասնակիցների հիմնարար իրավունքների խախտմանն ուղղված՝ իրավունքի չարաշահում հանդիսացող անբարեխիղճ վարքագծի հետ, ինչը որևէ պարագայում չի կարող ընկած լինել հայցային վաղեմության ինստիտուտի և դրա սահմանադրաիրավական բովանդակության հիմքում: Հենց նշված հանգամանքի բացառմանն ու քննարկված արժեքների պաշտպանությանն է ուղղված քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված այն իրավակարգավորումը, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է ոչ միայն այն օրվանից, երբ անձը հաստատապես իմացել է, այլ նաև այն օրվանից, երբ նա պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

Այդ առումով ակնհայտ է, որ «իմացել է» և «պետք է իմանար»/«պարտավոր էր իմանալ» հասկացությունների բովանդակությունները հավասար իմաստային ծանրաբեռնվածություն չունեն: Եթե այդ հասկացությունները մեկնաբանելիս առանցքային դիտարկվի իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու հանգամանքը՝ ուշադրությունից դուրս կմնա խախտման

մասին հաստատապես իմանալու նպատակով բավարար տեղեկություններ ձեռք բերելու համար ողջամտորեն ենթադրվող իրավաչափ գործողություններ կատարելու և «անբարեխիղճ պասիվ վարքագծից» ու իրավունքի չարաշահումից զերծ մնալու անհրաժեշտությունը: Մինչդեռ, ինչպես բխում է ներկայացված վերլուծությունից, այդ հանգամանքները բացառիկ կարևորություն ունեն քննարկվող իրավադրույթների՝ Սահմանադրությանը համապատասխան մեկնաբանության և կիրառման առումով:

Սահմանադրական դատարանն իր՝ 2020 թվականի նոյեմբերի 24-ի ՄԴՈ-1561 որոշմամբ արձանագրել է, որ, թեև հնարավոր չէ օրենսդրությունը կառուցել այն տրամաբանությամբ, որ դրանում առկա չլինեն գնահատողական կատեգորիաներ, մեկնաբանման ենթակա եզրույթներ կամ ձևակերպումներ, և այդպիսի ձևակերպումներն իրենց մեկնաբանությունն ու հստակեցումն են ստանում արդեն դատարանի կողմից կոնկրետ գործի հանգամանքների հաշվառմամբ և գնահատվում են դատարանի իրավակիրառ հայեցողության լիազորությունների իրականացման շրջանակներում, միևնույն ժամանակ, օրենսդրորեն ամրագրված հիմքերից որևէ մեկի առկայության կամ բացակայության հարցի գնահատումը դատարանի կողմից պետք է լինի հնարավորինս **հստակ, որոշակի և հիմնավորված**:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **վիճարկվող իրավադրույթներում առկա քննարկվող հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է հետևյալը. «իմացել է» ձևակերպումը մատնացույց է անում խախտման մասին հաստատապես իմանալու հանգամանքը: Մինչդեռ, «պետք է իմանար»/«պարտավոր էր իմանալ» ձևակերպումը վերաբերում է այն բոլոր իրավիճակներին, երբ գործի հանգամանքներից չի բխում իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու փաստը, սակայն ենթադրվում է, որ համանման իրավիճակում իրավահարաբերության սուբյեկտը պետք է ձեռնարկեր իր իրավունքի ենթադրյալ խախտման հարցում հաստատապես համոզվելու համար բավարար տեղեկություններ ձեռք բերելուն ուղղված ողջամտորեն ենթադրվող իրավաչափ գործողություններ՝ զերծ մնալով «անբարեխիղճ» պասիվ վարքագծից: Այլ կերպ, վիճարկվող հոդվածներում կիրառվող՝ «պարտավոր էր իմանալ» կամ «պետք է իմացած լիներ» արտահայտությունները կրում են այն բովանդակային ծանրաբեռնվածությունը, ըստ որի, քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում անձը ողջամիտ ուշադրության դեպքում կիմանար իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին:**

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ քննարկվող ինստիտուտի պատշաճ իրացման համար գործնականում անփոխարինելի դերակատարում ունեն

համապատասխան դատարանները, որոնք իրենց պրակտիկայում պետք է մշակեն «պետք է իմանար» կամ «պարտավոր էր իմանալ» ձևակերպումներին առնչվող իրավիճակների արձանագրման համար անհրաժեշտ և տարբերակված չափանիշները: Դա կարևոր է, այդ թվում՝ այն պատճառով, որ իրավահարաբերության սուբյեկտների կարգավիճակով կամ կազմակերպաիրավական ձևով պայմանավորված՝ նրանց կողմից ձեռնարկվելիք ողջամտորեն ենթադրվող և անհրաժեշտ իրավաչափ գործողությունները կարող են տարբեր լինել: Օրինակ՝ պետական մարմինների կամ իրավաբանական անձանց ու վերջիններիս մասնակիցների առումով կիրառման են ենթակա տեղեկացվածության առավել բարձր չափանիշներ, և նրանց տեսանկյունից «պետք է իմանար» կամ «պարտավոր էր իմանալ» ձևակերպումներին առնչվող իրավիճակների արձանագրման համար անհրաժեշտ գործողությունների ծավալը կարող է տարբերվել ֆիզիկական անձանց տեսանկյունից անհրաժեշտ ծավալից:

6.4. Սահմանադրական դատարանը հատուկ կարևորում է սույն գործով վիճարկման առարկա իրավադրույթների իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը:

Վճռաբեկ դատարանը, որպես օրենքների և այլ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովող սահմանադրական մարմին, մեկնաբանելով վիճարկվող նորմերի բովանդակությունը, թիվ ԵԿԴ/1397/02/11 քաղաքացիական գործով 08.10.2020թ. որոշմամբ արձանագրել է հետևյալը. «ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով վերոգրյալ նորմերին, արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (տե՛ս, Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբօղյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանների օրակարգային խնդիրն է դառնում պարզել այն իրական ժամանակահատվածը, երբ հայցվորը հետամուտ է եղել իր իրավունքների դատական կարգով պաշտպանությանը (տե՛ս, Սերգեյ Սարգսյանն ընդդեմ Արա Սարգսյանի թիվ ԵԿԴ/0881/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):

Չարգացնելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ հավելել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը կապել է ոչ թե իրավունքի խախտման պահի, այլ այն օրվա հետ, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Օրենսդրի այս կարգավորումը բխում է այն տրամաբանությունից, ըստ որի՝ եթե անձն իր իրավունքի խախտման մասին չիմանա, ապա չի էլ կարող ձեռնամուխ լինել որևէ եղանակով՝ այդ թվում և հայց հարուցելու միջոցով իր խախտված իրավունքի պաշտպանությանը: Ընդ որում, հայցային վաղեմության ժամկետի ընթացքի մեկնարկի երկու նախապայմանների դեպքում էլ օրենսդիրը գործածել է «իմացել է» և «պետք է իմացած լիներ» արտահայտությունները, որոնց տառացի մեկնաբանությունը հանգեցնում է այն հետևության, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվելու համար անհրաժեշտ է, որ հայցվորը հաստատապես իմանա կամ իմացած լինի իր իրավունքի խախտման մասին: Վերոգրյալից բխում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը չի կարող սկսվել, եթե հայցվորին հասանելի տեղեկությունները նրան թույլ տան եզրակացնել միայն իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին: Իրավակիրառ պրակտիկայում շահագրգիռ անձը դատական պաշտպանության իր իրավունքն իրացնում է այն դեպքում, երբ համոզված է իր իրավունքի հաստատապես խախտման հարցում: Այլ կերպ ասած՝ շահագրգիռ անձը պետք է համոզված լինի իր իրավունքի խախտման հարցում՝ անկախ նրանից, թե իրականում իրավունքի խախտում տեղի ունեցել է, թե ոչ, ինչը դատարանի գնահատման առարկա է: ՀՀ վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական պաշտպանության իրավունքն ունի իրացման որոշակի պայմաններ, որոնց չարաշահումը կարող է անբարենպաստ հետևանքներ առաջացնել այդ իրավունքից անբարեխիղճ օգտված անձի համար: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետում օրենսդրի կողմից կիրառված «պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին» արտահայտությունը չպետք է սխալմամբ մեկնաբանվի այնպես, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կարող է սկսվել հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին ենթադրելու հնարավորություն ունենալու օրվանից, ընդհակառակը՝ «պետք է իմացած լիներ» ձևակերպմամբ, ինչպես և «իմացել է» ձևակերպման պարագայում օրենսդիրը կարևորել է հայցային վաղեմության ընթացքն սկսվելու հարցում հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու հանգամանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիտարկմամբ շահագրգիռ անձի կողմից իր իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու համար վերջինս

պետք է տիրապետի խախտման վերաբերյալ բավարար տեղեկությունների, իսկ եթե այդ տեղեկությունները բավարար չեն, այսինքն՝ եթե հայցվորը կարող է միայն ենթադրություններ անել իր իրավունքի հնարավոր խախտման մասին, ապա նա չի էլ կարող հստակ պահանջ ներկայացնել իր իրավունքի խախտման վերացման վերաբերյալ: Այսպիսով, օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու իրավական հետևանքը պայմանավորել է հայցվորի կողմից ոչ թե իր իրավունքի խախտման մասին ենթադրելու հնարավորությամբ, այլ այդ խախտման մասին հավաստի կերպով իմանալու կամ իմացած լինելու փաստերով (տե՛ս, «Այսանս պյուս» ՍՊԸ-ն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (ներկայումս՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) թիվ ԵԱԶԴ/4524/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.06.2019 թվականի որոշումը)»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը և 337-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Սահմանադրությանը՝ այն մեկնաբանմամբ, համաձայն որի՝ «պարտավոր էր իմանալ» կամ «պետք է իմացած լիներ» հասկացությունները վերաբերում են այն իրավիճակներին, երբ քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում անձը ողջամիտ ուշադրության ղեկքում կիմանար իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը և 337-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

28 սեպտեմբերի 2021 թվականի
ՍԴՈ-1611

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦ 3(103)/2021



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ
ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐԻՆ**



2021 թվականի հուլիսի 23-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն աշխատանքային հանդիպում է ունեցել Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի նորանշանակ ղեկավար Մարտինա Շմիդտի և Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ծրագրի ազգային համակարգող Թամարա Բարբակաձեի հետ:

Շնորհավորելով գրասենյակի ղեկավարին պատասխանատու պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ Արման Դիլանյանը վստահություն է հայտնել, որ Սահմանադրական դատարանի և Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի համագործակցությունը կշարունակի արդյունավետորեն զարգանալ:

Մարտինա Շմիդտն իր հերթին կարևորել է իրավունքի գերակայության, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտում գործընկերության հետագա ամրապնդումը և նոր համատեղ ծրագրերի իրագործումը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌՅԱՆՑ ՆԻՍՏԻՆ**

2021 թվականի օգոստոսի 26-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը և Սահմանադրական դատարանի դատավոր Արաիկ Թունյանը մասնակցել են Սահմանադրական վերահսկողության մարմինների եվրասիական ընկերակցության նիստին, որն անցկացվել է տեսակապի միջոցով:



Նիստի ընթացքում կազմակերպության անդամ դատարանների ներկայացուցիչները քննարկել են Ընկերակցության ընթացիկ գործունեությանը վերաբերելի հարցեր: Մասնավորապես, հաստատվել է Ընկերակցության կանոնադրությունը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել Սահմանադրական արդարադատության համաշխարհային խորհրդաժողովի 5-րդ Կոնգրեսին Ընկերակցության մասնակցության հարցին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(103)2021

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՂԵԿԱՎԱՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԱՅՑ Է ԿԱՏԱՐԵԼ ԼԵՀԱՏԱՆ**



ՍԱՀՄԱՆԱԿՐՈՎԱԿԱՆ ՊԱՏՄԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 3(103)2021

2021 թվականի սեպտեմբերի 9-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի ղեկավարած պատվիրակությունը՝ ՄԴ դատավորներ Աշոտ Խաչատրյանի, Էդգար Շաթիրյանի և ՄԴ նախագահի օգնական Արմենակ Մինասյանցի կազմով, աշխատանքային այց է կատարել Լեհաստանի Հանրապետություն՝ մասնակցելու Լեհաստանի սահմանադրության ընդունման 230-րդ տարեդարձին նվիրված՝ «Սահմանադրական ինքնություն» թեմայով միջազգային խորհրդաժողովի աշխատանքներին:

Խորհրդաժողովի աշխատանքների ամփոփումից հետո տեղի է ունեցել Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի և Լեհաստանի Հանրապետության սահմանադրական տրիբունալի նախագահ Յուլյա Փշիլեմբսկայի առանձնազրույցը: Հանդիպման ընթացքում Լեհաստանի Հանրապետության սահմանադրական տրիբունալի նախագահը շնորհակալություն է հայտնել Արման Դիլանյանին հրավերն ընդունելու և աշխատանքային այցով Վարշավայում գտնվելու համար՝ հավելելով, որ Լեհաստանի սահմանադրական տրիբունալը կարևորում է Հայաստանի սահմանադրական դատարանի հետ բարեկամական հարաբերությունների զարգացումը: Արման Դիլանյանն իր հերթին շնորհակալություն է հայտնել Յուլյա Փշիլեմբսկային ջերմ հյուրընկալության համար և շնորհավորել Լեհաստանի սահմանադրության ընդունման 230-րդ տարեդարձի առթիվ: Սահմանադրական դատարանի նախագահն արժևորել է Լեհաստանի սահմանադրական տրիբունալի հետ երկ-

կողմանի և բազմակողմանի համագործակցության շարունակական զարգացումն ու ընդլայնումը: Այնուհետև Արման Դիլանյանը և Յուլյա Փշիլեմբսկան քննարկումը շարունակել են ընդլայնված կազմով՝ անդրադառնալով հայ-լեհական միջդատարանական կապերի սերտացմանը և սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների դատական պրակտիկային: Հանդիպման ավարտին Արման Դիլանյանը հրավիրել է Յուլյա Փշիլեմբսկային պատասխան այց կատարել Երևան:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԻԴԵՈՒԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳԻՐԸ



2021 թվականի սեպտեմբերի 17-ին Սահմանադրական դատարանի «Շահամիր և Հակոբ Շահամիրյանների» անվան նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և Հայաստանի Հանրապետությունում Նիդեռլանդների Թագավորության դեսպանատան առաջին համատեղ ծրագրի մեկնարկին նվիրված շնորհանդես-միջոցառումը:

Ծրագիրը միտված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմի մասնագիտական կարողությունների ու հմտությունների ամրապնդմանը և Բարձր դատարանի հանրային հաղորդակցության ռազմավարության հայեցակարգի լրամշակմանը: Ծրագրի շրջա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱՎՈՐ ♦ 3(103)2021



նակներում կիրականացվեն նաև Սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության վերապատրաստման դասընթացներ, որոնց կմասնակցեն նաև Նիդեռլանդներից հրավիրված արդարադատության ոլորտի փորձագետներ:

Միջոցառման մեկնարկին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն իր ողջույնի խոսքում կարևորեց Բարձր դատարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման անհրաժեշտությունը, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց Հայաստանի Հանրապետությունում Նիդեռլանդների Թագավորության դեսպան Նիկոլաս Մխերմերսին նախաձեռնողական և կառուցողական աշխատանքի համար: Իր պատասխան խոսքում դեսպան Մխերմերսը շնորհակալություն հայտնեց Սահմանադրական դատարանին ծրագիրն իրականացնելու հնարավորության համար և հույս հայտնեց, որ այն կծառայի նախանշված նպատակներին, ինչպես նաև կնպաստի հայնիդեռլանդական հարաբերությունների ամրապնդմանը:

Միջոցառմանը մասնակցում էին դատական իշխանության ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

ՆՈՐ ԳՐՔԵՐ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ
ՄԱՍՆԱԿՑԵԼ Է «ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻՆ**



2021 թվականի հուլիսի 23-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը մասնակցել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցած «Եկեղեցին և սահմանադրական մշակույթը» խորագրով շնորհանդեսին:

Շնորհանդեսի ընթացքում ներկայացվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչության լույս ընծայած «Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում» կոլեկտիվ մենագրությունը և «Համաբարբառ Կանոնագիրը Հայոց» ժողովածուն:

Միջոցառման մասնակիցներին ուղղված ողջույնի խոսքում ՍԴ նախագահին ընդգծել է, որ հայ ժողովրդի հոգևոր կյանքը և հոգևոր արժեքները մշտապես առանցքային են եղել երկրի բնականոն իրավական ու սահմանադրական զարգացման համար: Ամփոփելով իր խոսքը՝ Արման Դիլանյանը կարևորել է պետության և եկեղեցու փոխլրացնող հարաբերությունները՝ որպես հասարակական կյանքի և հանրային համերաշխության հենք:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

**Ա. ԴԻԼՄՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՆՅԱՆ,
Ն. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ,
Ն. ՆԱԶԱՐՅԱՆ, Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ**

Ստորագրված է տպագրության՝ 20.12.2021թ
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 100

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011 58 81 81 (189)
E-mail: armlaw@concourt.am
<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения №3(103)2021
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia №3(103)2021
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie №3(103)2021